Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Ազատյան Հենրիկ Գևորգի

ՀԱՅԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

АРМЯНЕ НА ПЕРЕКРЕСТКАХ МЕЖДУНАРОДНОЙ ДИПЛОМАТИИ

ARMENIANS AT THE CROSSROARD OF INTERNATIONAL DIPLOMACY

Երևան
«Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ
2009

ՀՏԴ 327: 941(479.25) : 94/99
ԳՄԴ 66.4 (2Հ) + 63.3 (2Հ) +63.3
Ա 224

Տպագրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Ա 224 Ազատյան Հենրիկ Գևորգի
Հայերը Միջազգային դիվանագիտական խաչմերուկներում.-եր.:
«Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ, 2009.-280 էջ:

Ներկա գրքում զետեղված են աշխարհամասի տարբեր երկրներում իրենց բացառիկ ծառայությունները մատուցած հայ դիվանագետները՝ Հռոմեական, Բյուզանդական կայսրություններում, Արաբական խալիֆայությունում, Պարսկաստանում, Օսմանյան և Ռուսական կայսրություններում, Խորհրդային Միությունում և այլ պետությունների արտաքին քաղաքականության բնագավառում: Սույն գիրքը ընթերցողին ծանոթացնում է XX դարի ազգությամբ հայ դիվանագետների կենսատեղեկատու նյութերի հետ, Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի պետություններում:

Գիրքը նախատեսված է լայն հասարակության համար:

ՆԱԽԱԲԱՆ

Ավանդաբար ժողովուրդները մի առանձին, երբեմն միստիկայի աստիճանի հասնող հետաքրքրություն են ցուցաբերում մարդկային հասարակության գործունեության այնպիսի կարևոր ու հնագույն բնագավառներից մեկի նկատմամբ, որը կոչվում է դիվանագիտություն, իսկ նրա պաշտոնյան՝ դիվանագետը, ավելի ճիշտ նրա կերպարը պարուրված է խորհրդավորության շղարշով, առանձնահատուկ հմայքով, իմացության արտակարգ տաղանդով և վայելում է ամենագետի, ամենակիրթ մարդու, դիմացինի մտքերը կարդալու կարողությամբ օժտված, իսկ իր սեփական մտքերը և մտադրությունները թաքցնելու ընդունակ անձի համբավ: Դրա գաղտնիքներից մեկն այն է, որ բոլոր ժողովուրդներին պատմական բոլոր դարաշրջաններում հատուկ է եղել արտակարգ հետաքրքրությունն այն ամենի նկատմամբ, ինչը որ նրանցից, նրանց երկրներից դուրս է և գտնվում է գաղտնապահության քողի տակ, այսինքն այն երևույթի նկատմամբ, որը մեր օրերում կոչվում է միջազգային հարաբերություններ: Եվ ուշագրավն այն է, որ դարերի ընթացքում այդ հետաքրքրությունը դի-

վանագիտություն կոչված ֆենոմենի և դիվանագետի անձի նկատմամբ ոչ միայն չի թուլացել, այլև, ընդհակառակը, շարունակում է աճել:

Այդ առումով բացառություն չեն նաև հայերը: Հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովուրդը դեռևս հնագույն ժամանակներից ունեցել է իր պետականությունը, որը Տիգրան II ժամանակ վերածվել էր հզոր կայսրության, դարձել միջազգային հարաբերությունների կարևոր գործոն և դիվանագիտության միջազգային կենտրոններից մեկը: Դարեր շարունակ գտնվելով միջազգային հարաբերությունների հորձանուտում, իսկ երբեմն էլ նաև դրանց կիզակետում, Հայաստանը որպես պետություն դիվանագիտական հարաբերությունների մեջ է գտնվել իր հեռու և մոտիկ հարևան երկրների ու պետությունների հետ, պայմանագրեր կնքել նրանց հետ, դիվանագետներ ուղարկել և ընդունել, այդ թվում և դեսպանների մակարդակով, մասնակցել և ներազդել միջազգային ու տարածաշրջանային հարաբերությունների ձևավորման վրա: Դրա հետ միասին հայերը դիվանագիտական ծառայության մեջ են գտնվել այլ պետություններում, երբեմն առաջնակարգ դերակատարում ունենալով նրանց արտաքին հարաբերությունների մշակման և իրականացման մեջ: Դա հիմք է տալիս ընդգծելու, որ «հայ դիվանագետներ» և «հայ դեսպաններ» հասկացությունները չեն սահմանափակվում միայն այն հայ պաշտոնյաներով, որոնք անմիջականորեն ծառայության մեջ են եղել հայոց պետությունում, այլ ներառնում են նաև այն հայերին, որոնք համալրել են օտար պետությունների դիվանագիտական կորպուսը: Ուստի սխալ կլիներ նրանց անտեսել և դուրս թողնել տեսադաշտից, մանավանդ որ հաճախ է պատահում, որ օտար երկրների հայազգի դիվանագետներին ժամանակին նրանց հյուրընկալած և նրանց ծառայություններից

օգտված ու շահած երկրները հետագայում միշտ չէ, որ արժանին են մատուցում, իսկ երբեմն էլ մոռացության են մատնում, անգամ հիշատակության չեն արժանացնում նրանց:

Դիվանագիտության հայեցակարգային շատ հիմնադիր սկզբունքներ ձևավորվել են դեռևս անտիկ շրջանում: Մենք առաջին հերթին նկատի ունենք, թե ինչ խնդիրներ են դրվել դիվանագիտության և դիվանագետների, առաջին հերթին դեսպանների առջև, և դա ինչ նպատակների համար է կյանքի կոչվել: Դիվանագիտությունն առաջին հերթին ծառայել է որպես բանակցությունների գործիքարան տարբեր բնույթի վեճերը և հակասությունները հանդիպումների, երկխոսությունների, բանակցությունների և փոխզիջումների ուղիով հարթելու համար, և այդ նպատակով մի երկիր մյուսի մոտ իր դեսպաններն է առաքել: Այդ մասին են վկայում հնագույն իմաստագրերը, սեպագիր և լապիդար արձանագրությունները: Հին եգիպտական գրավոր աղբյուրները վկայում են, որ դեռևս մ.թ.ա. XXV դարում Եգիպտոսը դեսպանություններ է ուղարկել Կարմիր ծովի հարավային ափերի մոտ գտնվող Պունտի երկիր, որոնք բանակցություններ են վարել տեղական ցեղապետների հետ: Ցեղերի և ցեղային միությունների միջև ձեռք բերված համաձայնությունները սովորաբար խարսխվել են ազնիվ խոսքի վրա վկայակոչելով իրենց բարձարգույն աստվածներին: Հնում հնդկական ցեղերի մոտ ընդունված է եղել բանակցությունների հաջող ավարտի դեպքում հերթով «խաղաղության ծխամորճ» ծխելը, որն իր ժամանակին համարվել է ժամանակակից տերմինալոգիայով ասած զինադադարի, հաշտության և համաձայնության պայմանագրի ստորագրում, խաղաղության հաստատման առհավատչյա և խորհրդանշան: Հետագայում բանակցությունների հաջող ավարտման այդ խորհրդանշան-սովորույթը դարձել է թևավոր արտահայտություն, որով ցանկացել են նշել, թե պա-

տերազմը դադարեցվել է, վերջ է տրվել թշնամությանը և հաստատվել է խաղաղություն: Եվ մինչև օրս դա չի կորցրել իր նախասահմանված իմաստը և դիվանագիտության մեջ շարունակվում է օգտագործվել հաշտության և խաղաղության հաստատման իմաստով: Իսկ դիվանագետը, այդ թվում և դեսպանը, դիտվել է որպես «խաղաղության ծխամորճը» ծխելու համար համապատասխան նախապայմաններ նախապատրաստողը:

Դարերի ընթացքում վիթխարի նյութ է կուտակվել հայ դիվանագիտության և հայ դիվանագետների գործունեության վերաբերյալ: Եվ չնայած այդ հանգամանքին, ափսոսանքով պետք է նշենք, որ հայ պատմաբան-միջազգայնագետները ընթերցողի սեղանի վրա ցարդ չեն դրել լուրջ ուսումնասիրություններ Հայաստանի դիվանագիտության վերաբերյալ, դեռ չենք խոսում հայ դիվանագիտության բազմահատորյակի մասին, որն անխուսափելիորեն տարբեր դարաշրջանների միջազգային հարաբերությունների պատմության ուսումնասիրության մեջ նոր էջեր կբացեր՝ մի կողմից, և, ավելի քան վստահ ենք, մեծապես կհարստացներ և կամբողջացներ բուն Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը՝ մյուս կողմից: Հարկ է նկատի առնել նաև այն հանգամանքը, որ դիվանագիտությունը հենց այն բնագավառն է, որն արտակարգ առատ և բացառիկ հետաքրքիր նյութ է պարունակում հարևան երկրների և ժողովուրդների հետ Հայաստանի և հայերի փոխհարաբերությունների և առնչությունների վերաբերյալ:

Վերոնշյալ հանգամանքները հրատապ են դարձնում հայ դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը որպես երկարաժամկետ գիտական ծրագիր: Այդ խնդիրը ոչ միայն հրատապ, այլև արդիական է դարձել անկախ և սուվերեն Հայաստանի Երրորդ Հանրապետության միջազգային ասպարեզ դուրս գալու կապակցությամբ: Եվ ուրախությամբ

պետք է նշել, որ այդ ուղղությամբ, բարեբախտաբար, արդեն կատարվում են առաջին քայլերը, հրատարկվում են փաստաթղթերի ժողովածուներ, առանձին մենագրական ուսումնասիրություններ, հոդվածների ժողովածուներ, գիտաժողովների նյութեր և այլն[1]:

Եվ ահա այժմ ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում պատմաբան-միջազգայնագետ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Ազատյանի «Հայերը դիվանագիտական խաչմերուկներում» ուսումնասիրությունը, որն իր տեսակի մեջ նորություն է հայ դիվանագետներին նվիրված ոչ այնքան հարուստ աշխատությունների շարքում: Նա վաղուց է զբաղվում հայ դիվանագիտության և միջազգային հարաբերությունների ուսումնասիրությամբ: Հ. Ազատյանը հեղինակն է «Բախտորոշ պայմանագրեր» դիվանագիտական փաստաթղթերի արժեքավոր ժողովածուի, որը հրատարակվել է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Այդ ժողովածուն ընդգրկում է 185-ամյա մի վիթխարի ժամանակաշրջան. 1813թ. Գյուլիստանի ռուս-պարսկական պայմանագրից մինչև Ռուսաստանի և Հայաստանի միջև 1997թ. կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը: Իր հիմնարար կրթությամբ լինելով միջազգայնագետ, նա ծանոթ է դիվանագիտության գաղտնիքներին և նրբություններին, հիանալի տիրապետում է ուսումնասիրող նյութին և այն վերլուծում ու մեկնաբանում է ոչ թե սիրողական մակարդա-

[1] Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության «Դիվանագիտական Բանբերը» Հ. Լիլոյանի խմբագրությամբ, Ե. 1993 և դրան հաջորդած "The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia", Yerevan, 1997-1998, Հ. Ազատյան, Բախտորոշ պայմանագրեր, Ե., 2002, Ն. Հովհաննիսյան, Դիվանագիտություն, ֆունկցիաները, մարմինները, պաշտոնյաները, Ե., 1997, նույնի՝ Արաբական երկրների պատմություն, Հ.I-IV, Ե. 2003-2007, Երևանի պետական համալսարան. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ. 1946-1953, Ե., 2004, Г. Азатян, Судьбоносные договора, Ер., 2000: Nikolay Hovhannisyan, The Foreign Policy of Armenia, Yerevan, և ուրիշներ:

կով, որը դժբախտաբար մեր օրերում լայն տարածում է գտել, այլ որպես պրոֆեսիոնալ[2]:

Հայ դիվանագետներին նվիրված Հ. Ազատյանի «Հայերը դիվանագիտական խաչմերուկներում» նոր ուսումնասիրությունը, թեև իր բնույթով պատկանում է կենսագրական ժանրին, այդուհանդերձ, յուրաքանչյուր հայ դիվանագետին նվիրված նյութն անհրաժեշտաբար ներառնում է նաև տեղեկություններ և հարցադրումներ տվյալ ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության վերաբերյալ, որն ավելի է բարձրացնում այդ աշխատության նշանակությունը:

Հայ ժողովրդի աշխարհասփյուռ գոյաձևը որպես իրողություն, ինքն է թելադրել աշխատության կառուցվածքը և այն էթնիկական միջավայրը, որում գործել են հայ ականավոր դիվանագետները: Խոսքն այն մասին է, որ գրքի հեղինակը չի սահմանափակվել Հայաստան աշխարհի սահմաններով, այլ անդրադարձել է նաև այն երևելի հայ դիվանագետներին, որոնք գործել են Հայաստանից դուրս, օտար պետություններում: Դրա շնորհիվ մեր դեմ հառնում է հայ դիվանագետների մի տպավորիչ գալերեա, որը հայ ընթերցողի սիրտը լցնում է հպարտությամբ: Եվ, իրոք, հպարտանալու շատ բան կա: Ըստ էության հեղինակը վերցրել է հայ դիվանագետների՝ արտաքին գործերի նախարարների և դեսպանների երեք խումբ, որոնք ներկայացրել են Արևելքը՝ Եգիպտոս, Պարսկաստան և Թուրքիա, Խորհրդային Ռուսաստանն ու Խորհրդային Միությունը, բուն Հայաստանը, Եվրոպան, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրները:

[2] Նա սովորել և 1951թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և աշխատանքի բերումով երկար տարիներ զբաղվել արտաքին հարաբերությունների ոլորտին առնչվող հարցերով:

Գրքում ներկայացված հայ դիվանագետների պատկերասրահի փայլուն դեմքերից է Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար Նուբարյանը, որը բազմիցս զբաղեցրել է նաև Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի բարձր պաշտոնը և դիվանագիտական ապշեցուցիչ տաղանդ դրսևորել Եգիպտոսի ազգային շահերը պաշտպանելու համար բրիտանական դիվանագիտության հետ իր մրցապայքարում: Այստեղ է նաև Հովհաննես Մասեհյանը, որը հայ ընթերցողին ավելի շատ հայտնի է որպես Շեքսպիրի ողբերգությունների սքանչելի, իր հավասարը չունեցող թարգմանիչ: Այժմ նա հայ ընթերցողին ներկայանում է որպես Իրանի տաղանդավոր դիվանագետներից մեկը, որի դիվանագիտական տաղանդը մրցակցում է նրա թարգմանչական անգերազանցելի տաղանդի հետ: Չի կարելի չնշել նաև Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկյանին, որը 1912-1913թթ. եղել է Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար և որի նկատմամբ ճակատագիրը գոնե այնքան բարեհաճ գտնվեց, որ նա այդ պաշտոնից հեռացավ Առաջին համաշխարհային պատերազմի վաղորդայնին :

Պատկերասրահի հաջորդ սալոնը հեղինակը հատկացրել է այն հայ դիվանագետներին, որոնք ծառայել են խորհրդային պետությանը, նրա ստեղծման առաջին օրվանից մինչև փլուզումը՝ 1918-1991թթ.: Այստեղ են Լևոն Կարախանը՝ Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալը, Հովհաննես Թևոսյանը՝ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալը, որն այնուհետև որպես «պատիժ» դեսպան ուղարկվեց Ճապոնիա, Համո Հարությունյանը՝ Խորհրդային Միության դեսպանը Կանադայում, Ալեքսանդր Բեկզադյանը՝ Խորհրդային միության դեսպանը Նորվեգիայում և Հունգարիայում, Վիկտոր Իսրայելյանը և այլք:

Եվ, վերջապես, գալերեայի ամենապատվավորիչ սրահը տրված է հայ դիվանագետներին, որոնք գործել են Հայաստանում, մշակել և իրականացրել Հայաստանի արտաքին քաղաքականությունը պատմական այն ժամանակահատվածներում, երբ այդ հնարավորությունը տրվել է Հայաստանին և նրանց: Դա թերևս ամենահարուստ բաժինն է, որտեղ շատ հանրահայտ անունների կողքին՝ արտաքին գործերի նախարարների և դեսպանների կողքին, ներկայացված են նաև այնպիսիները, որոնք հայտնի չեն հայ լայն հասարակությանը: Մենք այստեղ նրանց անունները չենք նշում, թողնելով ընթերցողին ըմբոշխնել այդ հաճույքը այս հետաքրքիր գիրքը ընթերցելիս: Նրանք բոլորը, եթե օգտվելու լինենք հին հնդկացիների տերմինալոգիայից, դիվանագիտական խաչմերուկներում «խաղաղության ծխամորճ» ծխողներ են եղել և ծառայել միջազգային խաղաղության և համագործակցության վեհ խնդիրներին, բարդ պայմաններում պայքարել հայ ժողովրդի պետական և ազգային շահերը ներակայցնելու և պաշտպանելու համար:

Կարելի է ասել, որ հայ դիվանագիտությանը նվիրված մասնագիտական գրականությունը հարստացավ մի նոր արժեքավոր աշխատությամբ, որ, կասկածից վեր է, կարող է օգտակար լինել լայն հասարակության և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են միջազգային հարաբերությունների և դիվանագիտության, Հայաստանի արտաքին քաղաքականության հարցերով:

Պրոֆեսոր *Նիկոլայ Հովհաննիսյան*
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ

ԻՎԱՆ ՖՅՈԴՈՐԻ ԹԵՎՈՍՅԱՆ

Իվան Ֆյոդորի Թևոսյանը ծնվել է 1902 թվականին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում, արհեստավորի ընտանիքում:

Պատանեկան տարիներին Ի. Թևոսյանը ակտիվորեն մասնակցել է Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին: 1918 թվականին, տասնվեցամյա պատանին, դառնում է բոլշևիկյան կուսակցության անդամ, մեկ տարի անց Վանյան (Ի.Ֆ. Թևոսյանի ծածկանունն է) ընտրվում է Բաքվի կուսակցական ընդհատակյա կոմիտեի քարտուղար, իսկ սովետական իշխանության հաղթանակից հետո՝ կուսակցության քաղաքային շրջկոմի քարտուղար: Արդեն այդ տարիներին դրսևորվում են կուսակցական կազմակերպչի ու ղեկավարի նրա արտակարգ ընդունակությունները: 1921 թվականին Ի. Ֆ. Թևոսյանը որպես պատգամավոր մասնակցում է կոմունիստական կուսակցության 10-րդ համագումարի աշխատանքին, ունկնդրում է Վ. Ի. Լենինին, ապա մասնակցում է համագումարի մի խումբ պատգամավորների կազմում Կրոնշտադի հակահեղափոխական խռովության լիկվիդացմանը:

1921 թվականին կուսակցությունը Ի. Թևոսյանին ուղարկում է սովորելու Մոսկվայի լեռնային ակադեմիայում: Սովորելուց բացի նա լինում է թանգարաններում և գրական երեկոներում: Ալեքսանդր Բլոկի հիշատակին նվիրված երեկոյում Թևոսյանը տեսավ Վալերի Բրյուսովին:

Ուսանելու առաջին իսկ օրերից Թևոսյանը սկսեց ակտիվ մասնակցել ակադեմիայի կուսակցական կյանքին: Շուտով նրան ընտրում են կուսակցական բյուրոյի քարտուղար: Նա կուսակցական աշխատանք է կատարում Մոսկվայի Զամոսկվորեչիեի շրջանում: Շրջկոմի քարտուղարն այն ժամանակ Ռոզալյա Սամոյլովնա Զեմլյաչկան էր՝ Վ. Ի. Լենինի և Ն. Կ. Կրուպսկայայի զինակիցը:

1929թ. փետրվարին նա պաշտպանեց դիպլոմային նախագիծը. թեման՝ «Դնեպրի վրա, Եկատերինոսլավ քաղաքի մոտ գտնվող մետաղամշակման գործարանի հաշվարկն ու սարքավորումը»:

- Լուրջ նախագիծ է, - ասաց որակավորման հանձնաժողովի նախագահ ակադեմիկոս Միխայիլ Ալեքսանդրովիչ Պավլովը, - համակողմանի հիմնավորված: Մոսկվայի լեռնային ակադեմիան ավարտելուց հետո 1927-1931թթ. Ի. Թևոսյանը Մոսկվայի մարզի «Էլեկտրոստալ» գործարանում աշխատում է որպես վարպետի օգնական, վարպետ, պողպատաձուլական ցեխերի պետ և գործարանի գլխավոր ինժեներ: Խնդիր էր տրված յուրացնել արտասահմանյան ամենաառաջավոր ձեռնարկությունների փորձը, արագ թափով ապահովել երկրի տեխնիկական առաջընթացը: Այդ խնդիրը լուծելու նպատակով սովետական կառավարությունը գործուղեց երկու հարյուր երիտասարդ մասնագետ, նրանց թվում էր և Ի. Թևոսյանը, Գերմանիա՝ Էսսեն քաղաք, թնդանոթային արքա Կրուպի նստավայրը: Ի. Թևոսյանին Գերմանիայից վերադառնալուց հետո, Սերգո Օրջոնիկիձեն հայտնում է, որ նա ընտրվել է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամ կուսակցության 16-րդ համագումարում:

Ի. Թևոսյանը շատ ուժ ու եռանդ է նվիրել սովետական երկրում արդյունաբերության նոր, կարևոր ճյուղի՝ էլեկտրալուր-

գիայի ստեղծմանը: Ս. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Ի. Թևոսյանը մեկնում է Գերմանիա՝ ՍՍՀՄ հրավիրելու օտարերկրյա մասնագետ-մետաղագործներին:

1931-1936 թթ. Ի. Թևոսյանը աշխատում է որպես ծանր արդյունաբերության ժողկոմատի որակյալ պողպատների և ֆերրոհամաձուլվածքների գործարանների միավորման՝ «Սպեցուրալի» առաջին կառավարիչ:

1934 թվականին կուսակցության 17-րդ համագումարում Ս. Օրջոնիկիձեն իր ելույթում ասաց, որ մեքենատրակտորային արդյունաբերությունը հպարտանում էր հաջողություններով, սակայն, «եթե մենք չունենայինք որակյալ պողպատ, մեքենատրակտորային արդյունաբերություն ունենալ չէինք կարող»: Եվ վերջում նա ընդգծում էր, որ այդ բոլոր հաջողությունները կատարում է «մեր երիտասարդ ինժեներ ընկեր Թևոսյանը, որն էլ ղեկավարում է «Սպեցուրալ» միավորումը»:

1936 թվականի վերջին Ի.Ֆ. Թևոսյանը փոխադրվեց պաշտպանական արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատ, որպես ժողովկոմիսարի առաջին տեղակալ:

Կուսակցության 18-րդ համագումարում շատ ջերմ խոսքեր ասվեցին պաշտպանական արդյունաբերության աշխատողների հասցեին, որոնց թվում հիշատակվեց և Ի. Թևոսյանի անունը:

1936 թվականի դեկտեմբերին, Ի. Թևոսյանին ուղարկում են Գերմանիա և Չեխոսլովակիա: Գործուղման նպատակն էր ծանոթանալ տանկի և նավի զրահապողպատի արտադրությանն այդ երկրներում:

Կուսակցության 18-րդ (1939թ.) համագումարից շատ չանցած, Ի. Թևոսյանը դարձավ նավաշինական արդյունաբերության ժողովրդական կոմիսար:

1940 թվականին Ի. Թևոսյանին նշանակեցին ՍՍՀՄ սև մետաղագործության ժողովրդական կոմիսար: Ի. Թևոսյանը

մեծ ուշադրություն էր դարձնում արտադրության կառավարման կազմակերպմանը:

1940թ. հունիսի 8-9-ը կայացած կուսակցական-տնտեսական ակտիվի զեկուցման մեջ նա ասաց. «Այժմ ես կանդրադառնամ ամենագլխավոր հարցին՝ կադրերի ընտրությանը: Այդ հարցը պատասխանն է մնացած բոլոր հարցերի: Ինչո՞ւ մեզ մոտ թույլ է տեխնիկական ղեկավարությունը, ինչո՞ւ չեն ապահովել հումքով, ինչո՞ւ վատ է կազմակերպվել նյութատեխնիկական մատակարարումը: Կադրերի հարցն անուշադրության է մատնված: Բոլոր տեղամասերում մենք պետք է ընտրենք նվիրված, ազնիվ, բանիմաց մարդկանց: Եթե մարդը չգիտի գործը, նա չի կարող գլուխ հանել դրանից, անհրաժեշտ է ընտրել արտադրամասերի այնպիսի պետեր, տեղակալներ, վարպետներ, գործարանների դիրեկտորներ, որոնք իմանան դոմենյան, մարտենյան և գլանման գործի տեխնիկան: Ցավոք, այդպես էլ չի եղել»: Ի. Թևոսյանը շարունակում է. «Անհրաժեշտ է այնպես վերակառուցել կենտրոնական ապարատը, որ նրա աշխատողները զգան, որ իրենք գործ ունեն ռազմաճակատի հետ, որ տեղի է ունենում ռազմական գործողություններ ...»:

Ի. Ֆ. Թևոսյանն ամենայն խորությամբ հասկանում էր արտադրության բոլոր ուժերի տեխնոլոգիան, ուստի և ձեռնարկությունների արտադրամասերի աշխատանքն ստուգում էր խոր գործիմացությամբ:

Կոլեգիայի նիստերին մարդիկ գալիս էին նախապատրաստված, իրենց նկատառումներով և առաջարկություններով, որոնք լսվում էին ուշադրությամբ: Թևոսյանը կողմնակից չէր «աղմուկի կախարդանքին» և երբեք չէր ենթարկվում անձի հեղինակությունը պաշտոնի հեղինակությամբ փոխարինելու գայթակղությանը: Այսպես էր ժողովրդական կոմիսար Ի. Ֆ. Թևոսյանի աշխատանքի ոճը:

Կուսակցությունն ու կառավարությունը, մտահոգ երկրի պաշտպանության ամրապնդմամբ, Հայրենական մեծ պատերազմի նախօրեին, մի քանի անգամ ավելացրին պաշտպանական նպատակներին հատկացվող միջոցները պետական բյուջեում: Երրորդ հնգամյակի առաջին տարիներին արդյունաբերության պաշտպանական բնագավառներում տարեկան առաջադրանքի աճը մի քանի անգամ գերազանցեց ՍՍՀՄ ողջ արդյունաբերության ողջ արտադրանքի աճին: Զրահապանկային տեխնիկայի գործարանները լուծում էին «ԿԱ» տանկերի արտադրության բարդ առաջադրանքներն ու խնդիրները, տանկ, որը հետագայում մեծ փառք վաստակեց, հռչակվեց իբրև Տ-34:

1941 թվականի հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու, հարձակվեց Սովետական Միության վրա: 1941 թվականի հոկտեմբերին կառավարությունն որոշում ընդունեց Մոսկվայի և Լենինգրադի մարզերի գործարանների փոխադրումը արևելք՝ Ուրալ և Սիբիր: Էվակուացիայի հարցը դրվեց ժողկոմատի, անձամբ Ի. Ֆ. Թևոսյանի վրա: Սովետական մետաղագործների բանակը հերոսաբար կատարեց իր ռազմաճակատային պարտականությունը, չէ որ տանկերին ոչ միայն պողպատ էր պետք, այլև 45 միլիմետրանոց և նույնիսկ ավելի հաստ զրահաթիթեղ: Թևոսյանը, կառավարության համաձայնությամբ, պատերազմը սկսելուց կարճ ժամանակ անց, Սվերդլովսկում «Գլավուրալմետի» բազայի հիման վրա կազմակերպեց ժողկոմատի մասնաճյուղ: Դրանով ապահովեցին արևելյան մետաղագործական ձեռնարկությունների ամենօրյա ղեկավարությունը և արդյունավետ օգնությունը:

1942 թվականին ևս մետաղագործության ժողկոմը հայտարարեց.

- Մինչև օրս բանակը հիմքեր չունի ասելու, թե մեր մեղքով երբևէ ընդհատվել է զինամթերքի մատակարարումը: Մենք գիտակցում ենք, որ եթե ուշացնենք սպառազինության, ռազմամթերքի, զենքի մատակարարումը բանակին, դա կլինի հանցագործություն հայրենիքի նկատմամբ:

Ստալինգրադի մոտ ֆաշիստական զորքերի ջախջախումը խուճապ առաջացրեց հակառակորդի բանակում: Հիտլերը և նրա զինակիցները չէին կարողանում հասկանալ, թե որտեղի՞ց է սովետական երկիրն ուժեր ստանում դիմագրավման համար: Հիտլերի հրամանով գնդակահարվեց նախկին զինվորական կցորդը, որը մինչև պատերազմը գտնվելով Մոսկվայում, չէր կարողացել ինչպես հարկն է տեղեկանալ ու ֆյուրերին հաղորդել Սովետական Միության անտեսանելի ռեզերվների մասին:

Ստալինգրադյան ճակատամարտն արդեն սթափեցրեց նրանց, սկսեցին կասկածել իրենց ստրատեգիայի ու տակտիկայի ճշտությանը, զենքի, մետաղի կատարելությանն ու անգերազանցելիությանը: Վերմախտի հրամանատարությունը սկսեց խթանել մետաղագործներին և կոնստրուկտորներին «Մեր պողպատը պետք է ամուր լինի սովետականից»,- պահանջում էր Հիտլերը:

Հիտլերյան գեներալ Է. Շնեյդերը խոստովանեց. «Սովետական Տ-34 տանկը սենսացիա առաջացրեց: Նրա 73.2 միլիմետրանոց թնդանոթի արկերը մեր տանկերի զրահը ճեղքում են մեկ ու կես և երկու հազար մետրից. մինչդեռ մեր տանկերը ռուսական տանկերին կարողանում են խոցել ոչ ավելի, քան 500 մետր տարածությունից և այն էլ՝ երբ արկերը դիպչում են Տ-34 տանկի կողամասին ու խելին»:

1949-1953թթ. Ի. Թևոսյանը նշանակվում է ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ և ղեկավարում սև

ու գունավոր մետալուրգիայի ածխարդյունաբերության, նավթարդյունաբերության զարգացումը, երկրի հանքային ռեսուրսների ուսումնասիրությունը:

Ի. Ֆ. Թևոսյանի կազմակերպչական աչքի ընկնող ընդունակությունները, հատկապես վառ կերպով դրսևորվեցին Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, այդ դժվարին տարիներին: Նա իր բոլոր ուժերը նվիրում է սև մետալուրգիայի զարգացմանը, մետաղով ռազմական արդյունաբերության ապահովմանը և ռազմաճակատի պատվերների օրինակելի կատարմանը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մատուցված բացառիկ ծառայությունների համար Ի. Ֆ. Թևոսյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

1953-1954թթ. Ի. Ֆ. Թևոսյանն աշխատեց մետաղագործական արդյունաբերության մինիստր, իսկ 1954-1956թթ. Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ:

1956 թվականի դեկտեմբերին Ի. Թևոսյանն անցնում է դիվանագիտական աշխատանքի Ճապոնիայում որպես ՍՍՀՄ արտակարգ ու լիազոր դեսպան: Կոմունիստական կուսակցության 16-րդ համագումարում Ի.Թևոսյանը ընտրվում է կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամ: ՍՄԿԿ 18, 19 և 20-րդ համագումարներում Ի. Թևոսյանն ընտրվում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ:

Ի. Ֆ. Թևոսյանը ՍՍՀՄ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ գումարումների Գերագույն սովետի դեպուտատ էր:

Մեծ ծառայությունների համար Ի. Ֆ. Թևոսյանը պարգևատրվել է Լենինի հինգ շքանշաններով, Աշխատանքային կարմիր դրոշի երեք շքանշաններով և մեդալներով:

Ի. Ֆ. Թևոսյանն ասկետ էր կյանքում: Աղայականության ոչ մի նշույլ, այրվում էր աշխատանքում, չէր խնայում իրեն, կարողանում էր իր ոգևորությամբ վարակել բոլորին, ուստի, նրա «գիշերային հակումները» ոչ թե հայցում էին աշխատակիցների տրտունջը, այլ համակում անկեղծ, բարի նախանձով՝ «բազմաջիղ ժողկոմի» նկատմամբ:

- Մենք ամենքս, ովքեր աշխատել ենք նրա հետ, սովորել ենք լինել սկզբունքային, ճշտապահ և համարձակ՝ միշտ ասելու այն, ինչ թելադրում է մեր խիղճը և ոչ թե սարսափը, - այդպես էր խոսում Թևոսյանի մասին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ի. Պ. Բարդինը:

Քաղվածք ՍՍՀՄ Մինիստրների նախագահի տեղակալ, Պետպլանի նախագահ Ն.Կ. Բայբուկովի հուշերից Ի.Թևոսյանի մասին. «Ի. Թևոսյանը մետաղագործության հսկան է: Որպես արդյունաբերության կազմակերպիչ, նրան կարելի է համեմատել միայն Սերգո Օրջոնիկիձեի հետ: Ինձ միշտ թվում էր, որ դոմենյան և մարտենյան վառարանների շունչն ամեն ժամ, ամեն վայրկյան վերահսկում ու կառավարում է այդ զարմանալի աշխատունակ և տաղանդավոր մարդը»: Եվ տղան՝ Վլադիմիրը, և դուստրը՝ Ռոզան, հիշում են նրան անսահման քնքշանքով:

-Հայրս իմ ամենամեծ բարեկամն էր, - պատմում է Ռոզան, - մտածում եմ՝ նրանից բարձր ոչինչ չկա: Ինչպիսի մարդ էր: Ամենից առաջ այդ կիրքը, նվիրվածությունը գործին, մինչև վերջին օրը, երբ նա, արդեն ծանր հիվանդ էր, այլևս չէր կարողանում ոտքի վրա մնալ: Նա երբեք չի խնայել իրեն: Եթե ինձ առաջարկեին մի բառով բնութագրել հայրիկիս, ես կասեի՝ պայծառ, պայծառ մարդ էր նա:

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո 1958թ. Մոսկվայում մահացավ Ի. Ֆ. Թևոսյանը:

ՍԵՐԳԵՅ ՎԻԿՏՈՐԻ ԼԱՎՐՈՎ (Քալանթարով)

Սերգեյ Վիկտորի Լավրովը (Քալանթարով), ծնվել է 1950թ. մարտի 21-ին Մոսկվայում:

Արտաքին գործերի նախարար, 1972թ. ավարտել է ԽՍՀՄ ԱԳՆ միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտը:

Ամեն ամառ մեկնել է ուսանողական շինարարական ջոկատներ (Խակասիա, Տուվա, Հեռավոր Արևելք, Յակուտիա): (2005թ.սեպտեմբերի 13-ի տեղեկություններ):

Եղել է Կոմկուսի անդամ մինչև 1991թ.: 1972-1976թթ. սպաժոր, ԽՍՀՄ դեսպանատան ատաշե, Շրի Լանկա Հանրապետությունում 1976-1981թթ. զբաղեցրել է ԽՍՀՄ ԱԳՆ միջազգային տնտեսական կազմակերպությունների բաժնի երկրորդ, երրորդ քարտուղարի պաշտոններ:

1981-1988թթ. ՄԱԿ-ին կից ԽՍՀՄ Մշտական ներկայացուցչության առաջին քարտուղար, խորհրդական, ավագ խորհրդական Նյույորքում:

1988-1992թթ. միջազգային տնտեսական կազմակերպությունների վարչության պետի տեղակալ, ԽՍՀՄ ԱԳՆ նույն վարչության պետ:

1992թ. նշանակվել է միջազգային կազմակերպությունների և ՌԴ ԱԳՆ գլոբալ պրոբլեմների դեպարտամենտի տնօրեն:

1992թ. ապրիլի 3-ին նշանակվել է ՌԴ արտաքին գործերի նախարար՝ Անդրեյ Կոզիրևի տեղակալ: Հսկել է միջազգային

կազմակերպությունների և միջազգային տնտեսական համագործակցության դեպարտամենտի մարդու իրավունքների և միջազգային կուլտուրական համագործակցության վարչության, ԱՊՀ երկրների գործերով զբաղվող դեպարտամենտի գործունեությունը: Զբաղեցրել է իր պաշտոնը մինչև 1994թ. հունվարը:

1993թ. մարտից՝ Միջգերատեսչական հանձնաժողովի համանախագահ ՌԴ մասնակցության, կոորդինացիայի գծով՝ խաղաղարար գործունեության մեջ:

1994թ. հունվարից-2004թ մարտ. ՌԴ մշտական ներկայացուցիչն է ՄԱԿ-ում, ՌԴ ներկայացուցիչը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում:

1995թ. դեկտեմբերին Ա. Կոզիրևի պաշտոնաթողությունից հետո, ՌԴ ԱԳՆ ապարատում դիտարկվել է որպես առավել սպասվող և առավել հնարավոր թեկնածուներից մեկը ՌԴ արտաքին գործերի նախարարի պաշտոնի համար:

1997թ. կառավարության հերթական վերակազմավորման ժամանակ, Ալեքսանդր Շոխինի բառերով, գաղափար կար նշանակել Լավրովին արտաքին տնտեսական կապերի և առևտրի նախարար: Սակայն նա հրաժարվեց նշանակումից, ասելով, որ «դժվար թե կարողանա լավագույն կերպով և գործին օգուտ բերելով, իրեն կայացնել հենց այդ ուղղությամբ»: (”Профиль”, 28 июня 2004г.):

2004թ. մարտի 9. Սերգեյ Լավրովը նշանակվեց ՌԴ արտաքին գործերի նախարար նոր կառավարությունում Իգոր Իվանովից հետո:

2004թ. սեպտեմբերի 10-ին Բեսլանում գերիներ վերցնելուց անմիջապես հետո, «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերության հարցազրույցում հայտարարեց. «Այդ գործիչների» (Մասխա-

դովի, Բասաևի) հետ ցանկացած բանակցություններ և հույսը, որ այդ գործիչները որևէ քաղաքական դեր կարող են խաղալ Չեչնիայի Հանրապետությունում, կնշանակի, որ քայլ կարվի դեպի նրանց հնարավորություն տալը իրենց քաղաքականության, ահաբեկչության գործունեության շարունակության համար, ՌԴ այլ մասերի հետ կապված... Ես կարող եմ տալ հանդիպակաց հարց՝ ի՞նչ վատ բան կա նրանում, որ Եվրոպան արձագանքեց Ուսամա բեն Լադենի կոչին որևէ միջոցներ իրականացնելու, նրա պայմանները կատարելու, և այդ ժամանակ բեն Լադենը հանգիստ կթողնի...Եվրոպան»: (Газета.ру, 10 сентября 2004г.)

14 սեպտեմբերի 2004թ. - ԱՄՆ Պետդեպարտամենտի ղեկավար Քոլին Պաուելը հայտարարեց, որ անհանգստացած է Ռուսաստանում սպասվող քաղաքական փոփոխությունների համար, նկատի ունենալով Պուտինի առաջարկը ընտրել ռեգիոնների ղեկավարներին, ոչ թե ուղիղ քվեարկությամբ, այլ ռեգիոնների օրենսդրական մարմինների կողմից՝ ՌԴ նախագահի առաջադրմամբ:

Պաուելն ասաց. ԱՄՆ և միջազգային հանրությունը դա ընկալում է, որպես նահանջ որոշ դեմոկրատական ռեֆորմներից, որոնք տեղ ունեին անցյալում»: Ի պատասխան դրան, Լավրովը հայտարարեց, որ նա տարօրինակ է գտնում, որ Պաուելը ընկալում է, որպես նահանջ դեմոկրատական արժեքներից, ցանկացած գործողություններ, որոնք չեն համաձայնեցվում դեմոկրատիա հասկացողության հետ միայն մեկ կոնկրետ երկրում: «Մենք չեն քննադատում այնպիսի նահանջները դեմոկրատիայի նորմերից, ինչպիսին են ԱՄՆ նախագահի անուղղակի ընտրությունները:

Այդ պատճառով, մեր ծրագրերը, մեր պրոցեսները՝ նույնպես մեր երկրների ներքին գործն է»: (Regions.ru, 2004. 15 september):

14 նոյեմբերի 2004թ. հանդես գալով հեռուստաեթերով, ասաց, որ Մոսկվան ընդունում է խորհրդային-ճապոնական դեկլարացիան (1956թ.) և պատրաստ է այն կատարել խաղաղության պայմանագրի ստորագրման դեպքում:

Այսինքն նա փաստորեն առաջարկեց Ճապոնիային համաձայնեցնել իրեն փոխանցել 2 Հարավ Հուրիլյան կղզիները և դրանով վերջակետ դնել գրեթե կեսդարյա տարածքային վեճին:

2004թ. դեկտեմբերի 7-ին հանդես գալով ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների հանդիպմանը՝ Ուկրաինայում նախագահի ընտրությունների պահին, հայտարարեց. «Ցավոք, ստիպված եմ արձանագրել, որ ԵԱՀԿ համեմատական առավելությունները ենթարկվում են էրոզիայի: Կազմակերպությունը ոչ միայն դադարում է ֆորում լինելուց, որը միացնում է պետություններն ու ժողովուրդներին, այլև, ընդհակառակը, սկսում է աշխատել նրա բաժանման համար»: Լավրովը մեղադրեց ԵԱՀԿ երկակի ստանդարտների քաղաքականության մեջ, որոնց մասին մենք բոլորս գիտենք»: («Ведомость», 8 декабря 2004г.):

2005թ. փետրվարի 18-ին այցով գտնվելով Թբիլիսիում, հրաժարվեց այցելել Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհված վրացի զինվորների հուշամատյանը:

Լավրովի խոսքերով, նա ընդունեց որոշումը, հաշվի առնելով այդ հարցի լուրջ էմոցիոնալ լարվածությունը»: Ի պատասխան՝ Վրաստանի ԱԳ նախարարը հայտարարեց, որ իջեցնում է այցի մակարդակը պաշտոնականից մինչև աշխա-

տանքային: Վրաստանի պառլամենտի նախագահ Նինո Բորջանաձեն մեղադրեց Լավրովին սեպարատիստներին աջակցելու մեջ և ասաց, որ նրա արարքը աննախադեպ դեպք է միջազգային հարաբերությունների համաշխարային պատմության և պրակտիկայի մեջ: («Комерсант», 18 февраля 2005г.):

2005թ. դեկտեմբերի 5-ին «Դիվանագիտական տարեգրքում, 2005թ.» լույս տեսավ Լավրովի հոդվածը, որում նա, մասնավորապես, մեղադրեց ԵԱՀԿ երկակի ստանդարտներում. "Կազմակերպությունը ռիսկ ունի դառնալ խմբակային շահերի գործիք և ձեռնարկության օբյեկտ որևէ մեկի գերքաղաքական դասավորվածության մեջ»:

Բացի այդ, Լավրովն ասաց, որ «հաճախ Ռուսաստանի հասարակական կարծիքի համար տրվում էին արտասահմանյան քաղաքական կենտրոնների և ֆոնդերի ռուսական ֆիլիալների դատողություններ, որոնք ֆինանսավորվում են արտասահմանյան հարկատուների գումարներով»:

2006թ. մարտի 24. Լավրովը մեկնաբանեց 2006թ. մարտի 19-ին կայացած Բելոռուսիայի նախագահի ընտրությունների արդյունքները. «Ցավոք մենք վկաներ դարձանք այն իրավիճակի, երբ ԵԱՀԿ մոնիտորինգային առաքելությունը մինչև ընտրությունները սկսեց խոսել նրանց ոչ լեգիտիմության մասին և բավականին անաչառ մեկնաբանեց հենց ընտրությունները, խաղալով սադրիչ դեր»: (РИА новости, 24 марта 2006г.):

2006 մայիսի 6. ԱԳՆ սայտում, ի պատասխան Ռուսաստանի քննադատության ԱՄՆ նախագահի տեղակալ Ռիչարդ Չեյնի կողմից, հրատարակվել է Լավրովի մեկնաբանությունը. «Ես կարծում էի, որ մարդը, որն այդպիսի պետական պաշտոն է զբաղեցնում, ունի օբյեկտիվ ինֆորմացիայի ամբողջ ծավալը: Ահա, օրինակ, կարդում ենք, որ «այսօր Ռուսաստանում բարեփոխումների հակառակորդները ձգտում են հետ շրջել և վերացնել 90-ական թվականների ձեռքբերումները»: Կարծում եմ, ռուս ժողովրդի համար պետք չէ մանրամասն բացատրել, թե դրանք ինչպիսի ձեռքբերումներ էին, երբ երկիրը փաստորեն գտնվում էր քայքայման եզրին... Կամ էլ հայտարարություն այն բանի մասին, որ ոչ մի օրինական շահերով չի կարելի արդարացնել Ռուսաստանի կողմից օգտագործած նավթի և գազի օգտագործումը, որպես շանտաժի և վախեցնելու գործիք: Նմանատիպ հայտարարություններ մենք լսել ենք ավելի ցածր պաշտոն ունեցող քաղաքական գործիչներից, բայց ԱՄՆ փոխնախագահը պետք է ինֆորմացիա ունենա, որ վերջին 40 տարիների ընթացքում մեր երկիրը, ո՛չ ԽՍՀՄ-ը, ո՛չ Ռուսաստանի Դաշնությունը, ոչ մի անգամ չի՛ խախտել և ո՛չ մի պայմանագիր նավթի և գազի ներդրման մասին արտասահման:

2006թ. հունիսի 7-ին ՌԴ ՊԴ նստաշրջանին ասաց, որ այն համահայրենակիցներին, որոնք կցանկանան ստանալ Ռուսաստանի քաղաքացիություն, կտրվեն արտոնյալ պայմաններ:

2006թ. սեպտեմբերի 1-ին հանդես գալով ՄՊՄՀԻ-ում ասաց, որ «Ռուսաստանը սկսում է շտկել իր արտաքին քաղաքականությունը» - այդպիսի խնդիր երկու ամիս առաջ բարձրացրեց Վ. Պուտինը դիվանագետների առջև: Ըստ Լավրովի խոսքերի «այդպիսի փոփոխություններ թույլ տվեցին իրականացնել Ռուսաստանի աճող հնարավորությունները»: Լավրովը քննադատեց ամերիկյան ադմինիստրացիայի արտաքին քաղաքականության կոնցեպցիան, որը ենթադրում էր, որ դեմոկրատիայի տարածումը նպաստում է աշխարհում կայունության աճին. «Մեզ չեն կարող չանհանգստացնել արտաքին քաղաքականության գաղափարախոսական փորձերը, լինի

դա կոմունիզմի տարածումը ամբողջ աշխարհով կամ ազատության և դեմոկրատիայի տարածումը բռնի ուժով»:

Նրա կարծիքով Արևմուտքի այդպիսի քաղաքականության ուղիղ հետևանք էր, կոնֆլիկտային տարածության ընդլայնումը աշխարհում և սպառազինման խնդրի դուրս մղումը համաշխարհային օրակարգից: «Ռուսաստանը,- ավելացրեց նախարարը,- դրանց համար պատասխան չի տալիս, բայց առնչվում է այդպիսի տենդենցների հետ»: Լավրովը նախազգուշացրեց, որ այսուհետ Մոսկվան չի հաշտվի միջազգային քաղաքականության հնացած կարգի հետ. «Մենք հանդես կգանք այն բանի դեմ, որ նոր աշխարհակարգում մտցվեն նախկին փոխհարաբերությունների ոչ պետքական տարրեր, այնպիսին, ինչպիսիք են բլոկային մոտեցումները, երկրների ընտրյալ խմբերի առավելությունը միջազգային քաղաքականության մեջ՝ դա արդեն երեկվա օրն է»:

2006թ. սեպտեմբերի 22-ին Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին ՄԱԿ-ի ամբիոնից պահանջեց ռուս խաղաղարարների դուրս բերումը երկրի տարածքի կոնֆլիկտի շրջանից: Նա մեղադրեց Ռուսաստանը նրանում, որ այն, պահպանելով իր ներկայությունը Աբխազիայում և Հարավային Օսեթիայում, ձգտում է պահել կոնֆլիկտը, ինչը կարող է առաջացնել նրա տարածումը աշխարհի այլ երկրների վրա: Լավրովը ի պատասխան դրան ասաց, որ Սահակաշվիլիի պահանջը կբարդացնի Ռուսաստանի և այլ միջնորդների ջանքերը կոնֆլիկտի կարգավորման հարցում: Եվ ավելացրեց. «Ես ապշած եմ այս տեքստում եղած փաստերի մեծ քանակությամբ խեղաթյուրման առկայությամբ»: (РИА новости, 22 сентября 2006г.):

Ա. Լավրովն ունի դիվանագիտական կարգ - արտակարգ և լիազոր դեսպան:

2005թ. մարտին պարգևատրվել է III աստիճանի շքանշանով՝ Հայրենիքի հանդեպ մատուցած ծառայությունների համար:

Տիրապետում է անգլերեն, ֆրանսերեն և սինգալերեն (Շրի Լանկայի լեզուներից մեկը) լեզուների:

Կինը՝ Մարիա Ալեքսանդրի Լավրովան, մասնագիտությամբ ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի է: Աշխատել է ՄԱԿ-ին կից ՌԴ մշտական ներկայացուցչության գրադարանում, «Դիվանագետների կանանց ակումբի» անդամ է:

Դուստրը՝ Եկատերինան, սովորել է Կոլումբիական համալսարանում:

Նվագում է կիթառի վրա: Գրում է բանաստեղծություններ, հորինել է, օրինակ, ՄՊՄՀԻ-ի հիմնը:

Զբաղվում է լուղարկներով փչովի լաստերի վրա լեռնային գետերով: Գերադասում է Ալպայը: Նախարար նշանակվելիս պայման դրեց, որ ամեն տարի նախագահը թույլ տա նրան գնալ արշավի և որ ոչ մի թիկնապահ նրան չուղեկցի:

Արշավների գնացել է, մասնավորապես, Յուրի Կոբալաձեի, Անդրեյ Բուգրովի և Անդրեյ Դենիսովի հետ:

Կոբալաձեն պատմում էր Լավրովի մասին. «Պատկերացրեք այսպիսի իրավիճակ. գիշեր է, դուք կանգնած եք տայգայում, ձեզ վրա անձրև է գալիս, դուք չգիտեք թե ուր գնալ, և դրա հետ միասին ձեզ մոտ կա ընդամենը 1 լուցկի: Եվ այդ ժամանակ այն մարդը, որի ոտքի մատը կոտրված էր, վերցնում է այդ լուցկին և խարույկ է վառում, փրկելով մեզ բոլորիս»:

Հավաքում է անեկդոտներ, որոնք նա շատ գիտի:

ՌԴ կառավարության նախագահ՝ Միխայիլ Ֆրադկովի ամառանոցի հարևանն է:

Նրա գործընկերները ասում են, որ նա միշտ ուշադրության կենտրոնում է: Ունի հումորի մեծ զգացում: Մի անգամ, օրինակ, հայտարարեց լրագրողներին. «Երեկ մենք վերջ դրեցինք հարբեցողությանը: Այսօր մենք նշում ենք»: Ըստ Կոբալաձեի խոսքերի. «Նրան սիրում են ամենուրեք, որտեղ էլ որ նա աշխատի»:

ՄԱԿ-ում Լավրովի աշխատանքի ընթացքում կազմակերպության գլխավոր քարտուղար Քոֆի Անանը որոշեց արգելել ծխելը շենքում: Սակայն Լավրովը, որը մոլի ծխող էր, ընդդիմացավ: Հայտարարեց, որ Անանը իրավունք չունի կարգադրումներ կատարել դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին: Դեմոնստրատիվ կերպով քայլում էր ՄԱԿ-ի շենքում շարժական մոխրամանով և ծխախոտով: - «Профиль» 28 июля 2004г.:

ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Հակոբի Թովմասյանը ծնվել է 1909 թվականին Գորիսի շրջանի Ծինուհայր գյուղում: Նրա հայրը՝ Հակոբ Թովմասյանը, բազմաթիվ ուրիշ չքավոր գյուղացիների հետ աշխատում էր Բաքվում, նավթարդյունաբերության մեջ, որպես նավթագործ բանվոր: 1919 թվականին նա վերադառնում է գյուղ ու զբաղվում է հողագործությամբ:

1926թ. Ս. Թովմասյանն ընդունվում է կոմերիտմիության շարքերը և ակտիվ կերպով մասնակցում է երիտասարդության շրջանում տարվող հասարակական-քաղաքական աշխատանքներին:

1930 թվականին Ս. Թովմասյանն ընդունվում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության շարքերը և իրեն դրսևորելով որպես ակտիվ կոմունիստ, շուտով առաջ է քաշվում կուսակցական պատասխանատու աշխատանքի: 1932-1935 թվականներին Ս. Թովմասյանն աշխատում է որպես Սիսիանի կուսակցության շրջկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1934-1935 թվականներին՝ Երևանի Կարի թիվ 1 ֆաբրիկայի կուսակցության կոմիտեի քարտուղար:

Համկ(բ) կուսակցության Անդրերկրկոմին կից մաքսիզմ-լենինիզմի դասընթացներն ավարտելուց հետո, 1936-1937 թվականներին Ս. Թովմասյանն աշխատում է Իջևանում որպես կուսակցության շրջանային կոմիտեի պրոպագանդայի

բաժնի վարիչ, իսկ 1937-1938թթ.՝ ՀՀԿ Կենտկոմում, որպես ղեկավար կուսօրգանների բաժնի հրահանգիչ: 1938-1939 թվականներին նա աշխատում է ՀԿ(բ) կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղարի պոստում:

1938 թվականից սկսած Ս. Թովմասյանն անընդմեջ ընտրվում է ՀԿ(բ) կուսակցության Կենտկոմի անդամ: 1939 թվականին նա մասնակցում է Համկ (բ) կուսակցության 18-րդ համագումարին որպես պատգամավոր՝ վճռական ձայնով: ՀԿ (բ) կուսակցության Կենտկոմը Ս. Թովմասյանին ուղարկում է աշխատանքի Հայկական ՍՍՀ ներքին գործերի ժողկոմատ, որպես ժողկոմի առաջին տեղակալ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին Ս. Թովմասյանը մեկնում է գործող բանակ և աշխատում է սկզբում որպես 15-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ: 1942թ. փետրվարից մինչև 1946թ. վերջը՝ 61-րդ հայկական հրաձգային Թամանյան դիվիզիայի հրամանատարի տեղակալ և կոմիսար: Ռազմաճակատում Ս. Թովմասյանը մի քանի անգամ վիրավորվում է և կոնտուզիա ստանում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Ս. Թովմասյանն ակտիվ կերպով մասնակցել է Կուբանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի ազատագրման համար մղված հերոսական մարտերին: Ս. Թովմասյանը մարտերի միջով Կովկասյան նախալեռներից հասել է մինչև Բեռլին: Բարձր գնահատելով Հայրենիքի հանդեպ Ս. Թովմասյանի մատուցած ծառայությունները, խորհրդային կառավարությունը նրան պարգևատրել է Լենինի, Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի երկու և երկրորդ աստիճանի մեկ Կարմիր աստղ, Աշխատանքային կարմիր դրոշ, «Պատվո նշան» շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով:

Հայրենական պատերազմի ավարտից հետո 1946-1947 թթ. Ս. Թովմասյանն աշխատում է որպես ՀԿԿ Կենտկոմի գյուղբաժնի վարիչի տեղակալ, 1948թ. հուլիսին ընտրվում է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղար: իսկ 1952-1953թթ.՝ ՀԿԿ Երևանի օկրուգային կոմիտեի երկրորդ քարտուղար: 1953թվականին, Հայկական ՍՍՀ օկրուգների լուծարումից հետո, Ս. Թովմասյանն աշխատում է ՀՀԿ Կենտկոմի ադմինիստրատիվ և առևտրաֆինանսական օրգանների բաժնի վարիչ: 1953 թվականից մինչև 1960 թվականը Ս. Հ. Թովմասյանը Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարն էր: Սուրեն Թովմասյանի առաջին քարտուղար աշխատած յոթ (1953-1960թթ.) տարիների ընթացքում հանրապետության էկոնոմիկան բոլոր բնագավառներում լուրջ առաջընթաց ապրեց: Նա հիմք դրեց արդյունաբերության նոր ճյուղերի, զարկ տալով նաև մեքենաշինությանն ու էլեկտրատեխնիկային, թեթև և սննդի արդյունաբերությանը, սկսվեց Որոտանի կասկադի շինարարությունը: Հատկապես մեծ թափ ստացավ բնակարանային շինարարությունը, շահագործման հանձնվեց 400 հազար քմ բնակելի մակերես:

Կրկնապատկվեց խաղողի արտադրությունը: Խնդիր դրվեց սոցիալիստական արդյունաբերական կենտրոններ դարձնել Հրազդանը, Չարենցավանը, Աբովյանը, Արզնին, Սևանը, մեծացրեց արդյունաբերության աշխարհագրությունը՝ ընդգրկելով նաև գյուղական շրջանները:

1961 թվականի հունվարին Ս. Թովմասյանը նշանակվել է Վիետնամի Ժողովրդական Հանրապետությունում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան:

(Վիետնամի Ժողովրդական Հանրապետությունը գտնվում է Հարավ արևելյան Ասիայում, Հնդկաչին թերակղզում: Սահ-

մանակից է Չինաստանին, Լաոսին և Կամբոջիային: Տարածությունը՝ 332, 8 հզ.կմ², բնակչությունը՝ 57, 4 մլն, մայրաքաղաքը՝ Հանոյ:

Հիմնական բնակիչները՝ 88%-ը վեթնամցիներ են: Պաշտոնական լեզուն՝ վիեթնամերենն է: Արտաքին տնտեսական հարաբերություններ է պահպանում ավելի քան 60 երկրների հետ»:

Ս. Թովմասյանը իրեն հիանալի դրսևորեց նաև դիվանագիտության ասպարեզում: Լինելով ԽՍՀՄ դեսպան սկզբում Վիեթնամում, այնուհետև Լիբիայում, ցուցաբերեց հմուտ դիվանագետին հատուկ բանիմացություն և իրադրության մեջ կողմնորոշվելու բացառիկ ընդունակություններ: Եգիպտա-իսրայելական պատերազմի նախօրեին, Ս. Թովմասյանն ի տարբերություն Եգիպտոսում խորհրդային ներկայացուցչության լավատեսական զեկույցների, նախազգուշացրել էր խորհրդային երկրի ղեկավարությանը պատերազմի դեպքում արաբների անխուսափելի պարտության և դրա հետևանքների մասին: Ս. Թովմասյանի կանխատեսումը գնահատվեց կառավարական բարձր պարգևով:

Ս. Թովմասյանին դեսպան նշանակելը ոմանք համարում են Ն.Ս. Խրուշչովի կողմից նվիրվածության փոխհատուցում (1957 թ. ԽՄԿԿ պլենումի Ս. Թովմասյանի ելույթը), բայց կյանքը ցույց է տվել, որ ըստ էության կամային կազմակերպչական բարձր հատկանիշներ ունեցող գործչին ուղարկում էին շատ դժվարին աշխատանքի: 1961թ. մեկ տարի առաջ, որ Վիեթնամը ընդունել էր սահմանադրություն, կազմել երկրի տնտեսական զարգացման առաջին հնգամյա պլանը և գտնվում էր ամերիկյան խոշորամասշտաբ ագրեսիայի նախաշեմին:

Ս. Թովմասյանը կարողացավ Վիեթնամում հստակեցնել սովետական երկրի քաղաքականությունը, լուրջ կոնտակտներ ստեղծել երկրի առաջնորդ Հո Շի Մինի և կուսակցության ղեկավար Լե Զուանի հետ: Նա կազմակերպեց խորհրդային մի շարք ղեկավարների այցելություն Վիեթնամ, իսկ առաջին տիեզերագնաց Յու.Գագարինի այցը վերածվեց համաժողովրդական տոնի: Նրա օգնությամբ մշակվեց ամերիկյան ագրեսիան դիմագրավելու մտածված, ստրատեգիական տեսակետից հիմնավորված ծրագիր: Նա կազմակերպեց նաև Հո Շի Մինի այցը Խորհրդային Միություն, այդ թվում նաև՝ Հայկական ՍՍՀ:

1965 թվականին Ս. Թովմասյանը ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց Լիբիայի Արաբական Հանրապետությունում: (Լիբիական Արաբական Սոցիալիստական Ժողովրդական Ջամահարիա. պետություն Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական մասում: Սահմանակից է Թունիսին, Ալժիրին, Նիգերին, Չադին, Սուդանին և Եգիպտոսին: Տարածությունը 1759, 5 հզ. կմ² է, բնակչությունը՝ 2, 4 մլն: Մայրաքաղաքը՝ Տրիպոլի: Պաշտոնական լեզուն արաբերենն է, պետական կրոնը՝ իսլամը: Բնակչության 92%-ը լիբիացիներ են): Հսկայական տարածություն ունեցող միապետությունը զարգացման հեռանկարներ չէր կարող ունենալ, որովհետև երկրի տնտեսական և քաղաքական կյանքում իշխում էին խոշոր ֆեոդալներն ու շեյխերը: Տնտեսական ծանր կացությունը, եվրոպական մոնոպոլիաներից կախվածությունը դժգոհություն առաջ բերեց ժողովրդական լայն մասսաների շրջանում: 1969թ. սեպտեմբերի 1-ին «Ազատ սպաներ» կազմակերպության անդամների մի խումբ՝ պետական հեղաշրջում կատարեց. տապալեց թագավորական վարչակարգը: Երկիրը հռչակվեց Լիբիայի Արաբական Հանրապետություն: Երկրի կառավարումն անցավ Հեղափոխական հրամանատարության խորհրդին՝ կապիտան (հետագայում՝ գնդապետ) Մուամար Քադաֆիի գլխավորու-

թյամբ: ՀՀԽ-ն մերժեց զարգացման կապիտալիստական ուղին և հռչակեց, որ ԼԱՀ-ը կառուցելու է «լիբիական իսլամական սոցիալիզմ»: Ս. Թովմասյանը Լիբիայում կատարված արմատական փոփոխություններում որոշակի դեր խաղաց: Վերացվեցին օտարերկրյա ռազմական բազաները, մի շարք միջոցառումներ իրականացվեցին ազգային տնտեսության զարգացման և ամրապնդման համար, մշակվեցին արտաքին քաղաքականության հիմնահարցերը:

Վերադառնալով Հայաստան նա գրեց Լիբիայի մասին մենագրություն, որը կոչվում է. «Լիբիան անկախության և սոցիալական առաջադիմության ճանապարհին» (ռուսերեն լեզվով):

Անցնելով կենսաթոշակի, Ս. Թովմասյանը կյանքի վերջին տարիներին սկսեց հանգամանորեն գրել իր անցած ուղու և առանձին քաղաքական գործիչների, ինչպես նաև գրականության և արվեստի հայ գործիչների՝ Ե. Չարենցի, Ավ. Իսահակյանի, Հր. Քոչարի, Հր. Ներսիսյանի, Մ. Սիմոնյանի և ուրիշների մասին: Նա արժեքավոր գրառումներ ուներ հայ ավանդական կուսակցությունների ու նրանց գործիչների մասին, որոնք ոչ միայն ունեն պատմական արժեք, այլ նաև ճանաչողական նշանակություն:

1975թ. Ս. Թովմասյանը գրեց «Մեծ հայրենականի ճամփաներով» գիրքը, որտեղ նա հուշագրության առաջաբանում գրում է. «Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատությունում շարադրվել է հեղինակի տեսածն ու վերապրածը, ընդգրկված են կարմիր բանակի երեք դիվիզիաների մարտական գործողությունները պատերազմի տարբեր փուլերում և ռազմաճակատի տարբեր տեղամասերում: Նրանցից 136-րդ դիվիզիան իր մարտական գործողությունների երկրորդ ամսում ներկայացվեց գվարդիական կոչման, 390-րդ դիվիզիան գլխավոր դեր խաղաց գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախման գործում: 61-րդ դիվիզիան այն դիվիզիաներից է, որոնք մասնակցել են ֆաշիստական հորդաների ջախջախմանը Արևմտյան Պրուսիայում ու Բեռլինում, ինչպես նաև Պրագայում»:

Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի հետ կապերի և հայրենադարձության պրոբլեմների նկատմամբ ընդդիմախոսները քննադատում էին նրա բացասական վերաբերմունքը:

Ինչ վերաբերվում է Սուրեն Թովմասյանի բնավորությանը, ապա չի կարելի չնշել նրա անմնացորդ նվիրվածությունը կուսակցական, պետական գործի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, անձնական բյուրեղյա մաքրությունը, անալիտիկ միտքը, խիզախությունը և հանդգնությունը:

Իր «Մայրամուտի շեմին» գրքում Ալեքսան Կիրակոսյանը Սուրեն Թովմասյանի մասին գրում է. «Ազնիվ մարդ էր: Անշուշտ, դա կարևոր հատկանիշ է ղեկավարի համար, բայց շատ դյուրահավատ էր, ինչից օգտվում էին «մտերիմները» ... Սուրեն Թովմասյանի կյանքն ինչքան հերոսական նույնքան էլ ողբերգական էր»:

Սուրեն Թովմասյանը մահացել է 1980թ. փետրվարի 10-ին, թաղված է Երևանի քաղաքային պանթեոնում:

ԱՆՏՈՆ ԵՐՎԱՆԴԻ ՔՈՉԻՆՅԱՆ

Պետական ու քաղաքական ականավոր գործիչ Անտոն Քոչինյանը ծնվել է 1913թ. նոյեմբերի 10-ին, նախկին Ղարաքիլիսայի գավառի Շահալի՝ ներկայիս Լոռվա մարզի Վահագնի գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: ՀԼԿԵՄ անդամ 1928թ.-ից: ՍՄԿԿ անդամ 1938թ.-ից: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա սովորել է Թբիլիսիի մանկավարժական տեխնիկումում: 1935 թվականին ավարտել է Երևանի բարձրագույն կոմունիստական դպրոցը: Անտոն Քոչինյանը քսանական թվականների վերջից կատարել է կոմերիտական աշխատանք: 1935-1937թթ. աշխատել է շրջանային թերթերում որպես խմբագիր: 1937-1941 թվականներին Ա. Քոչինյանը գտնվում էր կոմերիտական ղեկավար աշխատանքում: Սկզբում նա 1937թ. ընտրվում է կոմերիտմիության Ազիզբեկովի շրջկոմի առաջին քարտուղար, ապա Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի՝ կադրերի գծով քարտուղար: 1939 թվականին Ա. Քոչինյանն ընտրվում է Հայաստանի ԼԿԵՄ կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար: 1941 թվականին Ա. Քոչինյանն անցնում է կուսակցական աշխատանքի և ընտրվում Երևան քաղաքի Կիրովյան կուսշրջկոմի առաջին քարտուղար, իսկ 1943 թվականին՝ Կոտայքի կուսակցական շրջկոմի առաջին քարտուղար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ա. Քոչինյանն իր բոլոր ուժերն ու գիտելիքները նվիրում է և մեծ աշխատանք է կատարում ռազմաճակատի կարիքների համար,

արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների արտադրությունը կազմակերպելու և ավելացնելու ուղղությամբ: 1945 թվականին Ա. Քոչինյանը գործուղվում է Մոսկվա՝ ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեին առընթեր կուսակցական կազմակերպիչների բարձրագույն դպրոցում սովորելու: Դպրոցը ավարտելուց հետո, նա ընտրվում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի կադրերի գծով քարտուղար: Այդ պոստում Ա. Քոչինյանը զգալի աշխատանք է կատարում կադրերի պատրաստման համար:

1950-1951 թթ. Ա. Քոչինյանը սովորում է բարձրագույն կուսակցական դպրոցին առընթեր միամյա դասընթացներում, այնուհետև ավարտում է ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր բարձրագույն կուսակցական դպրոցը:

1952 թ.-ի հունվարին Ա. Քոչինյանն ընտրվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Երևանի օկրուգային կոմիտեի առաջին քարտուղար: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո անհրաժեշտ էր վերականգնել ժողովրդական տնտեսությունը՝ այն փոխադրելով խաղաղ ռելսերի վրա: Խորհրդային Հայաստանը, որը չնայած չէր հայտնվել պատերազմական գոտում, այնուամենայնիվ, տնտեսապես բավականին տուժել էր: Արդյունաբերության համախառն արտադրանքը ցածր էր նախապատերազմյան մակարդակից: Սակայն հայ ժողովրդի ջանքերի գնով, հետպատերազմյան տարիների ընթացքում ոչ միայն վերականգնվեց հանրապետության ժողովրդական տնտեսության նախապատերազմյան մակարդակը, այլև շահագործման հանձնվեցին արդյունաբերական հարյուրավոր նոր ձեռնարկություններ, կառուցվեցին բազմաթիվ հիդրոկայաններ, ջրամբարներ և այլն: 1943թ. նոյեմբերին ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, կրթության, մշակույթի ու լուսավորության նոր օջախներ:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում տեղի ունեցավ շատ կարևոր իրադարձություն՝ արտասահմանում բնակվող հայերի նոր զանգվածային հայրենադարձություն, 1946-1949թթ. Հայաստան վերադարձան 90 հազար տարագիր հայեր:

Չնայած իր երիտասարդ տարիքին, Ա. Քոչինյանն անցել էր կուսակցական ու պետական գործչի երկար ճանապարհ: Ա. Քոչինյանին վստահվեց Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահի պատասխանատու պաշտոնը: Նրան վիճակված էր այդ պաշտոնում ամենաերկարակյացը լինել հանրապետությունում (1952-1966թթ.): Ա. Քոչինյանը միևնույն ժամանակ նշանակվում է Հայկական ՍՍՌ արտաքին գործերի մինիստր: Նրա երկարակեցությունը կառավարության նախագահի պաշտոնում բացատրվում է նրա հանրապետության գերազանց իմացությամբ, կազմակերպչական մեծ ունակությամբ, վարվելակերպի յուրահատուկ ոճով, իսկական հայրենասերի մեծ հմայքով:

Տասնչորս տարի աշխատելով պետական բարձր պոստում, Ա. Քոչինյանը շատ բան արեց հանրապետության ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի, մասնավորապես, արդյունաբերության այնպիսի նոր, առաջադիմական ճյուղերի զարգացման համար, ինչպիսիք են ճշգրիտ սարքաշինությունը, ավտոմատիկան, էլեկտրոնիկան, ռադիոէլեկտրոնիկան և հաստոցաշինությունը: Նա մեծ ներդրում ունի նաև էներգետիկ և վառելանյութային բազայի, գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, թեթև և սննդի, քիմիական արդյունաբերության զարգացման, հանրապետության արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման գործում: Արդյունաբերության զարգացումն ավելի մոտեցավ հումքի աղբյուրներին, տեղաբաշխվեցին հանրապետության համարյա բոլոր շրջանները: Կարևոր նախաձեռնություն էր

արտադրական և գիտա-արտադրական միավորների ստեղծումը: Արդյունաբերական ձեռնարկություններ ու մասնաճյուղեր ստեղծվեցին հանրապետության ավելի քան 130 բնակավայրերում: Հանրապետության արտադրական ուժերի նման տեղաբաշխումն ուներ սոցիալական մեծ նշանակություն: 1980-ական թվականների սկզբին, հանրապետության բանվորների միջին տարեկան թվաքանակը 950 հազար էր:

Մեծ թափով շարունակվեց դեռևս Ց. Զարոբյանի հետ նախաձեռնած Արփա-Սևան ջրատարի կառուցումը: Սկսվեցին Երևանի մետրոպոլիտենի, Հայկական ատոմակայանի, Աղստաֆա-Իջևան-Հրազդան, Սևան-Շորժա երկաթուղիների, Երևան-Սևան մայրուղու, Երևանի «Հրազդան» ստադիոնի, «Ռոսիա» կինոթատրոնի և շատ ու շատ այլ օբյեկտների շինարարություններ:

Մեծ թափ ստացավ բնակարանային շինարարությունը, միայն Երևան քաղաքում տարեկան շահագործման էր հանձնվում 500 հզ. կմ² բնակտարածություն:

Նա ամենօրյա ուշադրություն էր նվիրում գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերի՝ խաղողագործության, պտղաբուծության և անասնաբուծության զարգացմանը:

Անտոն Քոչինյանը հոգատար վերաբերմունք ուներ գյուղի նկատմամբ:

Նրա սիրած խոսքն էր, որ գյուղը ազգի օրրանն է, որ հայ գյուղի օրորոցի լացի ձայնը չպետք է կտրվի, որովհետև դա ազգի հարատևման ճանապարհ է, նրա էթնիկական հենքը:

Ա. Քոչինյանը բնության մարդ էր, գերազանց գիտեր հանրապետության հողն ու ջուրը և հատկապես գյուղի մարդկանց: Նա կարող էր անուն-ազգանունով թվարկել հանրապետության կոլտնտեսությունների նախագահներին, պետական տնտեսությունների դիրեկտորներին ու արտադրության առաջավորներին:

Գյուղական բնակչությանը, հատկապես երիտասարդությանը, տեղում աշխատանքով ապահովելու նպատակով, հանրապետության բազմաթիվ գյուղերում ու ավաններում կազմակերպեցին արդյունաբերական, շինարարական, կենցաղային և արտադրական բազմաթիվ մասնաճյուղեր:

Ա. Քոչինյանը մեծ հայրենասեր էր: Հայ ազգի փաղանդաշատ զավակների հոբելյանական տարելիցները և մեր պետական տոները կազմակերպում էր մեծ շուքով և արժանավայել կերպով: Հովհ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 100-ամյակին (1969թ.) նվիրված հոբելյանական միջոցառումները վերածվեցին անկրկնելի տոնախմբությունների, որոնց մասնակցում էին նախկին Սովետական Միության բոլոր հանրապետություններից և արտասահմանյան հայաշատ երկրներից հյուրեր, սփյուռքահայեր: Հյուրերը մոտիկից ծանոթացան հայ ժողովրդին, վայելեցին նրա հյուրասիրությունը: 1968 թվականին նույն ոգևորությամբ տոնվեց Էրեբունի-Երևան 2750-ամյակը: Մայրաքաղաքի ծննդյան օրը նշվող «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը դարձավ ավանդական:

1970թ. նոյեմբերին մեծ հանդիսավորությամբ նշվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակը: Տոնախմբությանը մասնակցեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևը:

Այդ տարիներին հանրապետությունում կառուցվեցին արվեստի նոր կոթողներ. Երևանում՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, «Մայր Հայաստան» մոնումենտալ կոթողը, Սարդարապատի հերոսամարտի համալիրը, մեր ազգի արժանավոր զավակների արձաններն ու կիսանդրիները:

Մեծ հաջողությունների հասան նաև մարզական բնագավառում: 1973 թվականին Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմը դարձավ Խորհրդային Միության չեմպիոն և գավաթակիր:

Ա. Քոչինյանը լինելով իսկական հայրենասեր, համարձակ պետական և կուսակցական գործիչ, վաստակաշատ Գրիգոր Հարությունյանից հետո, այդ ոչ նպաստավոր տարիներին, բարձրացրեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Բայց նա հարցի լուծման նկատմամբ ունեցած հույսն ու հավատը չէր կորցնում:

Երևան քաղաքում և հանրապետությունում պատմական Հայաստանի տեղանուններով անվանակոչվեցին շրջաններ, ավաններ, թաղամասեր և փողոցներ: Հիմնականում վերացվեցին հայկական բնակավայրերի օտարածին անվանումները: Ա. Քոչինյանը 1966թ. հունվարից մինչև 1974թ. նոյեմբերը աշխատել է որպես ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: 1940թ.-ից եղել է ՀԿԿ ԿԿ բյուրոյի անդամության թեկնածու, իսկ 1946թ.-ից՝ անդամ: Նա պարգևատրվել է Լենինի երեք, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններով: Նա 1939թ. անընդմեջ ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի անդամ, Ա. Քոչինյանն ընտրվել է ՍՄԿԿ 19, 20, 21, 22, 23 և 24-րդ համագումարների պատգամավոր: ՍՄԿԿ 22-րդ համագումարում Ա. Քոչինյանն ընտրվեց ՍՄԿԿ Կենտկոմի անդամության թեկնածու, իսկ 23 և 24-րդ համագումարներում՝ ՍՄԿԿ Կենտկոմի անդամ: Եղել է ՍՍՀՄ 3-9 և ՀՍՍՀ 3-8 գումարումների Գերագույն խորհուրդների դեպուտատ:

Ա. Քոչինյանը եղել է մի շարք արտասահմանյան երկրներում՝ Իտալիա, Ֆինլանդիա, Եգիպտոս, Չեխոսլովակիա, Չինաստան, Բելգիա, Բուլղարիա, Հունգարիա, Մալի, ԳԴՀ, Հնդկաստան:

Ա. Քոչինյանը մահացավ 1992թ. Երևանում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԵԿԶԱԴՅԱՆ

Ալեքսանդր Հարությունի Բեկզադյանը ծնվել է 1879թ. սեպտեմբերի 15-ին Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Հայրը՝ Հարություն Բեկզադյանը, կրթությամբ իրավաբան, դատարանական չինովնիկ էր, եղել է Ռուսաստանի և Եվրոպայի մի շարք քաղաքներում, ծառայության համար ստացել է կառավարական շքանշաններ. տասնամյակին՝ «Վլադիմիրի», իսկ քսանհինգամյակին՝ «Աննայի»: Մայրը իշխանների ազնվական տոհմից էր: Նա կրթված ու զարգացած կին էր, հայերենից ու ադրբեջաներենից բացի հիանալի տիրապետում էր նաև ռուսերենին: Ալ.Բեկզադյանի ծնողներն ունեցան 16 երեխա, որոնցից մինչև չափահաս տարիքն ապրեցին 7 տղաներն ու 2 դուստրերը:

Ալեքսանդրը մանկությունն անց է կացնում Գորիս քաղաքում որտեղ էլ ստանում է նախնական կրթությունը, իսկ միջնակարգը՝ Շուշու ռեալական ուսումնարանում, որն ավարտում է 1899թ.-ին: 1900թ.-ին նա ընդունվում է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտը և վերադառնում է Բաքու: 1917թ.-ին ցարիզմի տապալումից հետո, դարձավ Անդրկովկասի բուրժուական կառավարական մարմնի՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ղեկավար անդամներից մեկի՝ ցարական դումայի անդամ. կադետ Պապաջանյանի օգնականը: 1920թ.-ին նրա եղբայրը՝ Տիգրան Բեկզադյանը, դաշնակցական կառավարության ներկայացուցիչն էր մենշևիկյան Վրաստանում (մինչև 1920թ. նոյեմբերի վերջը), իսկ նրա

բոլշևիկ եղբայրը՝ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ: Ալեքսանդր Բեկզադյանի երկու քույրերը՝ Մարիամը և Ելենան, բոլշևիկներ էին: Նրա մյուս եղբայրը՝ Հովսեփ Բեկզադյանը, դաշնակցության Բաքվի կազմակերպության անդամ էր: Հետագայում հեռացավ դաշնակցությունից և անցավ մենշևիկների կողմը: 1918թ.-ին մասնակցեց Բաթումի բանակցություններին և հիասթափություն ապրեց, ողջունեց սովետական իշխանությունը և գնաց Հյուսիսային Կովկաս, մտավ կարմիր բանակ, որպես բժիշկ, վարակվեց բծավոր տիֆով և մահացավ: Ռուբեն Բեկզադյանը դարձավ անդրկովկասյան աչքի ընկնող էսէռական գործիչներից մեկը: Հինգերորդ եղբայրը՝ Պետրոսը, նույնպես էսէռական կուսակցության գործիչներից էր: Մնացած երկու եղբայրները՝ Արամը և Գուրգենը քաղաքական կյանքում անհայտ մնացին: Մինչև 1917թ.-ը բոլոր եղբայրներն ու քույրերը ձերբակալվեցին մի քանի անգամ, դատի տրվեցին, եղան աքսորավայրերում, արտասահմանյան էմիգրացիայում: 1901թ.-ին Ալ. Բեկզադյանը մտավ սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերը: 1901-1902թթ. Կիևում ուսանելու տարիներին Ալ. Բեկզադյանը մի քանի անգամ ձերբակալվում է: Կիևի բանտում նա ծանոթանում է Ն. Բաումանի, Ի. Պյատնիցկու, Մ. Լիտվինովի հետ, առանձնապես մտերմացավ վերջինիս հետ, որի հետ բախտ վիճակվեց հետագայում շատ հանդիպումներ ունենալ և աշխատել:

Մինչև 1905թ. վերջը նա ՌՍԴԲԿ կոմիտեի անդամ էր և հանդիսանում էր ամենակարևոր բոլշևիկ ղեկավարներից մեկը:

Ալ. Բեկզադյանը 1908թ. հունվարին Ժնևում առաջին անգամ ծանոթացավ Վ. Ի. Լենինի հետ: Հետագայում Փարիզում Բեկզադյանը մի շարք հանդիպումներ ունեցավ Վ. Ի. Լենինի հետ:

1907թ. գարնանը Թիֆլիսի Երևանյան հրապարակում Կամոյի բռնագրված 250 հազար ռուբլու մեծ մասը 500 ռուբլիանոցներ էին, իսկ ցարական Ռուսաստանում դրանք անհնար էր մանրել: Արտասահմանում 500 ռուբլիանոցների փոխանակման գործում պետք էին արտակարգ հմուտ և համարձակ մարդիկ: Կուսակցությունը հարմար գտավ մասնակից և ղեկավար դարձնել Ալ. Բեկզադյանին՝ փոխանակման գործում:

1911թ. Բեկզադյանն ավարտում է Ցյուրիխի համալսարանի հասարակական-քաղաքական ֆակուլտետը, 1912թ. վերջին պաշտպանության է ներկայացնում դոկտորական դիսերտացիան: 1913թ. ստանում է իրավագիտության դոկտորի գիտական աստիճան:

Վ. Ի. Լենինը Բեկզադյանին նշանակեց բոլշևիկյան Կենտկոմի պաշտոնական ներկայացուցիչ գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում, որը տեղի ունեցավ Ենայում (Գերմանիա) 1913թ. սեպտեմբերի 14-ին:

Նա մասնակցեց համագումարի բացմանը և ներկա եղավ աշխատանքներին: Ութ տարի էմիգրացիայից հետո, 1914թ. աշնանը՝ նոյեմբերին, Ալ. Բեկզադյանը վերադարձավ Ռուսաստան: Պետերբուրգից Բաքու վերադառնալուց կարճ ժամանակ անց, Բեկզադյանը ձերբակալվում է: Երկու տարի շարունակվեց դատական գործը: Եվ միայն Նիկոլայ 2-րդ ցարի տապալումից հետո, 1917թ. փետրվարին, հնարավորություն ստացավ բանտից ազատվել: 1917թ. գարնանը Բեկզադյանը Բաքվում աշխատանքի է անցնում պարենային կոմիտեում որպես նախագահ: Բեկզադյանը նշանակվում է հացի մթերման գծով Բաքվի ժողկոմխորհի հատուկ լիազոր Հյուսիսային Կովկասում մինչև 1918թ. վերջը:

1920թ. ամռանը Բեկզադյանը մեծ դեր խաղաց Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման և կազմակերպման գործում: Երկրային կոմիտեի անդամներ Սարգիս Կասյանի և Ասքանազ Մռավյանի հետ միասին, ձևավորվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների արտասահմանյան բյուրոն, որը գործում էր Թիֆլիսում: 1920թ. նոյեմբերի վերջին նրան նշանակեցին հեղկոմի կազմում, բացի դրանից միաժամանակ վարում էր երեք պաշտոն՝ հեղկոմի նախագահի տեղակալ, արտաքին գործերի և պարենավորման ժողկոմներ:

1920թ. դեկտեմբերի 6-ի հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի հրամանով վերացվեցին դաշնակցական նախկին կառավարության դիվանագիտական ներկայացուցչությունները: Արտաքին գործերի ժողկոմատը մեծ չէր աշխատողների քանակով: Ընդամենը ուներ չորս բաժին. արտասահմանյան, քաղաքական, տեղեկատու և գաղտնի: Տեղեկատու բաժնի հիմնական խնդիրն էր սփյուռքի հետ կապեր հաստատելը: Ժողկոմատը նաև պետք է ղեկավարեր արտասահմանում ստեղծվելիք նոր դիվանագիտական հիմնարկությունների աշխատանքը: Քանի որ հեղկոմի կազմում չկար արտաքին առևտրի ժողկոմատ, նրա ֆունկցիաները նույնպես տրված էր արտաքին գործերի ժողկոմատին: Հանրապետության արտգործժողկոմատը ՀՍՍՀ կենտգործկոմի 1922թ. հուլիսի 3-ի որոշմամբ վերացվեց: Ալ.Բեկզադյանը արտաքին գործերի ժողկոմի պաշտոնում մնաց 1920թ.-ի նոյեմբերից մինչև 1921թ.-ի մայիսը:

Բեկզադյանի արտաքին գործերի ժողկոմ եղած ժամանակամիջոցում ՀՍՍՀ լիազոր ներկայացուցիչները նշանակվեցին ՌՍՖՍՀ-ում, Ուկրաինայում, ՀՍՍՀ-ում, Սովետական Ադրբեջանում՝ Միխայիլ Աթաբեկյանը, իսկ մենշևիկյան Վրաստանում՝ Դանուշ Շահվերդյանը:

Ալ. Բեկզադյանը լինելով միաժամանակ և՛ արտաքին գործերի, և՛ պարենավորման ժողկոմ, զուգակցում էր այդ երկու ժողկոմատների գործունեությունը տնտեսական, առևտրական հարաբերությունների ասպարեզում: ՀՍՍՀ հյուպատոսությունների հիմնական խնդիրն էր համարվում տնտեսական փոխօգնության կազմակերպում՝ ապրանքների ու մթերքների ձեռքբերումն ու փոխանակումը: Զբաղվում էին նաև հայ բնակչության կյանքի հարցերով:

Արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանը լինելով անկեղծ, նվիրված հայրենասեր, ցանկանում էր իր հանրապետությունը դուրս բերել միջազգային ասպարեզ: 1920թ.-ի դեկտեմբերի 9-ին նա նոտա է հղում Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին, որում ներկայացնում էր երկու պահանջ՝ «հանդիսավորապես անզոր համարել դաշնակիցների ստորագրված պայմանագիրը» և «շուտափույթ կերպով հրավիրել կոնֆերանս»:

Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ահմեդ Մուհտարը և Արևելյան ռազմաճակատի զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը Ալ. Բեկզադյանի նոտային անամոթաբար պատասխանեցին, թե ինչ վատ բան են արել գրավելով մի հողամաս, որի բնակչությունը իբր թե դեմ չէր ուրիշ պետության (Թուրքիային):

Ալ. Բեկզադյանը մի այլ նոտայում նշում է. «18-50 տարեկան ամբողջ աշխատունակ արական բնակչությունը բռնի ուժով արտաքսվում է հարազատ վայրերից և ձմռան սառնամանիքին Սարիղամիշի ու Էրզրումի շրջաններում օգտագործվում է ծանր հարկադրական աշխատանքներում»: Քեմալական կառավարությունն իր հատուկ նենգ դիվանագիտությամբ լուրջ թյուրիմացության մեջ է գցում հարևան պետություններին իրենց նկատմամբ վերաբերմունքի հարցում:

Թուրքիայում Սովետական Ռուսաստանի դեսպան Ս.Արալովն իր հուշերում գրում էր. «Այո, գալով Անկարա նա շատ դեպքերում Քեմալի խոսքերի տակ չնկատեց մասնավորապես արևելյան ճակատում կատարած գործերի էությունը»: Սովետական դեսպանատան առանձին աշխատողներ դժգոհեցին, որ Մ.Ս.Արալովը գտնվում է Քեմալի ազդեցության ներքո, հրապուրված է նրանով և իր գործունեությամբ ուժեղացնում է նրա պաշտամունքը Թուրքիայում: 1920թ.-ին Հայաստանում սովետական իշխանության հաստատումից մի քանի օր հետո, դեկտեմբերի 6-ին Ռուսաստանում սովետական իշխանության ներկայացուցիչ Լեգրանը հեռագիր է ուղարկում Չիչերինին և Օրջոնիկիձեին Ռուսաստանի մասնակցությամբ հայ-թուրքական կոնֆերանս հրավիրելու մասին: Նույն կարծիքին էր նաև Ալ. Բեկզադյանը: 1921թ.-ի հունվարի 18-ին նա մեկնում է Մոսկվա: Կոնֆերանսին մասնակցելու էին չորս պետություններ՝ Հայաստանը, Թուրքիան, Սովետական Ռուսաստանն ու Ադրբեջանը: Կոնֆերանսը տեղի էր ունենալու Մոսկվայում: Քեմալականները համաձայնվեցին բանակցություններ վարել Սովետական Ռուսաստանի հետ պնդելով, որ բանակցություններին չմասնակցի Սովետական Հայաստանի պատվիրակությունը: 1921թ.-ի փետրվարի 18-ին տեղի ունեցավ դաշնակցական հեղաշրջում, իսկ կոնֆերանսը տեղի ունեցավ 1921թ.-ի մայիսին: «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը բոլոր ուղղություններով հեռագիր է ուղարկում Հայաստանում սովետական կառավարությունը տապալելու մասին: Մոսկվա՝ կոնֆերանս, նույնպես հեռագիր ուղարկեցին, որ Ալ. Բեկզադյանը իրավունք չունի հայկական կառավարության անունից հանդես գալու: Դաշնակցականների հեռագիրը ստանալու պահին Ալ. Բեկզադյանը գտնվում էր Չիչերինի մոտ և նրանք բանակցում էին կոնֆերանսի հարցերի շուրջ:

1922թ., մեկ տարի անց, Ջենովայում ականավոր վիպասան Ալ.Շիրվանզադեն հանդիպում է Բեկզադյանի հետ: Նա իր հուշերում գրում է. «Մեր տեսակցությունը տևեց մոտ մեկ ժամ ու կես: Պարոն Բեկզադյանը իմ բոլոր (գուցե երբեմն ձանձրալի) հարցերին պատասխանեց կատարելապես քաղաքակիրթ մարդու պատրաստակամությամբ և սիրալիր:

-Կփափագեի գիտնալ ինչպե՞ս է վերաբերվում Մոսկվայի կենտրոնական կառավարությունը դեպի Սովետական Հայաստանը, դեպի հայ ժողովուրդը:

- Ամենայն համակրությամբ, կարող եմ ձեզ հավատացնել, - պատասխանեց պարոն Բեկզադյանը զգացված: - Ապացույցներ շատ կան և ես կհիշատակեմ նրանցից միայն մեկը: Անցյալ տարի, երբ ես նոր հայտարարված Սովետական Հայաստանի կողմից իբրև պատգամավոր ուղարկված էի Մոսկվա խնդրելու, որ Ալեքսանդրապոլի դաշնագրությունը վերաքննվե, ամենուրեք հանդիպեցի կենտրոնական կառավարության բոլոր շրջանների անկեղծ համակրությանը: Ես լիովին հավատացած եմ, որ այսօր Ղարսն էլ իր շրջանով և Նախիջևանն ու Սուրմալուի գավառներն էլ կցված կլինեին Սովետական Հայաստանին, եթե տեղի չունենար դժբախտ դեպք: Երևակայեցեք, ճիշտ այն օրը և այն ժամին, երբ ես Չիչերինի մոտ էի և գրեթե ստացել էի նրա հավանությունը՝ Ղարսը և հիշյալ նահանգները մեզ վերադարձնելու, կրկնում եմ, ճի՛շտ այդ վայրկյանին, ստացվեց նախկին հանրապետության վարչապետ պարոն Վրացյանի չարաբախտ հեռագիրը: Այդ հեռագրի մեջ, որ Չիչերինը կարդաց ինձ, Ս.Վրացյանը գրում էր. «Հայ ժողովուրդը տապալեց բոնավորների կառավարությունը, Բեկզադյանը չունե իրավունք որևէ բանակցություն վարելու Մոսկվայի հետ»: Բռնավորները, պարոն Վրացյանի ասելով, մենք՝ բոլշևիկներս էինք, ուրեմն և Չիչերինը:

... Սակայն այդ վայրկյանին ես այլևս ոչինչ չէի կարող անել և ստիպված եղա վերադառնալ Կովկաս ձեռնունայն»:

1921-ի փետրվարի 21-ին սկսած բանակցությունները տևեցին մինչև մարտի 14-ը: Այդ ժամանակամիջոցում Պետերբուրգում տեղի ունեցավ Կրոնշտադի հակասովետական խռովությունը: Թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյը բանակցությունների մեջ է մտնում Լլոյդ Ջորջի հետ՝ Սովետական Ռուսաստանի դեմ միացյալ զինված արշավանք սկսելու և Անդրկովկասը մինչև Բաքու զավթելու իրենց պլանների մասին: Բարդ վիճակ էր ստեղծվել Սովետական Ռուսաստանի համար: Քեմալական Թուրքիայի պատվիրակությունն իրեն հատուկ անպատկառ ձևով էր պահում բանակցությունների ժամանակ: Անամոթաբար ուզում էր ստանալ Բաթումի ու Կարսի մարզերը, Ախալքալաքի ու Ախալցխայի շրջանները, Սուրմալուի գավառը և մեծ քանակությամբ ոսկի: Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը չմասնակցեց այդ կոնֆերանսին, չնայած օրակարգի հարցերի զգալի մասը հենց Հայաստանին էին վերաբերվում: Թուրքերի պահանջով պատճառաբանելով, որ Երևանում իշխանությունը անցավ «Հայրենիքի փրկության կոմիտեին», ուստի համաձայն 1920 թ. Ալեքսանդրապոլի պայմանագիրն մտավ ուժի մեջ: Այդ պայմանագրի առաջին հոդվածով Թուրքիային հանձնվեց Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: 2-րդ հոդվածով Թուրքիան համաձայնվեց Վրաստանին զիջել Բաթումի նավահանգիստն ու քաղաքն իր տարածքով: 3-րդ հոդվածով երկու պայմանավորվող կողմերը համաձայնվեցին, որ Նախիջևանի մարզը անցնի Ադրբեջանի խնամակալության ներքո:

1921թ. մարտին, կոնֆերանսից հետո, նա հանդիպում ունեցավ Չիչերինի հետ: Նա հայտնեց, որ քեմալականները ցանկանում են բանակցություններ վարել անդրկովկասյան հան-

ռապետությունների հետ: Չնայած թուրքերը ցանկանում էին առանձին-առանձին հանդիպել հանրապետությունների հետ, սակայն նրանց դա չհաջողվեց: Մայիսի 7-ին Բաքվում կայացավ երեք հանրապետությունների խորհրդակցություն, որտեղ մասնակցում էին Գ. Օրջոնիկիձեն, Բ. Լեգրանը, Հուսենովը, Մ. Օրախելաշվիլին և Ալ. Բեկզադյանը: Խորհրդակցությունում որոշվեց միասնաբար հանդես գալ և պաշտպանել երեք հանրապետություններին հուզող հարցերը: Հայաստանում սովետական կարգերը հաստատվելուց հետո, Վրաստանի մենշևիկյան կառավարությունն արգելք էր հանդիսանում Վրաստանի վրայով Ռուսաստանից Հայաստանին օգնություն ուղարկվող պարենամթերքներ ստանալուն:

Վրաստանում ՀՍՍՀ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը 1921թ. հունվարի 10-ին իր կառավարության անունից Վրաստանի մինիստրին հղած նոտայում հայտնում էր այն խոր հուզմունքի, այն ծանր դրության մասին, որ ստեղծում էր նրա կառավարությունը իր անմարդկային վերաբերմունքով:

Նույն ժամանակ Ալ. Բեկզադյանը նոտա է ուղարկում Վրաստան, պատճեն Մոսկվա՝ Չիչերինին, որ վրաց կառավարությունը չի կատարում 1920թ. դեկտեմբերի իր հավաստացումները ՌՍՖՍՀ-ին և ՀՍՍՀ-ին ազատ տարանցման իրավունք տալու մասին: Միևնույն ժամանակ մենշևիկյան կառավարությունը հրաժարվում է իր զորքերը հանել Հայաստանի հյուսիսային սահմաններից, այսինքն՝ Բուրչալոյի գավառի «չեզոք գոտուց», որն իր մեջ ընդգրկում էր ամբողջ Լոռու գավառը: Վեճը հարթվեց, երբ Վրաստանում հաստատվեցին սովետական կարգեր: Եթե առաջին համաշխարհային պատերազմը պաշտոնապես ավարտվել էր 1918թ., ապա Հայաստանը նույնիսկ մինչև 1921թ. ամռանը չէր ազատվում այդ արհավիրքից (պատերազմից): Դեկտեմբերի 23-ին

Երևանում Ալ.Բեկզադյանը որպես պարենային գործերի ժողկոմ հանդես եկավ զեկուցումով, որտեղ նշեց, որ բանվորագյուղացիական իշխանության համար որքան հեշտ չէ բնակչության, մանավանդ, գաղթականության համար ապրուստի պայմանների ստեղծումը, բայց պետք է դա անել ինչ գնով էլ ուզում է լինի, այս էր հիմնական միտքը: Եվ թվարկում էր միջոցները, դրանց մեջ հիշատակելով դրսից պարեն ներմուծելու անհրաժեշտությունը:

Սովետական Ռուսաստանից Հայաստանում ղեկավար աշխատանքի ուղարկված Ալ.Մյասնիկյանի մի շարք ընկերներ (նրանց հետ նաև Բեկզադյանը) իրենց հետ Հայաստան բերեցին քսան վագոն ցորեն, մեկուկես միլիոն արշին մանուֆակտուրա, մեծ քանակությամբ դեղորայք, երեք միլիարդ ռուբլի թղթադրամ, 700 փութ թուղթ և մեկուկես միլիոն ռուբլու ոսկեդրամ:

Հայաստանին օգնություն ցույց տվեցին նաև անդրկովկասյան մյուս հանրապետությունները, յուրաքանչյուրն իր հերթին 500 միլիոն ռուբլի ուղարկելով: Ալ.Բեկզադյանը որպես Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ, երբեմն կատարում էր նաև կենտկոմի քարտուղարի պարտականությունները և որպես Հայաստանի հեղկոմի նախագահի տեղակալ մեծ աշխատանք էր կատարում հանրապետության կուսակցության ու հեղափոխական կյանքում: Նա գիտակցական և ճիշտ վերաբերմունք էր ցուցաբերում նախկին իշխանության մասնագիտական կադրերի նկատմամբ: Մոսկվայում եղած ժամանակ (1912թ.) լուրեր է ստանում արտակարգ հանձնաժողովի նախագահ Աթարբեկյանի գործողությունների մասին: Նա համաձայն չէր դաշնակցական բանակի սպայական կազմի զանգվածաբար ձերբակալելու և արտաքսելու փաստի հետ: Ալ. Բեկզադյանը հարց է բարձրացնում կենտրոնական

կառավարության առջև՝ միջամտել գործին և ազատել անմեղ ձերբակալվածներին: Այդ նույն կարծիքին էր նաև հեղկոմի նախագահ Ս.Կասյանը: Սովետական Հայաստանի առաջին արտաքին առևտրի ժողկոմատը պետք է առևտուր աներ արտաքին աշխարհի հետ և հաց հայթայթեր, գներ, ներմուծեր պարենամթերքներ: Արտաքին առևտրական գործառնությունները իր ձեռքում կենտրոնացնելու համար ժողկոմատը արգելեց ապրանքների մասնավոր արտահանումն ու վաճառքը, սահմանեց արտաքին առևտրի իր մենաշնորհը: 1921թ. արտաքին առևտրի ժողկոմի և ներքին գործերի ժողկոմի ստորագրությամբ ժողկոմխորհը որոշում կայացրեց վալյուտային ապրանքների մասին և սահմանեց դրանց ցուցակը: Արտաքին առևտրի ժողկոմատը ուներ նաև այլ պարտականություններ, դա դրսից ստացված ապրանքների և մթերքների բաշխումն էր: Գնումները, հիմնականում կատարվում էր Ռուսաստանից ստացած վալյուտայով:

1921թ. հունիսի 2-ին Բաքվում ստորագրվեց երկրամասի արտաքին առևտուրը միացնելու համաձայնագիր: Նրա նստավայրը լինելու է Թիֆլիսը: Համաձայնագիրը ստորագրել էին Վրաստանի հեղկոմի նախագահ Մախարաձեն, Հայաստանի և Ադրբեջանի ժողկոմխորհի նախագահն էր Մյասնիկյանն ու Նարիմանովը: Սեպտեմբերի 4-ին Կովկասյան բյուրոն որոշեց վերացնել հանրապետությունների արտաքին առևտրի ժողկոմատները և նրանց միջոցները հանձնել միացյալ օրգանին: Անդրֆեդերացիայի ստեղծման կապակցությամբ, արտաքին առևտրի վարչությունը վերածվեց Անդրկովկասի արտաքին առևտրի ժողկոմատի: Ալ. Բեկզադյանը կոլեգիայի անդամ էր և կոլեգիայի նախագահ Ռաբինովիչի (ՌՍՖՍՀ) բացակայության ժամանակ կոլեգիայի նիստերը վարում էր նա: 1922թ. ապրիլի 10-ին Ջենովայում (Իտալիա)

տեղի ունեցավ կոնֆերանս: Դեռևս 1922թ. ՌԿԿ Կենտկոմի քարտուղար Վ.Մոլոտովը Մոսկվայից հայտնում է Թիֆլիս՝ Օրջոնիկիձեին, որ կենտգործկոմը կոնֆերանսին մասնակցելու համար Անդրկովկասից նախատեսել է ուղարկել Վրացական ՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Մդիվանուն, Ադրբեջանական ՍՍՀ ժողկոմխորհի նախագահ Նարիմանովին և Հայաստանից՝ Ալ. Բեկզադյանին: Կոնֆերանսի պատվիրակությունը գլխավորեց ՌՍՖՍՀ-ի նախագահի տեղակալ՝ արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Վասիլևիչ Չիչերինը:

Ապրիլի 16-ին Ջենովայից ոչ հեռու Ռապալլոյի դղյակում, ուր տեղավորված էր սովետական կառավարության պատվիրակությունը, Գերմանիայի և ՌՍՖՍՀ-ի միջև պայմանագիր կնքվեց, որը նախատեսում էր փոխադարձ հրաժարում ռազմական վնասների փոխհատուցման:

1922թ. հոկտեմբերին Ալ. Բեկզադյանը հրապարակեց «Նոր աշխարհում» հոդված, որտեղ նշում էր, որ «Ջենովայի կոնֆերանսը սովետական դիվանագիտության առաջ բացեց եվրոպական «բարձր քաղաքականության» դռները»: Իսկ հետո ավելացրել է, թե «սովետական դիվանագիտությունը այդ դռներով մտավ ոչ թե իբրև ներողություն հայցող աշակերտ, ինչպես սպասում էին Լլոյդ Ջորջն ու Պուանկարեն, այլ համարձակ, բաց ճակատ, առանց երազական ակնկալությունների, իր հեղափոխական պարտականության պարզ գիտությամբ, որը թելադրում էր նրան մերկացնել բուրժուական դիվանագիտությունն ու եվրոպական իմպերիալիստների խարդավանքները»:

1922թ. վերջին կոմունիստական կուսակցության կենտկոմը Ալ.Բեկզադյանին պատասխանատու գործի ուղարկեց Գերմանիայում Սովետական Ռուսաստանի առևտրական ներկայացուցչությունում: Իր զբաղեցրած պաշտոնով նա ներկա-

յացուցչությունում երրորդ դեմքն էր՝ ներկայացուցիչից և տեղակալից հետո: Բեկզադյանը Գերմանիայում աշխատեց չորս տարի՝ մինչև 1926թ. վերջը: Ռապալլոյի պայմանագրի համաձայն փոխադարձ դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ պետք է հաստատել երկկողմանի առևտրական և տնտեսական նպաստավորության հիման վրա: Հանգիստ չէր անցնում սովետական առևտրային ներկայացուցչության աշխատողների, այդ թվում նաև Բեկզադյանի կյանքը: 1924թ. մայիսի 3-ին գերմանական ոստիկանությունը հարձակվեց սովետական առևտրական ներկայացուցչության վրա, իսկ երկու օր հետո սովետական շոգենավերի վրա՝ Համբուրգում և Քյոնիսբերգում: Դա հանդիսանում էր 1921թ. Ռապալլոյի պայմանագրի կոպիտ խախտում:

Պարզելով արտասահմանյան ֆոնդերը, Բեկզադյանը այդ մասին տեղյակ էր պահում սովետական, տնտեսական, այլև կուսակցական ղեկավար մարմիններին:

1926թ. հոկտեմբերի 5-ին Անդրերկկոմի նախագահությունը Բեկզադյանին նշանակեց ֆեդերացիայի առևտրի ժողկոմ: Նա միևնույն ժամանակ ՍՍՀՄ ներքին առևտրի ժողկոմատի անդրկովկասյան լիազորն էր: Նրա գործունեությունը չսահմանափակվեց միայն առևտրով: Նա ներգրավվեց երկրամասի կուսակցական, սովետական, տնտեսական հիմնարկների աշխատանքներում: 1926թ. դեկտեմբերի 8-ին Անդրերկկոմի պլենումը նրան ընտրեց կուսակցության երկրային կոմիտեի անդամ, իսկ 1927թ. հունիսին երկրային կոմիտեի նախագահության անդամության թեկնածու, 1928 թ. հունվարի 10-ին՝ նախագահության անդամ: Բացի նշված պաշտոններից նա զբաղեցրեց նաև Անդրկովկասյան արտահանման հանձնաժողովի նախագահի տեղակալի, ՍՍՀՄ Կենտգործկոմի անդամի և նրա նախագահության անդամության թեկնածուի,

միութենական կենտգործկոմին կից բյուջետային հանձնաժողովի անդամության թեկնածուի պաշտոնները: 1929թ. մայիսին սովետների անդրկովկասյան հինգերորդ համագումարում դարձավ Անդրկովկասյան տնտեսական խորհրդակցության նախագահի տեղակալ: Այդ ժամանակ արդեն նա ֆեդերացիայի կառավարության փոխնախագահն էր: Օրվա հարցը դարձյալ մնաց հացի խնդիրը:

1930թ. սեպտեմբերին Բեկզադյանը նշանակվեց Անդրֆեդերացիայի ֆինանսների ժողկոմ, մինչև նույն տարվա նոյեմբեր զբաղեցնելով միևնույն ժամանակ նաև Ֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի տեղակալի պաշտոնը:

1930թ.Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում լույս տեսնող «Տիդենս թեյն» թերթը նոյեմբերի 5-ի «Սովետական նոր լիազոր ներկայացուցիչը Օսլոյում» հոդվածում գրում է. «շուտով մայրաքաղաք կժամանի սովետական նոր դեսպան Բեկզադյանը, մի «չափազանց հեղինակավոր դեմք» Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունում, որը «պատկանում է հին բոլշևիկների ֆլանգին...»: Բեկզադյանը իրավաբան է, սովորել է Շվեյցարիայում, «որտեղ նա չափազանց մոտ է եղել Լենինին»: Սովետական պետության անվանի դիվանագետ Ալեքսանդրա Կոլանտային փոխարինեց Ալ. Բեկզադյանը, որի առաջ հարց էր դրված բարելավել սովետա-նորվեգական լարված հարաբերությունները:

1934թ. փետրվարի 4-ին սովետա-հունգարական դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին և նույն տարվա վերջերին Ալ. Բեկզադյանը նշանակվեց Սովետական Միության դեսպան Հունգարիայում: Դեսպանը լավ ծանոթ էր Հունգարիայի պատմությանը, կուլտուրային ու տնտեսությանը: Որպես բազմակողմանիորեն զարգացած մտավորական հիանալի գիտեր Հունգարիայի 1848-49թթ. հեղափոխության

պատմությունը, երբ Հաբսբուրգյան միապետության դեմ պայքարի ելավ հունգար ժողովուրդը: Հունգարական կառավարությունը փրամադրված էր դեպի Սովետական Միությունը թշնամանքով և ատելությամբ: Այդ բարդ պայմաններում նա սկսեց իր դիվանագիտական աշխատանքը: Հունգարիան, որը մեծ կարիք ուներ ՍՍՀՄ-ից տարբեր տեսակի հումք և ապրանքներ ներմուծելու, 1934թ. սովետական պետությունը արտահանեց ընդամենը 305 տոննա երկաթահանք, 15 հազար տոննա չուգուն և մեկ տոննա մորթեղեն, իսկ հաջորդ տարում ընդամենը 11 հազար 399 տոննա չուգուն: Միայն կարելի է նշել 1938թ. հունգարական չորս ֆիրմաների հետ կնքված գործարքը, երբ գնվեց 7000 ցենտներ առվույտի սերմ: Երբ Գերմանիայում 1933թ. իշխանությունն անցավ ֆաշիստների ձեռքը և Եվրոպայի կենտրոնում ստեղծվեց պատերազմի օջախ ու դրա հետևանքով մեծացավ ժողովուրդների անվտանգության սպառնալիքը, Ալ. Բեկզադյանը պայքարում էր ՍՍՀՄ արտաքին քաղաքականության գլխավոր գծի կենսագործման՝ խաղաղության ու կոլեկտիվ անվտանգության ապահովման համար:

1937թ. նոյեմբերին Ալ. Բեկզադյանը Հունգարիայից վերադարձավ Մոսկվա:

1939թ. օգոստոսի 10-ին մահացավ:

Քաղվածք Սովետական Միության հին բոլշևիկների ընկերության նախագահության որոշումից՝ «Ալ. Բեկզադյանը Շվեյցարիայից Ռուսաստան վերադառնալուց հետո անմիջապես բանտարկվում է, կուսակցությունից երբեք չի հեռացել և նրա նկատմամբ թույլ չի տրվել անվանարկում և որպես բոլշևիկ զանցանք չի գործել»:

1938թ. անհիմն բռնադատվել է, գնդակահարվել է, հետմահու արդարացվել է:

ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Լևոն Միքայելի Կարախանյան (Կարախան). պրոֆեսիոնալ հեղափոխական, սովետական ականավոր պետական գործիչ, անվանի դիվանագետ: ՍՄԿԿ անդամ 1904 թվականից: Լևոն Միքայելի Կարախանյանը ծնվել է 1889 թվականին Թիֆլիսում, Կովկասում ճանաչված փաստաբանի՝ Միքայել Հովսեփի Կարախանյանի ընտանիքում: Հայրը զբաղվում էր մասնավոր փաստաբանական գործունեությամբ, նա հիմնականում պաշտպանում էր աղքատ խավի շահերը: Մայրը՝ Նինա Թաթուլովնան, գրագետ կին էր: Լ. Կարախանյանը սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, որը չի ավարտել, որովհետև 1905թ. վերջին, ռուս-ճապոնական պատերազմից հետո, Լ.Կարախանյանը բնակություն հաստատեց Մանջուրիայի Խարբին քաղաքում, ուր տեղափոխվեց և նրա ընտանիքը:

1904թ. տասնհինգ տարեկանում նա ընդունվում է Թիֆլիսի ՌՍԴԲԿ կազմակերպության մեջ և վաղ հասակից իր բախտը կապում է համառուսաստանյան հեղափոխական շարժման հետ: Երիտասարդ Կարախանյանը կապ է հաստատում Խարբինի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, կատարում է պատասխանատու հանձնարարություններ: Նա լավ տիրապետում էր կոնսպիրացիայի կանոններին, իսկ դա հաշվի էր առնվում կուսակցական կազմակերպության կողմից: Լ. Կարախանյանը ակտիվ աշխատանք է տանում

Մանջուրիայում գտնվող ռուսական բանակի զինվորների, խաղաղօվկիանոսյան նավատորմի նավաստիների շրջանում: Նա հաճախ է լինում Վլադիվոստոկում:

1907թ. սկզբին Լ. Կարախանյանը սկսեց այցելել Վլադիվոստոկ Է. Ս. Մանանի տուն: Նրա ավագ որդու՝ Ֆեոդորի հետ վաղեմի ծանոթներ էին: Այստեղ նա ծանոթանում է իր ապագա կնոջ՝ քսանամյա գիմնազիստուհի Կլավդիայի հետ: 1908թ. Կլավդիա Մանանան ավարտելով Վլադիվոստոկի գիմնազիան մեկնում է Պետերբուրգ, որտեղ ընդունվում է բարձրագույն Բեստուժևյան կուրսերի իրավաբանական ֆակուլտետը՝ կանանց առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը Ռուսաստանում:

1908թ. Լ. Կարախանյանը ժամանում է Պետերբուրգ: Նա 1909թ. էքստեռն կարգով հաջողությամբ քննություն է հանձնում Նարվայի գիմնազիայում և ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որը ավարտում է 1915 թվականին:

1909 թվականին Լևոն Կարախանը և Կլավդիա Եֆրեմովնա Մանանան ամուսնանում են և ժամանակավորապես հեռանում սոցիալ-դեմոկրատական շարժման ակտիվ մասնակցությունից, չնայած որ հեղափոխականներին առաջվա պես ուժերի ներածին չափով օգնում են:

1910թ. գարնանը Լևոն Կարախանը Խարբին է վերադառնում: Նույն թվականի օգոստոսի 12-ին՝ Խարբինում Կարախանովը ենթարկվում է խուզարկության և ձերբակալվում է: Բայց խուզարկության ժամանակ ոստիկանությունը ոչինչ չի հայտնաբերում, երկշաբաթյա բանտարկությունից հետո, ոստիկանությունը ստիպված է լինում նրան ազատ արձակել: (Թիֆլիսի ոստիկանությունը Կարախանին «հերոս» մականունն էր տվել):

1911 թվականի մարտին Լ.Մ. Կարախանը կնոջ հետ վերադարձավ Պետերբուրգ: Այստեղ նա մտնում է ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ: Պետերբուրգի թերթերում հանդես է գալիս հոդվածներով «Կարախան» ստորագրությամբ, որն այնուհետև դառնում է Լև Կարախանի կուսակցական ծածկանունը:

1912թ. Լ. Մ. Կարախանը ոստիկանության կողմից ձերբակալվում է Պետերբուրգի համալսարանի շենքում և աքսորվում է Սիբիր: 1912թ. նորից նա Պետերբուրգում է:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց առաջ Լ.Կարախանը ՌՍԴԲԿ մեժռայոնական կազմակերպության անդամ էր: Մեժռայոնականները, տատանվելով բոլշևիկների միջև, ցենտրիստական դիրքորոշում ունեին: Լ. Կարախանը ամբողջովին անցնում է ինտերնացիոնալիստական դիրքերի, խզելով կապերը պաշտպանողականների և տատանվողականների հետ: 1914-1915 թվականներին իր գրած թռուցիկներում Լ.Կարախանը բացեիբաց պաշտպանում էր իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական վերածելու և 3-րդ ինտերնացիոնալի կազմակերպման լենինյան լոզունգը:

1916թ. դեկտեմբերին ծնվեց Կարախանի որդին՝ Միշան: 1917թ. հունվարին Լ.Կարախանին նորից բանտարկում են և աքսորում են Իրկուտսկի նահանգ: 1917թ. տեղի ունեցավ փետրվարյան հեղափոխությունը: Ստեղծվեցին բանվորական և զինվորական խորհուրդներ: Կարախանը բանտից ազատվելուց անմիջապես հետո 1917թ. ապրիլի 15-ին Սիբիրից Պետրոգրադ վերադարձավ արդեն լեգալ կերպով:

1917թ. մայիսին կայացավ մեժռայոնական կազմակերպության կոնֆերանսը: Կոնֆերանսը պետք է որոշեր կազմակերպության դիրքորոշումը բուրժուական ժամանակավոր կառավարության կազմի մեջ մենշևիկների և էսէռների մտնելու

հարցը, որը նշանակում էր բացահայտ դավաճանություն խորհուրդների իշխանության նկատմամբ: ՌՍԴԲԿ(բ)-ի ԿԿ-ին կից ստեղծվեց «մունիցիպալ խումբ», որի կազմի մեջ մտան բոլշևիկների մեժռայոնականների ներկայացուցիչներ Լ.Կարախանը, Ն.Կ. Կրուպսկայան, Ա. Վ. Լունաչարսկին, Դ. Ջ. Մանուիլսկին, Ա. Իոֆֆեն, Յու.Մ. Ավերդլովը և ուրիշներ: Ինտերնացիոնալիստականներից 37 հոգի ընտրվեցին Պետրոգրադի քաղաքային կենտրոնական դումայի կազմում: Նրանց թվում էին Լ. Մ. Կարախանը, Ա.Մ. Կոլոնտայը, Ա. Վ. Լունաչարսկին, Ուրիցկին, Յու. Մ. Ավերդլովը, Դ. Ջ. Մանուլիսկին, Պ.Ա. Կրասիկովը և ուրիշներ: Լ. Կարախանը լեգալ աշխատելով կենտգործկոմում, քաղաքային դումայում, միաժամանակ տանում էր անլեգալ աշխատանք, կապված ՌՍԴԲԿ(բ) 6-րդ համագումարի նախապատրաստման հետ: Համագումարը բացվեց 1917 թ. օգոստոսի 3-ին, կիսալեգալ պայմաններում: Լ.Կարախանը համագումարի աշխատանքներին մասնակցում էր խորհրդակցական ձայնի իրավունքով: Լ.Կարախանը կուսակցության 6-րդ համագումարում մեժռայոնականների խմբի հետ, Ա. Լունաչարսկու, Ա. Իոֆֆեի, Մ. Ուրիցկու, Դ. Մանուլիսկու և ուրիշների հետ ընդունվեց բոլշևիկյան կուսակցության շարքերը:

Հոկտեմբերյան զինված ապստամբության օրերին Լ. Կարախանը ընտրվեց Պետրոգրադի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ: Բոլշևիկյան ֆրակցիայի առաջարկով նրան ընտրեցին բանվորների և զինվորների դեպուտատների պետրոգրադյան խորհրդի նախագահության անդամ և քարտուղար: 1917 թվականի սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Կենտկոմի նիստ, որտեղ լսեցին բոլշևիկյան կենտրոնական օրգան «Պրոլետար» թերթի հարցը: Ռեպորտյորական խրոնիկայի բաժնի վարիչ նշանակվեց Լ.Մ.Կարախանը:

1917թ. հոկտեմբերի 20-ին ռազմահեղափոխական կոմիտեի առաջին նիստում Լ. Կարախանին ընտրեցին կոմիտեի քարտուղար: Բոլշևիկյան կուսակցությունը զինված ապստամբության նախապատրաստման հետ մեկտեղ ակտիվորեն նախապատրաստվում էր խորհուրդների 2-րդ համագումարին: Ամերիկայի հայտնի ժուռնալիստ Ջոն Ռիդին հետաքրքրում էր, թե Կարախանը լինելով բոլշևիկյան ղեկավարներից մեկը, ի՞նչ է մտածում Ռուսաստանի ապագա իշխանության մասին: Լ.Կարախանը շտապ պատասխանում է. «Դա խորհուրդների միջոցով դրսևորվող, ժողովրդական կամքի նկատմամբ զգայուն, մի ճկուն կազմակերպություն է, որը տեղական նախաձեռնությանը մեծագույն ազատություն է տալիս: Այժմ ժամանակավոր կառավարությունը ճիշտ այնպես, ինչպես դա արվում էր ցարի օրոք, կաշկանդում է տեղական դեմոկրատիան... նոր հասարակարգում նախաձեռնությունը կլինի ներքևից: Ղեկավարման ձևերը կսահմանվեն Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կանոնադրության համապատասխան:

Պառլամենտը կլինի նոր ԿԳԿ-ն, հաշվետու համառուսաստանյան խորհուրդների համագումարի առջև, որը պետք է հաճախակի հրավիրվի...»:

Հոկտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը ռազմահեղափոխական զորքերը գրավեցին Ձմեռային պալատը: Հեղափոխությունը հաղթանակեց: Սկսվեց նոր դարաշրջան: Ստեղծվեց առաջին խորհրդային կառավարությունը Վ.Ի. Լենինի գլխավորությամբ, որն ընդունեց խաղաղության ու հողի մասին դեկրետները:

Լ. Մ. Կարախանի դիվանագիտական գործունեությունը սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հանդիպելով Անտանտի երկրների համընդհանուր հաշ-

փություն կնքելու մերժմանը: Անտանտի երկրները ռազմական ինտերվենցիա սկսեցին Սովետական Ռուսաստանի դեմ: Ստիպված եղավ երիտասարդ Սովետական Ռուսաստանը առաջարկել սեպարատ հաշտության բանակցություններ սկսել Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ: Սեպտեմբերի 15-ին զինադադար կնքվեց ՌՍՖՍՀ-ի և գերմանա-ավստրիական խմբավորման հետ:

Լ.Կարախանին նշանակեցին Բրեստ-Լիտովսկում ռուսական պատվիրակության կազմում գերմանացիների հետ հաշտության բանակցություններ վարելու համար: Պատվիրակությունը ներկայացնում էին ոչ միայն կառավարության անդամները, այլև՝ բնակչության լայն խավերը: Պատվիրակության կազմում էին բանվոր Ֆ.Ա. Օբուխովը, գյուղացի Ռ.Ի. Ստաշկովը, զինվոր Ն.Կ. Բելյակովը, նավաստի Ֆ.Վ. Օլիչը, իսկ նախագահը՝ Ա.Ա. Իոֆֆեն, քարտուղարը՝ ՌՀԿ-ի անդամ Լ.Մ. Կարախանը, ցարական բանակի խոշոր ռազմական մասնագետը: Ռազմական փորձագետների խումբը գլխավորում էր փոխծովակալ Վ.Մ. Ալտֆուտերը, գեներալ-մայոր Սումոյլոն, գնդապետ Ֆոկկոն և ուրիշներ:

Գերմանական պատվիրակությանը գլխավորում էր արտաքին գործերի մինիստր Ֆոն Կյուլմանը, անդամ՝ գեներալ Հոֆմանը: Ավստրո-Հունգարիայից՝ արտաքին գործերի մինիստր Օ. Չեռնինը, Բուլղարիայից՝ Ա. Տոշևը, Պ. Գունչևը, Տ. Անասպասովը, Թուրքիայից՝ Հաքքը փաշան և Զեքի փաշան:

Բանակցությունների նիստը բացեց արքայազն Լեոպոլդ Բավարսկին: Սովետական պատվիրակությունն առաջադրեց առանց անեքսիայի և կոնտրիբացիայի դեմոկրատական հաշտության սկզբունքը: Գերմանական զինվորականները սրերով դիմավորեցին այդ առաջարկը: Գեներալ Հոֆմանը հայտարարեց, որ «այդպիսի պայմաններ առաջարկում են միայն

պարտված երկրներին»: Կարախանն ամեն օր Սմոլնի՝ Արտգործժողկոմատ է հաղորդում բանակցությունների ընթացքի մասին: Նրա թղթակցությունները կանոնավոր կերպով տպագրվում են «Իզվեստիա» թերթում: Տասը օր ընդմիջում հայտարարվեց: Խորհրդային պատվիրակությունը ՀԿԳԿ-ին հաշվետվություն տալու համար մեկնեց Պետրոգրադ, իսկ Լ. Կարախանը մնաց Բրեստում: 1918թ. հունվարի 5-ին Վ. Լենինը ստորագրեց խորհրդային պատվիրակների ցուցակը, այդ թվում և Լ.Կարախանին հաշտություն կնքելու բանակցություններին մասնակցելու համար: Նա միևնույն ժամանակ բանակցություններ էր վարում Ավստրո-Հունգարիայի պատվիրակության հետ, որոնք վերաբերվում են ռազմագերիների վերադարձին:

1918թ. հունվարի 21-ին Վ. Լենինի առաջարկությամբ Գ. Չիչերինը նշանակվեց արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի օգնական (նա նոր էր վերադարձել Անգլիայից, ուր գտնվում էր բանտարկության մեջ):

1918թ. հունվարի 30-ին բանակցությունները վերսկսվեցին: Խորհրդային պատվիրակության ղեկավար Տրոցկին, որ նոր էր վերադարձել Պետրոգրադից և ստացել Վ. Լենինի անմիջական ցուցումը, խախտելով այն փետրվարի 10-ին հայտարարեց, որ գերմանացիների հետ հաշտություն չի կնքում, պատերազմը Գերմանիայի հետ դադարեցնում է և հրաման է արձակում ռուսական բանակի զորացրման մասին:

Լ. Մ. Կարախանը, արդեն փորձ ունենալով Բրեստի բանակցություններում լավ էր կողմնորոշվում խաղաղության բանակցությունների նոր ոլորտում: Լինելով պատվիրակության քարտուղար՝ նա մասնակցում էր բանակցություններին, կազմում՝ արձանագրություններ, խմբագրում դրանք՝ համաձայնեցնելով գերմանացիների և այլ պատվիրակների հետ

հայտարարությունների առանձին տեքստեր, պատվիրակության անունից ստորագրում էր համատեղ արձանագրություններ, պարբերաբար բանակցությունների ընթացքի մասին զեկուցումներ էր ուղարկում Պետրոգրադ: Նրա միջոցով կառավարությունը պահպանում էր կապը պատվիրակության հետ և ղեկավարում էր պատվիրակության աշխատանքը Բրեստի բանակցություններում: Նա ուշադիր հետևում էր նաև արտասահմանյան մամուլին, որպեսզի ժամանակին արձագանքի զրպարտություններին:

Լ. Կարախանը գտնում էր, որ բանակցությունները պետք է շարունակել և ամեն ինչ անել շուտափույթ հաշտություն կնքելու համար: ՌՍԴԲԿ(բ)ԿԿ-ի նիստում հաստատվեց գերմանացիների հետ հաշտության պայմանագիր կնքելու խորհրդային պատվիրակության նոր կազմ՝ Գ. Սոկոլնիկովը պատվիրակության նախագահ, անդամներ՝ Լ. Մ. Կարախանը, Գ. Ի. Պետրովսկին, Գ. Վ. Չիչերինը:

Ն. Բուխարինի գլխավորությամբ ձախ կոմունիստները դեմ էին որևէ համաձայնության իմպերիալիստական պետությունների հետ: Նույն տեսակետն էր պաշտպանում այդ ժամանակվա արտաքին գործերի ժողկոմիսար Լ. Տրոցկին: Վ. Լենինը բոլշևիկյան կուսակցությանն ապացուցում էր հաշտության անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը: Փետրվարի 18-ին կենտրոնական կոմիտեի նիստում, «ձախ կոմունիստների» համառ դիմադրությունից հետո, մեծամասնությունը (7 կողմ, 5 դեմ, 1 ձեռնպահ) արտահայտվեց հաշտություն ստորագրելու օգտին, որի մասին Վ. Լենինը հեռագրեց գերմանական կառավարությանը: 1918թ. մարտի 3-ին, Կարախանը խորհրդային պատվիրակության մյուս անդամների հետ ստորագրեց Բրեստի հաշտությունը: ՌՍՖՍՀ-ի կառավարությունը ստիպված մարտի 3-ին ստորագրեց իրեն պարտադրված Բրեստի թալանչիական հաշտության պայմանագիրը: Բրեստի հաշտության պայմանագիրը չափազանց ծանր և նվաստացուցիչ էր Խորհրդային Ռուսաստանի համար, քանի որ այն նախատեսում էր Ռուսաստանից Մերձբալթիկայի, Ուկրաինայի և Բելոռուսիայի ընդարձակ տարածքների անջատումը:

1918 թվականի մարտի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով դադարեցվում են ռազմական գործողությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Չնայած դրան, թուրքական կանոնավոր զորքերը ներխուժեցին Անդրկովկաս, վտանգեցին Արևելյան Հայաստանի գոյությանը: Բրեստ-Լիտովսկի զավթողական պայմանագրով, օգտվելով երիտասարդ Սովետական Ռուսաստանի ներքին և արտաքին ծանր վիճակից, գերմանա-թուրքական գաղութարարները բռնի ուժով ստիպեցին ընդունել պայմանների 4-րդ հոդվածը, որով Թուրքիան զավթում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանի այն մասը, որն Առաջին համաշխարհային պատերազմում գրավվել էր ռուսական զորքերի կողմից, այլև Կարսի, Արդահանի ու Բաթումի նահանգները, որոնք մտած էին Ռուսաստանի կազմի մեջ մինչև 1914 թվականը: 1918 թվականի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ամբողջությամբ Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն չեղյալ հայտարարեց, այսինքն՝ տերիտորիալ բոլոր զիջումները համարվում են անվավեր: Թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժման կապակցությամբ Խորհրդային Ռուսաստանը չունենալով անմիջական կապեր Թուրքիայի հետ դիմեց գերմանական կառավարությանը՝ Թուրքիայի նախկին դաշնակից և Անդրկովկասում նրա հյուպատոսական ներկայացուցչին. «հետ պահել թուրքական զորքերին սովորական էքսցեսներից»: 1918թ. ապրիլի 12-ի Վ.Չիչերինի և Լ.Կարախանի ստորագրությամբ նոտա են

հղում, որտեղ ասված է, որ «այն սարսափների համար, որոնց ներկայումս ենթարկվում է հայ բնակչությունը թուրքական բանակի կողմից գրավված շրջաններում, պատասխանատվություն է կրելու գերմանական կառավարությունը...»:

1918 թ. հունիսի սկզբներին Լ.Կարախանը հայտնում է Կովկասի գործերով արտակարգ կոմիսար Ս.Գ. Շահումյանին, որ գերմանացիների հետ բանակցություններ են տարվում, որպեսզի նրանք, կասեցնեն թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Բաքու: Կարախանը 1918թ. օգոստոսի 1-ին Ս.Շահումյանին գրում է, որ «թուրքերը ենթարկվեցին գերմանացիների պահանջին՝ դադարեցնել ռազմական գործողությունները, առաջ չշարժվել և խոստանում են հետագայում չհարձակվել Բաքվի վրա»:

Հաշվի առնելով այն ժամանակվա թուրքական կառավարության թշնամական դիրքորոշումը, խորհրդային կառավարությունը 1919թ. սեպտեմբերի 20-ին դադարեցրեց ՌՍՖՍՀ-ի և Թուրքիայի հարաբերություններում Բրեստի հաշտության պայմանագրի գործողությունները:

1918 թվականի մարտի 10-12-ը ՌԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն և խորհրդային կառավարությունը Պետրոգրադից փոխադրվեցին Մոսկվա: Մոսկվան դարձավ խորհրդային պետության մայրաքաղաքը: Միաժամանակ Մոսկվա փոխադրվեց և արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը: Մոսկվա ժամանելուց հետո Լ.Կարախանը ընտանիքով բնակություն հաստատեց «Մետրոպոլ» հյուրանոցի երրորդ հարկում, որտեղ նրա հարևանությամբ ապրում էր Գ.Չիչերինը: Չնայած տարիքային տարբերությանը՝ Գ.Չիչերինը (ծնվ.1872թ.) միշտ ձգտել է դեպի երիտասարդ, ակտիվ, բարեհամբույր Կարախանը (ծնվ.1889թ.): Գ. Չիչերինը սիրում էր այցելել Լ.Կարախանին ժողկոմատում՝ իր առանձնասենյակում, իսկ երբեմն էլ տանը՝ լսելու իր կողմից այդքան սիրված Մոցարտի երաժշտությունը: Նրանք այդ ժամանակ ապրում էին միևնույն շենքում Սպասո- Պեսկովյան հրապարակում: Լ. Կարախանը շատ էր սիրում երաժշտություն: «Իրենց տանը,- հիշում է նրա դուստր Իրինան, կար մեխանիկական դաշնամուր՝ պիանինա, բազմաթիվ ձայնասկավառակներ և հայկական լարային գործիք՝ թառ»:

Զբաղված լինելով ակտիվ դիվանագիտական աշխատանքով՝ Լ. Կարախանը, այնուամենայնիվ, ժամանակ է գտնում սպորտով զբաղվելու համար՝ խաղում է թենիս, պարապելով հայտնի թենիսիստ Նովիկովի մոտ, ձմռանը չմուշկներ է քշում, այցելում է ձիարշավարան: Եվ իհարկե, նա սիրում է թատրոնը, բաց չի թողնում հնարավորությունը այցելել բալետ կամ օպերա: 1930թ. հուլիսին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՀՄ ժողովուրդների թատրոնների և արվեստների առաջին օլիմպիադան, որին մասնակցում էին 17 թատրոններ 30 ներկայացումներով: Կար նաև հայկական անսամբլի ելույթը, որը Լ. Կարախանը բաց թողնել չէր կարող: Նրան լավ գիտեին Մեծ թատրոնում և նույնիսկ որպես կոնսուլտանտ հրավիրել էին Ռ. Գլիերի «Կարմիր կակաչ» օպերայի բեմադրման ժամանակ:

1918թ. մայիսի 20-ին ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինի ստորագրությամբ Լ. Կարախանը նշանակվեց արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, իսկ մայիսի 30-ին՝ Գ. Չիչերինը՝ ժողկոմ:

Ժողկոմատում աշխատելու առաջին իսկ օրվանից Լ. Կարախանի և Գ. Չիչերինի միջև ջերմ բարեկամական հարաբերություններ ստեղծվեցին: Ժողկոմը մշտապես հայրական վերաբերմունք էր ցույց տալիս, իսկ նա էլ իր հերթին պատասխանում էր որդիական սիրով և հարգանքով: Համատեղ աշխատանքի ընթացքում Լ.Կարախանը և Գ. Չիչերինը շատ

գործեր արեցին, մանրամասնորեն քննարկեցին խորհրդային դիվանագիտության հաջորդ քայլերը, պատրաստում էին նոտաների և հայտարարությունների նախագծեր, միասին ընդունում էին արտաքին գործերի դիվանագիտական հյուպատոսական ներկայացուցիչներին և անգամ շատ նոտաներ ուղարկում էին երկուսի ստորագրությամբ: Լ. Կարախանը շատ բան է սովորել Գ.Չիչերինից, որը ոչ միայն խորագիտակ էր, տիրապետում էր օտար լեզուների, ուներ դիվանագիտական փորձ, քանի որ աշխատել էր ցարական արտաքին գործերի մինիստրությունում և երկար տարիներ անց էր կացրել էմիգրացիայում, այլև միջազգային լայն կապեր ուներ տարբեր երկրների սոցիալիստների հետ:

Արտաքին գործերի ժողկոմատի երկու ղեկավարների անձնական բարեկամությունը հեշտացնում էր շատ հարցերի լուծումը:

Ահա թե ինչ է գրում ժողկոմ Գ. Չիչերինը Վ. Լենինին և ինչ բարձր գնահատական է տալիս իր տեղակալ Լ.Կարախանին.«Մինչև այժմ մեզ հարկ է եղել միանգամայն անբավարար ուժերով և ապարատի պրիմիտիվ սաղմով գլուխ բերել վիթխարի և տեխնիկական աշխատանք: Ես կարող եմ համարձակորեն ասել, որ մեզ խեղդող խիստ պատասխանատու քաղաքական աշխատանքում վերջին ամիսների մեր պայքարը մի շարք պետությունների հետ հարաբերությունների զարգացման պայմաններում, ուղղակի հերոսական էր: Մենք ի վիճակի եղանք դրանից գլուխ հանել միայն շնորհիվ այն բանի, որ ընկ. Կարախանի հետ բացարձակապես համերաշխ եղանք, քանի որ կես խոսքից իրար հասկանում ենք առանց ժամանակ կորցնելու դատողությունների վրա և առանց դժվարության բաշխում ենք աշխատանքը, բացարձակապես ընտելացել ենք բաժանել այն միմյանց միջև: Ընդհանրապես

և ամբողջությամբ վերցրած ես կատարում եմ ավելի ընդհանուր քաղաքական աշխատանքը, իսկ նա՝ մանրամասնությունների մի ծով աշխատանք, որոնցից նա կարող է գլուխ հանել միայն գործերում արագ և հեշտ կողմնորոշվելու և դրանք ընդգրկելու իր հիանալի ընդունակության, իր պարզ, առողջ դատողության և հիանալի քաղաքական հոտառության շնորհիվ, որը նրան դարձնում է բացարձակապես անփոխարինելի այդ բնագավառում»:

«Մետրոպոլի» շենքում ԱԳԺԿ-ն զբաղեցնում էր մի քանի սենյակ: Ժողկոմ Չիչերինը կարգադրեց հավաքել գորգերն ու արջի մորթիները և հյուրանոցի նախկին համարները դարձնել աշխատանքային առանձնասենյակներ: Լ.Կարախանը կոմիսարիատում զբաղվում էր կադրերի ընտրության ու տեղաբաշխման, տնտեսական հարցերով, արձանագրություններով և ապարատի արտաքին քաղաքական բազմաթիվ այլ հարցերով: Նա հատկապես ծանր 1919թ.-ին, ստիպված էր զբաղվել ամենօրյա հարցերով՝ ներառյալ ԱԳԺԿ աշխատակիցների կենցաղի կազմակերպումը:

Հետաքրքիր է ծանոթանալ ժողկոմ Գ.Չիչերինի նամակին ուղղված արտաքսահմանի սովետական ներկայացուցիչներին. «Ռուսաստանի ներկայացուցիչների համեստությունն ու ապրելակերպի պարզությունը պետք է համապատասխանի մեր հասարակարգի և մեր բանվորների ու գյուղացիների պետության բնույթին: Ոչ մի դեպքում արտաքսահմանում դիտորդների շրջանում չպետք է այնպիսի պատկերացում ստեղծել, թե իբր պատասխանատու պաշտոններ զբաղեցնող սովետական աշխատակիցները հնարավորություն ունեն դրամական մեծ միջոցներ ծախսել և օգտվել ճոխ ու հարմարավետ պայմաններից, որոնք անհասանելի են սովետական քաղաքացիների լայն մասսային»:

1917թ. հոկտեմբերին Վ. Լենինը, Լ.Կարախանը և Բոնչ-Բրուևիչը ստորագրեցին դեկրետ՝ արտասահմանյան երկրներում երիտասարդ խորհրդային հանրապետության հյուպատոսական և ընդհանուր դիվանագիտական ներկայացուցչություններ հաստատող հյուպատոսություններ կազմակերպելու համար: 1918թ. օգոստոսի 29-ին Վ. Լենինի ստորագրությամբ Լ.Կարախանը և Վ. Բոնչ-Բրուևիչը հրապարակեցին ժողկոմխորհի դեկրետը նախկին ռուսաստանյան կայսրության կառավարության պայմանագրերից հրաժարվելու մասին: Ավելի ուշ Լ.Կարախանը, Վ. Լենինի հետ ստորագրեցին ՌԽՖՍՀ-ի ժողկոմխորհի որոշումը արտասահման մեկնող խորհրդային քաղաքացիներին արտասահմանյան անձնագրեր ստանալու մասին: Լ. Կարախանը, որը մինչև 1917թ. հեղափոխությունն աշխատում էր որպես լրագրող, լավ գիտեր հասարակական կարծիքի գինը: Այդ պատճառով նա պատրաստակամությամբ հանդիպում էր օտարերկրյա լրագրողների և գրողների հետ, որոնք այդ ընթացքում այցելում էին Ռուսաստան, զրուցում էր նրանց հետ, պարզաբանում Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը: Լ.Կարախանը լայն բացատրական աշխատանք էր տանում տարբեր քաղաքական կարծիքների օտարերկրյա քաղաքական գործիչների հետ: Լ.Կարախանը միշտ հետևել է անդրկովկասյան գործերին: Խորհրդային կառավարությունը միշտ ընդգրկում էր Լ.Կարախանին անդրկովկասյան հանրապետություններին վերաբերվող հարցերի քննարկմանը և լուծմանը: Լ.Կարախանը հարաբերություններ և կապեր էր պահպանում Մոսկվայում Հայաստանի և Անդրկովկասի հանրապետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, հանդիպումներ էր ունենում Գ. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ն. Նարիմանովի, Ալ. Բեկզադյանի, Բ. Լեգրանի, Ծ. Էլիավիայի հետ:

1918թ. մայիսի կեսերին Բեռլինում և Մոսկվայում սկսվեցին խորհրդա-գերմանական բանակցությունները տնտեսական հարցերի շուրջ, որոնք սակայն շուտով ընդհատվեցին: Այս կարևոր տնտեսական և քաղաքական հարցերին, որոնք ավելի ուշ իրենց արտացոլումը գտան խորհրդա-գերմանական հավելյալ պայմանագրում, կողմերը անդրադարձան միայն հունիսի երկրորդ կեսին, երբ դադարեցվեց գերմանական զորքերի անօրինական առաջխաղացումը դեպի Ռուսաստանի կենտրոնական շրջանները: Այդ ամբողջ ժամանակ Լ.Կարախանն ակտիվ բանակցության մեջ էր Գերմանիայում Ռուսաստանի ներկայացուցչության հետ, խնդրելով այնտեղից տեղեկություններ խորհրդա-գերմանական բանակցությունների ընթացքի, միջազգային գործերի մասին:

1918թ. գարնանը և աշնանը Լ.Կարախանը մշտական պաշտոնական կապեր էր պահում ինչպես Ռուսաստանում հավատագրված Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների, այնպես էլ Մոսկվայում մնացած Անտանտի պետությունների և ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Անտանտի երկրների դիվանագիտական ներկայացուցիչներից հատկապես ակտիվ էր Գ. Լոկկարտը, որի հետ Լ. Կարախանը հաճախ հանդիպում էր:

Լ.Կարախանին մտահոգում էին շատ հարցեր: Առաջնայիններից մեկը կայանում էր նրանում, որ կատարելագործվի նոր ժողկոմատի աշխատանքը կազմակերպչական առումով: Աշխատանքի այս հատվածը հիմնականում ընկավ Լ.Կարախանի ուսերին: Նախ և առաջ, անհրաժեշտ էր գտնել բանիմաց մարդկանց Արտգործժողկոմատի ապարատի և նրա արտասահմանյան հիմնարկությունների համար:

Լ. Կարախանը ուշադիր հետևում է արտասահմանում առաջին խորհրդային ներկայացուցչությունների աշխատանքին, տալիս է խորհուրդներ, տրամադրում անհրաժեշտ օգնություն:

Հուլիսի 6-ին Լ.Կարախանի առանձնասենյակ է գալիս գերմանական դեսպանի համհարզը և հայտնում, որ սպանվել է կոմս Ֆոն Միրբախը: Այդ նույն օրը Վ. Լենինը, Գ. Չիչերինը, Լ. Կարախանը և Վ. Բոնչ-Բրուևիչը գնացին գերմանական դեսպանատուն: Խորհրդային կառավարության ղեկավարը խոր ցավակցություն հայտնեց հավաստիացնելով, որ դեսպանին սպանողները կգտնվեն և արժանի պատիժ կստանան: Դեսպանի սպանությունը չեխ էսէռների ձառնարկած հակախորհրդային խռովության ակտ էր: Կոմինտերնի I կոնգրեսի նախապատրաստման ժամանակ, որը տեղի է ունեցել 1919 թվականի մարտի սկզբներին, Լ.Կարախանը նույնպես ընտրվեց կոմինտերնի գործկոմի անդամ:

Լ. Կարախանը ուներ դիվանագիտական բանակցություններ վարելու հմտություն և տաղանդ: Նա այնպես էր հիմնավորում խորհրդային դիրքորոշումը, որ հաճախ փակուղղու մեջ էր դնում հակառակ կողմի բանակցողին: Լ.Կարախանը սիրում էր ճկունությունը դիվանագիտության մեջ: Նա հաճախ ընդգծում էր, որ չի կարելի այս կամ այն հարցը լուծել բացեիբաց կամ կոպտորեն, ավելի հարմար է կատարել նույն հանձնարարությունն ավելի ճկուն: Նույնիսկ այն զրույցներում, որոնք երբեմն սուր բնույթ էին կրում, նա միշտ գտնում էր այնպիսի պատասխան, որը չէր վիրավորի զրուցակցին: Այսպես, մեկ անգամ Լեհաստանի արտաքին գործերի մինիստր Կ. Սկիմունտը, Լ. Կարախանի հետ զրույցում փորձել է շրջանցել լեհ-ռումինական դաշինքի հակառուսական ուղղվածության մասին հարցը, բացականչեց.

- Ինչպես Ձեզ հետ զրուցել, եթե դուք չեք հավատում նրան, ինչ ասում է բարեկամական հանրապետության արտաքին գործերի մինիստրը: Մի՞թե դուք կարծում եք, որ ես սուտ եմ:

- Դիվանագետները, և շատ հարգված դիվանագետները, - պատասխանեց Լ.Կարախանը:- Ես երբեմն ստիպված եմ լինում թաքցնել ճշմարտությունը և չցուցադրել իրենց հարաբերությունները այլ պետությունների հետ, և նրանց դրանում չեք մեղադրում, այլ բոլորը հասկանում են, որ դա իրենց մասնագիտության անհարմարությունից է:

Արտաքին գործերի ժողկոմատի կոլեգիայի 1919թ. ապրիլի 25-ի որոշմամբ Լ. Կարախանին հանձնարարվեց Արևելքի բաժնի ղեկավարությունը, ժողկոմատի տեխնիկական բաժինների ղեկավարությունը, ինչպես նաև այն հարցերի պատասխանատվությունը, որոնք վերաբերվում էին Նիդեռլանդների, Շվեյցարիայի, Ասիայի երկրների, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի հետ ՌԽՖՍՀ-ի փոխհարաբերություններին:

1919թ. սկզբներին Աֆղանստանի Ամանուլու խանը իր երկիրը հռչակեց Անգլիայից անկախ և Խորհրդային Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջին քայլերն արեց: 1919թ. հոկտեմբերի 14-ին Լ.Կարախանը մասնակցեց Վ.Լենինի և Աֆղանստանի դիվանագիտական ներկայացուցչի զրույցին: 1919թ. հունիսին Վ. Լենինը և Լ.Կարախանը ստորագրեցին Յա. Սուրիցիայի՝ Աֆղանստանում խորհրդային առաջին լիազոր ներկայացուցչի հավատարմագիրը: 1921թ. փետրվարի 28-ին Մոսկվայում ստորագրվեց խորհրդա-աֆղանական բարեկամության պայմանագիրը: Պայմանագիրը ստորագրել էին Գ.Չիչերինը և Լ. Կարախանը: 1921թ. փետրվարի 26-ին ստորագրվեց խորհրդա-իրանական պայմանագիրը: Իրանի համար առաջին իրավահավասար պայմանագիրը մեծ տերության

հետ, որը հիմնված է սուվերենության, հարգանքի, ազգային անկախության և տերիտորիալ անձեռնմխելիության վրա: Խորհրդային կառավարությունը անհապույց կերպով Իրանին հանձնեց հսկայական նյութական արժեք ներկայացնող նախկին ռուսական ունեցվածքը, որը ոսկով կազմում էր ավելի քան 500 մլն ռուբլի: Պայմանագիրը ստորագրեցին Գ. Չիչերինը և Լ.Կարախանը:

1920թ. ապրիլի 26-ին թուրքական նոր կառավարության ղեկավար Մ. Քեմալը դիմեց Վ. Լենինին առաջարկելով երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Հունիսի 3-ին արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը խորհրդային կառավարության անունից համաձայնություն տվեց: 1920թ. հուլիսին Վ. Լենինը ընդունեց թուրքական պատվիրակությանը: Բանակցություններին մասնակցում էին Գ. Չիչերինը և Լ. Կարախանը: 1921թ. մարտի 16-ին ստորագրվեց խորհրդա-թուրքական պայմանագիրը:

1920թ. սեպտեմբերին Լ. Կարախանը Խորհրդային Ռուսաստանի անունից չինական կառավարությանը բարեկամական ուղերձ ուղարկեց: Այդ փաստաթուղթը լայն արձագանք գտավ չինական ազգաբնակչության շրջանում: Չինաստանում, ՌԽՖՍՀ-ի միսիայի խորհրդական Հ. Դավթյանը գրում է ԱԳԺԿ. «Այն հանդիպումներից, որ ես արդեն ունեցել եմ չինական հասարակության ներկայացուցիչների հետ, ես հատուկ տպավորություն ստացա, որ այստեղ Խորհրդային Ռուսաստանի համար աղոթում են և 19-20-ական թվականների մեր դեկլարացիաների շնորհիվ հաջողվեց մեր կողմը գրավել չին ժողովրդի համակրանքը»: Պատասխանելով Հ. Դավթյանին, Լ.Կարախանը գրում է. «Դա ինձ շատ հաճելի է լսել, քանի որ այդ դեկլարացիաների հեղինակը ես եմ»: Լ.Կարախանը Հ. Դավթյանի և Ա. Իոֆֆեի հետ մեծ աշխատանք տարան

սովետա-չինական հարաբերությունների բարելավման համար: 1922թ. հունվարին Անտանտի պետությունների Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Ջենովայում (Իտալիա) կազմակերպել միջազգային կոնֆերանս կապիտալիստական 28 պետությունների, այդ թվում Խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ:

ԱՄՆ-ի ներկայացուցիչը մասնակցում էր որպես դիտորդ: Կոնֆերանսը տեղի ունեցավ 1922թ. ապրիլի 10-ից մայիսի 19-ը: Խորհրդային պատվիրակության Ջենովա մեկնելու պահից մինչև 1922թ. աշունը Լ.Կարախանը կատարում էր ժողկոմի պարտականությունները:

Խորհրդային դիվանագիտությունը կարողացավ Ջենովայի կոնֆերանսի ընթացքում ստորագրել Գերմանիայի հետ Ռապալլոյի պայմանագիրը, որը հիմք դրեց Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի միջև հետպատերազմյան ընդարձակ տնտեսական և քաղաքական համագործակցության:

1922թ. ապրիլի 16-ին Ռապալլոյում (Ջենովայի մոտ) ստորագրվեց ՌՍՖՍՀ-ի և Գերմանիայի միջև պայմանագիր, որտեղ ասված էր, որ ամբողջ ծավալով անհապաղ վերականգնվում է դիվանագիտական հարաբերությունները կողմերի միջև, որոնք փոխադարձ համաձայնությամբ հրաժարվում են ռազմական ծախսերի և վնասների հատուցումից: 1922թ. նոյեմբերի 5-ի համաձայնագրով Ռապալլոյի պայմանագիրը տարածվում է խորհրդային մյուս հանրապետությունների (այդ թվում և Հայկ.ՍՍՀ) վրա:

Նախնական գնահատական տալով Ջենովայի կոնֆերանսի ընթացքին Լ.Կարախանը գրում էր խորհրդային պատվիրակության ղեկավար Գ.Չիչերինին, որ «Անտանտի տակտիկան կայանում է նրանում, որ տալ մեծ առերես քաղաքական բավարարվածություն իսկ նրանց բավարարվածություն

մասնավոր իրավունքների վերականգնմամբ: Մենք նախատեսում էինք, որ նրանք կպնդեն այս հարցում: Այն, որ նրանք այս հարցը ուլտիմատիվ են դնում, վկայում է նրա մասին, որ նրանք ընդհանրապես հաշվի չառան այն փաստը, թե որքան կտրուկ փոխվեց մեր համաշխարհային դրությունը Ջենովա հրավերով և Ջենովայի կոնֆերանսի առաջին օրով: Մեծ տերության մեր կարգավիճակը դարձավ ճանաչված փաստ, և ոչ մեկի գիտակցությունից այդ փաստը չես հանի: Եթե մենք հեռանանք կոնֆերանսից առանց որևէ պրակտիկ պայմանավորվածությունների, մենք կհեռանանք շատ ավելի ամրապնդված միջազգային հեղինակությամբ, քան եկել էինք»:

1921թ. Լ.Կարախանը նշանակվեց Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեհաստանում:

1923թ.-1927 թ. աշխատում էր Չինաստանում, 1927 թվականից մինչև 1934 թվականը եղել է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ: 1929թ. գարնանը Աֆղանստանում տեղի ունեցավ ազգային ազատության թշնամական ուժերի ապստամբություն: Ադուլլահ թագավորը պաշտոնանկ արվեց: Հայտնի դարձաց իրանա-աֆղանական սահմանի իրավիճակի բարդացումից խուսափելու համար 1929թ. ապրիլի 15-ին ժողկոմի տեղակալ Լ.Կարախանը դիմեց Մոսկվայում Իրանի դեսպան Անսուրիին, որպեսզի իրանական կառավարության ուշադրությունը գրավի Աֆղանստանի նկատմամբ որոշ իրանական շրջանների անպատասխանատու քաղաքականության դեմ, միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Նման դիմում արվեց 1929թ. ապրիլի 17-ին Իրանում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչ Հ. Դավթյանի կողմից արտաքին գործերի պաշտոնակատար Ֆուրզինին: Լ.Կարախանը բարձրացրեց այս հարցը նաև թուրքական դեսպան Ռաջիբ բեյի հետ զրույցի ընթացքում 1929թ. ապրիլի 11-ին՝ առաջարկելով Թուրքիային միանալ այս դեմարշին:

Խորհրդային կառավարությունը կարևոր նշանակություն է տալիս հարավային հարևանի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացմանը: 1929 թվականի դեկտեմբերին պաշտոնական այցով Լ.Կարախանը մեկնեց Թուրքիա՝ 1925 թ. դեկտեմբերի 17-ին ԽՍՀՄ և Թուրքիայի միջև ստորագրված չհարձակման մասին պայմանագիրը երկարացնելու համար: Դա առաջին այցն էր արտասահման՝ որպես ժողկոմի տեղակալ:

Լ.Կարախանը ստորագրեց սովետա-թուրքական պայմանագրի երկարացման արձանագրությունը, հանդիպեց Թուրքիայի պետական գործիչների հետ և քննարկեց նրանց հետ սովետա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ մի շարք հարցեր:

1930-ական թվականների սկզբին ԽՍՀՄ-ի հանդեպ Իրանի կառավարության դիրքորոշման մեջ հայտնաբերվեցին անցանկալի երևույթներ: Այսպես, 1932թ. վերջերին Իրանի մի շարք քաղաքներում ԽՍՀՄ-ի հետ առևտրական բոյկոտ հայտարարվեց: Խորհրդա-իրանական հարաբերությունները նորմալացնելու համար խորհրդային կառավարությունը որոշեց պատվիրակություն ուղարկել Իրան՝ Լ.Կարախանի ղեկավարությամբ: 1933թ. սեպտեմբերի վերջին Լ.Կարախանը մեկնեց Իրան: Դա նրա առաջին պաշտոնական այցն էր Իրան: Լ.Կարախանը հիշատակեց Մոսկվայում Իրանի դեսպան Հ.Դակրևանի հետ բազմաթիվ զրույցները, որոնցում նա ընդգծում էր, որ եթե կան որոշակի անախորժություններ, ապա անհրաժեշտ է շուտափույթ վերացնել դրանք: Նա ուղղակիորեն նշում էր, որ առևտրի կենտրոնացման դրոշի տակ անցկացվող բոյկոտի գաղափարը դժվար թե համապատասխանում է իրանցի առևտրականների շահերին: Եվ իսկապես, շուտով հայտնի դարձավ, որ 120 առևտրական Իրանի կառավարությանը բողոք են ուղղել ընդդեմ իրանա-խորհրդային

առևտրին խանգարող արգելքների: 1933թ. հուլիսի 31-ին հրահանգ տրվեց բոյկոտը դադարեցնելու վերաբերյալ:

1934թ. հունիսի 29-ին Լ.Կարախանը նշանակվեց լիազոր ներկայացուցիչ Թուրքիայում: Միջազգային դրությունը Եվրոպայում և Միջերկրական ծովի շրջանում գնալով բարդանում էր: Գերմանիայում իշխանության եկան իրենց ագրեսիվ պլանները չթաքցնող ֆաշիստները, ֆաշիստական Իտալիան հարձակում էր պատրաստում Եթովպիայի վրա: Անգլիան և Գերմանիան ձգտում էին օգտագործել Թուրքիայի ստրատեգիական դիրքը իրենց հակասովետական պլաններում: Լ.Կարախանը ստիպված չէր շատ ժամանակ ծախսել երկրում իրավիճակին ծանոթանալու համար, քանի որ վերջին տարիներին երկու անգամ եղել էր Թուրքիայում: Տարիների ընթացքում, ԱԳԺԿ-ում զբաղվելով խորհրդա-թուրքական հարաբերություններով, նա հնարավորություն ուներ պաշտոնական և ոչ պաշտոնական մթնոլորտում հանդիպել այդ երկրի անվանի քաղաքական գործիչների հետ: Դա զգալիորեն հեշտացնում էր նրա աշխատանքը: Սեպտեմբերի 13-ին նա ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմատի առջև հարց բարձրացրեց մերձսահմանային կոնվենցիայի լրացող ժամկետը երկարացնելու համար: Համաձայնություն ստանալով՝ 1934թ. հոկտեմբերի 6-ին արտաքին գործերի մինիստրությունում, Լ.Կարախանը ստորագրեց ԽՍՀՄ և Թուրքիայի միջև սահմանի վրա ի հայտ եկող կոնֆլիկտների դիտարկման և լուծման վերաբերյալ կոնվենցիայի երկարաձգման արձանագրությունը:

1935թ. նոյեմբերի 9-ին Անկարայում տեղի ունեցավ 1925թ. չհարձակման պայմանագիրը 10 տարով երկարացնելու արձանագրության ստորագրումը՝ Լ.Կարախանի և Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Արասի կողմից:

Այդ ժամանակաշրջանի խորհրդա-թուրքական հարաբերությունների կարևոր խնդիրներից էր Բոսֆոր և Դարդանել նեղուցների անվտանգության հարցը, որը թելադրված էր միջազգային հարաբերությունների զարգացմամբ: 1936թ. շվեյցարական Մոնտրյո քաղաքում բացվեց կոնֆերանս սևծովյան նեղուցների նոր ռեժիմ մշակելու համար:

1936թ. հուլիսի 20-ին Մոնտրյոյի կոնֆերանսը ավարտվեց նեղուցների ռեժիմի մասին նոր կոնվենցիայի ստորագրմամբ: Կոնվենցիան ամրագրեց նեղուցներով ծովագնացության ազատությունը ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ և սահմանափակեց ոչ սևծովյան տերությունների ռազմական նավերի մուտքը Սև ծով խաղաղ ժամանակ:

Լ.Կարախանի դիվանագիտական առաքելությունը Թուրքիայում ավարտվեց 1937թ. ապրիլին: Ավարտվեց դիվանագիտական ծառայության ոլորտում Լ.Կարախանի աշխատանքի վերջին էտապը: Լ.Կարախանը բազմիցս ընտրվել է ՍՍՀՄ ԿԳԿ անդամ, ինչպես նաև ՍՄԿԿ 15, 16, 17-րդ համագումարների պատգամավոր: Լ.Կարախանը վախճանվեց 1937թ. սեպտեմբերին, հետմահու արդարացվել է:

Շատ մարդկայնությամբ և ջերմությամբ է բնութագրում բալետի տաղանդավոր պարուհի՝ Լ.Կարախանի կինը և մտերիմ բարեկամ, ՍՍՀՄ ժողովրդական դերասանուհի Մարինա Տիմոֆևնա Սեմյոնովան. «Նա գեղեցիկ էր, կենսուրախ, ինտելիգենտ: Նա որտեղ էլ որ լիներ, մշտապես լինում էր ուշադրության կենտրոնում: Պատշաճ, մեղմ, դաստիարակված, ոչ մի անգամ չէիր լսի, որ նա ձայնը բարձրացներ... Աշխարհը նրա համար բաց էր և բարի»:

ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎԱԿԻՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համազասպ Հովակիմի Հարությունյանը ծնվել 1902թ. հոկտեմբերի 14-ին Բաքվում: Արդեն պատանի տարիներից նա աչքի էր ընկնում հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու իր ակտիվությամբ: 1916-ին Համո Հարությունյանը աշակերտական անլեգալ խմբակի անդամ էր: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նա մասնակցում է համաքաղաքային աշակերտական գործադուլին: Հեղափոխական գործունեության համար մուսավաթիստական իշխանությունները նրան հեռացնում են Բաքվի առևտրական ուսումնարանից, նրան զրկելով պետական ուսումնարան ընդունվելու իրավունքից: Նա միջնակարգ կրթություն ստանում է 1920-ին, Բաքվում սովետական իշխանության հաստատումից հետո:

1920-ի ամռանը նա ղեկավարում էր Գանձակի կոմերիտական կազմակերպությունը: Հետագա տարիներին Հ. Հարությունյանը Թիֆլիսի կոմերիտական երրորդ շրջկոմի քարտուղարն էր, քաղկոմի բյուրոյի անդամ և ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ, Վրաստանի կոմկուսի կենտկոմի գործերի կառավարիչ: 1922թ.-ին կոմունիստական կուսակցությունը նրան մի խումբ ընկերների հետ գործուղում է Հայաստան՝ կոմերիտական աշխատանքի:

Նա նշանակվում է ՀԼԿԵՄ Կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ, աշխատում է Ալեքսանդր Մյասնիկյանի հետ:

1923թ. աշնանը Հ. Հարությունյանը մի խումբ կոմերիտական պատասխանատու աշխատողների հետ միասին Վրաստանի կոմկուսի կենտկոմի գործուղմամբ և հատուկ թոշակավորումով ուսման է մեկնում Մոսկվա: 1923-1928թթ . Մոսկվայի համալսարանում սովորելու տարիներին նա ակտիվ կուսակցական աշխատանք էր կատարում Մոսկվայի Բաումանի և Ֆրունզեի շրջաններում: 1928-1929թթ. մեկ տարով ուսումնառության է մեկնել ԱՄՆ՝ Մինեսոտայի համալսարան: Մոսկվայի պետական համալսարանն ավարտելուց հետո տնտեսագետ Հ. Հարությունյանը գիտական աշխատանքի է անցնում կոմունիստական ակադեմիայի համաշխարհային տնտեսության և քաղաքականության ինստիտուտում: Նա սկսեց կրտսեր գիտաշխատողից և 1935 թ. ավարտեց կոնյունկտուրայի բաժնի վարիչի պաշտոնում: Այն ժամանակ նա պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա և ստացավ տնտեսագիտության թեկնածուի աստիճան: 1932-1937թթ. Հարությունյանը Արևելքի ժողովուրդների Մոսկվայի կոմունիստական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչն էր: Նա զբաղվում էր համաշխարհային էկոնոմիկայով, կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգի դրության հարցերով, տնտեսական ճգնաժամերով, ժամանակակից բուրժուական քաղաքատնտեսության քննադատությամբ: 1935թ. նա տեղափոխվեց ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, աշխատելով որպես «Պրոբլեմի էկոնոմիկի» ամսագրի պատասխանատու քարտուղար, դիրեկտորի տեղակալ: Այդ տարիներին ինստիտուտի գործունեության մեջ որոշակի ուշադրություն հատկացվեց ռազմատնտեսական խնդիրների մշակմանն ու ուսումնասիրությանը: 1942թ. գարնանը նրան շնորհվեց տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ քիչ անց՝ պրոֆեսորի կոչում:

Նրա դոկտորական դիսերտացիան նվիրված էր բուրժուական կոնյունկտուրաբանության և տնտեսական ցիկլերի ամերիկյան տեսությունների քննադատությանը: Հ. Հարությունյանը ամերիկագետ էր:

1940թ. հրապարակված «Սովետական էկոնոմիկայի զարգացումը» կոլեկտիվ աշխատանքի կազմակերպիչը, հեղինակներից ու խմբագիրներից մեկը Հ. Հարությունյանն էր: Գիտական աշխատանքին զուգընթաց նա մանկավարժական աշխատանք էր կատարում Մոսկվայի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, այնուհետև՝ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում:

1943թ. սկզբին Հ. Հարությունյանը դիվանագիտական աշխատանքի անցավ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում, նա համատեղությամբ աշխատեց նաև միջազգային հարաբերությունների ինստիտուտում, որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, ապա, նույն ամբիոնի պրոֆեսոր:

ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Անատոլի Պաշկովը գրում է. «Համո Ակիմովիչը շատ լայն ընդգրկումի տնտեսագետ էր: Նա հիանալի գիտեր սովետական էկոնոմիկան և այդ մասին հրատարակել է մի շարք աշխատություններ»: Դրա վառ ապացույցը հանդիսացավ իր դիվանագիտական կարիերայի (1944թ.) սկզբնական քայլերն անելիս, երբ հաջողությամբ պաշտպանեց Սովետական Միության շահերը Բրետոն Վուդսում՝ վալյուտայի ու ֆինանսների հարցերին նվիրված ՄԱԿ-ի կոնֆերանսում, որին մասնակցում էին 40 երկրներ:

Հ. Հարությունյանը անցել է դիվանագիտական աշխատանքի 1943թ.-ից: Նա ՍՍՀՄ արտաքին գործերի կոմիսարիատի ամերիկյան երկրների բաժնի էքսպերտ-կոնսուլտատ էր:

1943 թ. նա մասնակցեց երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ղեկավարների Ղրիմի կոնֆերանսին՝ որպես ՍՍՀՄ պատվիրակության խորհրդական, մասնակցել է նաև Միավորված ազգերի կոնֆերանսին Հոթ-Սփրինգսում (ԱՄՆ), որտեղ քննարկվում էին հետպատերազմյան գյուղատնտեսության զարգացման խնդիրները: Որպես ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության պատվիրակության անդամ, նա իր մասնակցությունն ունեցավ վերականգման ու օգնության հարցերի գծով ՄԱԿ-ի ասոցիացիայի խորհրդի սեսիաներին Մոնրեալում (Կանադա), 1944թ., Լոնդոնում՝ 1945թ. օգոստոսին: Նա որպես աշխարհի հետպատերազմյան տնտեսական գործերի խորհրդական 1945թ. փետրվարին մասնակցեց մեծ տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավարների կոնֆերանսին, իսկ հուլիս-օգոստոսին՝ Պոտսդամի կոնֆերանսին, որպես ՍՍՀՄ պատվիրակության՝ խաղաղության պայմանագրերի, նախագծերի տնտեսական ու սոցիալական հարցերի գծով խորհրդական: ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրների սեսիաներում (1945-1947թթ. Լոնդոն, Փարիզ, Նյու Յորք, Մոսկվա), Հ. Հարությունյանը ՍՍՀՄ պատվիրակության խորհրդականն էր: Սովետական պատվիրակության կազմում նա 1945թ. ապրիլ-հունիսին մասնակցեց Սան Ֆրանցիսկոյում գումարված ՄԱԿ-ի հիմնադիր կոնֆերանսին, իսկ 1946թ. հուլիս-հոկտեմբերին՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսին: Առանձնապես արժանի է հիշատակել նրա ակտիվ մասնակցությունը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի սեսիաներին 1946-1952թթ.: Նա 1946-1953թթ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդում մշտապես ներկայացրել է ՍՍՀՄ -ը՝ հանդիսանալով սովետական պատվիրակության ղեկավար: Նույն

տարիներին նա գլխավորել է սովետական պատվիրակությունը Եվրոպայի գործերով ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի ամենամյա սեսիաներում: Երբ 1954 թ. ՍՍՀՄ-ը դարձավ աշխատանքի միջազգային կազմակերպության անդամ, Հ. Հարությունյանը Սովետական Միության կառավարության ներկայացուցիչն էր նրա ղեկավար մարմիններում մինչև 1958թ.:

ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր, ակադեմիկոս Ս. Լ. Տիխվինսկին գրում է. «Նա մասնակցեց պատերազմի վերջերին հրավիրված այնպիսի խոշոր միջազգային կոնֆերանսների, ինչպիսիք են վալյուտային հարցերին նվիրված Բրետոն Վուդսի, գյուղատնտեսության հարցերին նվիրված Հոթ-Սփրինգսի կոնֆերանսները: Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում նա սովետական պատվիրակության մասնագետ խորհրդատուն էր... Եվ վերջապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին սեսիայում սովետական պատվիրակության կազմում էր: Համո Ակիմովիչը ղեկավարում էր մինիստրության էկոնոմիկական բաժինը, այսինքն կանգնած էր դիվանագիտական աշխատանքի խիստ պատասխանատու մի ստորաբաժանման գլուխ»:1948-1953-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կոլեգիայի անդամ էր:

1951թ. մայիս-հունիս, Ժնև, եվրոպական տնտեսական հանձնաժողովի 6-րդ սեսիա. Հ. Հարությունյանը սառը պատերազմի այդ դժվարին պայմաններում հմտորեն պաշտպանում է ՍՍՀՄ արտաքին քաղաքականության դիրքերը: Թուրք դիվանագետ Յակոբ Կադրի Կարանոմանօղլին հիացմունքով է խոսում սովետական դիվանագետների, այդ թվում, հատկապես Հ. Հարությունյանի համոզիչ, կրակոտ ճառերի մասին Ժնևում ՄԱԿ-ի հանձնաժողովի նիստերում: «Երբ ռուսներից որևէ մեկը ելույթ էր ունենում, դահլիճում հիացմունքով ու հարգանքով լի լռություն էր տարածվում, թարգմանիչները ոգևորվում էին, թարգմանում էին կրքոտությամբ ու ուրախությամբ, իսկ նախագահը, որ սովորաբար նայում էր անտարբեր, աչքերը չէր հեռացնում հռետորից:

Նույնիսկ ամենատարրական, պրոցեդուրային հարցերում հարձակվում էին ռուսները և նրանց կողմնակիցները, իսկ անգլոսաքսերն ու նրանց դաշնակիցները մշտապես պաշտպանվում էին: Երբ ռուսն ամբիոն էր բարձրանում, դահլիճը, որտեղ տեղի էին ունենում բանակցությունները, անմիջապես հեղափոխական դատարանի էր վերածվում: Ո՞ւմ պետք է այս անգամ հարցաքննեն, ո՞ւմ պետք է մեղադրեն: Ֆրանսիական պատվիրակության ղեկավարը հայացք էր փոխանակում իր անգլիացի գործընկերոջ հետ, անգլիացին նայում էր աչքերը սառեցրած ամերիկացուն, կարծես թե հարցնելով, հետաքրքիր է, ո՞ւմ վրա են հիմա հարձակվելու: Ձե՞ր, թե՞ ինձ վրա: Դրա հետ մեկտեղ, ո՛չ Զուրաբինը, ո՛չ Հարությունյանը վախեցնող տեսք չունեին»:

Որպես ՍՍՀՄ պատվիրակության ղեկավար Հ. Հարությունյանը մասնակցեց աշխարհի միջազգային գլխավոր կազմակերպության կոնֆերանսի 40-րդ սեսիային (1957թ. հուլիս): Օրակարգի հարցերի քննարկմանը զուգընթաց նա կոնֆերանսի ամբիոնը օգտագործեց հասարակական կարծիքը զինաթափման, առանձնապես ատոմային ու ջրածնային զենքի փորձարկումները դադարեցնելու կարևորագույն խնդիրների վրա կենտրոնացնելու համար:

Մի այլ առիթով ճանաչված չինագետ պատմաբան, ակադեմիկոս Ս.Լ. Տիխվինսկին Հ. Հարությունյանին հետևյալ հեղինակավոր բնորոշումն է տվել. «Անձամբ ինձ բախտ է վիճակվել Համո Ակիմովիչի հետ լինել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 5-րդ և 7-րդ նստաշրջաններում՝ Նյու Յորքում:

Այդ տարիներին ինձ և մյուս երիտասարդ դիվանագետներին հիացնում էին Համո Ակիմովիչի գիտելիքները, փորձը, մեր հակառակորդների դեմ նրա մղած փայլուն վեճերը, որոնք աչքի էին ընկնում իրենց կուռ փաստարկումներով:

Այսինքն, ինձ հիացմունք էին պատճառում այն հատկությունները, որոնցով այնպես շռայլորեն ու կատարյալ ձևով օժտված էր Համո Ակիմովիչը, անգլերեն և ֆրանսերեն լեզուների փայլուն իմացություն, բանավիճելու շնորհք, առարկայի իմացությունը, այստեղ իրեն, իհարկե, դրականորեն զգացնել էր տալիս գիտական և դասախոսական գործունեության բազմամյա փորձը: Նա բացառիկ տաղանդի տեր պոլիմիստ էր: Դիվանագիտական դժվարագույն մարտերից նա բազմիցս դուրս է եկել հաղթանակով, շնորհիվ իր գործիմացության, մեծ կուլտուրայի և, մանավանդ, հայ և այլ ժողովուրդների բանահյուսության իմացության, և, իհարկե, անձնական հմայքի»: 1955 - 1958 թթ. նա արտաքին գործերի մինիստրության եվրոպական բաժնի վարիչ և ՍՍՀՄ ներկայացուցիչն էր Աշխատանքի միջազգային կազմակերպության ադմինիստրատիվ խորհրդում:

1958-ի հոկտեմբերից մինչև 1963-ի մարտը Հ. Հարությունյանը ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպանն էր Կանադայում: Նա մեծ աշխատանք կատարեց սովետա-կանադական հարաբերությունների ակտիվացման գործում, անձնական կապեր հաստատելով այդ երկրի պետական ու հասարակական գործիչների, գիտնականների, համալսարանների պրոֆեսորա-դասախոսական շրջանների հետ: Բացի իր դիվանագիտական միսիան կատարելուց, Հ. Հարությունյանը անգլերեն, ֆրանսերեն լեզուներով դասախոսություններով ու զեկուցումներով հանդես էր գալիս կանադական համալսարաններում, գիտական ընկերություններում, պառլամենտի դեպուտատների ժողովներում, ինչպես նաև ուկրաինացիների համայնքներում, ռուսների, բելոռուսների և հայերի հավաքներում:

Հ. Հարությունյանի մասին Կանադայում Չեխոսլովակիայի նախկին դեսպան Յարոսլավ Տաուերը ասել է. «Չորս տարի Դուք համբերատորեն մի շարք դասախոսություններում, ելույթներում և մամուլի կոնֆերանսներում կանադացիներին շարադրում էիք Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը և երբեմն ոչ բարեկամական հարցերին պատասխանում էիք Ձեզ հատուկ հումորով: Այդ միջոցով, աստիճանաբար ջարդվում էին անջրպետներն ու նախապաշարմունքները, որ ներշնչում էին ժողովրդին Սովետական Միության նկատմամբ: Ծնորհիվ կուլտուրական և գիտական կապերի բնագավառում Ձեր աշխատանքի, շատերը ըմբռնեցին, թե զարգացման ինչպիսի հնարավորություններ ունեն արվեստն ու գիտությունը Սովետական Միությունում: Մարդիկ հարգում են Ձեզ՝ տնտեսագիտության մարզում Ձեր գիտելիքների համար»:

ՍՍՀՄ դեսպան Հ. Հարությունյանի մասին կանադական թերթերից մեկը գրել է. «Նորին գերազանցություն Համազասպ Հարությունյանը շաբաթվա վերջին մեկնում է Մոսկվա, Օտտավայում անցկացնելով չորս տարի որպես ՍՍՀՄ դեսպան, նա ականավոր դեսպան էր: Բազմաթիվ կանադացիներ, որոնք նույնիսկ դագաղի մեջ չէին պաշտպանի այն, ինչի օգտին հանդես էր գալիս պարոն Հարությունյանը, ցավում են, որ նա հեռանում է երկրից, որովհետև նա իր հետ Օտտավա է բերել հումորի կենդանի զգացում և ամենօրյա կանադական կյանքին մեկնաբանություններ տալու հիանալի ընդունակություն»: Հայաստանի ջերմեռանդ պրոպագանդիստ, հայրենասեր, ականավոր դիվանագետ Հ. Հարությունյանը Կանադայում շատ ու շատ հայերի ցույց տվեց հայրենի երկրի,

Երևանի, նրա մարդկանց հետ կապերը սերտացնելու, հայրենիքը սիրելու ուղին:

1963-1964թթ. Հ. Հարությունյանը որպես ՍՍՀՄ ներկայացուցիչ մասնակցում էր ՅՈՒՆԵՍԿՈ-ի (Լուսավորության, գիտության և կուլտուրայի հարցերի գծով միավորված ազգերի կազմակերպություն) գործունեությունն ու մեթոդները հետազոտող միջազգային հանձնաժողովի աշխատանքներին (1963-1964թթ. Փարիզ, Բրազիլիա, Ուրուգվայ, Չիլի, Կոլումբիա, Պերու, Մեքսիկա, Կուբա): 1964-70թթ. ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության միջազգային տնտեսական կազմակերպությունների բաժնի վարիչն էր, իսկ հետագայում արտաքին քաղաքական միջոցառումների պլանավորման վարչության գլխավոր խորհրդականը: Համազասպ Հարությունյանն անսահման սիրով և բազմազան հետաքրքրություններով կապված էր հարազատ Սովետական Հայաստանի հետ:

Նա շատ մտերմական և խոր հարգանք էր տածում Մարտիրոս Սարյանի անձի ու արվեստի նկատմամբ: Նրա նկարների հավաքածուում Մարտիրոս Սարյանը ներկայացված է մեկուկես տասնյակից ավելի կտավներով, այդ թվում՝ «Կարմիր ձին», «Ջրհորի մոտ» և այլ գլուխգործոցները: Վրձնի մեծ վարպետ Մ. Սարյանը սիրով նկարել-կերտել է սովետական հայ ականավոր դիվանագետ Հ. Հարությունյանի դիմանկարը: Արվեստի, երաժշտության, թատրոնի, գրականության նոր ականավոր գործիչները սիրում ու հարգում էին Համո Ակիմովիչին, որը նրանց շրջապատում սիրված զրուցակից էր, բանիմաց ընդդիմախոս:

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Եվգենի Սիմոնովը (Ռուբեն Սիմոնովի տղան) 1970թ. փետրվարի 15-ի նամակում գրում է. «Ձեր սերը կերպարվեստի, երաժշտության, քնարերգության, թատրոնի նկատմամբ իր տեսակի մեջ եզակի է: Եվ դրա համար Ձեր բարեկամները միշտ այդպիսի ուշադրությամբ, հմայված լսում են Ձեզ: Մեր դերասաններն արդեն վաղուց Ձեզ համարում են իսկական վախթանգովական և հանդիսասրահում Ձեր հայտնվելը միշտ ուղեկցում են ամենաբարձր կոմպլիմենտներով Ձեր հասցեին»:

Տաղանդավոր քանդակագործ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Ն. Նիկողոսյանը գրում է. «Նա՝ Հ. Հարությունյանը, իսկական արվեստ սիրող մարդ էր: Նրանց տանը միշտ հավաքվում էին և՛ ռուս, և՛ հայ արվեստագետներ. մի անգամ վեճ բացվեց Այվազովսկու կտավների մասին: Եվ Հարությունյանն այնքան գեղեցիկ, վարպետորեն ինձ ներկայացրեց տաղանդավոր նկարչի մեծությունը, որ այդ օրվանից Այվազովսկին ինձ համար դարձավ մեր ժողովրդի ամենամեծ զավակներից մեկը»:

Համազասպ Հարությունյանը շատ մեծ հետաքրքրություն էր հանդես բերում արևմտահայության պատմությանը նվիրված նոր ուսումնասիրություններին, որոնք, սկսած 1960-ական թվականների կեսերից, նոր փաստեր հայտնաբերվեցին երիտթուրքական կառավարության ոճրագործությունների, արևմտահայ ժողովրդի ողբերգության մասին: 1960-ական թվականներին լույս տեսան Ջ. Ս. Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», Ա. Ն. Մնացականյանի «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ», Ռ. Սահակյանի «Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ» մենագրությունները:

1969թ. աշնանը Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնախմբությունն էր, չնայած ծանր հի-

վանդությանը Համազասպ Հարությունյանը Երևան և Դսեղ էր եկել՝ մասնակցելու հանճարեղ բանաստեղծի պատվին կազմակերպված ժողովրդական տոնախմբություններին: Նրա վերջին այցելությունն էր Սովետական Հայաստան: Համազասպ Հարությունյանը մահացավ 1971թ. ապրիլի 2-ին, Մոսկվայում, 69 տարեկան հասակում:

Համազասպ Հովակիմի Հարությունյանը պարգևատրված է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի երկու, «Պատվո նշան» շքանշաններով, բազմաթիվ մեդալներով ու պատվոգրերով: ՍՄԿԿ անդամ էր 1919 թվականից:

ՎԻԿՏՈՐ ԼԵՎՈՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Իսրայելյան Վիկտոր Լևոնի. ականավոր սովետական դիվանագետ:

ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան 1971թ.-ից: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր 1962թ.: ՍՄԿԿ անդամ 1946թ.-ից: Ծնվել է 1919թ. Թիֆլիսում (Վրաստան) բժշկի ընտանիքում: Ավարտել է Թիֆլիսի գերմանական դպրոցը 1936 թվականին: Նույն տարին ընդունվել է Մոսկվայի առաջին բժշկական ինստիտուտը: 1941 թվականին ինստիտուտն անմիջապես ավարտելուց հետո մեկնում է ռազմաճակատ որպես զինվորական բժիշկ: Նա 1946 թվականին, պատերազմից հետո ընդունվում և ավարտում է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության բարձրագույն դիվանագիտական դպրոցը:

1949 թվականին Վ. Իսրայելյանը Մոսկվայից ընտանիքով տեղափոխվում է Երևան և աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում որպես դոցենտ, իսկ հայրը՝ Լևոն Իսրայելյանը, բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, հրավիրվում է աշխատելու որպես Երևանի պետական բժշկական ինստիտուտի մանկաբուժական ամբիոնի վարիչ: 1951 թվականից նա աշխատում է Մոսկվայի բարձրագույն դիվանագիտական դպրոցում, իսկ 1961-1968 թթ.՝ պատմադիվանագիտական գիտությունների ամբիոնի վարիչ: 1968 թ.-ից Վ. Իսրայելյանն աշխատել է Միացյալ ազգերի կազմակերպությանն (ՄԱԿ)

առընթեր ՍՍՀՄ ներկայացուցչությունում (Նյու Յորք), որպես մշտական ներկայացուցչի տեղակալ, ապա, առաջին տեղակալ: Մասնակցել է որպես Սովետական Միության ներկայացուցիչ Ժնևում կայացած զինաթափման կոնֆերանսին:

1973 թվականից, տասներկու տարի եղել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կոլեգիայի անդամ, միջազգային կազմակերպությունների բաժնի վարիչ: Վ. Իսրայելյանը միջազգային զանազան, նաև գիտական կոնֆերանսներում եղել է սովետական պատվիրակության ղեկավար կամ անդամ:

Վ.Իսրայելյանը ծանոթ է եղել և աշխատակցել է սովետական, Ռուսաստանի բոլոր արտաքին գործերի մինիստրների հետ, Մ. Լիտվինովից սկսած վերջացրած այժմյան Ռուսաստանի Դաշնության մինիստր Ա. Լավրովի հետ:

Նա կատարել է սովետական կառավարության մի շարք պատասխանատու հանձնարարություններ և կոնտակտի մեջ է մտել արտասահմանյան նշանավոր քաղաքական գործիչների հետ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մասնավորապես Ջորջ Բուշի (ավագ) և նրա միջև ստեղծվել է բարի հարաբերություններ, որը մինչև այսօր պահպանվում է:

Անցնելով թոշակի Վ. Իսրայելյանը շարունակում է աշխատել դիվանագիտական ակադեմիայում որպես դասախոս:

1991 թվականին Վ. Իսրայելյանին հրավիրում են ԱՄՆ, Փենսիլվանիայի համալսարան որպես Սովետական Միության և Ռուսաստանի Դաշնության պատմության դասախոս: Նա հեղինակ է ավելի քան 200 տպագրած պատմագիտական, քաղաքական, հրապարակախոսական աշխատանքների (հոդվածներ, գրքեր), ընդհանուր պատմության, Երկրորդ համաշխարհային պատերազմի, ՍՍՀՄ արտաքին քաղաքականության պատմության հարցերի շուրջը:

Նրա կարևոր աշխատություններից են. «Дипломатическая история Великой Отечественной войны», «Антигитлеровская коалиция (1941-1945)», 1965, «История внешней политики СССР» երկհատոր ակադեմիական հրատարակությունը «Дипломаты-Лыцом к Лицу», «Операция «Кроссворд» գիրքը, «На фронтах войны», «Записка Советского посла» հրատարակվել է 2003 թվականին: Վ. Իսրայելյանը ներկա ժամանակ ավարտում է Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված գիրքը:

Պրոֆ. Վ. Իսրայելյանի աշխատությունները հրատարակվել են արտասահմանյան շատ երկրներում (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Լեհաստան, ԳԴՀ, Չեխոսլովակիա և Հունգարիա):

Վ.Լ. Իսրաելյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի, «ժողովուրդների բարեկամության» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Նա ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր է:

Պատերազմի ելքի ու նրա քաղաքական հետևանքների, հետպատերազմյան զարգացման համար քիչ նշանակություն չունեցավ նաև դիվանագիտության ասպարեզում ծավալված պայքարը: Պատերազմի ծանր պայմաններում, համեմատաբար կարճ ժամկետում, Սովետական Միությանը հաջողվեց ստեղծել ու գլխավորել ֆաշիստական բլոկի դեմ պատերազմում միավորված ժողովուրդների ու պետությունների լայն ճակատ: Այդ նպատակով սովետական դիվանագիտությունը կարողացավ կնքել մի շարք երկկողմանի և բազմակողմանի տնտեսական ռազմական համաձայնագրեր:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Իսրայելյանի «Կրոսվորդ» օպերացիան» գիրքը նվիրված է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին դիվանագիտության պատմության կարևոր դրվագներից մեկին՝«Բեռ-

նի միջադեպին»: Վ. Իսրայելյանը շնորհիվ իր դիվանագիտության պատմության բնագավառում ունեցած խոր գիտելիքների, սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի, միջադեպին առնչվող փաստերի համակողմանի ուսումնասիրման՝ պատմում է հիտլերյան գեներալ Վոլֆի և Անգլիայի ու ԱՄՆ-ի ներկայացուցիչների գաղտնի բանակցությունների մասին, որ տեղի էին ունենում 1945 թվականի գարնանը չեզոք Շվեյցարիայում և նպատակ ունեին Սովետական Միության թիկունքում սեպարատ հաշտություն կնքել հիտլերյան Գերմանիայի հետ: Վաշինգտոնի ու Լոնդոնի կողմից թշնամու հետ սեպարատ բանակցություններ չվարելու դաշնակցային պարտքի դրժումը հարուցեց սովետական կառավարության վճռական բողոքը: 1945 թվականի մարտին Սովետական Միության, ԱՄՆ-ի ու Անգլիայի միջև հատուկ նամակագրություն սկսվեց այդ հարցի շուրջը: Բանակցությունները սկսվեցին մինչև նամակագրությունը սկսելը, բայց շարունակվեցին նաև դրա ավարտից հետո:

Պրոֆեսոր Վ. Իսրայելյանը գրում է. «Երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր դասն այն էր, որ պատերազմի դեմ պետք է պայքարել նախքան նրա սկսվելը: Աշխարհի ժողովուրդներն ընդհանուր մի խնդիր ունեն՝ պաշտպանել խաղաղությունը, կանխել միջուկային աղետը»:

1979թ. Ժնևի զինաթափման կոմիտեում ՍՍՀՄ մշտական ներկայացուցիչ դոկտոր, պրոֆեսոր Վ. Իսրայելյանը «ՍՍՀՄ-ը և զինաթափման պրոբլեմը» գրքում պատմական կարևորագույն փաստաթղթերի հիման վրա ցույց է տալիս ՍՍՀՄ-ի ներդրումը միջազգային լարվածության թուլացման, խաղաղության պահպանման, հասարակական-քաղաքական տարբեր համակարգեր ունեցող պետությունների հարաբերությունների բարելավման գործում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ստեղծվեց ատոմային ռումբը՝ մասսայական բնաջնջման ամենավտանգավոր զենքը: Հերոսիմայի և Նագասակիի վրա ամերիկացիների նետած ռումբերը ցնցեցին ամբողջ աշխարհը: Այն ժամանակներից սկսած խաղաղության համար գլխավոր սպառնալիքի աղբյուրը համարվում է միջուկային սպառազինությունների հարաճուն մրցավազքը:

Վ. Իսրայելյանը գրում է. «Վերջերս ՄԱԿ-ում հրապարակվեց մի փաստաթուղթ, որտեղ թվարկված են զինաթափմանը վերաբերող բոլոր այն առաջարկությունները, որ ՄԱԿ-ի անդամ բոլոր կառավարությունները միջազգային այդ կազմակերպության գոյության ամբողջ ժամանակամիջոցում ներկայացրել են ՄԱԿ-ի, Ժնևի զինաթափման կոմիտեի և այլ համաժողովների քննարկմանը: Ցուցակի մեջ նշված 230 տարբեր առաջարկություններից 80-ը՝ ավելի քան մեկ երրորդը, արել է Սովետական Միությունը»:

«Կրոսվորդ» օպերացիայի սկիզբը կապված է Իտալիայի արդյունաբերող բարոն Լուիջի Պարիլլիի 1945 թվականի փետրվարին Շվեյցարիա կատարած այցի հետ:Նա սերտորեն համագործակցում էր Մուսոլինիի վարչակարգին, հիտլերյան հետախուզությանը, գերմանացիների կողմից օկուպացված Հյուսիսային Իտալիայում կապեր հաստատելով էսէսականներ Հյուգելի, Դոլմանի և Ցիմմերի հետ՝ Պարիլլին ժամանում է Շվեյցարիա պարզելու, մի կողմից՝ ամերիկացիների ու անգլիացիների, մյուս կողմից՝ էսէսական գեներալիտետի միջև անմիջական կապեր հաստատելու հնարավորությունը: Նա ասում էր, որ Գերմանիայի և ԱՄՆ-ի ու Անգլիայի միջև սեպարատ հաշտության հիմքը պետք է լինի Սովետական Միության դեմ մղվող համատեղ պայքարը:

Պարիլլին հաջորդ օրը հեռախոսով կապվում է Ստրատեգիական ծառայությունների ամերիկյան վարչության եվրոպական բյուրոյի պետի՝ Դալլեսի հետ և պայմանավորվում են հանդիպել կուցեռնում, ամերիկացին անմիջապես համաձայնվում է:

Ալլեն Դալլեսը «Կրոսվորդ» օպերացիայի կենտրոնական դեմքերից մեկն էր: 1951 թվականին Դալլեսը նշանակվում է ԿՀՎ-ի դիրեկտորի տեղակալ, իսկ 1953 թվականին՝ դիրեկտոր: Պետական քարտուղար Ջոն Ֆոստերը եղբորն աջակցում և օգնում էր նրա բոլոր «ձեռնարկումներում»: Նրա վերջին «հաջողությունը» Կոնգոյում Պ. Լումումբայի օրինական կառավարության տապալումն էր: 1961 թվականին Կոչինոս ծովածոցում անցկացվող օպերացիայի ձախողումից հետո Դալլեսը պաշտոնաթող եղավ:

Օբերգրուպենֆյուրեր Վոլֆը լինելով Հիտլերի հավատարիմ, նվիրված ծառան և նացիստական վարչակարգի ամենակատաղի պաշտպաններից մեկը, ամեն ինչ անում էր ֆաշիզմի կործանումը կանխելու համար: Վոլֆը դառնում է «Կրոսվորդ» օպերացիայի գլխավոր անձերից մեկը:

Ահա թե ինչ է գրում պրոֆ. Վ. Իսրայելյանը «Կրոսվորդ» օպերացիա» գրքում ֆաշիստական գեներալ Վոլֆի մասին. «Իսկ ինչ պատահեց գայլուկի հետ»: Վոլֆն ավելի երկար ապրեց «Կրոսվորդ» օպերացիայի գրեթե բոլոր մասնակիցներից: Սակայն նա շուտով հարկադրված եղավ տեղափոխվել բանտ: Չորս տարվա ընթացքում, գտնվելով կալանավայրում, նա որպես վկա հանդես եկավ նացիստական գլխավոր հանցագործների դեմ տարվող զանազան դատավարություններում: 1949թ. վերջապես նա նստեց մեղադրյալի աթոռին: Հաշվի առան նախնական կալանքի ժամկետը և ամբողջ գործն այդքանով ավարտվեց: ... Սակայն արդարադատությունից ընդմիշտ խուսափել Վոլֆին, այնուամենայնիվ, չհաջողվեց: Հասարակության, ԳՖՀ-ի և այլ երկրների հակաֆաշիստների ճնշման ներքո 1964 թվականին օբերգրուպենֆյուրերին դատի տվեցին: 15 տարվա բանտարկություն, առնվազն 300000 մարդու սպանությանը հանցակից լինելու համար, ասված էր Մյունխենի երկրամասային դատարանի վճռում: Այս անգամ չօգնեցին ոչ անդրօվկիանոսյան բարեկամների երաշխավորագրերը և ոչ էլ մեղադրյալի խորամանկությունները: 1970թ. վերջերին ազատվեց: Նա ապրեց ևս 14 տարի և վախճանվեց 1984թ.:

Բեռլինի վիթխարի ճակատամարտն ավարտվեց սովետական բանակի փայլուն հաղթանակով և ձախողվեց «Կրոսվորդ» օպերացիան: Բեռլինյան օպերացիայի սկզբում Արևելյան ճակատում գործում էր 214 դիվիզիա, իսկ Արևմուտքում անգլո-ամերիկյան բանակների դեմ՝ ընդամենը 60 դիվիզիա: Այդ օպերացիայի ընթացքում սովետական զորքերը ջախջախեցին 70 հետևակային, 12 տանկային, 11 մոտոմեքենայացված դիվիզիաներ և վերմախտի ավիացիայի մեծ մասը: Գերի վերցվեց մոտավորապես 480 հազար զինվոր ու սպա:

1945 թվականի մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը Բեռլինի հարավարևելյան հատվածում՝ Կարլսհորստում, Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի համաձայնագրերը ստորագրվեց մի կողմից՝ Սովետական Միության, ԱՄՆ-ի, Անգլիայի ու Ֆրանսիայի, մյուս կողմից՝ հիտլերյան Գերմանիայի միջև:

ԱՄՆ-ում 2000 թվականի օգոստոսին Վ. Իսրայելյանը Նյու Յորքում հրատարակվող «էքսպրես» թիվ 30 շաբաթաթերթում հարցազրույց ունեցավ և պատասխանեց թղթակցի «Հայեր, ողբերգություն և հաղթանակ» թեմայով հարցերին:

«Ես հայ եմ, ծնվել եմ Թբիլիսիում, ոչ միայն Վրաստանի, այլև 20-ականներին և 30-ական թվականների առաջին կեսին

Անդրֆեդերացիայի մայրաքաղաքում: Իմ մանկության տարիներին հին Թիֆլիս անվանումը կրող այդ գեղեցիկ անունը շատերը սիրում էին Անդրկովկասի Փարիզ անվանել: Այն իր ազգային կազմով բացառիկ խայտաբղետ էր: Թիֆլիսում կար հայերի բնակության շրջան՝ Հավլաբար, ադրբեջանցիների՝ Մայդան, գերմանացիների՝ Դիդուբե: Դա որոշակիորեն բացատրում էր ազգամիջյան շփման բարեկամական բնույթը: Ես սովորել եմ գերմանական դպրոցում, որտեղ ուսանում էին գերմանացի, վրացի, հայ, հրեա, ռուս, լեհ, լիտվացի, հույն և այլ երեխաներ: Չեմ հիշում ազգային հողի վրա որևէ կոնֆլիկտ, տղայական կռիվ:

Մոսկվայի բժշկական ինստիտուտում ևս, որտեղ ուսանելու տեղափոխվեցի 1936թ., ներկայացված էին տարբեր ազգություններ: Այստեղ ես ևս ուսանողների միջև ազգամիջյան խառնակություններ չզգացի: Մենք, միութենական ու ինքնավար հանրապետությունների ներկայացուցիչներս, այսպես կոչված «ազգային փոքրամասնություններս», նույնիսկ ուսումնական հաստատություն ընդունվելու, հանրակացարան, թոշակ ստանալու ժամանակ օգտվում էինք որոշակի արտոնություններից: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունը քրեական էր դիտվում:

Ամենն սկսեց նշանակալիորեն փոխվել Երկրորդ աշխարհամարտի տարիներին և, հատկապես, հետպատերազմյան ժամանակ: Ստալինի 1945թ. ելույթից հետո, երբ նա մեծարեց թշնամու դեմ տարած հաղթանակում ռուսների ավանդը, Ռուսաստանին անվանում էին ոչ այլ կերպ, քան «ավագ եղբայր», որին «ժողովուրդների եղբայրական ընտանիքի» մնացած անդամները պետք է անշեղորեն հետևեին: ԽՍՀՄ-ը բնավ էլ իրավահավասար ժողովուրդների միություն չէր, այլ «ավագ» և «կրտսեր» եղբայրների պետություն, նրանում

սկսեց ծաղկել ազգայնականությունը: Բոլոր այլ հավասար պայմանների դեպքում, ըստ պաշտոնի կամ կոչման առաջխաղացման ժամանակ գերապատվությունը տրվում էր ռուսներին:

Իմ, ինչպես նաև շատ հայերի մեջ, հայրենի հողում ապրելու ցանկություն առաջացավ: Խորհրդակցելով հորս հետ, մենք որոշեցինք տեղափոխվել Հայաստան՝ նա մորս հետ Թբիլիսից, իսկ ես՝ իմ ընտանիքով Մոսկվայից:Հայրս հրավիրվել էր ղեկավարելու Երևանի բժշկական ինստիտուտի մանկաբուժության ամբիոնը, իսկ ես՝ Երևանի համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում դոցենտ աշխատելու:

Հայաստանի պատմության այդ շրջանի բնորոշ գիծը հայերի հայրենադարձության ալիքն էր: Տասնյակ հազարավոր հայեր աշխարհի բազմաթիվ երկրներից, այդ թվում ԱՄՆ-ից, գալիս էին մշտապես բնակվելու Հայաստանում: Սակայն հանրապետության ղեկավարությունը հայրենադարձների ընդունմանը, նրանց տեղավորմանը, միանգամայն պատրաստ չէր, ինչը շուտով հանգեցրեց ոչ միայն արտասահմանյան հայերի Հայաստան ներհոսքի դադարեցմանը, այլև հետագայում հակառակ գործընթացին, նրանց հեռանալուն: Երևանում մեր ապրելու տարիներին գերիշխում էր հայրենիքի հետ միավորվելու ուրախ զգացումը: Մեր հարևանն էր ականավոր բանաստեղծ, հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանը, մեզանից ոչ հեռու, իր արհեստանոցում ստեղծագործում էր մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը: Նրանց հետ շփումը, Հայաստանի արվեստի ու գիտության շատ այլ գործիչների հետ ծանոթությունն, ինձ հպարտությամբ էին լցնում իր մշակույթն ու ավանդույթները պահպանել կարողացած ժողովրդի համար:

Ես դասավանդում էի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որը վերջին տարիներն էր ապրում: Հայ երիտասարդությունը հասկացել էր Հայաստանի համար միջազգային հարաբերությունների գծով փորձագետի մասնագիտության անհեռանկարայնությունը, որը չուներ ոչ մի տեսակ դիվանագիտական և այլ պաշտոնական արտասահմանյան կապեր և այդ արհեստականորեն ստեղծված ֆակուլտետում սովորելու չէր գնում: Այս իսկ պատճառով, երբ Մոսկվայից դիվանագիտական ակադեմիայում մշտական աշխատանքի առաջարկ ստացա, ընտանիքիս անդամները կողմ արտահայտվեցին առաջարկն ընդունելուն, մտերիմ ընկերներս՝ դեմ: Ընկերներս գտնում էին, որ իմ տեղը Հայաստանն է և իմ գնալը կդիտեն որպես դասալքություն, որի համար ես պետք է ափսոսամ: Կշռելով ամբողջ կողմ և դեմ կողմերը, ես, այնուամենայնիվ, որոշեցի վերադառնալ Մոսկվա. գլխավորը, որն ինձ դրդեց նախնիների հրաշալի ու արևավառ երկիրը լքելու որոշում ընդունել՝ Հայաստանում դիվանագետի իմ մասնագիտության անպիտանիությունն էր: Իսկ կրկին մասնագիտությունս փոխելուն (ունեի բժշկի դիպլոմ) ես անպատրաստ էի:

Տեղափոխվելով Մոսկվա, ես սկսեցի աշխատել ԽՍՀՄ ԱԳՆ համակարգում: Մի երկու տասնամյակ անց ես դարձա արտակարգ ու լիազոր դեսպան, ԱԳՆ կոլեգայի անդամ, Սովետական Միության ներկայացուցիչ բազմաթիվ միջազգային կոնֆերանսներում, բանակցություններում, կատարեցի Կրեմլի մի շարք կարևոր հանձնարարություններ: Ասում եմ բացահայտ. ես հպարտությամբ էի նիստերի դահլիճում նստում «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն» ցուցանակի հետևում և իմ հնարավորությունների սահմանում պաշտպանում էի նրա արտաքին քաղաքական շահերը: Սակայն ցանկանում եմ ընդգծել, որ միշտ,

ներկայացնելով ԽՍՀՄ-ը ես ինձ հայ էի զգում՝ օրինակ, երբ ինձ կոչում էին «Ռուսական դեսպան» ես միշտ ուղղում էի հռետորին, բացատրելով, որ ես բազմազգ պետություն եմ ներկայացնում, էթինկապես լինելով հայ: Եվ այստեղ բանն այդ վերապահումները չեն: Հայաստանի հետ կապ պահպանելը, նրան ԽՍՀՄ դիվանագիտական գործերում հնարավորինս աջակցելը միշտ եղել է իմ կարևոր խնդիրը: Երբ ղեկավարում էի ԽՍՀՄ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների դեպարտամենտը, ես ձգտում էի Խորհրդային Հայաստանի ԱԳՆ-ը ներգրավել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային նախապատրաստվելուն ԽՍՀՄ պատվիրակության կազմի մեջ Հայաստանի արտաքին գործերի նախարարներին ընդգրկելուն: Կիսվում էի փորձով, համագործակցում էի նախարարներ Մարտիրոսյանի, Ուդումյանի, Կիրակոսյանի հետ: Ես հատկապես գնահատում էի համագործակցությունն ու բարեկամությունը Ջոն Կիրակոսյանի՝ տաղանդավոր գիտնական պատմաբանի ու դիվանագետի, իմ նախկին ուսանողի հետ, որը կյանքից շուտ հեռացավ: Ապրելով Մոսկվայում, ես հաճախ էի լինում Հայաստանում, ելույթ էի ունենում Հայաստանի ԱԳՆ-ում, հայ հասարակության առջև, Երևանում հրատարակվել են իմ մի քանի գրքերը, հոդվածները: Խորհրդային որոշ ղեկավարների, մասնավորապես ողբերգաբար զոհված Կարեն Դեմիրճյանի աջակցությամբ հօգուտ Հայաստանի կատարել եմ որոշ նուրբ գործառնություններ:

Այժմ ես Հայաստանի հետ կապերով պարծենալ չեմ կարող, չնայած պահպանվել են և՛ ընկերներ, և՛ ազգականներ: Երբեմն տպագրվում եմ երևանյան «Ուրարտուում», այլ թերթերում: Մի անգամ ինձ դիմել է ամերիկյան «Արմենիան ինտերնեյշլ մագազինը»: Իմ ծառայություններն եմ առաջարկել Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության դեսպանա-

փանը: Ակնհայտորեն իմ համագործակցության հնարավորություններ չեն ծագում:

Հայերի կյանքը ողբերգություն և հաղթանակ է: Այդ թվում իմը՝ ծնվել եմ Վրաստանում, ապրել Հայաստանում ու Ռուսաստանում, աշխարհի տասնյակ երկրներում պաշտպանել եմ Խորհրդային Միության շահերը, մի գիգանտի, որը փլուզվեց և դադարեց գոյատևել, այժմ ապրում եմ Փենսիլվանիայում՝ ԱՄՆ-ում, մի պետությունում, որի քաղաքականությանը պաշտոնի բերումով անդուլ քննադատել եմ: Պահպանում եմ ռուսաստանյան քաղաքացիությունը ոչ թե ձևական հայտանշաններով, այլև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետությանը սպասում են դժվար ու ծանր տարիներ, որոնք նա կարող է հաղթահարել հենվելով Ռուսաստանի Դաշնության՝ հայ ժողովրդի հավատարիմ դաշնակցի հետ, լայն համագործակցության ու դաշինքի վրա:Հաղթանակ եմ համարում և այն, որ պահպանել եմ հայ լինելու զգացումը: Նույնն եմ ցանկանում բոլոր հայերին՝ ներառյալ ԱՄՆ-ում բնակվողներին»:

2004 թվականին՝ ԱՄՆ-ում, որտեղ նա այժմ բնակվում է, սեպտեմբերին լրացավ Վ. Իսրայելյանի 85 տարին:

Ռուսաստանի Ֆեդերացիայի արտաքին գործերի մինիստր Ա. Լավրովի շնորհակալական հեռագիրը.

«Արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, թանկագին Վիկտոր Լևոնովիչ

Ամբողջ հոգով շնորհավորում եմ ձեր նշանավոր հոբելյանը: Ձեր վառ բազմակողմանի դիվանագետի, գիտնականի և մանկավարժի տաղանդը, ձեր բազմամյա անխոնջ գործունեությունը հանուն մեր երկրի բարօրության դուք ձեռք բերեցիք ամենախորը հարգանք արտաքին գործերի մինիստրությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ձեր դիվանագիտական կարիերան անխզելիորեն կապված է եղել Միավորված ազգերի կազմակերպության և զինաթափման կոնֆերենցիաների հետ: Այդ տարիներին, երբ աշխարհը դեռ ապրում էր սառը պատերազմի օրենքներով, այդ ֆորումներում սկսեցիք և կարողացաք հիմք դնել նոր քաղաքականության, հենվելով օրենքի ուժի և բազմակողմանի մոտեցումներ ցույց տվեցիք ակտուալ պրոբլեմների լուծմանը: Հենց այդ սկզբունքներն այսօր դարձավ միջազգային կյանքի նորմա, դրանում, անկասկած, ձեր արժեքավոր ծառայությունն է, որպես ականավոր դիվանագետ և գիտնական, դուք միշտ առատաձեռն բաժանել եք ձեր գիտելիքներն ու կիսել փորձը երիտասարդության հետ: Բարձրագույն դիվանագիտական դպրոցի շրջանավարտները ստացել են ձեզանից կյանքի ուղեգիր և մինչև այսօր հիշում են ձեզ հատուկ ջերմությամբ և երախտագիտությամբ, իսկ ձեր դասախոսական գործունեությունը ԱՄՆ-ում թույլ է տվել շատ ամերիկացիների մեր երկրին նայել ուրիշ աչքերով: Մեծ հաղթանակի նախօրյակին մենք պատշաճ հարգանք ենք ցույց տալիս ձեզ որպես զինվորական բժշկի, որը անձնվիրաբար փրկել է զինվորի կյանքը: Թույլ տվեք ցանկալ ձեզ, սիրելի Վիկտոր Լևոնովիչ, քաջառողջություն և երկար տարիների ստեղծագործական կյանք:

Խորին հարգանքներով Ս. Լավրով

Ռուսաստանի Ֆեդերացիայի արտաքին գործերի մինիստր»: Իսկական (օրիգինալ) փաստաթղթի վրա ձեռագիր գրված է. Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի առաջին տեղակալ Լոշչին Վ. Վ. «Ես միանում եմ բոլոր այդ բարի, անկեղծ բառերին: Մենք այստեղ բոլորս Ձեզ հիշում ենք և սիրում ենք...

Ձեր Վ. Լոշչին»:

ՍԵՐԳԵՅ ԴԱՆԻԵԼԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Սերգեյ Դանիելի Շահվերդյան. սովետական դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան, իրավաբանական գիտությունների թեկնածու: Ծնվել է 1927 թվականի մայիսին Փարիզում (Ֆրանսիա) պրոֆեսիոնալ հեղափոխական, հեղափոխական շարժման ակտիվ մասնակից, կուսակցական ու պետական նշանավոր գործիչ, 1902 թվականից ՍՄԿԿ անդամ Դանիել (Դանուշ) Շահվերդյանի ընտանիքում: Դանուշ Շահվերդյանը ավարտել է Պետերբուրգի իրավաբանական ֆակուլտետը: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո 1921 և 1924-28թթ. եղել է ՀՍՍՀ և ԱՍՖԱՀ առևտրական ներկայացուցիչը Թուրքիայում: 1922-23թթ. ՀՍՍՀ արդարադատության ժողկոմ և ժողկոմխորհի նախագահի տեղակալ: Դ. Շահվերդյանը մեծ ավանդ ունի հայրենադարձության կազմակերպման գործում: 1928-1929թթ. Դ. Շահվերդյանը հանդիսանում էր ՀՍՍՀ Կարմիր խաչի ներկայացուցիչը Ֆրանսիայում, Բելգիայում, Անգլիայում և եվրոպական այլ երկրներում:

1929թ. Դ. Շահվերդյանը ՍՍՀՄ առևտրի ժողկոմատի կողմից նշանակվում է Լոնդոնում ԱՐԿՈՍ-ի վարչության անդամ և նրա դիրեկտորներից մեկը, 1931թ. մինչև 1936թ. Դ. Շահվերդյանն աշխատում էր որպես ՍՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատի լիազոր Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետությունում: Ֆրանսիայում Դ. Շահվերդյանն այնքան մեծ հեղինակություն էր վայելում հայ աշխատավորության շրջանում, որ Ֆրանսիայի ՀՕԿ-ի մասնաճյուղերից մեկը կոչեցին նրա անունով: Դանուշ Շահվերդյանը տասնհինգ տարի իր եռանդն ու ջանքերը ներդրեց Սովետական Հայաստանի և աշխարհով մեկ սփռված հայության բեկորների կապն ամրապնդելու, արտասահմանի հայ աշխատավորությանը վերածնված հայրենիքի շուրջը համախմբելու գործում:

1936 թվականին Ս. Շահվերդյանի ընտանիքը տեղափոխվում է Երևան, որտեղ նա սովորում է Ն. Կրուպսկայայի անվան հայկական միջնակարգ դպրոցում 1936-1937 թվականներին: Ծնողներին բանտարկելուց հետո Ս. Շահվերդյանը տեղափոխվում է Թիֆլիս իր հարազատների մոտ: Այստեղ ուսումը շարունակում է Թիֆլիսի ռուսական 3-րդ արական դպրոցում (չտիրապետելով ռուսաց լեզվին): 1945թ. ավարտելով դպրոցը նա ընդունվեց Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (ընտրել էր այդ մասնագիտությունը, որովհետև, իր պապը և հայրը նույնպես եղել են իրավաբաններ), որն ավարտել է 1949 թվականին: 1949-1952թթ. սովորել է Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի պետական իրավունքի ամբիոնում, որպես ասպիրանտ: 1953թ. ասպիրանտուրան ավարտելուց հետո նա աշխատում է ՍՍՀՄ արտաքին և ներքին առևտրի մինիստրության գրասենյակի ավագ ռեֆերենտ, 1953-1955թթ.՝ ՍՍՀՄ առևտրի մինիստրության ավագ խորհրդատու:

1954թ. սեպտեմբերին Սովետական Միության Գերագույն դատարանի ռազմական կոլեգիան հետմահու արդարացրեց Ս. Շահվերդյանի ծնողներին:

1955-1956թթ. Ս.Շահվերդյանն աշխատել է Արտասահմանի հետ տուրիստական կապերի գլխավոր վարչության պետի տեղակալի օգնական:

1956թ. մարտ-ապրիլ ամիսներին որպես փորձագետ կառավարական պատվիրակության կազմում նա մեկնում է Վիետնամ, Չինաստան, Մոնղոլիա: Պատվիրակությունը ղեկավարում էր Ա. Ի. Միկոյանը:

Հնդկաստանից և Բիրմայից հետո Ա. Ի.Միկոյանը պետք է այցելեր Վիետնամ՝ Հանոյ, որտեղ նրան շատ ջերմ ընդունելություն կազմակերպեցին վիետնամցիները, հարյուր հազար մարդ դիմավորեցին նրան: (Ուշագրավ մի փաստ. Հո Շի Մինը Սերգեյ Շահվերդյանին նվիրեց փղոսկրից պատրաստած մուշտուկ): Հանոյից պատվիրակությունը մեկնեց Պեկին: Օդանավակայանում, Հանոյի հետ համեմատած դիմավորումը շատ սառն էր: Չինացիները չէին թաքցնում իրենց դժգոհությունը ՍՄԿԿ 20-րդ համագումարի որոշումներից: Ա. Ի. Միկոյանը հանդիպում ունեցավ Մաո Ցզե Դունի հետ ռեզիդենցիայում: Պատվիրակության անդամները, որոնց թվում նաև Ս. Շահվերդյանն էր, հանդիպեցին Չինաստանի (ՉԺՀ) նախագահ Լյու Շաոցի, Չժոու էն Լայի հետ, որը պրեմիերն էր պետսովետի 1949թ. մինչև իր մահը 1976թ., Չժուդեի՝ Չինական Ժողովրդական Հանրապետության նախագահի տեղակալ, Չինաստանի նախկին ժողովրդա-ազատագրական բանակի գլխավոր հրամանատար, Դեն Սյաոպինի՝ Չինաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար:

Ապրիլի 7-ին ՉԺՀ և ՍՍՀՄ միջև կնքվեց տնտեսական հետագա զարգացման պայմանագիր:

1956թ. հուլիսին Ս.Շահվերդյանը աշխատանքի է անցնում ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրի տեղակալի օգնականի

պաշտոնում մինչև 1959թ. (իր նախկին պետի Ալ. Վ. Զախարովի մոտ): Որպես մինիստրի տեղակալի օգնական հիմնականում զբաղվում էր սկանդինավյան երկրների՝ Ֆինլանդիայի և Շվեդիայի հարցերով: 1959թ. մինչև 1960թ. Ս. Շահվերդյանը աշխատել է ՍՍՀՄ նոր բացված ԱԳՄ պատմադիվանագիտական վարչությունում որպես փորձագետ-խորհրդատու: 1961-1962թթ. նրան նոր աշխատանքի են նշանակում առաջին աֆրիկական բաժնում՝ խորհրդատու: Նա հիմնականում զբաղվում էր Ալժիրի, Մալիի, Սենեգալի, Մադագասկարի և երբեմն, Մարոկկոյի ու Թունիսի պետությունների հարաբերությունների հարցերով: Այդ բաժնի կենտրոնական հարցերից մեկը Ալժիրի խնդիրն էր: 1958-ի սեպտեմբերի 19-ին կազմվեց Ալժիրի Հանրապետության ժամանակավոր կառավարություն: ԱՀԺԿ-ին ճանաչեցին շատ երկրներ, այդ թվում ՍՍՀՄ-ը (դեֆակտո՝ 1960թ.-ի հոկտեմբերին, դեյուրե՝ 1962թ. մարտին): Ազգային-ազատագրական շարժման ճնշման տակ, ի վերջո Ֆրանսիան ճանաչեց Ալժիրի ինքնորոշման իրավունքը:

Հուլիսի 5-ը հայտարարվեց Անկախության օր: 1962թ. հոկտեմբերից մինչև 1964թ. դեկտեմբերը Ս.Շահվերդյանն աշխատեց Սենեգալի Հանրապետությունում որպես ՍՍՀՄ դեսպանության խորհրդական:

1962թ. ապրիլ-մայիսին բարի ցանկության միսիան, ուղևորվեց Սենեգալի Հանրապետություն Սովետական Միության բարձրագույն կրթության մինիստր Վ. Ցելյուտինի գլխավորությամբ, որին ուղեկցում էր արտաքին գործերի մինիստրության կողմից Ս.Շահվերդյանը: 1962թ. հունիսի 5-ին Սենեգալի Հանրապետության Մինիստրների սովետի նախագահ, պաշտպանության մինիստր Մամադու Դիան այցելեց Սովետական Միություն: Նա հանդիպումներ ունեցավ Ն. Խրուշչովի և Ն.Կոսիգինի հետ:

1962թ. սեպտեմբերին Ս. Շահվերդյանին Սենեգալի Հանրապետությունում հաստատեցին ՍՍՀՄ դեսպանության խորհրդական: Սովետական Միության արտաքին գործերի մինիստր Ա.Գրոմիկոն, Սենեգալի արտաքին գործերի մինիստրի անունով նամակ հասցեագրեց Ս. Շահվերդյանին՝ հավատարմագրով լիազորել նրան որպես ժամանակավոր հավատարմատար Սենեգալում:

1962թ.-ին Սենեգալի և ՍՍՀՄ-ի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, կնքվեցին մի շարք համաձայնագրեր: Ս.Շահվերդյանը Սենեգալում աշխատեց որպես խորհրդական մինչև 1964թ. հոկտեմբերը:

1964-1966թթ. նա աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում, արտաքին քաղաքականության ինֆորմացիայի վարչության բաժնի վարիչ, իսկ 1966-1968թթ.՝ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության առաջին եվրոպական բաժնի փորձագետ և խորհրդատու:

1966 թվականի հունիսի 20-ին ՍՍՀՄ Գերագույն խորհրդի և Սովետական կառավարության հրավերով Ֆրանսիայի պրեզիդենտ դը Գոլը ժամանեց Մոսկվա: Օդանավակայանում դը Գոլն իր ողջույնի խոսքն ավարտեց ռուսերենով. «Ինձ թույլ եմ տալիս ֆրանսիական ժողովրդի անունից ողջունել սովետական մեծ ժողովրդին: Կեցցե՛ Ռուսաստանը»:

1966 թվականի հուլիսի 30-ին Մոսկվայում, ստորագրվեց սովետա-ֆրանսիական դեկլարացիա և մի շարք ուրիշ համաձայնություններ: Այդ բանակցություններին ակտիվ և գործնական մասնակցություն է ունեցել Ս.Շահվերդյանը որպես ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության առաջին եվրոպական բաժնի փորձագետ և խորհրդատու:

1968-1969 թվականներին Ս.Շահվերդյանն աշխատանքի է նշանակվում Բելգիայում ՍՍՀՄ դեսպանատանը որպես

խորհրդական, իսկ շուտով խորհրդական-դեսպան: 1970 թվականին նրան շնորհում են դիվանագիտական կարգ՝ արտակարգ լիազոր դեսպան երկրորդ դասի:

1970թ. Մոսկվայի կրկեսը հյուրախաղերի է մեկնում Բելգիա Նիկուլինի և Կիոյի գլխավորությամբ: Ս. Շահվերդյանն օգտվում է առիթից և հրավիրում է Բաամց (այժմ երկրի թագուհին է) արքայադուստրին երեխաների հետ կրկեսի ներկայացմանը: Այդ առիթ է հանդիսանում ծանոթանալ արքայական ընտանիքի հետ: Նա շատ աշխատանք է տանում ընդլայնելու մշակութային կապերը փոխանակման միջոցով երկու երկրների միջև, հատկապես երաժշտական արվեստի բնագավառում:

Ս. Շահվերդյանը սերտ կապերի մեջ է Բելգիայի հայկական կոմիտեի, նրա պրեզիդենտ Վարդան Մարդիկյանի հետ: (Գաղութում այդ ժամանակ հաշվվում էր մոտավորապես 1000 մարդ): 1971թ. մայիսին Բելգիայից վերադառնում է Մոսկվա և նշանակվում է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության եվրոպական առաջին բաժնի վարիչի տեղակալ և աշխատում մինչև 1977 թվականը: Բաժինը զբաղվում էր Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի, Վատիկանի հարաբերությունների հարցերով, իսկ Ս.Շահվերդյանին հանձնարարվում է առավելապես զբաղվել Ֆրանսիայի հարցերով: Դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ հաստատվել էր 1924թ. հոկտեմբերին Հայրենական մեծ պատերազմի վերջում: 1944թ. ՍՍՀՄ-ը ճանաչեց ֆրանսիական ժամանակավոր կառավարությունը դը Գոլի գլխավորությամբ: 1944թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրել է ՍՍՀՄ-ի հետ դաշինքի և փոխադարձ օգնության պայմանագիր: Արտաքին քաղաքականու-

թյան հարցերում հետամուտ է եղել Ֆրանսիայի ինքնուրույն դիրքորոշմանը: 1966թ. դը Գոլը պաշտոնական այցով եղել է ՍՍՀՄ-ում: Նրա բանակցությունները Մոսկվայում և 1966 թվականի հունիսի 30-ին ֆրանսիական դեկլարացիան կարևոր դեր խաղացին սովետա-ֆրանսիական հարաբերությունների պատմության մեջ: Դը Գոլի մահից հետո Ֆրանսիայի պրեզիդենտ Ժ.Պոմպիդուն (1962-1968թթ. Ֆրանսիայի պրեմիեր մինիստր), 1969-1974թ. Ֆրանսիայի պրեզիդենտ, շարունակեց դը Գոլի արտաքին քաղաքականության կուրսը: Նա եղել է ՍՍՀՄ-ում, ստորագրել է «Սովետա-ֆրանսիական արձանագրություն միջազգային կարևոր հարցերի շուրջ խորհրդակցելու վերաբերյալ» (1970թ. Մոսկվա), «ՍՍՀՄ-ի ու Ֆրանսիայի միջև համագործակցության սկզբունքները» (1971թ. Փարիզ) և այլ քաղաքական փաստաթղթեր:

1974թ. ապրիլին Պոմպիդուի թաղմանը մասնակցելու համար Փարիզ մեկնեց սովետական կառավարության պատվիրակությունը՝ ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն.Պոդգորնու գլխավորությամբ: Նրան ուղեկցեց ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության եվրոպական առաջին բաժնի վարիչի տեղակալ Ս.Շահվերդյանը:

1976թ. դեկտեմբերի 30-ին Ս.Շահվերդյանին շնորհեցին արտակարգ լիազոր դեսպանի առաջին կարգ:

1977 թվականին Ս.Շահվերդյանին նշանակեցին գլխավոր հյուպատոս Մարսելում (Ֆրանսիա):

Այդ ժամանակ Մարսելի քաղաքագլուխն էր Գաստոն Դեֆֆերը, սոցիալիստական կուսակցության հնագույն լիդերներից մեկը, որը բարեկամական հարաբերությունների մեջ էր Ս.Շահվերդյանի հետ: Ժան Կլոդ Գոդենը, երբ դարձավ Մարսելի քաղաքագլուխ, (վարեց մի շարք մինիստրական պոստեր

ու դարձավ նաև սենատոր) կարևոր դեր խաղաց 1915թ. հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը՝ ֆրանսիական կառավարության կողմից:

Ս.Շահվերդյանի աշխատած տարիներին Մարսել ժամանեց Սովետական Միության կուլտուրայի մինիստր Պ.Դեմիչևը, հյուրախաղային ուղևորություններով հանդես եկան Մոսկվայի Տագանկայի թատրոնը, Լենինգրադի Կիրովի անվան թատրոնի բալետի խումբը: 1976թ. Մարսել այցելեց Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կ.Դեմիրճյանը: Ս.Շահվերդյանը Մարսելում աշխատած տարիներին սերտ կապերի մեջ էր գտնվում հայկական համայնքի հետ, որը կազմում էին մոտ 80 հազար հայեր:

Հայկական եկեղեցու և ՍՍՀՄ Մարսելի գլխավոր հյուպատոսության հետ միասին անց են կացնում տարբեր միջոցառումներ, որին մասնակցում էին Երևանից ժամանած արվեստի ու կուլտուրայի գործիչներ, հայ դերասաններ և երաժիշտներ: Մարսելի հայության համար մեծ իրադարձություն էր Առնո Բաբաջանյանի, Էդ.Միրզոյանի, Ս.Կապուտիկյանի այցը Մարսել: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի Մարսելում եղած ժամանակ ի պատիվ նրա քաղաքագլուխը կազմակերպեց պաշտոնական ընդունելություն, որի ժամանակ Ս. Շահվերդյանին մոտենում է Վազգեն Առաջինը և հարցնում է. «Դուք Դանուշ Շահվերդյանի որդի՞ն եք, ես երիտասարդ տարիներին Ռումինիայում լսել եմ նրան միտինգների ժամանակ: Նա շատ էր սիրում Հայաստանը, շատ հայասեր մարդ էր»:

Ամեն տարի նոյեմբերին Հայաստանի սովետականացման օրը Մարսելի քաղաքապետարանը Սովետական Միության գլխավոր հյուպատոսության հետ միասին կազմակերպում են

հանդիսավոր երեկո, որտեղ զեկուցումով հանդես է գալիս գլխավոր հյուպատոսը և ծանոթացնում է Սովետական Հայաստանի էկոնոմիկայի, կուլտուրայի ու գիտության զարգացման և տնտեսության բնագավառի նվաճումներին:

1980թ. Մարսել ժամանեց ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստր Ջ.Կիրակոսյանը՝ մասնակցեց այդ միջոցառումներին և հանդես եկավ զեկուցումով:

Այդ տարիներին շենքերի պատերին գրված էր հակաթուրքական լոզունգներ: Ամենատարածված լոզունգը՝ «թուրքերը մարդասպաններ են»: Թուրքական հյուպատոսությունը գտնվում էր հայկական եկեղեցու մոտակայքում, որտեղ գիշեր ու ցերեկ երկու ավտոբուս ոստիկաններ պաշտպանում էին այդ տարածքը: Այդ մասին է պատմում Ս. Շահվերդյանը: «Մարսելի քաղաքապետի նախաձեռնությամբ Մարսելի փողոցներից մեկը անվանվեց «Ավենյու 24-ը ապրիլի 1915թ.»,- գրում է Ս. Շահվերդյանը իր կենսագրականի մեջ:

1982թ. մինչև 1984թ. Ս. Շահվերդյանն աշխատում էր որպես ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության եվրոպական առաջին բաժնի վարիչի տեղակալ: Հիմնականում նա զբաղվում էր Իտալիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի և Ֆրանսիայի հարցերով:

Ս.Շահվերդյանը զբաղվում էր նաև Պորտուգալիայի պետության հարցերով և 1984թ. մայիսին ժամանեց Պորտուգալիա: 1984թ. մայիսին ժամանեց Պորտուգալիայի պառլամենտի պատվիրակությունը՝ նրա նախագահի գլխավորությամբ: Նրա կազմում մասնակցում էին բոլոր քաղաքական կուսակցությունների դեպուտատները: Այցն անցավ արդյունավետությամբ:

Կարևոր իրադարձություն էր (որին անմիջական մասնակցություն ունեցավ Ս.Շահվերդյանը) 1984թ. հունիսին Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆ.Մեթերանի այցը ՍՍՀՄ, այդ ժամանակ Ֆրանսիական կառավարության կազմում կար 4 մինիստր կոմունիստ, որոնցից մեկը մասնակցում էր բանակցություններին: Ֆ.Մեթերանը շարունակում էր վարել դը Գոլի քաղաքականությունը այդ թվում ՍՍՀՄ-ի հետ համագործակցության կուրսի զարգացումը:

1984 թվականին Սերգեյ Շահվերդյանին շնորհեցին արտակարգ և լիազոր դեսպանի կարգ:

1984-1987թթ. Ս.Շահվերդյանն աշխատեց Տոգոյի Հանրապետությունում որպես ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության արտակարգ և լիազոր դեսպան: (Տոգոյի Հանրապետությունը գտնվում է Արևմտյան Աֆրիկայում: Սահմանակից է Բուրկինա Ֆասոյին (նախկին Վերին Վոլտային), Գանային: Հարավային Գվինեական ծոցն է: Տարածությունը 56,6 հզ. կմ^2, բնակչությունը մոտ 2, 8 մլն մայրաքաղաքը՝ Լոմե):

Տոգո այցելեց ՍՍՀՄ Գերագույն խորհրդի ազգության պալատի նախագահ Ա. Վոսսը, իսկ 1987թ. ՍՍՀՄ ժամանեց Տոգոյի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակությունը: 1986թ. Տոգոյի մայրաքաղաքում՝ Լոմեում, Տոգոյի արտաքին գործերի մինիստրի և ՍՍՀՄ-ի արտակարգ և լիազոր դեսպանի՝ Ս.Շահվերդյանի կողմից, ստորագրվեց կուլտուրական համագործակցության արձանագրություն:

1987թ.-ից մինչև 1992թ. Ս.Շահվերդյանն աշխատում է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության (հետագայում Ռուսաստանի Դաշնություն) դեսպանությունների հետ տարվող վարչության վարիչի տեղակալ, իսկ 1992-1996թթ. Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի մինիստրության պատմավավերագրական դեպարտամենտի ավագ խորհրդական:

Սերգեյ Շահվերդյանը 1996 թվականին անցնում է թոշակի:

ԱՍՔԱՆԱԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄՌԱՎՅԱՆ

Ասքանազ Հարությունի Մռավյան. պրոֆեսիոնալ հեղափոխական, ականավոր պետական կուսակցական գործիչ: Ասքանազ Հարությունի Մռավյանը ծնվել է 1886 թվականի հունվարի 2-ին Ելիզավետպոլի նահանգի Գանձակ քաղաքում (Ադրբեջան), չքավորի ընտանիքում:

Նրա հայրը զբաղվել է դերձակությամբ և ուսուցչությամբ, իսկ ավելի ուշ դարձել է քահանա: Նրա ծնողներն ունեցել են բազմանդամ ընտանիք՝ 9 հոգուց բաղկացած:

Ա. Մռավյանը սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական, ապա քաղաքային դպրոցում: Հետագայում Ա. Մռավյանը գերազանցիկի վկայականով ավարտում է Թիֆլիսի հաշվապահական դասընթացները: 1903թ. Ա. Մռավյանը ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան՝ միջնակարգ կրթություն ստանալու համար: Ուսումնառման տարիներին Ա. Մռավյանը ուսումնասիրում է Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նալբանդյանի դեմոկրատական, հեղափոխական գրականությունը:

1905թ. սեպտեմբերի կեսերին Ա. Մռավյանը իր դասընկերների հետ միասին կազմակերպում է երեք դասարանների աշակերտների դասադուլ: Ճեմարանի տնօրինությունը դիմում է կաթողիկոսին՝ միջոցներ ձեռք առնելու համար: Կաթողիկոսական կոնդակով Ա. Մռավյանը և մի շարք սաներ հեռացվում են ճեմարանից:

Ճեմարանից հեռացվելուց հետո Ա. Մռավյանը ուսումը շարունակում է Երևանի թեմական դպրոցում որն էլ ավարտում է 1906 թվականին:

1905թ. ապրիլին ընդունվում է ՌՍԴԲԿ Գանձակի բոլշևիկյան կազմակերպության անդամ:

1906թ. Երևանից Մռավյանը փոխադրվում է Գանձակ: Բայց մինչև այդ՝ 1906թ. հունիսի սկզբին, Ա. Մռավյանը լինում է Թիֆլիսում և սերտ կապ է հաստատում Ստ. Շահումյանի ու Ս. Սպանդարյանի հետ, ստանալով անհրաժեշտ ցուցումներ՝ մեկնում Գանձակ:

Ա.Մռավյանը պրակտիկ աշխատանքի հետ միասին, ակտիվորեն թղթակցում է Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի խմբագրությամբ Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան «Կայծ» և «Նոր խոսք» հայկական թերթերին: «Հրանտ» ծածկանունով գրում է երեք հոդվածներ՝ «Նամակ Գանձակից»:

1906-07թթ. պաշտոնապես աշխատում է որպես Գանձակի հայկական դպրոցի ուսուցիչ և միևնույն ժամանակ նա կուսակցական-քաղաքական և հեղափոխական-մասսայական աշխատանք է ծավալում, որի պատճառով 1907թ. հունիսին մի խումբ ուսուցիչների հետ միասին հեռացվում է աշխատանքից:

1907թ. հուլիսին Գանձակից Ա. Մռավյանը տեղափոխվում է Բաքու, որտեղ մնում է մինչև 1908թ. դեկտեմբերը: Այնտեղ նա Ի. Ստալինի, Ստ. Շահումյանի, Գ. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի, Պ. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիոլետովի անմիջական ղեկավարությամբ հեղափոխական աշխատանք է ծավալում Բաքվի բանվորների շրջանում: Ա. Մռավյանը բարձրագույն կրթություն ստանալու համար 1909թ. ամռանը մեկնում է Պետերբուրգ և ընդունվում է հոգեբանական ինստիտուտ և ստանում է պատմամանկավարժական մասնագիտություն:

Ա. Մռավյանը Պետերբուրգում գտնվելու ժամանակ կապ է հաստատում «Զվեզդա» և «Պրավդա» բոլշևիկյան թերթերի հետ և թղթակցում է դրանց: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ա. Մռավյանը կանգնում է բոլշևիկյան կազմակերպության դիրքերի վրա:

1915թ. գարնանը Պետերբուրգում ավարտելով բարձրագույն դպրոցը վերադառնում է Անդրկովկաս՝ Գանձակ:

Ա. Մռավյանը Գանձակից մեկնում է Թիֆլիս, որտեղ նահանգապետը հրաժարվում է նրան ուսուցչական աշխատանքի նշանակել: Հետագայում միայն հաջողվում է անցնել ուսուցչության: 1915թ. դեկտեմբերին Թիֆլիսում լույս է տեսնում «Պայքար» սոցիալ-դեմոկրատական շաբաթաթերթը, որին մասնակցում էին նաև մենշևիկ-ինտերնացիոնալիստներ, բայց թերթը գտնվում էր բոլշևիկների ձեռքին: Թերթի բոլշևիկ խմբագիրներն էին Ա. Մռավյանը և Ս. Խանոյանը, աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Արսեն Ամիրյանը, Մելիք Մելիքյանը(Դեդուշկան), Հակոբ Հակոբյանը, Հակոբ Կամարին, Արտաշես Կարինյանը և շատ ուրիշներ: «Պայքարի» խմբագիրի պոստում Մռավյանն իրեն դրսևորեց որպես բազմակողմանի զարգացած, պրոֆեսիոնալ, հմուտ ժուռնալիստ: Նա գրում էր ամենաբազմազան թեմաների մասին և հանդես էր գալիս «Աղման», «Աս», «Ա. Մանսուրյան», «Ա. Նազարյան», «Մ», «Մեյ», «Մ. Մակարյան», «Ք», «Ա. Մ.» ծածկանուններով: «Պայքարի» խմբագրի պաշտոնում նա իրեն դրսևորում էր որպես մեծ էրուդիցիայի տեր կուսակցական գործիչ, զարգացած ու հմուտ ժուռնալիստ, հրապարակախոս, մարքսիստ գրականագետ:

1917թ. փետրվարի 27-ին Ռուսաստանում հաղթանակեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որը տապալեց Ռոմանովների 300-ամյա կայսրությունը:

Փետրվարյան հեղափոխության ժամանակ Ա. Մռավյանը գտնվում էր Թիֆլիսում և աշխատում էր որպես «Պայքար»

շաբաթաթերթի խմբագիր և Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեի անդամ:

1919թ. հուլիսին Կովկասի երկրային կոմիտեն Ա. Մռավյանին գործուղում է աշխատանքի Հայաստան: 1919թ. սեպտեմբերին Երևանում հրավիրվում է Հայաստանի բոլշևիկների ընդհանուր խորհրդակցություն, որի աշխատանքները ղեկավարում էին Ա. Մռավյանը և Ստ. Ալավերդյանը: Խորհրդակցությունը ընտրում է Հայաստանի կոմունիստական կազմակերպության մի ընդհանուր ղեկավար մարմին, որի կազմի մեջ ընտրվում են Ա. Մռավյանը, Ստ. Ալավերդյանը, Ղ. Ղուկասյանը և ուրիշներ: 1920թ. ամռանը Բաքվում ստեղծվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոր արտասահմանյան բյուրո՝ Ա. Մռավյանի գլխավորությամբ:

1920թ. դեկտեմբերի 13-ին նա Ս. Տեր-Գաբրիելյանի հետ այցելել է Վ. Ի. Լենինին և մասնակցել է Խորհրդային Ռուսաստանից Հայաստանի նորաստեղծ խորհրդային իշխանությանը օգնություն կազմակերպելու գործին:

1920թ. դեկտեմբերի 25-ին Մոսկվայից Ա. Մռավյանը վերադառնում է Հայաստան, իր հետ բերելով 2 միլիարդ ռուբլի թղթադրամ (600 հազար ռուբլի ոսկով) Ռուսաստանի ֆինժողկոմատից որպես անմիջական օգնություն Խորհրդային Հայաստանին: 1921թ. դաշնակների փետրվարյան զինված խռովությունը (ապստամբություն) լիկվիդացնելուց հետո, Ռուսաստանից և խորհրդային մյուս հանրապետություններից Հայաստան աշխատանքի են ուղարկում մի շարք ղեկավար գործիչների: 1921թ. ապրիլին Հայաստան է գալիս կոմունիստական կուսակցության, պետական կուսակցական, ռազմական ականավոր գործիչ Ալ. Մյասնիկյանը և նշանակվում է Հայաստանի հեղկոմի նախագահ: Մայիսի 21-ին Հայաստանի հեղկոմը վերակազմվում է Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախա-

գահ և ռազմական գործերի կոմիսար է նշանակվում Ալ. Մյասնիկյանը, արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանը (1921-1922թթ.): Նա իրեն հիանալի դրսևորեց նաև դիվանագիտական ասպարեզում, որպես քաղաքագետ, հմուտ դիվանագետին հատուկ բանիմացություն և բարդ իրադրության մեջ կողմնորոշվելու բացառիկ ընդունակություն ունեցող անձնավորություն:

1921թ. փետրվարին Մռավյանը, տաճկական կառավարությանը ներկայացրեց նոտա, որտեղ հայտնում էր Սովետական Հայաստանի պատրաստակամությունը՝ խաղաղասիրական հարաբերություններ հաստատելու հարևան բոլոր պետությունների, այդ թվում նաև Թուրքիայի հետ:

Արևելյան ճակատի հրամանատար գեներալ Կարաբեքիրին. « Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը ստացել է Ձեր նոտան հունվարի 29-ին, որի բովանդակությունը նրան մեծ տարակուսանք և զարմանք պատճառեց: Ձեր մեջ եղած կասկածները Խորհրդային Հայաստանի բարյացակամության նկատմամբ Դուք հիմնում եք միջադեպի մանրամասնությունների վրա, որ տեղի է ունեցել Ղարաքիլիսայում: Ձեր սուրհանդակների նկատմամբ ճշգրիտ տեղեկություններ չունենալով դուք անում եք եզրակացություններ: Ղարաքիլիսայի հեղկոմից ստանալով մանրամասն և հարցը լուծող տեղեկություններ այդ միջադեպի մասին, արտժողկոմը հունվարի 30-ին կարգադրել է սուրհանդակին՝ վերադարձնել փոստը և ազատ թույլ տալ անցնելու, որը և ճշտությամբ կատարվեց նույն օրը:

Խորհրդային Հայաստանը բազմիցս դեկլարացիաների և ամենօրյա հեղափոխական գործելակերպով և փորձառությամբ ապացուցեց, որ նա լցված է ամենաազնիվ և եղբայրական ձգտումներով դեպի յուր դարավոր դրացին, եղբայրական թուրք ժողովուրդը»: 1921թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի հետ կնքվեց Կարսի պայմանագիրը Հայկական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Վրացական ՍՍՀ-ի միջև մի կողմից և Թուրքիայի միջև մյուս կողմից, ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ:

Տարբեր պատրվակներով Թուրքիան ձգձգում էր բանակցությունները, աշխատում էր պայմանագիր կնքել Անդրկովկասի առանձին խորհրդային հանրապետությունների հետ, մտադրություն ունենալով իր պայմանները թելադրել Հայկական ՍՍՀ-ին, ստիպել նրան արդեն չեղյալ հայտարարված Ալեքսանդրապոլի (1920թ. դեկտեմբեր 2-ի) պայմանագրի հոդվածները: Հայկական ՍՍՀ կառավարության կողմից մասնակցեցին արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանը, ներքին գործերի ժողկոմ Պողոս Մակինցյանը:

1921թ. Կարսի պայմանագրից հետո թուրքական կողմը ստիպված եղավ հրաժարվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը վկայակոչելուն: 1921թ. Կարսի պայմանագիրը հիմնականում բխում էր 1921թ. Մոսկվայի սովետա-թուրքական պայմանագրից: Թուրքիան կտրականապես հրաժարվեց ընդառաջել Խորհրդային Հայաստանի պատվիրակության առաջարկությանը, Անի քաղաքի ավերակները Հայաստանին վերադարձնելու հնագիտական պեղումներ կատարելու նպատակով:

Կարսի պայմանագրի առաջին հոդվածով թուրքական կառավարությունը անվավեր հայտարարեց օսմանյան կառավարության կողմից կնքված և Անդրկովկասին վերաբերվող նախկին պայմանագրերը: Ա. Մռավյանը 1921թ. «Խորհրդային Հայաստանի» թղթակցի հարցերին հետևյալ պատասխանը տվեց.

- Ինչո՞ւ էիք պնդում, որ հավաքական լինի մեր դաշնագիրը Թուրքիայի հետ:

-Շատ պարզ է, որպես սոցիալիստական խորհրդային հանրապետություններ, Անդրկովկասի երեք հանրապետությունները իրար հետ կապված են ամենասերտ կապերով՝ տնտեսական, քաղաքական և զինվորական հողի վրա:

-Ինչո՞ւ հողային պահանջներ չդրվեցին:

-Ճիշտ է, որ ոչ մի հողային պահանջ չդրվեց, բայց դա չի նշանակում, որ Հայաստանը հողային պահանջ չունի: Մի խոսքով Կարսի կոնֆերանսը, չարդարացրեց բոլոր ռոմանտիկների երազանքները: Կարսում մեզ զբաղեցնողը, մեր ժողովրդի համար ամեն բանից ավելի կարևորը խաղաղության խնդիրն էր:

... Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը: Բայց մենք այս հարցերը կլուծենք խաղաղ և բարեկամորեն թուրք ժողովրդի հետ Անդրկովկասի և Ռուսաստանի եղբայրակից հանրապետությունների օժանդակությամբ»:

Կարսի պայմանագրին նվիրված հոդվածներում («Կարսի կոնֆերանսի շուրջը», «Մի խոսք ևս», «Կարսի դաշնագրի հաստատումը») Մռավյանը ցույց է տալիս, որ 1922թ. մարտի 20-ին Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեն միաձայն հաստատեց Կարսի դաշնագիրը. «որը Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելը ավելի է ամրապնդում խաղաղության գործը, որ հայ ժողովուրդը կարող է հանգիստ սրտով վերցնել իր մաճն ու մուրճը՝ անցնել խաղաղ աշխատանքի»:

Ա. Մռավյանը մեծ ուշադրություն էր դարձնում արտաքին հարաբերությունների հարցերին, հաճախակի հանդես էր գալիս գրավոր ու բանավոր ելույթներով: Նա ցույց էր տալիս, թե ինչպես սովետական պետության խաղաղասիրական քաղաքականությունը հարգանք ու վստահություն է ստեղծում աշ-

խարհի առաջադեմ մարդկության շրջաններում և վճռական հակահարված է տալիս իմպերիալիստական պետությունների ագրեսիվ պլաններին: Դրա վառ օրինակ հանդիսացավ Ջենովայի կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1922թ. ապրիլ-մայիս ամիսներին:

«Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը Ջենովայում» հոդվածում Մռավյանը ցույց է տալիս, որ Ջենովայի կոնֆերանսին ներկայացուցիչ է ուղարկում նաև Խորհրդային Հայաստանը, Խորհրդային մեծ Ֆեդերացիայի մյուս անդամների հետ միասին: «Սա թող անսպասելի չթվա ոչ ոքի համար և թող բթամիտները չխոսեն, թե Ջենովայում անկոչ հյուրի դերում կլինի Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը, որը և ուշադրության չի արժանանա հզորների կողմից: Մեր ներկայացուցիչը կլինի Ջենովայում և եթե Ռուսաստանն այնտեղ պիտի ընդունվի և նրա ձայնը լսվի, ապա պատգամավորության և նրա կշռի բաղկացուցիչ մասն են կազմելու նաև խորհրդային մյուս հանրապետություններ՝ Ուկրաինան, Ադրբեջանը, Վրաստանը, ուրեմն նաև՝ Հայաստանը և այլն: Այս բաղկացուցիչ, անհրաժեշտ մասը և ոչ թե իբրև պատվավոր հյուր կամ թիկնապահ: Սա պիտի պարզ լինի բոլորի համար:

... Առաջին անգամ վերջին 100 (եթե ոչ ավելի) տարիների մեջ Հայաստանը կհանդիպի եվրոպական իմպերիալիստներին իբրև պետական միավոր իր դաշնակիցների հետ միասին: Եվ կհանդիպի ոչ թե Խրիմյանի, Ահարոնյանի կամ Նուբար փաշայի ծնկաչոք դիրքում»:

«Ջենովայի կոնֆերենցիան փակվեց» հոդվածը, որը Մռավյանը հրատարակեց 1922թ. մայիսի 24-ին «Խորհրդային Հայաստան» թերթում. «Վերջին օրերում կատարված քաղաքական ամենամեծ դեպքը պիտի համարել Ջենովայի կոնֆերենցիայի ցրումը: Մոտ ամիս և կես տքնելուց հետո Ջենո-

վայում հավաքված բուրժուական դիպլոմատները վերադառնում են իրենց թագավորների ու պառլամենտների մոտ և պիտի զեկուցեն իրենց աշխատանքների մասին, որոնց արդյունքը չի կարելի բավարար համարել բուրժուական աշխարհի համար»: Այնուհետև Մռավյանը մատնանշում է, որ սովետական ներկայացուցիչները անզիջող կամքով ու վճռականությամբ պաշտպանեցին պետության շահերը և ձախողեցին ԱՄՆ-ի, Անտանտայի իմպերիալիստների պլանը, «Ջենովայի կոնֆերենցիան վերջացավ կապիտալիստական գիշատիչների ծրագրերի փլուզումով և Խորհրդային Ֆեդերացիայի բարոյական խոշոր հաղթանակով»:

Դեռ Ջենովայի կոնֆերանսը չավարտված 1922թ. ապրիլի 16-ին Ռապալլոյում կնքվեց ՌՍՖՍՀ-ի և Գերմանիայի միջև պայմանագիր, որով վերականգնվեց դիվանագիտական հարաբերությունները երկու կողմերի միջև: Ա. Մռավյանը «Ռուս-գերմանական համաձայնությունը» («Խորհրդային Հայաստան», 1922թ. մայիսի 24) հոդվածում գրում է. «Ռուս-գերմանական փոխադարձ ճանաչումը և մի շարք վիճելի հարցերի լուծումը սառը ջուր լցրեց Անտանտի վարիչների տաք գլուխներին: Ճեղքվեց իմպերիալիստների լագերը և ձախողվեց Սովետական Ռուսաստանը տնտեսական բլոկադայի ենթարկելու նրանց ծրագիրը»:

Հաագայի կոնֆերանսը տեղի ունեցավ հունիսի 15-ից հուլիսի 19-ը (Նիդեռլանդներ), Ջենովայի կոնֆերանսի որոշմամբ: Մասնակցում էին Ջենովայի կոնֆերանսի մասնակից պետությունները, բացի Գերմանիայից: Կոնֆերանսը պետք է քննարկեր սովետական պետությանը ներկայացված կապիտալիստական երկրների պահանջները՝ օտարերկրյա կապիտալիստների սեփականության ազգայնացման և Ռուսաստանի ցարական ու ժամանակավոր կառավարությունների

պարտքերը չեղյալ հայտարարելու վերաբերյալ, նաև Սովետական Ռուսաստանին վարկեր տրամադրելու հարցերը: Երկուստեք անհամաձայնության պատճառով չկայացավ որևէ որոշում: «Խորհրդային Հայաստանի» 1922թ. հուլիսի 25-ի «Հաագայի վախճանը» առաջնորդող հոդվածով հանդես եկավ Ա. Մռավյանը. «Եթե Ջենովայից մենք վերադարձանք այնպես, որ ամբողջ աշխարհը անմիջապես տեսավ ու զգաց, թե ինչ բան է խորհուրդների իշխանությունը և հասկացավ նրա մասին տարածած պրոպագանդայի ամբողջ նպատակը, ապա Հաագայից մենք այսօր դուրս եկանք ավելի քան մեծ հաղթությամբ»: Անգլիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնի սովետական կառավարությանը տված 1923թ. մայիսի 8-ի նոտան Ա. Մռավյանը համարում էր ավանտյուրիստական քաղաքականության պրովոկացիա ու շանտաժ:

Մի հատված Ա. Մռավյանի «Մեր պատասխանը Քերզոնին» հոդվածից («Խորհրդային Հայաստան», 1923թ. մայիս). «Քերզոնը, հոդվածից նոր պատերազմով է սպառնում մեր երկրին և ոչ մի կերպ չի ուզում հաշտվել բանվորա-գյուղացիական իշխանության գոյության հետ և օրհասական ճիգեր թափում ժամ առաջ այն փակելու համար, բայց այդ բոլոր զառանցական պլանները նախօրոք դատապարտված են կործանման, որովհետև մեր մեծ հայրենիքի աշխատավորները, ինչպես միշտ, այնպես էլ այժմ, պատրաստ են կրծքով պաշտպանել Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի նվաճումները»:

1922 թվականի հունվարի 30-ից մինչև փետրվարի 4-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների դեպուտատների սովետների առաջին համագումարը: Սովետների առաջին համագումարն ընդունեց Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրությունը: ՀԽՍՀ սահմանադրության մասին զեկուցու-

մով հանդես եկավ Ա. Մռավյանը: Սահմանադրությունը բաղկացած է մի շարք հոդվածներից: Միջազգային պայմանագրերի մասին ասված էր, որ սահմանադրությամբ չեղյալ հայտարարվեցին Հայաստանի վերաբերյալ բոլոր միջազգային պայմանագրերը, որոնք կնքվել էին նախկին կառավարության կողմից:

Ասքանազ Մռավյանը 1923թ. նշանակվեց Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար, բուռն և բեղմնավոր գործունեություն ծավալեց այդ ասպարեզում: Իր բոլոր ուժերը, բազմակողմանի գիտելիքներն ու եռանդն ամբողջովին ի սպաս դրեց երկրի կուլտուրական զարգացման համար: Սահմանվեց անվճար ուսուցում, որը տարվում էր հայերեն լեզվով, ստեղծվեցին դպրոցներ, գրադարաններ, կուլտուր-լուսավորական հիմնարկներ և այլն: Զգալի քանակով հայ ուսանողներ էին սովորում Մոսկվայում, Լենինգրադում և Խորհրդային Միության այլ քաղաքներում:

1926թ. լույս տեսավ ՀՍՍՀ լուսժողկոմատի և լուսաշխի միության օրգան «Ժողովրդական լուսավորություն» ամսագրի առաջին համարը: Ամսագիրը անմիջականորեն ղեկավարում էր Ա. Մռավյանը: Ձեկուցման մեջ հատուկ տեղ հատկացրեց անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ ցույց տրվող վերաբերմունքի հարցին: Ա. Մռավյանը գտնում էր, որ չի կարելի ամբողջովին դեն նետել հին ինտելիգենցիային: Չնայած նրանց մի մասը դուրս եկավ խորհրդային իշխանության դեմ, բայց մյուս մասը կանգնեց մեր պետության դիրքերում:

Նա հատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանի ինտելեգինցիային, մեծ հարգանքով և ջերմ հոգատարություն էր ցուցաբերում նրանց նկատմամբ: Նրան շատ սրտառուչ նամակներ են գրել կուլտուրայի, արվեստի այնպիսի հայ ականավոր գործիչներ, ինչպիսիք են Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Սպանդարյանը, Ավետիք Իսահակյանը, Ալեքսանդր

Թամանյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Հակոբյանը, Եղիշե Չարենցը և շատ ուրիշներ:

Չարենցն իր նամակներից մեկում գրում է, որ ինքը «խորագույն հարգանքով է լցված» Մռավյանի հանդեպ և նրա եղբայրական վերաբերմունքը «մխիթարում է» իրեն:

Խորհրդային Հայաստանում տեղի ունեցավ նշանավոր իրադարձություն: Երևան ժամանեցին աշխարհահռչակ երկու գրողներ՝ Անրի Բարբյուսը և Մաքսիմ Գորկին:

1927թ. հոկտեմբերին Երևանում Ֆրանսիայի ականավոր գրող Անրի Բարբյուսին դիմավորեց լուսաժողկոմ Ա. Մռավյանը: Մեկնելուց առաջ Անրի Բարբյուսն ասաց. «Ժամանակավորապես հեռանում եմ ձեզանից և չեմ ասում մնաք բարով, այլ ասում՝ ցտեսություն»:

Մեկ տարի հետո, 1928թ. հուլիսին, Թիֆլիսից գնացքով ժամանեց ռուս հանճարեղ գրող Մաքսիմ Գորկին: Երևանում 26 կոմիսարների անվան այգում կազմակերպվում է բազմահազարանոց (ավելի քան 10 հազ. մարդ) միտինգ Մ. Գորկու գալստյան առթիվ, որտեղ բացման ճառով հանդես է գալիս Ա. Մռավյանը: Նա ողջունում է մեծանուն գրողի ժամանումը և խոսում է նրա բեղմնավոր գործունեության մասին:

Մ. Գորկին Երևանից մեկնեց Թիֆլիս, որտեղ «Զարյա Վաստոկա» թերթի աշխատակցի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է. «Հայաստանը մեծ ապագա խոստացող երկիր է, դարավոր կուլտուրայի տեր է, իսկ նրա ժողովուրդը գործունյա ժողովուրդ է, որը գիտե, թե ինչ է անում և ինչ պիտի անի»:

Մեծ աշխատանք տարվեց անգրագիտության վերացման ուղղությամբ: Հայկական ԽՍՀ ժողկոմսովետին կից ստեղծվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով՝ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի նախագահությամբ:

Ա. Մռավյանն իր ամբողջ գիտակցական կյանքն առանց

մնացորդի նվիրեց իր հայրենիքին, իր ժողովրդին: Նա մահացավ 1929թ. հոկտեմբերի 23-ին սրտի կաթվածից, ընդամենը 43 տարեկան հասակում: Նա մահացավ մարտական պոստում, երբ վարում էր ԽՍՀՄ կենտգործկոմի անդամի, ԱՍՖՍՀ-ի կենտգործկոմի նախագահության անդամության թեկնածուի, ՀԿ(բ)Կենտկոմի նախագահության և Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի նախագահի տեղակալի, լուսավորության ժողովրդական կոմիսարի պարտականությունները: Հանրապետության կուլտուրայի բոլոր ականավոր գործիչները հանդես եկան՝ ցավակցություն հայտնեցին Մռավյանի մահվան առթիվ: Ճարտարապետ, ակադեմիկոս Ալ. Թամանյանն իր «Ծանր կորուստ» հոդվածում գրում է. «Խորհրդային Հայաստանի կուլտուրական շինարարական ասպարեզներում չկա մի հիմնարկություն, չկա մի փոքրիկ ձեռնարկ, որ կապված չլինի նրա անվան հետ և դրանց զարգացումն արդյունքը չլինի նրա ղեկավար ձեռքի»:

Ականավոր գրող Դ. Դեմիրճյանը Մռավյանին անվանեց «աշխատանքի հերոս, որն իր գործունեությամբ անմահացավ»: Աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Սարյանը, նշանավոր գրող Շիրվանզադեն, խոսում են Մռավյանի բարձր կուլտուրայի մասին և ընդգծում ղեկավարի նրա լավագույն հատկությունները, որով նա մարդկանց գնահատում էր ըստ արժանիքների և օգնում նրանց ընդունակությունների ծավալմանն ու զարգացմանը:

1929թ. հոկտեմբերի 27-ին մեծագույն հուզմունքով վերջին հրաժեշտը տվեցին Ա. Մռավյանին: Նրան թաղեցին Երևանի պանթեոնում:

ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սահակ Կարապետյանը ծնվել է 1906 թվականի մայիսի 16-ին Հոկտեմբերյանի շրջանի Ղուրդուղուլի, ներկայումս Արմավիր գյուղում: 1924թ. Կարապետյանը ընդունվում է կոմերիտմիության շարքերը և ակտիվորեն մասնակցում է գյուղի երիտասարդության աշխատանքներին: 1925-1928 թվականներին նա աշխատում է էջմիածնում և Աշտարակում, որպես շրջգործկոմի հողբաժնի հրահանգիչ, ֆինբաժնի վարիչ, ապա նաև նախագահի տեղակալ: Աշխատելու հետ միաժամանակ նա սովորել է երկրորդ աստիճանի կուսակցական դպրոցում, որն ավարտում է 1928 թվականին: Այդ նույն թվականին զորակոչվելով, նա երկու տարի ծառայում է կարմիր բանակի շարքերում, այնուհետև զորացրվելով 1930 թվականին, ընդունվում է Երևանի անասնաբուժական ինստիտուտ: Ուսանող եղած ժամանակ 1931թ. նա ընդունվում է Համկ(բ) կուսակցության շարքերը: Հետագայում նա ընտրվում է այդ կուսկազմակերպության բյուրոյի քարտուղար: Արդեն ուսանողական տարիներից զբաղվում է գիտահետազոտական աշխատանքով: Ինստիտուտն ավարտելուց հետո, չնայած վարում է պետական կուսակցական տարբեր պաշտոններ, այնուամենայնիվ, նա չի թողնում գիտությունը և իր այդ գործունեությունը, հաջողությամբ զուգակցում է գիտահետազոտական աշխատանքի հետ:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալով Ս. Կարապետյանը ուղարկվում է աշխատանքի Սիսիանի շրջան: 1933-1936թթ. նա աշխատում է Սիսիանի Բազարչայի անասնապահական սովխոզում որպես ավագ զոոտեխնիկ, ապա նույն սովխոզի դիրեկտոր: Աշխատանքի հետ միասին հեռակայել է ասպիրանտուրայում: 1936թ. տեղափոխվել է Երևան, շարունակում է սովորել և 1937թ. ավարտում է ասպիրանտուրան, իսկ 1938թ. պաշտպանել է դիսերտացիան, ստացել է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան:

Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացումը, ինչպես նաև գիտական երիտասարդության մասնագիտական պատրաստվածությունն ու աճը, նախադրյալներ ստեղծեցին 1935թ. Երևանում կազմակերպելու ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը սկզբում ղեկավարում էր ականավոր գիտնական-հնագետ, ակադեմիկոս Հ. Օրբելին:

1938թ. մինչև 1940թ. Ս. Կարապետյանը աշխատում է Արմֆանի նախագահի գիտական գծով տեղակալ: 1940թ. մարտից մինչև հունիսը 1944թ. ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար:

1943թ. ԽՍՀՄ կառավարությունն, ընդառաջելով Միութենական գիտությունների ակադեմիայի ղեկավարության առաջարկությունը, համաձայնվեց պատերազմող, նյութական ծանր պայմաններում գտնվող Հայաստանում ստեղծել գիտությունների ակադեմիա:

Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհը 1943թ. նոյեմբերի 25-ին, լսելով կառավարական հանձնաժողովի առաջարկությունները, որոշեց հաստատել ակադեմիայի հիմնադիր կազմը՝ բաղկացած 23 անդամից (ակադեմիկոսից): Ակադեմիան իր կազմի մեջ ընդգրկեց բնական և հասարակական գիտությունների

գծով ականավոր գիտնականների, որոնք գերազանցապես հայ մտավորականության ավագ սերնդի ներկայացուցիչներն էին: Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին (հիմնադիր) կազմի մեջ մտան Մանուկ Աբեղյանը, Աբրահամ Ալիխանովը, Արտեմ Ալիխանյանը, Հրաչյա Աճառյանը, Հրաչյա Բունիաթյանը, Վարդան Գուլքանյանը, Իվան Եղիազարովը, Ալեքսանդր Թամամշևը, Միքայել Թումանյանը, Վաչե Իսագուլյանցը, Ավետիք Իսահակյանը, Սահակ Կարապետյանը, Խաչատուր Կոշտոյանցը, Ալեքսանդր Հակոբյանը, Վիկտոր Համբարձումյանը, Լևոն Հովհաննիսյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփան Մալխասյանը, Հակոբ Մանանդյանը, Կոնստանդին Պաֆֆենհոլցը, Արսեն Տերտերյանը, Հովսեփ Օրբելին և Լևոն Օրբելին:

1944թ. Ս. Կարապետյանն անցավ կյանքի մի նոր բազմակողմանի պրոֆիլային, ավելի պատասխանատու բնագավառ: Ս. Կարապետյանը նշանակվեց 1944-1947 թթ. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ և արտաքին գործերի մինիստր, իսկ 1947թ. մինչև 1952թ.՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ:

Պոտսդամի կոնֆերանսը տեղի ունեցավ 1945թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը (Բեռլինի մոտ) Սովետական Միության, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների (Ի.Վ. Ստալին, Հ. Տրումեն, Ու. Չերչիլ, հուլիսի 23-ից Ք. Էտլի) մասնակցությամբ: Հիմնական հարցը Գերմանիայի ապառազմականացումն էր, ապանացիֆիկացումը, դեմոկրատացումը:

Պոտսդամի կոնֆերանսում նախատեսվում էր բարձրացնել նաև հայկական հարցը: Մոսկվայից հանձնարարում են հանրապետության ղեկավարությանը պատրաստել համապատասխան նյութեր և ներկայացնել, որպեսզի Արևմտյան Հա-

յաստանի տարածքների հարցը շոշափվի կոնֆերանսում: Կոնֆերանսի բացմանը Վ. Մոլոտովը (ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստր) և Ա. Իդենը (Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր) փոխանակեցին կարծիքներ այդ հարցի շուրջը: Ա. Իդենը հաղորդեց Վ. Մոլոտովին, որ թուրքերը համաձայն չեն բավարարել Խորհրդային Միության տարածքային պահանջները, իսկ Վ. Մոլոտովը պատասխանեց, որ այդ տարածքները չեն պատկանում թուրքերին: Ա. Իդենի հարցին, թե արդյոք շատ հայեր են ապրում Թուրքիայում, Վ. Մոլոտովը պատասխանեց, որ նրանք այնտեղ կազմում են 400-ից 500 հազար: Իսկ Խորհրդային Հայաստանում ապրում են ավելի քան մեկ միլիոն հայեր: Խորհրդային Հայաստանից դուրս, արտասահմանում ապրում են մեկ միլիոնից ավելի հայեր: Երբ հայերի տարածքներն ընդարձակվեն, շատ հայեր, որոնք ապրում են արտասահմանում կձգտեն վերադառնալ հայրենիք: Հայերը շատ ընդունակ և եռանդուն մարդիկ են, հատկապես տնտեսվարության հարցերում: Երբ Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ քննարկվել է հայկական հարցը, որը մերժվեց ԱՄՆ-ի կառավարության կտրուկ պահանջով, Ի. Ստալինի և Մոլոտովի մոտ է եղել Ս. Կարապետյանի այս տեղեկանքը: Իսկ հանրապետության ղեկավարությունը հանձնարարում է Սահակ Կարապետյանին, որպես Հայկական ՍՍՀ կառավարության նախագահի տեղակալ և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ նախապատրաստել համապատասխան նյութեր և փաստաթղթեր: Տան արխիվում գտնված թղթապանակը, որտեղ գրված էր իր ձեռագրով «Հայկական հարցի վերաբերյալ նյութերը և իմ ձեռագրերը» ռուսերեն լեզվով, թվագրված է 29 սեպտեմբերի, 1944 թվական. «Հայկական հարց»: Դրանից հետո՝ «Տարածքային հարցեր» որտեղ մեկ առ մեկ նշվում է, թե մենք ինչ տարածքային պահանջներ

ունենք: Գլխավոր փաստաթուղթը բաղկացած է 108 մեքենագիր էջերից:

Ներածությունը վերնագրված է. «Հայկական հարցը շարունակում է մնալ օրակարգում»: Այստեղ հայկական հարցի ամբողջ պատմությունն է: Առաջին մասի վերնագիրն է. «Ինչպես են վճռվել Անդրկովկասյան հանրապետությունների սահմանները»: Մյուս ենթավերնագիրն է. «Ազգայնական կուսակցությունները իշխանական ղեկերին»: Հետո գալիս է. «Հայ ժողովրդի դահիճ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը շարունակում է հայ ժողովրդի հանդեպ ցեղասպանության քաղաքականությունը»: Դեռ այն ժամանակ, 1944թ. Ս. Կարապետյանը պետական գործիչ լինելով Քեմալ Աթաթուրքին անվանել է «դահիճ» և օգտագործել առաջին անգամ «ցեղասպանություն» տերմինը: Չորրորդ գլուխը. «Ադրբեջանի կառավարության դեկլարացիան Նախիջևանի, Զանգեզուրի և Ղարաբաղի ժամանակավոր օկուպացման և վիճելի տարածքներից հրաժարվելու մասին»: Հինգերորդ գլուխը. «Պայմանագիր Թուրքիայի հետ»: Հայերի բնաջնջումից հետո, քեմալականները նվաճում են Կարսի շրջանը և Սուրմալուն և Նախիջևանի հիմնահարցը»: Հաջորդ ենթավերնագիրը. «Կոմունիստ Ն. Նարիմանովի յուրօրինակ քաղաքականությունը. Հայաստանի տերիտորիայի անդամահատումը շարունակվում է»:

Փաստաթղթերի երկրորդ մասի վերնագիրն է՝ «Ինտերնացիոնալիզմը միայն խոսքերով: Մեծաադրբեջանական շովինիզմը գործողության մեջ», այնուհետև՝ «Հայ բնակչության ճնշումները Ադրբեջանում»: Ադրբեջանում հայոց լեզուն հայության համար համարվում է շփման միջոց, այստեղ էլ ապացուցում է, թե ինչպես կապանքների մեջ է դրվում հայերենը հարևան սովետական հանրապետությունում:

Հինգերորդ գլուխը հիմնավորված, փաստարկներով ուղղված է թուրք և ադրբեջանական կեղծարար պատմաբանների, առաջին հերթին նողկալի, կեղծ ակադեմիկոս Զիա Բունիաթովի դեմ:

Ութերորդ գլուխը՝ «Ինչ կատարվեց Ադրբեջանի քուրդ ազգաբնակչության հետ»:

Աշխատության երրորդ մասը՝ «Արդյոք Հայաստանը ոտնձգություններ է կատարում հարևան հանրապետությունների նկատմամբ» և «Ժողովուրդների բարեկամություն, թե բարեկամություն միայն հանրապետությունների միջև» բաժինը:

Դեռ այն ժամանակ, որ այսօր արդիական է Ս. Կարապետյանը հարց բարձրացրեց՝ «Հայ ժողովուրդը կարող է նշել համազգային սգո օր»: Նա եզրակացնում է, որ հայ ժողովուրդ, այո, ունի իրավունք նշելու իր սգո օրը:

Այս փաստաթուղթը պատիվ է բերում Ս. Կարապետյանին և մեր այն ժամանակվա կուսակցական, պետական գործիչներին, ովքեր եղել են ոչ պակաս հայրենասեր մարդիկ:

Մինչև 1945թ. հայ իրականության մեջ գոյություն չի ունեցել դիվանագետների պատրաստման որևէ հատուկ կենտրոն: Այդ բացը լրացնելու մի հաջող փորձ էր Երևանի պետական համալսարանում միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բացումը: Ս. Կարապետյանի նախաձեռնությամբ 1945թ. բացվեց այդ ֆակուլտետը:

1945 թ. հուլիսի 21-ին Հայկական ՍՍՌ ժողովրդական կոմիսարների սովետն ընդունեց որոշում (թիվ 578):

1. Առաջարկել Հայկական ՍՍՌ Լուսժողկոմատին 1945/1946 ուսումնական տարվանից սկսած կազմակերպել.

ա) Երևանի Մոլոտովի անվան պետական համալսարանին կից միջազգային հարաբերությունների ֆակուլտետ:

Հայկական ՍՍՌ ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ *Ա. Սարգսյան:*

Հայկական ՍՍՌ ժողովրդական կոմիսարների սովետի գործերի կառավարիչ *Ա. Աշխարումով:*

Հայաստանի կառավարության սույն որոշման մեջ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի կազմակերպման անհրաժեշտությունը հինավորված էր «միջազգային հարաբերությունների գծով համապատասխան որակավորման մասնագետներ պատրաստելու պահանջով»:

ՍՍՀՄ Գերագույն սովետի 1944թ. փետրվարի 1-ի օրենքի համաձայն ՀՍՍՀ Գերագույն սովետը մարտի 18-ին ստեղծեց ՀՍՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը, որը 1946թ.-ից մինիստրություն է: Ունի արձանագրային-հյուպատոսական և քաղաքական ինֆորմացիայի բաժիններ: ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմներ են եղել Ա. Բեկզադյանը (1920թ.), Ա. Մռավյանը (1921-1922թթ.) Ս. Կարապետյանը (1944-1948 թթ.), Գ.(Կիմիկ) Հովհաննիսյանը (1948-53թթ.), Ա. Քոչինյանը (1953-59թթ.), Բ. Մարտիրոսյանը (1959-72թթ.), Կ. Ուդումյանը (1972-75թթ.), Ջ. Կիրակոսյանը (1975-85թթ.), Ա. Մկրտչյանը (1985-91թթ.): Մեծ է Ս.Կարապետյանի ավանդը Հայաստանում գիտական օջախների ստեղծման և զարգացման գործում:

1952թ. Սահակ Կարապետյանը ամբողջությամբ նվիրվում է գիտությանը: 1957 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի լաբորատորիան և իր հետագա ողջ ստեղծագործական կյանքը կապում է այդ ինստիտուտի հետ:

Գիտական, մանկավարժական և զուգահեռ կուսակցական, պետական, հասարակական երկար տարիների աշխատանքի ընթացքում Ս. Կարապետյանը հսկայական գործ է

կատարել կենսաբանության ասպարեզում, որն ամփոփվել է նրա 350-ից ավելի աշխատություններում, այդ թվում 11 մեծածավալ մենագրություններում: Ս.Կարապետյանը զեկույցներով հանդես է եկել Գերմանիայում, Մեքսիկայում, Իսպանիայում, Հնդկաստանում, Ֆրանսիայում և այլ երկրներում հրավիրված կոնգրեսներում, գիտաժողովներում:

Ս. Կարապետյանը գիտական գործունեության հետ միասին զուգահեռաբար զբաղվել է նաև գիտամանկավարժական աշխատանքով: 1957 թվականից մինչև 1983թ. նա դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, իսկ 1964թ. ղեկավարել է նույն ինստիտուտի «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի» ամբիոնը: Սահակ Կարապետյանը մեծ ծառայություն ունի նաև գիտական, մանկավարժական կադրերի պատրաստման գործում:

Նրա ղեկավարությամբ և օգնությամբ պաշտպանել են երեք դոկտոր և 13 թեկնածու:

Կուսակցական, պետական անվանի գործիչ Ս. Կարապետյանի գիտական և պետական կուսակցական ծառայությունները բարձր է գնահատվել և նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի, «Պատվո նշան», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով և Վավիլովի անվան մեդալով:

Ս. Կարապետյանը 1940-52-ին եղել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ, ՍՍՀՄ 2-3-րդ գումարումների Գերագույն սովետի, ՀՍՍՀ 2-4-րդ գումարումների Գերագույն սովետի դեպուտատ:

Ս.Կարապետյանը մահացել է 1987թ. Երևանում:

ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ջոն Կիրակոսյանի ծավալուն գործունեությունն արդյունք էր նրա ոչ միայն անսպառ եռանդի, բազմակողմանի խոր գիտելիքների, տեսական ու գիտական բարձր պատրաստության, այլև առաջին հերթին քաղաքացիական պարտքի վեհ գիտակցության:

Իր գիտական հետազոտություններով, կուսակցական, պետական և մանկավարժական, հասարակական անխոնջ գործունեությամբ Ջոն Կիրակոսյանը մեծ ավանդ է ներդրել հայրենի մշակույթի ու գիտության զարգացման գործում:

Ջոն Սահակի Կիրակոսյանը ծնվել է 1929թ. Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում: 1946թ. ավարտելով Երևանի թիվ 29 հայկական միջնակարգ դպրոցը նույն թվին ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որն ավարտել է 1951թ.:

1951-1954թթ. սովորել է ասպիրանտուրայում՝ սկզբում Երևանի պետական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնում, ապա ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա):

Ասպիրանտուրան ավարտելուց հետո (1955-1962թթ.) Ջոն Կիրակոսյանն աշխատանքի է անցել ՀԿԿ Կենտկոմի «Լենինյան ուղիով» տեսական քաղաքական ամսագրում, որպես պրոպագանդայի բաժնի վարիչ, միաժամանակ դասախոսում էր Երևանի պետական համալսարանում: 1962-1966թթ. նա

աշխատել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, 1966-1969թթ. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ, 1969-1975թթ. ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, իսկ 1975-1985թթ. մինչև իր կյանքի վերջը՝ ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստր:

ՀԿԿ 14, 15, 16 և 17-րդ համագումարներում նա ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ գումարման Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ-ԳԴՀ բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ:

Ջ. Կիրակոսյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով:

Իբրև պատմաբան Ջոն Կիրակոսյանն ասպարեզ իջավ, երբ մեծ հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական դիսերտացիան՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում (1954թ.), նվիրված 1918-1921թթ. Իրանում անգլիական ինտերվենցիային: 1957թ. նա հրատարակեց «Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը» աշխատությունը, որում քննության առարկա էր դարձել անգլիական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերից մեկը կազմող սիփահիների ապստամբությունը և նրանում հնդկահայերի մասնակցությունը:

Սկսած 1960թ. երկու տասնամյակի ընթացքում նա խորհրդահայ պատմական գիտությունը հարստացրեց մի շարք արժեքավոր աշխատություններով: 1965թ. լույս տեսավ Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարային պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը, որի հիմքում ընկած էր «Արևմտյան Հայաստանն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» դոկտորական դիսերտացիան, որը հաջողությամբ պաշտպանեց 1965 թվականին: Այդ աշխատությունն արժանացավ աննախադեպ ընդունելության և ունեցավ երեք հրատարակություն. 1965-1967թթ.՝ հայերեն, 1971թ.՝ ռուսերեն:

1972-ին լույս տեսավ Ջոն Կիրակոսյանի կազմած ու խմբագրած (Ռ. Սահակյանի հեղինակությամբ) «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուն (1828-1923թթ.):

1978 և1980 թթ. ընթացքում լույս է տեսնում նրա եռահատոր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» գիրքը, որն ընթերցողի սեփականությունը դարձավ: Եռահատորից առաջինը լույս տեսավ նաև ռուսերեն (1981 թ.), այն ընդգրկում էր անցյալ դարի 70-ական, իսկ մյուսները՝ 80-ական թվականները: Դրանց հետևեց Ջոն Կիրակոսյանի ստեղծագործական գործունեության գիտական պսակը և ավաղ... կարապի երգը հանդիսացող «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր մենագրությունը (1982, 1983թթ.), որը լույս տեսավ նաև ռուսերեն (1986 և 1989թթ.) թարգմանվել է նաև բուլղարերեն (Բուլղարիա) և անգլերեն (ԱՄՆ): Վերոհիշյալ աշխատությունը, Ջոն Կիրակոսյանին հետմահու արժանացրեց ՀԽՍՀ պետական մրցանակի: Այս աշխատությամբ, որն աչքի էր ընկնում հարցերի խոր բազմաքննարկմամբ, նոր և համարձակ մտքերով ու եզրահանգումներով, Ջոն Կիրակոսյանը ցույց է տվել «ազատություն, հավասարություն, արդարություն» լոզունգներով պատմության թատերաբեմ ելած երիտթուրքերի սոցիալ-դասակարգային և քաղաքական էությունը, բացահայտել նրանց

քաղաքականության սնանկությունը, մի քաղաքականություն, որ նպատակ էր հետապնդում վերականգնելու պատմական անախրոնիզմի անգերազանցելի օրինակ ժողովուրդների համար հանդիսացող Օսմանյան կայսրությունը: Բազմալեզու ու բազմաբնույթ աղբյուրների համադիր քննությամբ և հրապարակի վրա եղած գրականությունը բարեխիղճ հաշվառմամբ, հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ մինչև ուղն ու ծուծը ռեակցիոն պանթուրքիզմի գաղափարախոսությամբ թունավորված թուրքական շատ պատմաբաններ, այսօր հանդես են գալիս որպես սուլթան Համիդ 2-րդի և երիտթուրքերի հրեշավոր գործերի փաստաբաններ, նրանց քաղաքական վարքագծի հետևորդներ: Գրքում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ դա ուղղված էր ոչ միայն հպատակ ժողովուրդների դեմ՝ հետապնդելով նրանց թուրքացման, իսկ եթե ոչ՝ ֆիզիկական ոչնչացման նպատակ, այլ նաև Ռուսաստանի դեմ, քանի որ Ռուսաստանն է պանթուրքիզմի ճանապարհին ընկած գլխավոր արգելքը: Մարդկության առաջ երիտթուրքերի գործած ոճրագործությունների գագաթնակետը հանդիսացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի միլիոնավոր զավակների ոչնչացումը, իբրև երիտթուրքերի հռչակած «Հայաստանն առանց հայերի» լոզունգի իրականացման ճանապարհին կատարած առաջին քայլ:

Այնուհանդերձ, երիտթուրքական ցեղասպաններն այսօր ունեն իրենց պաշտպանները հանձին պատմության թուրքական ժամանակակից կեղծարարների ու դրանց արտասահմանյան փաստաբանների:

Չափազանցություն չի լինի պնդել, որ պրոֆ. Կիրակոսյանը խորհրդահայ ամենաընթերցվող պատմաբաններից է, որն իր բեղուն ու տաղանդաշատ գրիչն անմնացորդ ի սպաս դրեց

պատմական ճշմարտությունն ու գիտական, անկողմնակալությունը բացահայտելու, պայքարեց կեղծիքի ու ստի դեմ:

Նա և՛ իբրև քաղաքացի, և՛ իբրև գիտնական, շատ առաջ էր անցել իր ժամանակից և դա, մասնավորապես, հստակ է երևում հայկական հարցի պատմության սպիտակ բծերի վերացման ուղղությամբ նրա գործադրած ջանքերի օրինակով: Բացի այդ, մեծապես նրա շնորհիվ էր, որ ազատագրական շարժման թեման իր արժանի տեղը գտավ հայ պատմական գիտության մեջ: Ավելին, Ջոն Կիրակոսյանի աշխատությունը գիտական լինելով հանդերձ, մատուցման եղանակով սրտամոտ ու հարազատ է իր ժողովրդի բոլոր խավերին: Հենց դա է այն պատճառներից մեկը, որ նա գրում է իր ժողովրդի մասին և իր ժողովրդի համար, արդիական, որովհետև համաշխարհային իմպերիալիզմի սադրանքներով պայմանավորված, մարդ անհատի ու առանձին ժողովուրդների, օրինակ՝ իրավունքների պաշտպանության հարցն առավել քան հրատապ նշանակություն ունի: Եվ պատահական չէ, որ Ջոն Կիրակոսյանի մենագրություններն ու գիտահրապարակախոսական բազմաքանակ հոդվածները լայն մասսայականություն են վայելում ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս՝ սփյուռքում:

Ջոն Կիրակոսյանի ողջ ստեղծագործությունը ներծծված է իսկական հայրենասիրությամբ: Նա 1978թ. որպես արտաքին գործերի մինիստր, ԽՍՀՄ պատվիրակության անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 33-րդ նստաշրջանի աշխատանքներին: 1986թ. լույս տեսավ Ջոն Կիրակոսյանի «Ա.Կ. Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը» գիրքը ռուսերեն:

Մեծ էր նաև պրոֆ. Ջ. Կիրակոսյանի ներդրումը երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում: Երկար

տարիներ դասախոսելով Երևանի պետական համալսարանի պատմության ու արևելագիտության ֆակուլտետներում, նա դարձել էր ուսանողների սիրելին:

1967թ. Ջոն Կիրակոսյանը համատեղությամբ դասախոսական աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ընդհանուր պատմության ամբիոնում, իսկ մեկ տարի հետո նշանակվում է նույն ամբիոնի պրոֆեսոր: 1979թ.-ից մինչև 1985թ. պրոֆ. Ջ. Կիրակոսյանը ղեկավարել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արևելքի երկրների պատմության ամբիոնը: Նա հանդիսանում էր «Հայկական Սովետական Հանրագիտարանի» գլխավոր խմբագրության անդամ:

Նրա հայրենանվեր գործունեության արդյունքն էր այն հսկայական հարգանքն ու համակրանքը, որ նա վայելում էր սփյուռքահայ ամենատարբեր շրջաններում:

1994 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը հրատարակեց դոկտոր, պրոֆեսոր Ջ. Ս. Կիրակոսյանի գիտական ժառանգության մատենագիտությունը, որտեղ տպագրված են Ջ. Կիրակոսյանի համառոտ կենսագրությունը, աշխատությունների ժամանակագրական ցանկը, նրա խմբագրությամբ ու ղեկավարությամբ լույս էր տեսնում ակադեմիայի ինֆորմացիայի կենտրոնի «Հայագիտությունը արտասահմանում» մատենաշարը:

Անվանի արևելագետ-պատմաբան, դիվանագետ, քաղաքական և պետական գործիչ Ջոն Կիրակոսյանի 70-ամյա հոբելյանի կապակցությամբ կազմակերպվել են միջոցառումներ: Երևանի թիվ 20 դպրոցը կոչվեց նրա անվամբ, հուշաքար տեղադրվեց այն շենքի պատին, ուր ապրել է Ջոն Կիրակոսյանը:

Հասարակական, քաղաքական գործունեությամբ խիստ զբաղվածությունը Ջոն Կիրակոսյանին չէր խանգարում լինել կյանքի մարդ: Նա միշտ առաջիններից էր արձագանքում մեր երկրի ու ժողովրդի կյանքի կենսական իրադարձություններին, ցուցաբերելով մարդկային ու քաղաքացիական ամենաբարձր հատկանիշներ:

Ջոն Կիրակոսյանը կարողանում էր պայքարել հանուն իր սկզբունքի և քայլել իր ժողովրդի շահերի նվիրական ճանապարհով:

ԱՆԱՏՈԼԻ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Անատոլի Աշոտի Մկրտչյանը ծնվել է 1931թ. Լենինական քաղաքում (Հայկական ՍՍՀ), զինծառայողի ընտանիքում: 1949 թվականին ավարտելով Երևանի Ա.Մռավյանի անվան միջնակարգ դպրոցը որից հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ուսանելու տարիներին ակտիվորեն մասնակցել է համալսարանի կոմերիտական, հասարակական կյանքին: 1954թ. Ա. Մկրտչյանը ընդունվում է Սովետական Միության կոմկուսի շարքերը: 1954թ. համալսարանն ավարտելուց հետո, նա աշխատում է Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության Երևանի ռազմաօդային ուժերի հատուկ դպրոցում որպես պատմության ուսուցիչ: 1955թ.-ից նա աշխատանքի է անցնում հանրապետական «Կոմունիստ» ռուսական թերթում որպես գրական աշխատող, իսկ հետագայում՝ «Կուսակցական կյանք» բաժնի վարիչ:

1962-1965թթ. Ա.Մկրտչյանը սովորում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայի միջազգային հարաբերությունների ամբիոնում որպես ասպիրանտ, որտեղ պաշտպանում է դիսերտացիան և նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հասարակական գիտությունների ակադեմիան ավարտելուց հետո Ա.Մկրտչյանը պատասխանատու աշխատանքի է

անցնում ՍՄԿԿ Կենտկոմի ապարատում, որտեղ 1965-1969թթ. աշխատում է Կենտկոմի ապարատում՝ պրոպագանդայի բաժնի դասախոս, իսկ 1969-1972 թթ.՝ հրահանգիչ:

1972թ. Ա. Մկրտչյանը աշխատանքի է գործուղվում ԱՄՆ, որտեղ աշխատում է սովետական դեսպանության խորհրդական, ԱՊՀ-ի բյուրոյի վարիչ և «Սովետ Լայֆ» (Սովետական կյանք) ամսագրի գլխավոր խմբագիր: 1976թ. Ա. Մկրտչյանը վերադառնում է Հայաստան և փոխադրվում է կուսակցական ղեկավար աշխատանքի:

Նշանակվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ: Նա ընտրվում է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ:

1982թ. նա ընդունվում է աշխատանքի Նյու Յորքում ՄԱԿ-ի քարտուղարության հասարակական ինֆորմացիայի դեպարտամենտի արտաքին հարաբերությունների բաժնի դիրեկտոր:

Քարտուղարությունը՝ բաղկացած է ողջ աշխարհում սփռված ՄԱԿ-ի ներկայացուցչություններում աշխատող միջազգային անձնակազմից, իրականացնում է կազմակերպության ամենօրյա գործունեությունը:

Այն սպասարկում է նաև ՄԱԿ-ի մյուս հիմնական մարմինների և ապահովում դրանց կողմից նախաձեռնված ծրագրերի և քաղաքականության վարչական ղեկավարումը:

Այն ղեկավարում է գլխավոր քարտուղարը, որը նշանակվում է գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի հանձնարարականով, նորացման ենթակա հինգ տարի ժամկետով: Քարտուղարության անձնակազմը նաև աշխարհի լրատվական միջոցներին տեղեկացնում է ՄԱԿ-ի գործունեության մասին, կազմակերպում է միջազգային հա-

մաժողովներ համաշխարհային կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ, իրականացնում է ելույթների և փաստաթղթերի թարգմանությունը ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներով: (Չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն):

Քարտուղարությունն ընդգրկում է սովորական բյուջեից վճարվող մոտ 8900 աշխատակից 160 երկրներից: Լինելով միջազգային ծառայողներ, աշխատակազմը և գլխավոր քարտուղարը, իրենց գործունեության համար պատասխանատու են միայն ՄԱԿ-ին և երդում են տալիս ոչ մի պետությունից կամ այլ իշխանությունից ցուցումներ չհայցել և չստանալ: Համաձայն կանոնադրությանը, անդամ պետությունները համաձայնում են հարգել գլխավոր քարտուղարի և անձնակազմի պատասխանատվության բացառապես միջազգային բնույթը և զերծ մնալ նրանց վրա ազդեցություն գործելու փորձերից:

Չնայած ՄԱԿ-ի գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, այն ընդգրկուն ներկայություն է պահպանում Ադիս Աբեբայում, Բեյրութում, Բանգկոկում, Ժնևում, Նայրոբիում, Սանտյագոյում և Վիեննայում, գրասենյակներ ունի նաև աշխարհի տարբեր մասերում:

1986թ. Ա. Մկրտչյանը նշանակվում է Հայկական ՍՍՀ արտաքին գործերի մինիստր, իսկ 1991թ.-ից մինչև 1992թ. աշխատել է Լեսոտոյի Թագավորությունում որպես Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան, իսկ հետագայում՝ Ռուսաստանի Ֆեդերացիայի:

(Լեսոտոյի Թագավորությունը մինչև 1966թ. բրիտանական պրոտեկտորատ էր, այժմ՝ պետություն Հարավային Աֆրիկայում: Բնակչության մոտ 98% -ը աֆրիկացիներ են, պաշտոնական լեզուներն են՝ սեսուտոն և անգլերենը:

Բրիտանական համագործակցության անդամ է: Տարածությունը 30.3 հզ.կմ² է, բնակչությունը մոտ 1214հզ. (1976թ.), մայրաքաղաքը՝ Մասերու):

1992-1993 թթ. ՄԱԿ-ի հրավիրմամբ Ա. Մկրտչյանը աշխատել է Կամբոջայում ՄԱԿ-ի միսիայի (առաքելության) ինֆորմացիայի և ծառայության ղեկավար:

(Կամբոջայի Ժողովրդական Հանրապետությունը գտնվում է Հարավարևելյան Ասիայում, Հնդկաչինի թերակղզում: Սահմանակից է Թաիլանդին, Լաոսին, Վիետնամին:

Տարածությունը 181 հզ.կմ² է, բնակչությունը 4.8 մլն (1979 թ.), բնակչությունը 85% -ից ավելին քմերներն են: Բնակվում են նաև վիետնամցիներ, չինացիներ, չամեր, մալայացիներ: Պաշտոնական լեզուն քմերն է: Մայրաքաղաքը՝ Պնոմպեկ):

1993-1995թթ. Ա.Մկրտչյանը Երևանի պետական համալսարանում զբաղեցնում էր առաջատար գիտական աշխատակցի պաշտոն: 1995-1997 թթ. Ա.Մկրտչյանը Հայիթում հանդիսանում էր ՄԱԿ-ի ռազմական և քաղաքացիական միսիայի քաղաքական կոորդինատոր:

(Հայիթիի Հանրապետությունը գտնվում է Վեստ Ինդիայում: Զբաղեցնում է Հայիթի կղզու արևմտյան մասը, ինչպես նաև Գոնավ, Տորտյու, Վաշ և այլ կղզիներ: Սահմանակից է Դոմինիկյան Հանրապետությանը: Տարածությունը 27.8 հզ.կմ² է, բնակչությունը՝ 4.75 մլն, մայրաքաղաքը՝ Պորտո Պրենս: Բնակչության ավելի քան 99%-ը հայիթցիներ են: Պետական լեզուն ֆրանսերենն է):

Ա. Մկրտչյանը 1971թ. ստացել է դոցենտի կոչում, իսկ 1997թ.՝ պրոֆեսորի: Նա ԱՄՆ-ի նորագույն պատմության երկու մենագրության հեղինակ է, որը հրատարակվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն և բուլղարերեն լեզուներով: Ա.Մկրտչյանը մասնակցել է 1983թ. սեպտեմբերին Նյու Յորքում կայացած երիտասարդության նվիրված ՄԱԿ-ի միջազգային կոնֆերանսին, որպես կոնֆերանսի նախագահ:

Նա 1984թ. սեպտեմբերին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի միջազգային կոնֆերանսում, որտեղ քննարկվել է «Նոր մոտեցում զարգացման խնդիրներին, երկրագնդի արդար կառուցումը» կոնֆերանսի նախագահ էր:

1990թ. Փարիզում նոյեմբերի 19-21-ը տեղի է ունեցել համաեվրոպական կոնֆերանս անվտանգության և համագործակցության, բարձրագույն մակարդակով, պետության, կառավարության ղեկավարների մասնակցությամբ, Ա. Մկրտչյանը եղել է սովետական պատվիրակության անդամ:

1997թ.-ից մինչև ներկա ժամանակը Ա. Մկրտչյանը դասավանդում է Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում միջազգային հարաբերություններ առարկան:

ԲԱԼԱԲԵԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բալաբեկ Մարտիրոսյանը ծնվել է 1905 թվականի մայիսի 20-ին ՀՍՍՀ Արտաշատի շրջանի Թոխանշալու (այժմ Մասիս) գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում:

1913 թվականին Բ. Մարտիրոսյանը ընդունվում է Ներքին Ղայ-լասար գյուղի երկդասյա ռուսական դպրոցը, սակայն Առաջին համաշխարհային պատերազմը խանգարում է նրան ուսումը շարունակելու: 1920 թվականին նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը, իսկ 1924թ. ընտրվում է Թոխանշալուի գյուղական սովետի նախագահ: 1925թ. Բ. Մարտիրոսյանը ընդունվում է ՍՄԿԿ շարքերը և մեկնում է Երևան՝ կուսակցական դպրոցում սովորելու համար: 1926թ. ավարտում է առաջին աստիճանի, իսկ 1929 թվականին՝ երկրորդ աստիճանի կուսակցական դպրոցը: 1929-1930 թթ. Բ. Մարտիրոսյանն աշխատում է ՀԼԿԵՄ Նոր Բայազետի օկրուգային կոմիտեի ագիտացիայի, ապա կազմիրահանգչական բաժնի վարիչ, հետագայում՝ կոմերիտմիության Ղամարլուի շրջկոմի քարտուղար:

1931-1936 թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի գործուղմամբ Բ. Մարտիրոսյանը սովորում է Կարմիր պրոֆեսուրայի նախապատրաստական Բաքվի ինստիտուտի բաժանմունքում և ապա մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում, որն ավարտելուց հետո, 1936 թվականին վերադառնում է Երևան: Սկզբում աշխատում է որպես

Երևանի կուսակցության քաղաքային կոմիտեի պրոպագանդիստի տան դիրեկտոր, իսկ 1937 թվականից ՀԿԿ Երևանի Սպանդարյանի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար: Այնուհետև աշխատում է ՀԿԿ կենտրոնական կոմիտեում որպես ագիտացիայի, պրոպագանդայի և մամուլի բաժնի վարիչ:

1938 թվականի ապրիլին Բ. Մարտիրոսյանը նշանակվում է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսար և աշխատում մինչև 1942 թվականի ապրիլ ամիսը:

1938-1942 թվականներին ժողովրդական կրթության մանկավարժական կադրերի ամբողջ աշխատանքն ուղղված էր գյուղական վայրերում ընդհանուր 7-ամյա ուսուցումն ավարտելու, և քաղաքներում ընդհանուր միջնակարգ ուսուցում իրականացնելու վերաբերյալ ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի որոշումների կատարմանը:

1937-38թթ. ուսումնական տարվա համեմատությամբ 1940-1941թթ. ուսումնական տարում միջնակարգ դպրոցների թիվը 147-ից հասավ 325-ի, սովորողների թիվը կրկնապատկվեց:

1942 թվականից մինչև 1954 թվականը նա աշխատել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի դիրեկտոր և միաժամանակ վարել մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամբիոնը: 1947 թվականին Բ. Մարտիրոսյանին շնորհվում է դոցենտի կոչում: Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը կազմակերպվել է 1930 թվականին, Երևանում պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի հիմքի վրա և կոչվել է այգեբանջարաբուծական ինստիտուտ: 1976թ.-ին ունեցել է հինգ ֆակուլտետ 9 մասնագիտություններով, ագրոնոմիական (ագրոնոմիա և կերարտադրություն), այգեպտղաբանջարաբուծական (այգեգործություն և պտղաբանջարաբուծություն, գինու և պահածոների տեխնոլոգիա), գյուղատնտեսության էկոնոմիկա և կազմակերպում, հաշվառումը գյուղատնտեսության մեջ, գյուղատնտեսության մեքենայացում, ավտոտրանսպորտի շահագործում և հիդրոմելիորացիայի, 1973-74թթ. ուս. տարում ուներ 3400 ուսանող: Մինչև 1973թ. պատրաստել է 10300 մասնագետ:

Բ.Մարտիրոսյանը 1954 թվականին նշանակվում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ:

Սկսած 1958 թվականից Բ.Մարտիրոսյանն աշխատում է ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստր:

1959թ. հուլիսի 30-ին Հայաստանի կոմկուսի կենտրոնական կոմիտեի բյուրոյի որոշմամբ Բ.Մարտիրոսյանը նշանակվում է Հայկական ՍՍՀ-ի Մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահ, թողնելով միաժամանակ համատեղությամբ՝ ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրի պաշտոնը: 1961թ. հունիսին Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի որոշմամբ ազատվում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահի պարտականությունից, թողնելով Հայկական ՍՍՀ արտաքին գործերի մինիստրի պաշտոնում:

1958, 1959, 1971 թվականներին Բ.Մարտիրոսյանը Սովետական Միության պատվիրակության կազմում մասնակցել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 13-րդ, 14-րդ սեսիաների աշխատանքներին: Հանդիսանալով Սովետական Միության ներկայացուցիչ գաղութային 4-րդ կոմիտեում, նա բազմիցս հանդես է եկել ՄԱԿ-ի ամբիոնից և ակտիվորեն մասնակցել գաղութային ժողովուրդներին վերաբերվող հարցերի քննարկմանը:

Գլխավոր ասամբլեան քննարկումների համար ստեղծված հիմնական մարմինն է: Այն կազմված է բոլոր պետություններ-

րի ներկայացուցիչներից, ընդ որում յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն: Կարևորագույն հարցերին վերաբերվող որոշումները, ինչպիսիք են խաղաղությունն ու անվտանգությունը, նոր անդամների ընդունումը և բյուջետային հարցերը պահանջում են երկու երրորդ անդամների ընդունումը և բյուջետային հարցերը, երկու երրորդ մեծամասնություն: Մյուս հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ: Կազմակերպության կառուցվածքը՝ կանոնադրությունը հիմնել է ՄԱԿ-ի վեց հիմնական մարմինները. Գլխավոր ասամբլեան (ԳԱ), Անվտանգության խորհուրդը (ԱԽ), Տնտեսական և սոցիալական խորհուրդը (Տնտսոցխորհ), Խնամակալության խորհուրդը, Արդարադատության միջազգային դատարանը և Քարտուղարությունը:

1937-1946 թվականներին Բ. Մարտիրոսյանը եղել է ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ, իսկ 1947թ. սկսած անընդմեջ ՀՍՍՀ 2-7-րդ գումարումների Գերագույն սովետի դեպուտատ: Նա բազմիցս ընտրվել է ՀԿԿ կենտրոնական կոմիտեի անդամ: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի երկրորդ, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով:

Եղել է մի շարք արտասահմանյան երկրներում՝ Չեխոսլովակիայում, 1956թ., 1958 և 1959 թվականներին ԱՄՆ-ում, Սովետական Միության պատվիրակ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում:

ԿԱՄՈ ԲԱԲԻԻ ՈՒԴՈՒՄՅԱՆ

Կամո Բաբիի Ուդումյանը ծնվել է 1927 թվականի դեկտեմբերին ՀՍՍՀ Շամշադինի շրջանի Բերդ գյուղում, ծառայողի ընտանիքում: Սովետական, կուսակցական, պետական աշխատող, դիվանագետ, ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների դոկտոր (1975թ.), ՍՄԿԿ անդամ 1948 թվականից:

1945 թվականին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1950 թվականին: Ուսմանը զուգընթաց աշխատել է համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար և կուսակցական կոմիտեի քարտուղարի տեղակալ:

1952-1957թթ. Կ. Ուդումյանն աշխատում է որպես ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար: Միաժամանակ, 1953 թվականին նա եղել է ՍՄԿԿ Կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայի դիսերտանտների դասընթացների ունկնդիր, որտեղ և պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուի դիսերտացիան:

1957թ. մինչև 1959թ. նա եղել է Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիային առընթեր կոորդինացման խորհրդի, ապա պատմության ինստիտուտի գիտական քարտուղար:

1959թ. Կ. Ուդումյանն ընտրվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Շամշադինի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, որից հետո ՍՄԿԿ Կենտկոմին կից

մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ: 1962 թվականից Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր, 1964թ.՝ ռեկտոր: 1967-1972թթ. Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստր, իսկ 1972-1975թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստր: Կ. Ուդումյանը 1975-1979թթ. աշխատում էր ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Նեպալի Թագավորությունում:

(Նեպալի Թագավորություն. պետություն Հարավային Ասիայում, Հիմալայների կենտրոնական մասում: Սահմանակից է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը և Հնդկաստանին: Տարածությունը 140, 8 հզ. կմ² է, բնակչությունը՝ 14.2 մլն: Մայրաքաղաքը՝ Կատմանդու: Նեպալի էթնիկական կազմը բարդ է, ժողովուրդները խոսում են հնդեվրոպական և չին-տիբեթական լեզվաընտանիքներին մոտ 60 լեզուներով և բարբառներով: Բնակչության 90%-ը հնդուիզմի հետևորդներ են, մոտ 8%-ը բուդդայականության):

1979 թվականին մինչև թոշակի անցնելը Կ. Ուդումյանն աշխատել է ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում:

(Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն. պետություն Արևմտյան Եվրոպայում: Սահմանակից է Ֆրանսիային, Բելգիային և Գերմանիային: Տարածությունը 2.6 հզ. կմ² է, բնակչությունը՝358 հազար: Մայրաքաղաքը՝ Լյուքսեմբուրգ):

Կ. Ուդումյանը 1965-76թթ. եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի անդամ: Հայաստանի 6-8-րդ գումարման Գերագույն սովետի դեպուտատ: Պարգևատրվել է «Հոկտեմբերյան հեղափոխության» և «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով և մեդալներով:

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գևորգ Հարությունի Հովհաննիսյանը ծնվել է 1907թ. Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանում, բանվորի ընտանիքում: 1920 թվականին Հովհաննիսյանների ընտանիքը տեղափոխվում է Թբիլիսի: Նա վաղ հասակից է սկսում աշխատանքային գործունեությունը: 1925թ. նա ընդունվում է կոմերտմիության շարքերը և աշխատում է Թբիլիսիի պիոներական կազմակերպությունում որպես հրահանգիչ: 1929թ. վերջերին Գ.Հովհաննիսյանը մեկնում է Սովետական Հայաստան աշխատանքի, և նշանակվում է Հայկական ՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատում որպես տեսուչ, այնուհետև՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի դիրեկտոր (Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը բացվել է 1929թ. նոյեմբերի 29-ին Գ.Սմիռնովի և Շչերբակովի «Պայթյուն» պիեսի ներկայացումով): 1931 թվականին նա նշանակվում է Լենինականի պետական թատրոնի դիրեկտոր: (Լենինականի դրամատիկական Ա.Մռավյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական թատրոնը մինչև 1938թ. կոչվել է նաև երկրորդ պետթատրոն, հիմնադրվել է 1928 թվականին, բացվել է նոյեմբերի 1-ին «Խռովություն» ներկայացումով, ըստ Ֆուրմանովի, ռեժիսոր՝ Ա. Գուլակյան, նկարիչներ՝ Մ. Արուտչյան և Վ. Շերիշև): 1932թ. Հովհաննիսյանը նշանակվում է Երևանի պետական կոնսերվատորիայի դիրեկտոր: Հայաստանում սովետական իշխա-

նության հաստատումից հետո, 1921թ. Ռ. Մելիքյանի նախաձեռնությամբ ստեղծվել է Երևանի երաժշտական ստուդիան, որը 1923թ. վերակազմվել է կոնսերվատորիայի՝ առաջին դիրեկտոր Ռոմանոս Մելիքյանի կողմից: 1946թ. կոնսերվատորիան կոչվել է Կոմիտասի անվամբ, 1973թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Հետագայում Գ. Հովհաննիսյանը նշանակվում է Երևանում նոր կազմակերպված օպերայի և բալետի թատրոնի դիրեկտոր: (Հայկական ՍՍՀ Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը հիմնադրվել է Երևանում, Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1932թ. մայիսի 13-ի որոշման համաձայն, գործունեությունը սկսել է 1933թ. հունվարի 20-ին՝ Ա.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայով):

1935թ. նա մեկնում է Մոսկվա ռեժիսորական արտադրական պրակտիկայի: 1936թ. ընդունվում է Համամիութենական կինո-ակադեմիայի ռեժիսորական ֆակուլտետը և ավարտում է այն: Ուսման ընթացքում, զուգընթաց այդ տարիներին, նա Հայկական ՍՍՀ Մոսկվայի կուլտուրայի տան դիրեկտորն էր: Կինո-ակադեմիայում ուսումն ավարտելուց հետո Գ.Հովհաննիսյանը աշխատանքի է նշանակվում «Սոյուզդետֆիլմ» կինոստուդիայում: Վերադառնալով Սովետական Հայաստան Գ.Հովհաննիսյանը կրկին նշանակվում է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դիրեկտոր, մասնակցելով հայկական արվեստի տասնօրյակի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին:

1940թ. Հովհաննիսյանը նշանակվում է Երևանի կինոստուդիայի դիրեկտոր, նրան շնորհվում է Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործչի կոչում: (Համո Բեկնազարյանի անվան ստուդիան կազմակերպվել է 1923թ. Երևանում): ՍՍՀՄ

Գերագույն սովետի 10-րդ սեսիան օրենք ընդունեց պաշտպանության ժողովրդական կոմիսարիատը և արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը ընդհանուր միութենականից՝ միութենական հանրապետականի վերակազմելու մասին: 1944թ. մարտին Երևանում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին գումարման 8-րդ սեսիան, որն էլ որոշում է ընդունում ՀՍՍՀ պաշտպանության և ՀՍՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատներ կազմակերպելու մասին:

1944թ. Գ. Հովհաննիսյանը նշանակվում է Հայկական ՍՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ, իսկ 1947թ. հուլիսին նշանակվում է Հայկական ՍՍՌ արտաքին գործերի մինիստր: 1949 թվականի հունվարին նա նշանակվում է միաժամանակ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին կից արվեստի գործերի վարչության պետ:

Սովետական Հայաստանի արվեստի զարգացման գործում կատարած աշխատանքի համար Գ.Հ.Հովհաննիսյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի և կարմիր աստղի շքանշաններով, «Կովկասի պաշտպանության համար» և «Աշխատանքային արիության համար» մեդալներով:

Գ.Հովհաննիսյանը Համկ (բ)Կ անդամ է 1932 թվից:

Գևորգ Հարությունի Հովհաննիսյանը մահացել է 1957թ. Երևանում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԵՐՈՒՆԻ ՄԱՍԵՀՅԱՆ

Հովհաննես Ծերունի Մասեհյանը ծնվել է 1864 թվականին Թեհրանում՝ Պարսկաստանի մայրաքաղաքում: Նրա ծնողները՝ Ծերունի Մասեհյանը և Աննա Երվանդյանը, Թավրիզից էին գաղթել Թեհրան: Նրա հայրը՝ Ծերունի Մասեհյանը, Պարսկաստանի Նասրեդդին շահի պալատի ոսկերչապետն էր, լուրջ, բարի և պարտաճանաչ մարդ, նուրբ ճաշակով արվեստագետ: Նա Պարսկաստանում ճանաչված է եղել իր ձեռքով կերտված ադամանդյա երկրագնդով, որը դրված է եղել շահի ձմեռային պալատի դահլիճներից մեկում՝ հայտնի երկրագունդը, շինված հակինթ, փիրուզ, զմրուխտ, ադամանդ, մարգարիտ և այլ թանկարժեք քարերից: Ծերունի Մասեհյանը ակտիվ մասնակցություն է ունեցել թեհրանյան հասարակական կյանքին: Մասեհյանի ընտանիքը լինելով բավականին լավ հարաբերությունների մեջ շահի արքունիքի հետ, բարեկեցիկ վիճակի մեջ է եղել և օգտվել է լայն արտոնություններից:

Հ. Մասեհյանը հինգ տարեկան հասակում հաճախել է ս.Թադևոս-Բարդուղիմեոս եկեղեցում գործող վարդապետի վարժարանը: Մեկ տարի անց, 1870թ. նա ընդունվել է Թեհրանի Հայկազյան նորաբաց դպրոցը, որտեղ դասավանդել են պարսկերեն, հայերեն, ֆրանսերեն, Հայաստանի և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երգերաժշտություն և այլ առարկաներ: Հ. Մասեհյանը դպրոցն

ավարտեց 1878թ. գերազանց առաջադիմությամբ, պարգևատրվելով «Ոսկե խաչ» նշանով:

1879թ. ուսումնասեր հայրը նրան ուղարկում է Թավրիզ, աշակերտելու իր մորեղբորը՝ Անտոն խան Երվանդյանին: Վերջինս Պարսկաստանի գահաժառանգ Մուզաֆֆեր-էդդինի ուսուցիչ-դաստիարակն է եղել: Ա. Երվանդյանը տիրապետում էր հայերեն, պարսկերեն, թուրքերեն, ֆրանսերեն լեզուներին: Լեզվական հարուստ գիտելիքները, հատկապես հայերենի իմացությունը, Հ. Մասեհյանը ձեռք է բերում իր մորեղբոր՝ Անտոն խանի մոտ, որտեղ սովորել է երեք տարի: 1881թ. Հ. Մասեհյանը մեկնում է Փարիզ և սովորում է Կոլեժ դ'Ֆրանս հաստատությունում: Նա ուսմանը զուգընթաց զբաղվում է նաև թարգմանությամբ: Նրա առաջին թարգմանությունները եղել են ֆրանսիական գրականությունից: 1884թ. քսան տարեկան հասակում Փարիզից նա վերադառնում է Թեհրան, ձեռք բերելով գիտելիքների մեծ պաշար: Լեզվական զարմանալի կարողությունները, կիրթ վարքն ու բարքը նրան պահում են բոլորի ուշադրության կենտրոնում: Վերադառնալուց հետո, նույն տարին նա աշխատանքի է անցնում Թեհրանի հայկական դպրոցում իբրև ուսուցիչ և նույն ժամանակ հրավիրվում է պարսից շահի արքունիք որպես թարգմանիչ: Եվ սկսվում է նրա երկարամյա բարդ ու դժվարին դիվանագիտական ու թարգմանչական գործունեությունը:

1887թ. Անգլիայի Վիկտորյա թագուհու գահակալության 50-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար, պարսից շահի արտակարգ պատվիրակության կազմում մեկնում է Լոնդոն, որպես ավագ թարգմանիչ: Հ. Մասեհյանը 1888 թվականին տնօրինում է Թեհրանի հայկազյան դպրոցը, իսկ 1891թ. ընտրվում է «Ուսումնասիրաց ընկերության» հոգաբարձության անդամ: Մեկ տարի անց նա դառնում է այդ

ընկերության ղեկավար: Մասեհյանին ոչ միայն հետաքրքրում էին պարսկահայ կյանքը, այլև հայ ազգի մեջ տեղի ունեցող բոլոր անցուդարձը: Չնայած խիստ զբաղվածությանը, նա հասցնում է թարգմանել Շեքսպիրի «Համլետը», «Մակբեթը», «Ինչպես կուզեքը» և «Փոթորիկը»: Հ. Մասեհյանը 1894թ. հունվարին հիմնել և խմբագրել է պարսկահայ առաջին տպագիր օրգանը՝ «Շավիղը», թղթակցել է «Մշակին»: 1894թ. դեկտեմբերին Մասեհյանը շահի արտակարգ պատվիրակության կազմում լինում է Պետերբուրգում: Պարսիկ հյուրերը պարգևատրվում են պատվո նշաններով: Հ. Մասեհյանին շնորհվում է Սպանիսլավի երկրորդ աստիճանի շքանշան: Վերադարձի ճանապարհին պատվիրականությունը կանգ է առնում Մոսկվայում, նա այցելում է Լազարյան ճեմարան և ծանոթանում է դասախոսական կազմի հետ:

1895թ. կեսերին Պարսկաստանի կառավարությունը Հ. Մասեհյանին նշանակում է արտաքին գործերի մինիստրության գրասենյակի պետ, միաժամանակ թողնելով արքունիքի թարգմանչի պաշտոնում:

1895թ. Հ. Մասեհյանը թարգմանում է Շեքսպիրի ևս երեք պիես՝ «Վենետիկի վաճառականը», «Ռոմեո և Ջուլիետա», «Արքա Լիր»: 1896 թվականից ծանրաբեռնվածության պատճառով նա հրաժարվում է Հայկազյան դպրոցի տեսչի պարտականությունից և դասերից, մնալով «Ուսումնասիրաց ընկերության» ատենապետ մինչև 1901 թվականը:

Անգլիայի Վիկտորյա թագուհու թագադրության 60-ամյա հոբելյանին շահը, 1897թ. մայիսին, պատվիրակություն է ուղարկում: Այս արտակարգ պատվիրակության առաջին քարտուղար է նշանակվում Հովհաննես Մասեհյանը: Լոնդոնում եղած ժամանակ նա ուշադրության է արժանանում ոչ միայն որպես պատվիրակության անդամ, այլ նաև որպես Շեքսպիրի հայ թարգմանիչ: Հ. Մասեհյանը պարսկական կառավարության արտաքին գործերի մինիստրությունում վարել է նաև այլ պաշտոններ, ինչպես՝ մամուլի բաժնի վարիչ, արևելյան երկրների բաժնի պետ, օպերատիվ տեսուչ, միևնույն ժամանակ մնալով շահի անձնական թարգմանիչը: Մասեհյանի ծառայությունը մեծ է նաև պարսկական դպրոցների հիմնադրման և ընդարձակման գործում: Թեհրանում բացվում է քաղաքական գիտությունների ամբիոնները: 1901թ. սկսվում է Մասեհյանի կյանքի եվրոպական փուլը, շուրջ քսանյոթ տարի տևող հետաքրքրական ու նշանակալից մի ժամանակամիջոց՝ ոչ միայն դիվանագիտական աշխատանքի, այլև գրական-ստեղծագործական և ազգային-հասարակական բնագավառում: 1901թ. մայիսին Պարսկաստանի շահը դեսպանության նոր կազմ է ուղարկում Բեռլին: Էիթեզում-էս Սուլթանեն նշանակվում է դեսպան, իսկ Մասեհյանը՝ խորհրդական:

Նույն տարվա հուլիսին պարսկական դիվանագիտական միսիան Մասեհյանի ղեկավարությամբ, Բեռլինից մեկնում է Ֆրանսիա, հետո՝ Լոնդոն:

20-րդ դարի սկզբին Պարսկաստանի քաղաքական դրությունը փոխվել էր:

Միապետական վարչակարգը վտանգի տակ էր դրված: Պարսից շահը հաճախ փոփոխություն է մտցնում կառավարող կաբինետում: 1905թ. հոկտեմբերին Մասեհյանը նշանակվում է Բեռլինի պարսկական գործերի հավատարմատար: 1906թ. սեպտեմբերին Բեռլինում գումարվում է միջազգային համաժողով, որտեղ քննարկվում է ծովային նավերի և առափնյա ռադիոկայանների փոխադարձ կապի վերաբերյալ կոնվենցիայի նախագիծը: Այդ համաժողովում Հ.Մասեհյանը ներկայացնում է Պարսկաստանը: 1907թ. մայիսին նա դիվանագիտական հանձնարարությամբ մեկնում է Ֆրանսիա:

1906թ. օգոստոսի 5-ին, շահը հրապարակեց սահմանադրություն մտցնելու հրովարտակ: Հոկտեմբերի 7-ին բացվեց Իրանի առաջին Մեջլիսը, որը մշակեց Իրանի առաջին Սահմանադրությունը: 1908թ. հունիսի 23-ին Մուհամմեդ Ալի շահը հակահեղափոխական հեղաշրջում կատարեց, ցրեց Մեջլիսը: 1909թ. հուլիսին Գիլանի ֆիդայիները, հայ կամավորները և սահմանադրականները՝ Եփրեմ խանի (Դավթյան) և Ռեշտի նահանգապետ Սիփահդարի ղեկավարությամբ արշավեցին դեպի Թեհրան, գրավեցին այն և գահընկեց արեցին շահին: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն: Զինված ուժերի հրամանատար նշանակվեց Եփրեմ խանը (Դավթյան): Վերականգնվեց սահմանադրությունը, բացվեց երկրորդ գումարման Մեջլիսը: Եփրեմ Դավթյանը եղել է դեմոկրատական ուժերի առաջնորդ, սահմանադրության ջերմ և նվիրված պաշտպան: Թեհրանում գտնված ժամանակ Հ. Մասեհյանը կանգնած էր դեմոկրատական-սահմանադրական ուժերի կողմը: Ինչպես նշում են ժամանակակիցները, նա հեղափոխության ժամանակ օգնել է, սերտորեն գործակցել Եփրեմ խանին: Իրանի հեղափոխությունը 20-րդ դարի սկզբին առաջին հեղափոխությունն էր Արևելքում և ամենախոշոր իրադարձությունը Իրանի պատմության մեջ:

1908թ. Պարսկաստանում բուրժուական հեղափոխությունը հաղթում է: 1909թ. հուլիսի 16-ին Պարսկաստանի նորակազմ Մեջլիսի բարձրագույն խորհուրդը գահազրկում է Մուհամմեդ Ալի շահին և թագավոր հռչակում է նրա 14-ամյա տղային՝ Սուլթան Ահմադին, իսկ նրա խնամակալ նշանակում Նասր-ալ-Մոլքին, որն էլ հարմար գտավ իրեն խորհրդական-դիվանագետ նշանակել Հովհաննես Մասեհյանին: Հովհաննես Մասեհյանը պարսկական կառավարական շրջաններում բացառիկ բարձր հեղինակություն էր ոչ միայն գրավում պաշտոնով, այլ նաև որպես տեսական ու գործնական պատրաստություն և հասարակական նկարագիր ունեցող պետական գործիչ: Նասր-ալ-Մոլքին ըստ արժանվույն է գնահատել Մասեհյանի ձիրքը և Պարսկաստանին արած նրա ծառայությունները:

1911թ. վերջին նա Պարսկաստանում է: Սկզբում նրան ուզում էին դեսպան նշանակել Վաշինգտոնում: Հովհաննես Մասեհյանը բացի հայերենից տիրապետում էր պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, ռուսերեն լեզուներին: 1912թ.-ին հակառակ երկրի սահմանադրական օրենքի, որի համաձայն ոչ մահմեդականը չէր կարող դեսպան լինել, Նասր-ալ-Մոլքի պնդման Մասեհյանը նշանակվում է Բեռլինում Պարսկաստանի լիազոր դեսպան: Միջազգային հարաբերությունների բարդ ու խճողված ժամանակաշրջանում, դեսպան Մասեհյանը հանդես է բերում նուրբ և շրջահայաց ողջախոհություն, իր երկրի ամբողջականությունը, պետական իրավունքները պաշտպանելու համար: Նա ղեկավարել է դիվանագիտական և հյուպատոսական այլ հաստատություններ նաև Մյունխենում, Շտուտգարդում, Դրեզդենում և Գերմանիայի ուրիշ քաղաքներում, Եվրոպայի այլ կենտրոններում: Հ. Մասեհյանը 1916թ. հետ կանչվելով Բեռլինից, գնում է Փարիզ սպասելով Թեհրանից նոր կարգադրությունների:

1916թ. ապրիլին ամբողջ մարդկությունը նշում է Շեքսպիրի մահվան 300-ամյա հոբելյանը: Շեքսպիրի հոբելյանական հանձնաժողովը հրավիրում է հայ թարգմանչին՝ մասնակցելու Շեքսպիրյան համաշխարհային համաժողովին: Բազմամարդ միտինգը մեծ հետաքրքրությամբ է ընդունում հայ շեքսպիրագետի ինքնատիպ ելույթը:

Մասեհյանը Լոնդոնից վերադառնում է Փարիզ դեռևս դեսպանի պաշտոնում: Պարսկաստանի կառավարությունը նրան առաջարկում է պաշտոնավարել երկու մայրաքաղաքներից մեկում, Փարիզում կամ Լոնդոնում: 1916-1927թթ. Հ. Մասեհյանը ոչ մի պետական և դիվանագիտական պաշտոններ չի զբաղեցրել:

Պարսից արքունիքում տեղյակ էին, որ Մասեհյանը խիստ շահագրգռվածություն ու հոգատարություն էր հանդես բերել հայկական դպրի նկատմամբ: 1916թ. հունիսից Մասեհյանն անդամ է դառնում Պողոս Նուբարի գլխավորած հայկական ազգային պատվիրակությանը, որ լիազորված էր բանակցություններ վարելու դիվանագիտական ասպարեզում: 1919թ. օգոստոսին Հ.Մասեհյանը Փարիզից մեկնում է Լոզան (Շվեյցարիա), որտեղ հանդիպում է իր մտերիմ բարեկամ, հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանին և նորից վերադառնում է Փարիզ:

Հ.Մասեհյանը 1910 թվականներից մոտ հարաբերությունների մեջ է եղել Ավ.Իսահակյանի հետ, որը խորհուրդ է տվել և ոգևորել է նրան թարգմանությունների հարցում: Հ.Մասեհյանն օգնել է քաղաքական վտարանդի Ավ.Իսահակյանին՝ ծպտյալ ապրելու Եվրոպայում, բանաստեղծին ապահովել է պարսկական հպատակ հայի անձնագրով՝ Ավետիք Բայազիդ անունով:

Վերսալյան բանակցությունների ընթացքում Հ. Մասեհյանը խորհրդականի աշխատանք է տարել Պարսկաստանի դիվանագիտական միսիայում: 1921-1928թթ. Մասեհյանը Վիեննայի Մխիթարյանների միջոցով հրատարակում է «Համլետը», «Օթելլոն», «Մակբեթը», «Վենետիկի վաճառականը» և «Մանֆրեդը»:

Այդ տարիներին հիմնադրված «Արեգ» ամսագրում հրատարակում է ստեղծագործություններ Բայրոնից, Օմար Խայամից, Շիլլերից և այլ հեղինակներից:

Տասնհինգ տարվա երկար բացակայությունից հետո 1926թ. Լոնդոնից Հ. Մասեհյանը վերադառնում է Թեհրան: Դա հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ արդեն քաղաքական կացությունը փոխվել էր երկրում, շահական գահը՝ 1925 թվականին պալատական հեղաշրջմամբ, անցել էր Փահլավիներին:

Հ. Մասեհյանի բացակայած տարիներին Պարսկաստանի հայկական համայնքը քայքայման մեջ էր գտնվում: Նա որոշում է վերականգնել ազգային հաստատությունները: Նույն տարում գումարում է համայնքի ընդհանուր ժողով: Սեպտեմբերի 9-ի ընտրությունների ժամանակ նա ընտրվում է այդ խորհրդի նախագահ: 1926թ. աշնանը Մեջլիսի ընտրությունների ժամանակ նա պատգամավորի թեկնածու է առաջադրվում Հարավային Պարսկաստանի հայության կողմից և ստանալով ընտրողների ձայների բացարձակ մեծամասնությունը Պարսկաստանի Մեջլիսի անդամ է ընտրվում: Հ. Մասեհյանը որպես Մեջլիսի պատգամավոր երկար չի մնում՝ ընդամենը մի քանի ամիս: Նորից հրավիրվում է դիվանագիտական աշխատանքի, այս անգամ Լոնդոն, որպես դեսպան: Նրա կենսագրերը պատմում են. « ... Մասեհյանը քաղաքական ու դիվանագիտական ասպարեզում մեծ հաջողություններ ունեցավ, նա իրապես դեսպան էր. նա դիվանագետ էր բառիս իսկական իմաստով: Նա երբեք թարգմանի միջոցով չէր խոսում: Կար նաև իր անձի արտակարգ հմայքը, որով նա կարողանում էր համոզել դիմացինին, այսպես ասած՝ նա քաղաքականության մեջ էլ

արվեստագետ էր: Նրա մեջ կար մի անբացատրելի ուժ, որ հարգանք էր ներշնչում դիմացինին՝ դա իր իրատեսությունն էր:

Բեռլինում և Լոնդոնում օտար դիվանագետների մեջ նա բոլորից սիրված ու հարգված մարդ էր: Իր հաջողությանը նպաստող պայմաններից էին նաև վարվելակերպը, բարի, զուսպ բնավորությունը. «Պաշտոնական ընդունելությունների պահերին, բոլորի ուշադրության առարկան է դառնում նա ... իսկ առօրյա կյանքում նա ամենից համեստ ու հեզահամբույր մարդ էր»:

Հուշագրող Հ.Միրզոյանը գրում է, որ նա «անդավաճան էր իր սկզբունքին, իր բարեկամներին, իր նպատակներին և նույնիսկ իր հակումներին: Որպես գեղագետ նա խիստ բազմակողմանի զարգացած անձ էր: Մի գեղեցկուհի, մի պոեմ, մի նկար, մի արձան, մի երաժշտություն, մի վեհապանծ ճարտարապետություն. գեղեցկության տեսակետից նրա համար հավասար կերպով ուսումնասիրության առարկաներ էին»:

Հ.Մասեհյանը ևս երկու տարի մնում է Լոնդոնում մինչև 1930թ. որպես դեսպան: 1930 թվականին առաջին անգամ Ճապոնիայի և Պարսկաստանի միջև հաստատվում է դիվանագիտական հարաբերություններ: Երկու կառավարությունները պայմանավորվում են ներկայացուցիչներ փոխանակել դեսպանական մակարդակով: Մասեհյանը որպես հմուտ, բազմափորձ, հեղինակավոր դիվանագետ նշանակվում է Տոկիոյում (Ճապոնիա) Պարսկաստանի առաջին դեսպան: Այստեղ դեսպանի պաշտոնը գերազանց կերպով կատարում և արժանանում է կառավարական պարգևների՝ «Առյուծ և արեգակ» առաջին և երկրորդ կարգի շքանշանների՝ թե՛ Իրանի, և թե՛ Ճապոնիայի պետությունների կողմից:

1931թ. աշնանը հիվանդության պատճառով հրաժարական է ներկայացնում պարսկական իշխանություններին և որի պատասխանն անմիջապես ստանում է: Ճապոնիայից վերադառնալիս՝ ճանապարհին Խարբինում (Մանջուրիա), նոյեմբերի 19-ին Մասեհյանը վախճանվում է: Պարսկական կառավարության և Թեհրանի հայկական համայնքի աջակցությամբ Հ. Մասեհյանի աճյունը Խարբինից տեղափոխում են Թեհրան: 1932 թ. ապրիլին բազմամարդ և մեծ հանդիսավորությամբ տեղի է ունենում հուղարկավորությունը: Հ. Մասեհյանին թաղում են Վանագ գյուղի ս. Գևորգ եկեղեցում:

ՀԱԿՈԲ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԴԱՎԹՅԱՆ

Հակոբ Քրիստափորի Դավթյանը ծնվել է 1888 թ. Վերին Ագուլիս գյուղում (Նախիջևան) վաճառականի ընտանիքում: Սովետական ականավոր դիվանագետ, Սովետական Ռուսաստանի պետական անվտանգության օրգանների ղեկավարներից մեկը, ՍՄԿԿ անդամ է 1905 թվականից: Դիվանագիտական աշխատանքի է անցել 1919թ.-ին: 1920-1921 թվականներին սովետական դեսպանատան առաջին քարտուղար՝ Էստոնիայում: 1921-1922 թվականներին եղել է ՌՍՖՍՀ արտաքին գործերի կոմիսարիատի կոլեգիայի անդամ, Մերձբալթյան երկրների բաժնի վարիչ, և միաժամանակ Ֆ Է. Ձերժինսկու հրամանով նշանակվել է ՀԱՀ-ի կազմում ստեղծված արտասահմանյան բաժնի առաջին պետ, 1922թ. ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լիտվայում: 1922-1924թթ. ՍՍՀՄ ներկայացուցչության խորհրդականն էր Չինաստանում: 1920-ական թվականների սկզբին քաղաքական իրադարձությունը Չինաստանում բարդացավ: Հենվելով այն կապիտալիստական պետությունների աջակցության և օգնության վրա, որոնք պայքարում էին Չինաստանում ազդեցության ոլորտը ընդլայնելու համար, այդ պետությունների երկպառակտչական պատերազմը երկիրը քայքայման աստիճանի էր հասցրել: Հյուսիսային Չինաստանի մայրաքաղաքում՝ Պեկինում էր գտնվում այսպես կոչված ազգային կառավարությունը, որը հավակնում էր ներկայացնելու ողջ երկիրը: Սակայն նրա լիովին կախվածությունը ԱՄՆ-ի, Անգլիայի,

Ֆրանսիայի և Ճապոնիայի միլիտարիստներից, մշտական խուսավարման էր հասցնում: Զգտելով հաճոյանալ այս կամ այն ուժերին, որոնք դրսից ճնշում էին գործադրում նրա վրա, այդ կառավարությունն աչքի էր ընկնում անհետևողականությամբ և անսկզբունքայնությամբ: Պեկինի մշտական անկայությունը դժվարացնում էր խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության կուրսի իրականացումը, որն ուղղված էր խորհրդա-չինական հարաբերությունների նորմալացմանը:

Հ. Դավթյանը Չինաստանում լիազոր ներկայացուցիչներ Լ. Կարախանի և Ա.Իոֆֆեի հետ մեծ աշխատանք կատարեցին սովետա-չինական հարաբերությունների բարելավման համար: Չինաստանի առաջադեմ հասարակայնության պահանջների ազդեցության տակ Պեկինի կառավարությունը 1924թ. մայիսի 31-ին ՍՍՀՄ-ի հետ կնքեց համաձայնագիր՝ ՍՍՀՄ-ի և Չինաստանի Հանրապետությունների միջև:

Այդ համաձայնագրով վերականգնվում էին դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև, ՍՍՀՄ-ը հաստատեց, որ հրաժարվում է այն բոլոր արտոնություններից, որոնցից օգտվում էր ցարիզմը Չինաստանում:

Մի դրվագ Լ.Կարախանի և Հ.Դավթյանի հարաբերություններից. Լ. Կարախանի նամակն իր կնոջը՝ Վերա Վիկտորովնային, (1924թ. ապրիլի 14). «Այսօր Հ.Դավթյանը մեկնում է, նա քեզ կպատմի պեկինյան կյանքի մասին: Նրան սաստիկ նախանձում եմ...»:

Հ. Դավթյանը 1924 թվականին ՍՍՀՄ լիազոր ներկայացուցիչն էր Տուվայի Հանրապետությունում, 1925-1927թթ.՝ ՍՍՀՄ ներկայացուցչության խորհրդական, ապա՝ ժամանակավոր հավատարմատար Ֆրանսիայում և Հունգարիայում:

Հ. Դավթյանը 1927-1930 թթ. սովետական լիազոր ներկայացուցիչն էր Իրանում: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ

հեղափոխության ազդեցությամբ Իրանում ծավալվեց ազգային ազատագրական շարժում (1917-1921 թթ.): Սովետական կառավարությունը Իրանից դուրս բերեց ռուսական զորքերը և հրաժարվեց ցարական Ռուսաստանի հետ Իրանի կնքած անիրավահավասար պայմանագրից:

1941թ. սովետական կառավարությունը երեք անգամ նախազգուշացրեց Իրանին, որ ֆաշիստական գործակալների գործունեությունը ուղղակիորեն հակասում է 1921թ. սովետա-իրանական պայմանագրին: 1941թ. օգոստոսին ՍՍՀՄ-ը հարկադրված էր ժամանակավորապես զորքեր մտցնել Իրան: Միաժամանակ անգլիական զորքերը մտան Իրանի հարավային շրջանները: Ռեզա շահը հրաժարական տվեց հօգուտ որդու՝ Մոհամմադ Ռեզա Փահլավիի: 1942թ. հունվարի 29-ին ՍՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև կնքվեց դաշինքի վերաբերյալ պայմանագիր: ՍՍՀՄ-ը և Մեծ Բրիտանիան պարտավորվեցին հարգել Իրանի տերիտորիալ ամողջականությունը, սուվերենությունն ու անկախությունը, պաշտպանել Իրանին որևէ տերության հարձակման դեպքում: 1943թ. սեպտեմբերի 9-ին Իրանը պատերազմ հայտարարեց Գերմանիային, թեև չմասնակցեց ռազմական գործողություններին: 1976թ. նշվեց Իրանի 2500-ամյակը:

Հ.Դավթյանը 1930թ. արտասահմանից վերադառնալուց հետո ՍՍՀՄ-ում անցնում է վարչական աշխատանքի: Նշանակվում է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի տնօրեն, իսկ հետո Լենինգրադի մեքենաշինական ինստիտուտի դիրեկտոր:

Հ.Դավթյանը 1932-1934թթ. եղել է ՍՍՀՄ լիազոր ներկայացուցիչ Հունաստանում:

1924թ. մարտի 8-ին Հունաստանի և ՍՍՀՄ-ի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

Հունաստանում հայ համայնքի առաջացման թվականը մինչև այսօր հայտնի չէ: Հայերը Հունաստանում զանգվածային բնակություն սկսել են հաստատել 5-6-րդ դդ.: 1924թ. ստեղծվեց ՀՕԿ-ի (Հայաստանին օգնության կոմիտե) Հունաստանի մասնաճյուղը: Ընդհանուր առմամբ Հունաստանում լույս է տեսել շուրջ 35 անուն պարբերական: 1939-1945թթ. Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ֆաշիստական օկուպացիայի շրջանում, հունահայ աշխատավորները մասնակցել են ժողովրդա-ազատագրական ճակատի ու պարտիզանական կռիվներին և տվել շատ զոհեր: Հունաստանում, հիմնականում Աթենքում, Պիրեայում և Սալոնիկում բնակվում են 12 հազ. հայեր (1980թ.) գործում են չորս դպրոց, երկու եկեղեցի:

Հ. Դավթյանը 1934-1937թթ. ՍՍՀՄ լիազոր ներկայացուցիչ է եղել Լեհաստանում:

Սովետական կառավարությունը ճանաչեց լեհ ժողովրդի ազատ ինքնության իրավունքը և չեղյալ հայտարարեց Լեհաստանի բաժանման վերաբերյալ ցարական կառավարության պայմանագրերը: 1921թ. Ռիգայի պայմանագրով որոշվեց սովետա-լեհական սահմանը: Լեհաստանին անցան Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան: 1934թ. Լեհաստանը չհարձակման պայմանագիր կնքեց ֆաշիստական Գերմանիայի հետ հրաժարվելով կոլեկտիվ անվտանգության սովետական պլանից: 1965-70թթ. Լեհաստանը բարեկամության, համագործակցության և փոխօգնության նոր պայմանագրեր կնքեց ՍՍՀՄ-ի, ՉՍՍՀ-ի, ԲԺՀ-ի, ՀԺՀ-ի և ՌՍՀ-ի հետ:

Հակոբ Դավթյանի, որպես Խորհրդային Միության արտաքին հետախուզության ստեղծման ու կայացման կազմակերպիչներից և ղեկավարներից մեկի անունը, փորագրված է

Ռուսաստանի Դաշնության արտաքին հետախուզության հուշատախտակին:

Հ.Դավթյանը լիովին տիրապետել է եվրոպական լեզուներին: Նա մեծ քաղաքական, արվեստի, լայն մտահորիզոնի տեր մարդ էր: Հաճախ էր լինում եվրոպական մայրաքաղաքներում, գեղարվեստական ցուցահանդեսներում, թատրոններում, անվանի վարպետների համերգներում: Նրա տանը հաճախ են հյուրընկալվում ռուս ականավոր նկարիչներ ու դերասաններ:

Հ. Դավթյանը 1935թ.-ին ընտրվել է ՍՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ: 1938թ. ԽՍՀՄ գերագույն դատարանի դատավճռով անհիմն կերպով դատապարտվել է մահվան և գնդակահարվել: 1957թ. հետմահու արդարացվել է:

ՎԼԱԴԻՄԻՐ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԹԱԻՐՈՎ (ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Վլադիմիր Թաիրովը ծնվել է 1894թ. Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Ապահանջաղ գյուղում, գյուղացու ընտանիքում: Պետական և ռազմական գործիչ, երկրորդ կարգի բանակային կոմիսար: 1915 թվականից եղել է ՌՍԴԲԿ անդամ: 1914թ. ավարտել է Բաքվի առևտրի ուսումնարանը: Սովորել է Մոսկվայի առևտրի ինստիտուտում, մասնակցել է Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությանը: 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո որպես տնտեսագետ աշխատել է Մոսկվայի խորհրդի ֆինանսական բաժանմունքում, 1918 թվականից ծառայել է կարմիր բանակի շարքերում և մասնակցել է քաղաքացիական պատերազմին: Վ. Թաիրովը եղել է առաջին Կալմիկական դիվիզիայի զինկոմ, 9-րդ բանակի, 10-րդ բանակի զինկոմ, Ռազմաքաղաքական խորհրդի անդամ, 1922 թվականին նա ծառայել է առաջին հեծյալ բանակում: Ավարտել է կարմիր բանակի բարձրագույն հրամկազմի ռազմական ակադեմիական դասընթացները: 1921թվականից մինչև 1927թ. Տերունի ազգանունով Չինաստանում աշխատում է ՍՍՀՄ դեսպանության զինվորական խորհրդական: Նույն պաշտոնը վարել է նաև Ֆրանսիայում: 1934 թվականին նա Հեռավոր Արևելքի առանձին կարմրադրոշ բանակի ռազմախորհրդի անդամ էր, 1935-1937 թվականներին՝ ՍՍՀՄ արտակարգ լիազոր դեսպան Մոնղոլիայում:

Վ. Թաիրովը բազմաթիվ անգամ աշխատանքային գործուղումներով մեկնել է Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի և Ասիայի երկրներ: Նա տիրապետում էր ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, չինարեն և թուրքերն լեզուներին:

Սովետական Միության արտաքին քաղաքականության բնագավառում կատարած գերազանց աշխատանքի համար նա պարգևատրվել է Լենինի և Կարմիր դրոշի շքանշաններով:

1937 թվականին անհիմն մեղադրվել և գնդակահարվել է: Վ. Թաիրովն արդարացվել է հետմահու:

ՍԻՄՈՆ ՂԱԶԱՐՈՍԻ ՎՐԱՑՅԱՆ

Սիմոն Վրացյանը (Սիմավոն Ղազարոսի Գոռուզյան) ծնվել է 1882թ. Դոնի Ռոստովի մարզի Մեծ Սալա գյուղում, գյուղացու ընտանիքում: 1900թ. նա ընդունվում է Գևորգյան ճեմարան և ավարտում է 1906 թվականին: Նրա ավարտական թեզը՝ «Ղրիմի հայերի գաղթականությունն ու պատմությունը»: 1906-1908թթ. ընթացքում Ս.Վրացյանը կուսակցական-հասարակական աշխատանք է կատարում Դոնի Ռոստովում և Հյուսիսային Կովկասում: Նա ընտրվում է դաշնակցական «Նալբանդ» կազմակերպության կենտրոնական կոմիտեի անդամ:

1907թ. Ս.Վրացյանը մասնակցում է Վիեննայում տեղի ունեցող ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին: 1908-1910 թվականներին նա սովորում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական, մանկավարժական ֆակուլտետներում: 1909-1911թթ. Կարինում աշխատում է որպես ուսուցիչ և խմբագրում է «Հառաջ» թերթը:

1911թ. աշնանը Ս.Վրացյանը մեկնում է ԱՄՆ, կուսակցության հանձնարարությամբ ստանձնում «Հայրենիք» պարբերականի խմբագրի պաշտոնը:

1911-1914 թվականներին, ապրելով ԱՄՆ-ում, Ս.Վրացյանը զբաղվում է նաև քարոզչական և կազմակերպչական աշխատանքներով: 1917-ի փետրվարյան հեղափոխությունից հետո եղել է «Հորիզոն» թերթի (Թիֆլիս) խմբագիր: 1918թ. ապրիլ-մայիս ամիսներին Ս.Վրացյանը Անդրկովկա-

սի սեյմի պատվիրակության կազմում մասնակցում է թուրքերի հետ տարվող բանակցություններին:

1918թ. մայիսի 28-ին նա ստորագրում է Հայաստանի անկախ հանրապետության հռչակման ակտի ներքո:

Ս.Վրացյանը Հայաստանի անկախության հռչակումից հետո կառավարության հանձնարարությամբ մեկնում է Հյուսիսային Կովկաս, տեղական իշխանությունների հետ բանակցելու Հայաստանին պարեն և զինամթերք ձեռք բերելու համար: Այդ ժամանակամիջոցում նա խմբագրում է «Զանգ» և այլ թերթերը:

1920թ.ապրիլից մինչև 1920թ. նոյեմբերը նա զբաղեցնում է գյուղատնտեսության պետական գույքի և աշխատանքի նախարարությունները: Ս.Վրացյանը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ և միևնույն ժամանակ նաև արտաքին գործերի նախարար էր 1920թ. նոյեմբերի 23-ից մինչև 1920թ. դեկտեմբերի 2-ը: Ս.Վրացյանի գլխավորած կառավարությունը գործել է 9 օր և ունեցել 3-4 նիստ: Նա բանակցություններ էր վարում ՌՍՖՍՀ կառավարության հետ: ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի ռադիոգիրը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալին, Թուրքիայի Արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրին, Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Ս.Վրացյանին, ՌՍՖՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Վ. Լեգրանին. «Նկատի առնելով հայկական կառավարության դիմումը Սովետական Ռուսաստանին՝ Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդելու վերաբերյալ և թուրքական ազգային կառավարության ներկայացուցչության համաձայնությունն այդ բանին, սովետական կառավարությունը տեղեկացնում է ձեզ, որ ստանձնում է միջնորդությունը և այս նպատակով պատերազմական գործողությունների շրջան է ուղարկում իր լիազոր ներկայացուցիչ Բ.Լեգրանին: Սովետական կառավարությունը հույս ունի, որ հետագա պատերազմական գործողությունները կդադարեցվեն:

Արտաքին գործերի ժող. կոմիսար Չիչերին»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեկտեմբերի 2-ին, Լեգրանի հետ համաձայնագիրը ստորագրելուց հետո, հրաժարվում է իշխանությունից: Այդ մասին ընդունվում է պաշտոնական փաստաթուղթ հետևյալ բովանդակությամբ.

Ակտ

Նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920թ. դեկտեմբերի նիստում որոշեց՝ հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական և քաղաքացիական բովանդակ իշխանությունը զորաբանակի ընդհանուր հրամանատարին, և այդ պաշտոնում նշանակել ռազմական նախարար Դրոյին:

Նախարարների խորհրդի նախագահ Ս. Վրացյան,

Նախարարներ՝ Ա.Հովհաննիսյան, Ա. Խոնդկարյան, Դ.Կանայան:

Իշխանությունից հրաժարվելու «Ակտը» Ս.Վրացյանը դեկտեմբերի 2-ին ուղարկում է Դիլիջան՝ Հայհեղկոմին:

Ս.Վրացյանը, միաժամանակ, գրություններ է ուղարկում Հայաստանի Հանրապետության արտասահմանյան բոլոր ներկայացուցչություններին՝ հայտնելով Լեգրանի հետ համաձայնագրի կնքման, այդ համաձայնագրի պայմանների և իշխանությունից հոգուտ բոլշևիկների հրաժարվելու մասին: Այդ գրություններում Ս.Վրացյանը հատկապես ընդգծում է այն, որ «միջոցներ են ձեռք առնվել քաղաքացիական կռիվները

կանխելու համար: Երկրի վիճակը նորմալ է, Երևանում հանգիստ է: Մեր որոշումն է՝ աջակցել նոր իշխանությանը»:

Ս.Վրացյանը եղել է «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ 1921թ. փետրվարի 18-ից մինչև 1921թ. ապրիլի 2-ը:

1922թ. մինչև 1941թ. բնակվել է Փարիզում, իսկ 1941թ. տեղափոխվել է ԱՄՆ մինչև 1951թ.: 1951թ.-ից մինչև կյանքի վերջը՝ 1969թ. ապրել է Բեյրութում (Լիբանան):

Ս. Վրացյանը մի շարք գրքերի հեղինակ է՝ «Հայաստանի Հանրապետություն», «Կյանքի ուղիներով»:

ՀԱՄԱՋԱՍՊ (ՀԱՄՈ)ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (ՕՀԱՆՋԱՆՅԱՆ (ՄՀԵՐՅԱՆ)

Համո Օհանջանյանը ծնվել է 1873թ. Ախալքալաքում: Ավարտել է Թիֆլիսի ռուսական գիմնազիան, որից հետո սովորել ՄՊՀ բժշկական ֆակուլտետում: Մոսկվայում մասնակցել է ուսանողական հեղափոխական շարժումների, որի պատճառով հեռացվել է համալսարանից: Ուսումը շարունակել է Շվեյցարիայի Լոզան քաղաքի բժշկական ինստիտուտում, որն ավարտել է 1899 թվականին: Այդ տարիներին (Ժնևում) ծավալել է հեղափոխական, կուսակցական աշխատանք հայ ուսանողների շրջանում (նա ՀՀԴ կուսակցության անդամ էր), աջակցել է Ք. Միքայելյանին (ՀՀԴ կուսակցության հիմնադիրներից): 1902թ. վերադառնում է Անդրկովկաս, Թիֆլիսում և Բաքվում աշխատում է որպես բժիշկ: 1905թ.-ին ռուսական հեղափոխության ժամանակ ղեկավարել է ՀՀԴ արտաքին կուսակցական կապերը Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների հետ: Պաշտպանել է «Կովկասյան նախագիծը» որը նախատեսում էր հեղափոխական գործունեություն ցարական կառավարության դեմ՝ հրաժարվելով Թուրքիայում ազգային-ազատագրական շարժումից: 1908 թվականին ցարական իշխանությունները ձերբակալում են Համո Օհանջանյանին և աքսորում են Սիբիր՝ Իրկուտսկի մարզ (1913-1915թթ.): Առաջին համաշխարային պատերազմի (1914-1918) ժամանակ ազատություն է ստանում, վերադառնում Թիֆլիս և որպես

բժիշկ ծառայում է կովկասյան ռազմաճակատում: Բժշկական օգնություն է կազմակերպել նաև Վանում: 1917թ. փետրվարի 27-ին Ռուսաստանում հաղթանակեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որը տապալեց ցարական միապետությունը:

1917թ. մարտի 2-ին իշխան Գ. Լվովի գլխավորությամբ կազմվեց առաջին բուրժուական ժամանակավոր կառավարությունը, երկրում ստեղծվեց երկիշխանություն: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին փոխարինեց Ն. Ռոմանովը:

1917թ. մարտի 9-ին կովկասյան փոխարքայության փոխարեն ստեղծվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ): Հ. Օհանջանյանը 1917թ. Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո ընտրվեց Համառուսաստանյան սահմանադիր ժողովի պատգամավոր:

1918 թվականի փետրվարի 10-ին Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասյան սեյմը, որը ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարեց «անկախ»: Երկրամասը անջատելով հեղափոխական Ռուսաստանից, բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները. ըստ էության, հնարավորություններ ստեղծեցին գերմանա-թուրքական զավթիչներին ներխուժելու Անդրկովկաս և գրավելու նրա զգալի մասը:

1918թ. մայիսի 26-ին սեյմը ցրվեց: Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը հայտարարվեցին անկախ հանրապետություններ:

1917թ. նոյեմբերի 15-ին օտարերկրյա պետությունների օգնությամբ կազմակերպվեց հակահեղափոխական կառավարություն՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, որը կազմված էր Անդրկովկասի բուրժուա-նացոնալիստական կուսակցություններից՝ մենշևիկներից, դաշնակներից, մուսավաթականներից և աջ էսէռներից:

Հ. Օհանջանյանը գործել է Անդրկովկասյան սեյմում:

1918թ. Հայոց ազգային խորհրդի կողմից ուղարկվել է Բեռլին (Գերմանիա) թուրքական հարձակման դեմ Գերմանիայի օգնությունը ստանալու նպատակով:

«Գերմանիա մեկնող հայկական պատվիրակության նախագահ Համազասպ Օհանջանյանի նամակը Թիֆլիսից Հայոց ազգային խորհրդին՝ գեներալ Լոսովի հետ ունեցած զրույցի մասին:

28 մայիսի 1918թ.

Այս րոպեին մեկնում ենք:

Խոսեցի նորից Լոսովի հետ, վրացիների հետ նա արդեն խոսել է և դրանից հետո է, որ նա հիմա ավելացնում է, թե նա չի կարող վճռական կերպով մեզ խորհուրդ տալ անկախություն հայտարարել, քանի որ ինքը լավ ծանոթ չէ տեղական պայմաններին, կարող է պատահել, որ դա շատ օգտակար չլինի մեզ համար, որովհետև Թուրքիան կարող է ասել, թե քանի որ սա անկախ երկիր է, ես ազատ եմ նրա հետ ինչպես ուզում եմ վարվել, ոչ ոք գործ չունի և չի կարող միջամտել:

Այդ պատճառով նա ասում է, որ այդ խնդիրը պետք է մի քիչ կշռադատել (discuter): Համենայնդեպս, խորհուրդ է տալիս մտածել նախքան այդ անելը: Նա մեզ տալիս է հնարավորություն խոսել ռադիոյով Փոթիի վրայով առայժմ, հետո Թիֆլիսի վրայով: Համենայնդեպս, դիմադրել խորհուրդ չի տալիս, պետք է նահանջել բողոքելով, եթե նրանք չընդունեցին մեր պայմանական համաձայնությունը ուլտիմատումին: Դեռևս ժամանակ ունենք, խնդիրը քննեցեք նաև վրացիների հետ: Նամակը բերում է Ն. Ռամիշվիլին: Հեռագրեցեք մեզ Բեռլին Փոթիի վրայով և Ն. Ռամիշվիլին կտա հնարավորություն»:

Փարիզի հաշտության կոնֆերանսը տեղի ունեցավ 1919-1920թթ. ընդհատումներով (1919թ. հունվարի 18-ից-1920

թվականի հունվարի 21-ը), միջազգային կոնֆերանսին հրավիրվել էին հաղթող տերությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմում պարտված երկրների հետ հաշտության պայմանագրերի նախապատրաստման և կնքման համար:

Ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.) Անտանտի հաղթանակով: Անտանտի «փոքր դաշնակից» Հայաստանը բոլորից շատ է տուժել պատերազմից, թեև նա զուրկ էր ինքնուրույն պետականությունից և այդ պատճառով պաշտոնապես էլ կռվող կողմ չէր համարվում: Թվում էր, որ Անտանտը հաղթանակից հետո կարող էր հաշվի առնել Հայաստանի շահերը և գոնե որևէ չափով բավարարել նրա բաղձանքները: Մուդրոսի զինադադարում շոշափվեց նաև հայերի և Հայաստանի հարցերը: 4-րդ հոդվածում նախատեսված էր, որ ռազմագերի և ներգաղթված հայերին պետք է հավաքել Կ. Պոլսում՝ նրանց առանց խոչընդոտների դաշնակիցներին հանձնելու համար: 16-րդ հոդվածով թուրքական զորքերը պետք է հեռանային Կիլիկիայից ու արաբական երկրներից: 24-րդ հոդվածում ասված էր. «Հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգություններ լինելու դեպքում դաշնակիցներին իրավունք է վերապահվում գրավելու նրա մի մասը»: Դաշնակիցների հանդեպ իր հավատարմության համար Հայաստանը խստորեն տուժել է:

Թուրքերը անգթորեն կոտորել են հարյուր հազարավոր հայերի, իսկ մնացած հազարավոր կյանքեր հայ ազգը կորցրել է դաշնակիցների բանակում:

Այդ բոլոր զոհերի համար դժբախտ երկիրը ստացավ միայն կասկածելի հաշտության պայմանագիր:

Շատ ճիշտ եզրահանգման է եկել ֆրանսիական ժուռնալիստ Օգյուստ Գովենը: Նա գրեց, որ «հարկ չկա որևէ բանակցության մեջ մտնել թուրքերի հետ, քանի որ նախօրոք հայտնի է, թե ինչ են ասելու այդ մարդիկ, նրանց չի կարելի ուղղել, նրանցից չի կարելի սպասել զղջում, նրանց պետք է հրամայել»:

1919թ. փետրվարի 26-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը Սպիտակ տանն անցկացրեց հատուկ խորհրդակցություն՝ Հայաստանի մանդատի հարցի կապակցությամբ և հայտարարեց. «Եթե ԱՄՆ-ը որևէ մանդատ ընդունի Ազգերի լիգայից, ապա առաջին հերթին պետք է ընդունի Հայաստանի մանդատը»: Սակայն Վիլսոնի առաջարկությունը ԱՄՆ-ի կառավարման մարմինները սառն ընդունեցին: 1920թ. մայիսի 29-ին արտաքին գործերի սենատական հանձնաժողովը 11 ձայնով ընդդեմ 4-ի մերժեց, իսկ հունիսի 1-ին նույնը կատարեց Սենատը. դեմ՝ 52, թեր՝ 23:

Ամերիկյան հռչակավոր գրող Ջոն Ռիդը, Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում արտասանած ճառում ասաց. «Ոչ, ընկերներ, քեռի Սեմը երբեք ոչ մի բան ձրի չի տալիս: Նա գալիս է մի ձեռքին դարմանով լի տոպրակ և մյուսին՝ մտրակ: Ով քեռի Սեմի խոստումներն ընդունում է մաքուր դրամի տեղ, նա հարկադրված կլինի դրա համար վճարել արյամբ»: Այսպիսին է «դեմոկրատական» Ամերիկայի քաղաքականությունը: Գերադասում է հանդես գալ սոսկ «մարդասիրական» դեկլարացիայով: Բայց իրական օգնություն չի կազմակերպում: Գերմանիային և նրա նախկին դաշնակիցներ՝ Ավստրո-Հունգարիային, Թուրքիային, Բուլղարիային թույլատրվել է կոնֆերանսին մասնակցել, երբ հաշտության պայմանագրերի նախագծերը պատրաստ են եղել: Կոնֆերանսին չէր հրավիրվել Սովետական Ռուսաստանը:

Փարիզի հաշտության կոնֆերանսին պաշտոնապես հրավիրված չէր այդ ժամանակ արդեն գոյություն ունեցող Հայաստանի Բուրժուական Հանրապետությունը, թեև հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

ավելի շատ զոհ էր տվել, քան պատերազմող ամենախոշոր պետություններից շատերը:

Հայկական երկու պատվիրակությունների հաշտեցման փորձ արվեց, երբ տեղի ունեցավ «ազգային համագումարը» որն ավելի ճիշտ գաղութահայության համաժողով էր, ներկայացված էին համարյա բոլոր գաղթօջախների պատվիրակները՝ 38 մարդ: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝Ա. Ահարոնյանը, Հ. Օհանջանյանը, Մ. Պապաջանյանը, մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով: Համագումարը վավերացրեց հաշտության կոնֆերանսին ուղղած հուշագիրը և ավելացրեց վնասների հատուցման չափը՝ 19 միլիարդ 130 միլիոն 982 հազար ֆրանկ, որից 14 միլիարդ 598 միլիոն 510 հազար ֆրանկը վերաբերում էր արևմտահայությանը, իսկ մնացած 4 միլիարդ 532 միլիոն 472 հազարը՝ արևելահայությանը: Համագումարն ընտրեց նոր կազմ՝ Պողոս Նուբարը՝ նախագահ, անդամներ՝ Արշակ Չոպանյան, Վահան Թեքեյան, դոկտոր Հակոբ Նևրուզ և ուրիշներ:

Այդուհանդերձ, 1919 թ. փետրվարին Փարիզում գտնվող հայկական երկու պատվիրակությունները (ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ, անդամներ Հ. Օհանջանյանի, Մ. Պապաջանյանի մասնակցությամբ), ներկայացան դաշնակիցներին՝ խնդրելով ճանաչել հայերի ազգային պահանջները: Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ս. Պիշոնը առաջարկեց մի հուշագիր պատրաստել, որը և ներկայացվեց 1919թ. փետրվարի 12-ին, հետևյալ բովանդակությամբ. Հայկական անկախ պետության ճանաչումը՝ հայկական նահանգների Կիլիկիայի և Կովկասի Հայկական Հանրապետության տարածքների միացումով: Դաշնակից պետություններից մեկը կամ Ազգերի լիգան պետք է երաշխավորեր ստեղծվող հայկական պետության տարածքային ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը: Դաշնակից տերություններից մեկին պետք է լիազորություն տրվեր ստանձնել հայկական այդ պետության մանդատը՝ 20 տարի ժամկետով: Կոնֆերանսը Հայաստանին պետք է դրամական հատուցում տար կրած վնասների դիմաց, ջարդերի համար պատասխանատուները պետք է պատժվեն, իսկ պատերազմի տարիներին բռնի կերպով տեղահանված ու աքսորված հայերը պետք է վերադարձվեին իրենց բնակավայրերը: Այդ փաստաթուղթը, «մեղմ ասած», դրական ընթացք չստացավ: Միակ բանը, որ արվեց, այն էր, որ 1920թ. հունվարի 19-ին Փարիզի կոնֆերանսում դե ֆակտո ճանաչեց Հայաստանը, սակայն առանց որևէ իրական օգնության մտադրության հայ ժողովրդին: Սին հույսեր և դառը պտուղներ:

Փարիզի կոնֆերանսն, ըստ էության, չզբաղվեց հայկական հարցով և լավագույն դեպքում ընդհանուր ու ձևական հայտարարություններ արվեցին ճնշված ժողովուրդների վերաբերյալ:

Հ. Օհանջանյանը 1920թ. սկզբից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանի կառավարության կազմում, ապա՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտաքին գործերի նախարար: Նրա օրոք է կնքվել Սևրի հաշտության պայմանագիրը (1920թ.): 1920թ. օգոստոսի 10-ին Սևրում, Փարիզի մոտ, ստորագրվեց հաշտության պայմանագիր Թուրքիայի սուլթանական կառավարության և առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած պետությունների միջև: Փարիզի կոնֆերանսին մասնակցում էր հայկական երկու պատվիրակություն՝

Հայաստանի Հանրապետություն՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ և արևմտահայերի՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: Հայկական հարցը քննարկվեց կոնֆերանսի բոլոր ղեկավար մարմիններում: Սակայն հենց սկզբից պարզ դարձավ, որ հաղթանակած պետությունները հայկական հարցը քննարկում են ոչ թե հայ ժողովրդի, այլ իրենց շահերի տեսակետից: Սևրի պայմանագրի 6-րդ բաժնի 88-89 հոդվածները վերաբերվում են Հայաստանին: Պայմանագրի 88-րդ հոդվածում գրված է. «Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանը արդեն արել են դաշնակից տերությունները որպես ազատ և անկախ պետություն»:

Սևրի հաշտության պայմանագիրը ոչինչ չտվեց հայերին: Քեմալական կառավարությունը ոչ միայն չճանաչեց Սևրի պայմանագիրը, այլև հասավ այդ պայմանագրի վերացմանը՝ օգտագործելով Անգլիայի ու Ֆրանսիայի միջև եղած սուր հակասությունները: Դաշնակից մեծ տերությունները գործնական ոչ մի քայլ չարեցին Սևրի պայմանագրով սահմանված տարածքները թուրքական նվաճողներից ազատելու համար: Հետաքրքիր է, որ Անտանտի պետությունները Սևրի պայմանագիրը կնքեցին ոչ թե քեմալականների հետ, որոնց էր պատկանում փաստացի իշխանությունը Թուրքիայում, այլ սուլթանական կառավարության հետ, որն այդ ժամանակ արդեն դրության տերը չէր Թուրքիայում: Նրանք նույնիսկ չհամաձայնվեցին, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը (փոքր դաշնակիցը) դառնա Ազգերի լիգայի անդամ:

Հավատացած լինելով «դաշնակիցներին» Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ Հ. Օհանջանյանն իտալական «Սեքսլո» լրագրի թղթակցին ասաց. «Համաձայնական մեծ պետությանց ներկայացուցած ենք արդեն

մեր ազգային բաղձանքները, որ կարելի է ամփոփել հետևյալ կերպով, Հայաստանը պետք է պարունակե ուրեմն հայկական վեց նահանգները, Կիլիկիան, Անդրկովկասի հայկական հողամասերը: Միացյալ Անկախ Հայաստանը պետք է ճանաչվի հաշտության համաժողովեն կողմե, իբրև համաժողովին ներկայացուցիչ ղրկելու իրավունք ունեցող պետություն մը: Հայաստանը պետք է ընդունվի Ազգերու դաշնակցության մեջ: Միացյալ Հայաստանը պիտի ունենա 300000 կմ² տարածություն և 4 կամ 5 միլիոն բնակիչ»:

Սովետական իշխանության հաստատվելուց հետո (1920թ. նոյեմբեր), Հ. Օհանջանյանը ձերբակալվել է և բանտարկվել: 1921թ. ազատվել է: Հետագայում դարձել է վտարանդի, 1923 թվականից ապրել է Կահիրեում (Եգիպտոս), զբաղվել է բժշկական պրակտիկայով և հասարակական գործունեությամբ: Համազգային մշակույթի և կրթական ընկերակցության հիմնադիրներից է: Հ. Օհանջանյանը մահացել է 1947 թ. Կահիրեում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՏԻՍՅԱՆ

Ալեքսանդր Խատիսյանը ծնվել է Թիֆլիսում, 1987թ. փետրվարի 17-ին: Հայրը՝ Հովհաննեսն ու հորեղբայրը՝ Գաբրիելը, ժամանակի հասարակական ազգային գործիչներ էին:

Սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսի առաջին արական գիմնազիայում: Ավարտելով գիմնազիան՝ ուսումը շարունակել է Մոսկվայի և Խարկովի համալսարաններում և 1897 թվականին ստացել է բժշկի մասնագիտություն: 1898-1899թթ. եղել է արտասահմանում՝ Փարիզում և Բեռլինում: 1900թ. վերադարձել է Թիֆլիս:

1902թ. ընտրվել է Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ: 1906թ. հունվարի 23-ին ընտրվել է քաղաքային վարչության անդամ: 1909թ. հունվարին նույն անդամության մեջ վերընտրվել է: 1909թ. Կովկասյան քաղաքների միության նախագահ, 1910-1917թթ. միաժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխ: 1915-1917թթ. Հայոց Ազգային բյուրոյի (Թիֆլիս) նախագահ: 1917թ. տեղափոխվել է Հայաստան, ընտրվել է Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: 1918թ. Անդրկովկասյան սեյմում վարել է ֆինանսների մինիստրի պաշտոնը: Ալ.Խատիսյանը մասնակցել է 1918թ. մարտի Տրապիզոնի հաշտության բանակցություններին: Բանակցություններին մասնակցել էին մի կողմից՝ Անդրկովկասյան սեյմի պատվիրակությունը (նախագահ՝ Ա. Չխեմկելի, անդամներ՝ Հովհ. Քաջազնունի, Ալ. Խատիսյան, Աբաշիձե, Գվազավա, Հաջինսկի, Հայդարով և ուրիշներ), մյուս կողմից՝ Թուրքիայի պատվիրակությունը (նախագահ՝ Ռեուֆ բեյ): Բանակցությունները տեղի են ունեցել մարտի 14-ից մինչև ապրիլի 14-ը, Անդրկովկասում գերմանա-թուրքական զորքերի հարձակման պայմաններում: Պատրվակ բռնելով ռուսական զորքերի զբաղեցրած տարածքում իբրև թե մահմեդականների հալածանքները, թուրքական հրամանատարությունը, խախտելով Երզնկայի 1917 թվականի դեկտեմբերի 31-ի զինադադարը, 1918թ. փետրվարի 12-ին թուրքական զորքերը (25 հազար մարդ) շարժեց Էրզրումի, Վանի, Մերձսևծովյան ուղղությամբ: Թուրքերը մինչև մարտի կեսերը գրավեցին Երզնկան, Բայբուրդը, Տրապիզոնը, Մամախաթունը և Էրզրումը: Սպառնալիք ստեղծվեց Կարսի և Բաթումի համար: Այդ պայմաններում անդրկովկասյան կոմիսարիատը, մերժելով մասնակցել Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին, իսկ այնուհետև չընդունելով Անդրկովկասի վերաբերյալ այդ պայմանագրի կետերը, որոշեց անջատ բանակցություններ սկսել Թուրքիայի հետ Տրապիզոնում: Հաղթող թուրքերը անդրկովկասյան պատվիրակությունից պահանջեցին ընդունել Բրեստի հաշտության պայմանագիրը, որոնք նախատեսում էին ռուսական զորքերի դուրս բերումը Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգներից: Թուրքիային էին անցնում Արևմտյան Հայաստանը: Մերժելով Բրեստի պայմանագիրը անդրկովկասյան պատվիրակությունը հույս ուներ ավելի նպաստավոր պայմաններով կնքել անջատ հաշտություն Թուրքիայի հետ՝ պահանջելով մինչև 1914թ. եղած պետական սահմանները: Ռուսաստանի (իսկ այժմ Անդրկովկասի) և Թուրքիայի միջև, ինչպես նաև ինքնորոշում՝ Արևմտյան Հայաստանի համար, թուրքական պետականության շրջանակներում: Հաղթած թուրքերը լսել անգամ չէին ուզում և հրաժարվեցին շարունակել բանակցությունները:

Ապրիլի 5-ին հաշվի առնելով թուրքերի շարունակվող հարձակումը և ռազմաճակատի ծանր վիճակը, սեյմից «արտա-

կարգ լիազորություններով» օժտված Չիչերինին ամբողջությամբ ընդունեց Բրեստի հաշտության պայմանագիրը: Ցավալի վախճան ունեցավ Անդրկովկասի սեյմի պատվիրակության անդամներ Հովհ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի մասնակցությունը Տրապիզոնի հաշտության բանակցություններին:

Ցրվում է Անդրկովկասյան սեյմը, ստեղծվեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բուրժուական անկախ հանրապետությունները: 1918թ. մայիսի 28-ին Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդը իրեն հայտարարեց «Հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»:

Առաջին կառավարության կազմում բացառապես դաշնակցականներ էին: Միակ անկուսակցականը զինվորական նախարար Հ. Հախվերդյանն էր: Վարչապետ նշանակվեց Հովհ. Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ալ. Խատիսյանը, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյանը:

Բաթումի պայմանագրին մասնակցեց Ալ. Խատիսյանը որպես Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, որը տեղի ունեցավ 1918թ. հունիսի 4-ին Բաթումում, հաշտության և բարեկամության պայմանագիր կնքվեց Օսմանյան կայսրական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև: Թուրքիայի կառավարության անունից պայմանագիրը ստորագրել է Խալիլ բեյը (թուրք գեներալ, Էնվերի հորեղբայրը): 1918թ.-ի մայիսի 15-ին Խալիլի զորքերը գավթել են Ալեքսանդրապոլը, 1918թ. սեպտեմբերին գրավելով Բաքուն, կոտորել են տեղի հայերին, շուրջ 30 հազ. մարդ: 1920թ. մարտին Խալիլ փաշան և մուսուլմանները հրդեհել են հայկական Շուշի քաղաքը Ղարաբաղում, կոտորել հայ բնակչության մեծ մասին՝ 35 հազ. մարդ, թուրք գեներալ Վահիբ Մեհմեդ փաշայի զորքերը 1918թ. փետրվարի 14-ին գավթել են Երզնկան, 24-ին՝ Տրապիզոնը, մայիսի

15-ին՝ Ալեքսանդրապոլը: Սարդարապատի մոտ հայկական զորքերը ջախջախեցին նրանց: Բաթումի ստորագրուցիչ պայմանագիրը ստորագրեցին Հայաստանի Հանրապետության կառավարության անունից Ալ. Խատիսյանը, Հովհ. Քաջազնունին, Մ. Պապաջանովը: Այդ պայմանագիրը Հայաստանի կառավարության առաջին միջազգային պարտադրված ակտն էր ռազմական գերակշռություն ունեցող Թուրքիայի կողմից: Պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածներից: Երբ ծանոթանում ենք պայմանագրին պարզ է դառնում երիտթուրքական կառավարող շրջանների այդ նենգ ծրագրի էությունը: Բաթումի պայմանագրով Թուրքիան գավթեց Ալեքսանդրապոլի և էջմիածնի գավառների մեծ մասը, Սուրմալուի ամբողջ գավառը, Բաթումը, Կարսը, Արդվինը, Օլթինը, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան: Հայաստանի փարածքից մնում էր ընդամենը մոտ 10 հազ. քառ. կմ, 321 հազ. բնակչությամբ:

Հ.Գ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքի առաջաբանում ակադ. Ա.Գ. Հովհաննիսյանը նշում է. «Թուրշյանին անհայտ չէ այն իրողությունը, որ թուրքերի հետ բանակցող հայ պատվիրակները ստորագրեցին Բաթումի պայմանագիրը՝ տեղյակ չլինելով Սարդարապատի հաղթանակին: Բայց կարող էր էական փոփոխություն մտնել պայմանագրի մեջ, եթե հայ պատվիրակները իրազեկ լինեին Սարդարապատի իրադարձություններին: Այս հարցին չի կարող դրական պատասխան լինել»:

1919թ. ապրիլից մինչև 1920թ. մայիսը Ալ. Խատիսյանը հանդիսանում էր Հայաստանի Հանրապետության կառավարության վարչապետը:

1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև Ալեքսանդրապոլում կնքվեց հաշտության

պայմանագիրը: Լիազորված անձինք, Հայաստանից՝ Խատիսյանը, Գյուլխանդանյանը և Կորգանյանը, Թուրքիայից՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան (թուրքական գեներալ, փաշա, 1918-1919թթ. եղել է 1-ին, 2-րդ, 15-րդ թուրքական Կովկասյան բանակային կորպուսների հրամանատար, մասնակցել է Երզնկայի, Էրզրումի և Կարսի գրավմանը, հետագայում՝ Արևելյան ռազմաճակատի զորքերի հրամանատար), Համիդ բեյը և Սուլեյման Բեշադի բեյը: Թուրքական պատվիրակությունը մերժեց մինչև 1912թ. ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտած հողերը և հետ չտվեց Հայաստանին Ալաշկերտի և Բասենի շրջանները: Սուրմալուի գավառը և Կարսի նահանգը (ավելի քան 20, 7 հզ. կմ²) ճանաչվեց որպես Թուրքիայի պատմական տարածք: Հայաստանը զրկվում էր նաև ընդհանուր զինապարտություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից: Նա կարող էր ունենալ միայն 1500 զինվոր, 8 թնդանոթ և 20 գնդացիր: Թուրքիայի կառավարությունը հրաժարվում էր Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված ծախսերի հատուցումից: 1920թ. Փարիզի խաղաղության կոնգրեսը որոշել էր, որ անշարժ և շարժական գույքի բռնագրավման, ոչնչացման, բնակչության տեղահանման հասցված ծախսերը կազմում են մոտ 19 միլիարդ ֆրանսիական ֆրանկ:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը չճանաչեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը և չեղյալ հայտարարեց 1921թ. Կարսի պայմանագիրը:

1920թ. դեկտեմբերի 2-ին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանի և դաշնակցական կառավարության միջև կնքված համաձայնագրով, առաջին կետով, դաշնակցական կառավարությունը ընդունում է Հայաստանի հեղկոմի դեկլարացիան Հայաստանը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու մասին:

Համաձայնագրի կնքումից հետո իշխանությունը, մինչև Հայաստանի հեղկոմի Երևան գալը, հանձնվում է զինվորական հրամանատարությանը՝ հանձինս Դր.Կանայանի (Դրո) և Խորհրդային Ռուսաստանի կողմից հրամանատարության կից զինվորական կոմիսար նշանակված Սիլինին:

Այս պայմաններում, դաշնակցական կառավարության պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ 1920թ. դեկտեմբերի 2-ին, այսինքն այն ժամանակ, երբ կառավարությունը, որին նա ներկայացնում էր տապալված էր, և հետևապես, իրավունք չուներ հաշտություն կնքել օտար պետության հետ, ստորագրել էր Ալեքսանդրապոլի ստորագուցիչ պայմանագիրը:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո 1920թ. դեկտեմբերին Ալ.Խատիսյանը թողնում է Հայաստանը և սկզբում Թիֆլիս, հետո 1921թ. փետրվարին մեկնում է արտասահման և բնակություն հաստատում Փարիզում: Գրել է «Հայաստանի Հանրապետության ծագումը ու զարգացումը» (1930թ.) հուշագրությունը: Արտասահմանում եղած ժամանակ մասնակցել է Ա. Ահարոնյանի հետ Լոզանի կոնֆերանսին (1922թ. նոյեմբեր-1923թ. հուլիս): Նրանց պաշտոնապես չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին: Նրանք ազգային պատվիրակության հետ (Գ. Նորատունկյան, Լ. Բաշալյան) ներկայացրեցին մի հուշագիր, որն առաջարկում է հայկական հարցի երեք հնարավոր լուծում. «Հայկական ազգային օջախի» ստեղծումը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ.Վիլսոնի սահմանագծած տարածքում, Երևանի խորհրդային հանրապետության ընդարձակումը՝ նրանց կցելով Արևմտյան մի մասը դեպի ծով ելքով, Հայկական օջախի ստեղծում Կիլիկիայում:

Լոզանի պայմանագրում հիշատակություն անգամ չկար հայերի և Հայաստանի մասին:

ՍԻՐԱԿԱՆ ՖԱԴԵԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Սիրական Տիգրանյան՝ հասարակական քաղաքական գործիչ, Հայ հեղափոխական դաշնակցության անդամ: Ավարտել է Սանկտ-Պետերբուրգյան իրավաբանական ֆակուլտետը: 1918-1919 թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, ապա՝ լուսավորության, այնուհետև լուսավորության և առևտրի նախարար, Ռուսաստանի Պետական դումայի պատգամավոր, 1919 թ. համալսարանի պրոֆեսոր: Հեղինակ է Ռուսաստանում հայկական եկեղեցական դպրոցների մասին աշխատությունների:

ՀՀ կառավարության նախագահի շրջաբերականը կառավարությունը վերակազմելու մասին:

«6 նոյեմբերի 1918թ. ստանձնելով, համաձայն Հայաստանի խորհրդի ամսույս 4-ի որոշման, մինիստր նախագահի պաշտոնը, կազմել եմ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևյալ անձերից.

1. Արտաքին գործերի մինիստր պ. Սիրական Տիգրանյան
2. Ներքին գործերի մինիստր պ. Արամ Մանուկյան
3. Զինվորական մինիստր գեն. Հովհաննես Ախվերդյան
4. Ֆինանսների մինիստր պ. Արտաշես Էնֆիաճյան
5. Արդարադատության մինիստր պ. Սամսոն Հարությունյան
6. Լուսավորության մինիստր պ. Միքայել Աթաբեգյան
7. Պարենավորման մինիստր պ. Լևոն Ղուլյան

8. Հանրային խնամատարության մինիստր պ. Խաչատուր Կարճիկյան:

Պ. պ. Ա. Էնֆիճյանի, Մ. Աթաբեգյանի և Լ. Ղուլյանի բացակայության պատճառով հանձնարարում եմ վարել ժամանակավորապես.

ֆինանսների մինիստրի պարտականությունները պ. Խ. Կարճիկյանին,

լուսավորության մինիստրի պարտականությունները պ. Ս. Հարությունյանին,

պարենավորման մինիստրի պարտականությունները պ. Ա. Մանուկյանին

Մինիստր նախագահ *Հովհ.Քաջազնունի*»

(ՀՀ.1918-1920 փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 69-70, Երևան, 2000թ.):

1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը ծանր վիճակի մեջ դրեց: Հայաստանի տարածքը, ըստ պայմանագրի, կազմում է մոտ 9.5 հզ.կմ²: Անդրկովկասում իրավիճակը շատ անկայուն էր, որտեղ ստեղծված երեք պետություններ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, ունենալով տարբեր քաղաքական կողմնորոշում, չէին դադարում նրանց միջև սահմանային վեճերը:

Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստրության հայտագիրը (նոտան) Վրաստանի արտաքին գործերի մինիստրին՝ Ախալքալաքի գավառի հարցի մասին:

«Այսօր ստացա Տիգրանյանի հայտագիրը հետևյալ բովանդակությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ խնդրում ենք Ձեզ հայտնել Վրաստանի Հան-

բապետության կառավարությանը, որպեսզի ժամանակավորապես ձեռնպահ մնալ զորքի ներս մտցնել Ախալքալաքի գավառի սահմանները մինչև նշված շրջանի հարցի խաղաղ լուծումը»:

Մդիվանի

Հայ-անգլիական համաձայնությունը Նախիջևանի շրջանի կառավարման հարցի շուրջը:

«Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է կառավարի Ուվաչայից մինչև Երևանի նախկին գավառի հարավային սահմանները բրիտանական հսկողության տակ մի պայմանով, որ ամեն մի գյուղում իրենք են ընտրում ավագը, ոչ թե հայկական զորքը պետք է պաշտպանի օրենքը և կարգը, այլ բրիտանական զորքի ջոկատը տեղավորվելու է Դավալուում, իսկ հայերը իրենց բոլոր զորքերը կտեղափոխեն Ուվաչայից դեպի հյուսիս, բացառությամբ փոքր ջոկատից (50 հոգի), որը կմնա Դավալուում և ներկա ժամանակ չի գնա այն գյուղերը, որտեղ բնակվում են մահմեդական ազգաբնակչություն, առանց բրիտանական լիազորի թույլտվության: Երևանի կառավարությունը կվերականգնի հեռախոսային կապը սահմանի և Երևան քաղաքի հետ:

Ֆ.Ե.Լաուտոն Նախիջևան շրջանի լեյտենանտ-գնդապետ, բրիտանական զինվորական պարետ, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, արտաքին գործերի մինիստր Ս.Տիգրանյան

ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանի նամակից արտգործմինիստր Ս.Տիգրանյանին Միացյալ Հայաստանի հարցի շուրջն ազգային պատվիրակության հետ վարած բանակցությունների մասին:

24 ապրիլ 1919թ.

«Դաշնակից մեծ տերությունները, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918թթ.) տարիներին կարևորում էին Արևմտյան Հայաստանի տարածքի ազատագրումը, ոչ միայն չիրագործեցին իրենց խոստումները, այլև Անդրկովկասի ներքին գործերին միջամտելով, ավելի սրեցին հակասությունները Կովկասի նորաստեղծ պետությունների միջև: 1920թ. աշնանը քեմալական Թուրքիան օգտվելով Անդրկովկասում ստեղծված իրավիճակից, հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: 1920թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքվեց ստրկացուցիչ պայմանագիր պարտված Հայաստանի և հաղթանակած Թուրքիայի միջև»:

1919թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց համալսարանի հիմնադրման մասին: Քանի որ Երևանում պայմաններ չկային, բացումը կատարվեց Ալեքսանդրապոլում 1920թ. հունվարի 31-ին: Առաջին կիսամյակի դասախոսությունները սկսվեցին փետրվարի 1-ից և տևեցին մինչև մայիս ամիսը:

Համալսարանի առաջին ռեկտորն էր Հ. Մանանդյանը: Համալսարանն ուներ երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական: Պատմալեզվաբանական ֆակուլտետում դասախոսում էին հայագիտության ավագ սերնդի անվանի ներկայացուցիչներ Մ.Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Ե. Տեր-Մինասյանը, Գ. Հովսեփյանը, Ստ. Մալխասյանը, Ս. Տիգրանյանը և ուրիշներ: Խորհրդային իշխանության տարիներին հրավերով արտասահմանյան տարբեր երկրներից Հայաստան եկան բազմաթիվ գիտնականներ, դասախոսներ, մշակույթի ականավոր գործիչներ, որոնք ծառայեցին իրենց հարազատ ժողովրդին:

Հանրային կրթության և արվեստի նախարարի նամակը Երևանի համալսարանի կազմակերպիչներ Յուրի Ղամբարյանին և Դավիթ Զավրյանին՝ համալսարանի հանձնաժողովի կազմը հաստատելու մասին: Պրոֆեսոր Յու.Գամբարով, դոցենտ Դ. Զավրև, բանասեր Մ. Աբեղյան, բանասեր Ռ. Աբրահամյան, պրոֆեսոր, տնտեսագետ Մ. Բունիաթյան, Էջմիածնի ակադեմիայի ռեկտոր, եպիսկոպոս Գարեգին, բանասեր Ստ. Մալխասյան, հնագիտական ինստիտուտի ասպիրանտ Ս. Տիգրանյան, բժիշկ Հ. Տեր-Ներսեսով և ուրիշներ:

1919թ. հուլիսի 8-ին համալսարանական հանձնաժողովի զեկուցագիրը հանրային կրթության և արվեստի նախարար Ս. Տիգրանյանին, կատարած աշխատանքների արդյունքների մասին, որտեղ ներկայացվում է համալսարանական հանձնաժողովի կատարած աշխատանքների արդյունքը: 1919թ. հուլիսի 17-ի հանրային կրթության և արվեստի նախարար Ս. Տիգրանյանի զեկուցագիրը Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին՝ համալսարանի նախահաշիվը, որտեղ նա խնդրում է հաստատել հաստիքները և ժամանակավոր կանոնները:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո լուսժողկոմատի 1920թ. դեկտեմբերի դեկրետով ստեղծվել է Երևանի ժողովրդական համալսարանը, 1923թ.-ից՝ Երևանի պետական համալսարան: Հետագայում բացվեցին՝ գյուղատնտեսական, արևելագիտության, տեխնիկական (1921թ.), բժշկական (1922թ.): Սկսվեց գիտական աշխատությունների և դասագրքերի հրատարակությունը:

1925թ.-ից լույս տեսավ համալսարանի «Գիտական տեղեկագիրը»:

1986-87 ուսումնական տարում համալսարանն ուներ 17 ֆակուլտետ, 92 ամբիոն, 123 կաբինետ և լաբորատորիա, կադրեր է պատրաստել 224 մասնագիտությունների գծով:

1986-87 ուս.տարում գործել է 13 բուհ 59778 սովորողներով:

1986-87 ուս.տարում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատել է 5389 դասախոս, որից 21 ակադեմիկոս և թղթակից անդամ, 400 գիտության դոկտոր, 2604 գիտության թեկնածու:

ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆ

Հայ հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ Գ. Նորատունկյանը ծնվել է 1852 թ. Կոստանդնուպոլսում: Դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակելու նպատակով մեկնել է Փարիզ, որտեղ ավարտել է իրավաբանական դպրոցը և կրթությունը շարունակել է Սորբոնի համալսարանում:

Ստամբուլ վերադառնալուն պես (1876 թ.) նրան ընդունեցին Օսմանյան կայսրության ԱԳՆ-ում: Միաժամանակ ակտիվ մասնակցել է Ստամբուլի հայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքին: 1894թ. ընտրվել է Հայաստանի Ազգային խորհրդի նախագահ: Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման տարիներին մատնությունների հիման վրա մեղադրվել է երիտթուրքերի շարժման հանդեպ տածած համակրանքի և հայ հեղափոխական կուսակցությունների կապերի համար, սակայն Գ. Նորատունկյանին հաջողվեց արդարանալ:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, նշանակվել է սահմանագծման և մի շարք այլ միջազգային հանձնաժողովների անդամ: 1883թ. Բարձր դռան իրավագետ խորհրդական:

1908թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո նա դարձավ առևտրի նախարար, իսկ 1909թ. հասարակական հանրօգուտ աշխատանքների նախարար:

Գ. Նորատունկյանի կարիերայի գագաթնակետը համընկավ Քեմալ փաշայի իտիլյաֆիստական կառավարման տարիների հետ, (երիտթուրքերին ընդդիմադիր կառավարություն, բաղկացած «Ազատություն և Համաձայնություն» կուսակցության անդամներից), երբ 1912-1913թթ. Նորատունկյանը զբաղեցրեց արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Նորատունկյանը ղեկավարել է նախարարությունը Բալկանյան պատերազմների տարիներին և քննադատության ենթարկվել անվճռական պարտվողական քաղաքականության համար:

Ըստ երիտթուրքերի հիշողությունների, լինելով իտիլյաֆիստական կառավարության նախարար, Նորատունկյանը սերտ կապեր էր պահպանում երիտթուրքերի հետ, փոխանցում նրանց Բյումալ փաշայի կառավարության տեղեկությունները, անգամ զգուշացնում Թալեաթին և մյուսներին նշանավոր երիտթուրքերի կալանավորումների մասին: Նորատունկյանի կողմից տրված տեղեկությունները նպաստեցին 1913թ. երիտթուրքերի հեղաշրջման նախապատրաստմանը:

Արևելյան Հայաստանում 1913-1914թթ. բարենորոգումների նախագծի քննարկման ժամանակ Ազգային ժողովում իր ելույթի մեջ Նորատունկյանը կոչ էր անում հրաժարվել գերտերությունների միջամտության գաղափարից և համաձայնվել երիտթուրքերի կառավարության առաջարկի հետ՝ կազմել համատեղ հայ-թուրքական բարենորոգումների նախագիծ: Թալեաթի խնդրանքով այդ ժամանակաշրջանում Նորատունկյանը բազմիցս հանդիպում էր «Դաշնակցություն» և «Հնչակյան սոցիալ-դեմոկրատական» կուսակցությունների առաջնորդների հետ, ինչպես նաև իր տանը հանդիպումներ էր կազմակերպում երիտթուրքերի առաջնորդների և հայկական կուսակցությունների ղեկավարների միջև:

1916թ. Նորատունկյանը Գյուլբենկյանի և Պողոս Նուբար փաշայի հետ միասին կազմել էր Սիրիայում հայկական պետության ստեղծման նախագիծը՝ Ջեմալ փաշայի գլխավորությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Գ. Նորատունկյանը Պողոս Նուբար փաշայի հետ միասին ակտիվ մասնակցություն է ցուցաբերել կոնֆերանսներին՝ հայկական հարցը ներկայացնելու գործում: Իր կողմից գլխավորող պատվիրակությունը, 1922-1924 թթ. Լոզանյան կոնֆերանսում, պատրաստվում էր ներկայացնել «Թուրքիայում հայ օջախ» նախագծի ստեղծումը, սակայն հրավեր չստանալու պատճառով, չիրականացավ այդ նախագծի ստեղծման նրա նպատակը:

1920թ. կեսերից Գ. Նորատունկյանը տեղափոխվում է Փարիզ, որտեղ ապրել է մինչև 1936թ. և զբաղվում է գիտական գործունեությամբ: Հրատարակում է «Օսմանյան միջազգային փաստաթղթերի ժողովածու» գիրքը (հատորներ 1-4, 1897-1903թթ., ֆրանսերեն լեզվով):

Գ. Նորատունկյանի հորեղբոր տղան՝ Արտիկ (Միշել) Նորատունկյանը, աշխատում էր որպես դիվանագետ՝ 1930թ. զբաղեցնում էր քեմալական Թուրքիայի ԱԳՆ գլխավոր քարտուղարի պաշտոնը, սակայն պատմության մեջ հետք թողեց որպես Օսմանյան կայսրության մասոնական լոժայի հիմնադիր: 1909թ. դարձավ թուրքական մասոնության ղեկավարներից մեկը:

ՆՈՒԲԱՐ ՄԿՐՏՉԻ ՆՈՒԲԱՐՅԱՆ (ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ)

Դեպական-քաղաքական ականավոր գործիչ, ազգային բարերար Նուբար Նուրբարյանը ծնվել է 1825թ. Զմյուռնիայում (Թուրքիա):

Նախնիները՝ Նուբարյանները՝ 18-րդ դարի վերջին Զմյուռնիա են գաղթել Արցախից: Ավարտել է ծննդավայրի հայկական դպրոցը: Պատանի հասակում տեղափոխվել է Եգիպտոս: Ն.Նուբարյանը 1844-89թթ. ուսումը շարունակել է Փարիզում: Վերադառնալով Եգիպտոս 1850թ. վարել է պատասխանատու պաշտոններ: 1866-76, 1878-79, 1881-88թթ. եղել է Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր, 1878-79, 1884-89, 1894-95թթ.՝ վարչապետ: Ստեղծել է Եգիպտոսի քաղաքացիական, առևտրական, քրեական օրենսգիրքը: Նա եղել է նաև հայ քաղաքական խոշոր գործիչ, զբաղվել է եգիպտահայության և ամբողջ հայ ժողովրդին հուզող խնդիրներով՝ հայկական ժողովրդի քաղաքական ճակատագրի, մշակույթի ու լուսավորության հարցերով: Ն. Նուրբարյանը 1895թ. հեռացել է քաղաքական ասպարեզից: Նա միջոցներ և դրամ է տրամադրել հայերեն պարբերականների լույս ընծայմանը: Նպաստել է «Արմավենի» հայերեն պարբերականի Կահիրեում հրատարակմանը և Կ. Պոլսում Նուբար-Շահնազարյան վարժարանի հիմնադրմանը, կազմակերպել հայ մատենագիրների ֆրանսերեն թարգմանությունն ու հրատարակությունը: Եգիպտոսին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է շքանշաններով, արժանացել է բազմաթիվ փիդոսների: Նրա անունով փողոցներ կան Կահիրեում և Ալեքսանդրիայում, կիսանդրին դրված է 1904թ. Ալեքսանդրիայում:

ՊՈՂՈՍ ՍԵՄՅՈՆԻ ՀԱԿՈԲՈՎ

Պողոս Սեմյոնի Հակոբով, սովետական դիվանագետ, 1983թ. ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան, ծնվել է 1926թ. օգոստոսին Կվեմո Սիվիլիսի գյուղում (Ախալցիխի շրջան, Վրացական ՍՍՀ): Պ. Հակոբովը 1945 թվականին ավարտել է Թբիլիսիի երկաթուղային տրանսպորտի տեխնիկումը, 1945-1947թթ. աշխատել է անդրկովկասյան մետալուրգիական կոմբինատում (Ռուսթավի, Վրաստան) որպես տեխնիկ: 1947-1951 թվականներին սովորել և ավարտել է Մոսկվայի պետական տնտեսագիտական ինստիտուտը (նախկին պլանային ակադեմիա): 1951-1957 թվականներին Պ. Հակոբովը աշխատել է պետական պլանային հանձնաժողովում, պետական մատակարարման կոմիտեում, պետական տնտեսագիտական հանձնաժողովում տնտեսագետ, ավագ տնտեսագետ, սեկտորի վարիչ: Պ. Հակոբովը 1957-1960 թվականներին սովորել և ավարտել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության բարձրագույն դիվանագիտական դպրոցը (այժմ դիվանագիտական ակադեմիա): 1960թ. մինչև 1991թ. Պ. Հակոբովն աշխատել է արտաքին գործերի մինիստրության սիստեմում:

1960-1965 թթ. Միացյալ Արաբական Հանրապետությունում (Եգիպտոս) ՍՍՀՄ դեսպանության երրորդ քարտուղար:

1965-1967 թթ. ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի 2-րդ բաժնում, առաջին քարտուղար:

1967-1977 թթ. խորհրդատու, ՍՍՀՄ դեսպանության խորհրդատու-դեսպանորդ Եգիպտոսում, իսկ 1974-1976 թվականներին ժամանակավոր հավատարմատար (փոխանորդ):

1977-1983 թթ. ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի բաժնի վարիչի տեղակալ:

1983-1986 թվականներին Պ. Հակոբովը Քուվեյթում աշխատել է որպես Խորհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան:

(Քուվեյթի Պետությունը գտնվում է Մերձավոր Արևելքում, Պարսից ծոցի ափին: Սահմանակից է Սաուդյան Արաբիային և Իրաքին: Տարածությունը 17.8հզ.կմ^2, բնակչությունը՝170 հազար (1984թ.): Մայրաքաղաքը՝ էլ Քուվեյթ:

Բնակիչների շուրջ 90%-ը արաբներ են: Պաշտոնական լեզուն արաբերենն է, պետական կրոնը՝ Իսլամը: Քուվեյթը ՄԱԿ-ի անդամ է 1963 թվականից: Դրամական միավորը քուվեյթյան դինարն է:

Քուվեյթում բնակվում է մոտ 11000 հայ, գործում են եկեղեցին և դպրոցը՝ Հայ ազգային ճեմարանը):

Պ. Հակոբովը 1986թ. նշանակվեց Լիբիայի Արաբական Հանրապետությունում ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան և աշխատեց մինչև 1991 թվականը:

(Լիբիան պետություն է Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական մասում: Տարածությունը 1700 հզ.կմ^2 է, բնակչությունը՝ 3.01 մլն: Պաշտոնական լեզուն արաբերենն է, պետական կրոնը՝իսլամը, գերակշռող մասը՝ սունիտներ, բնակչության 92%-ը լիբիացիներ են: Մայրաքաղաքը Տրիոպոլին է):

Պ. Հակոբովը հաճախ մասնակցել է Սովետական Միության պատվիրակությունների կազմում միջազգային կոնֆերանսների և միջկառավարական բանակցությունների աշխա-

փանքներին: 1991 թվականից մինչև այժմ հանդիսանում է արտաքին քաղաքականության ասոցիացիայի փոխպրեզիդենտը:

1997 թվականից մինչև այժմ հանդիսանում է Ռուսաստանի դիվանագետների ասոցիացիայի խորհրդի նախագահը:

Նա 1998թ. մինչև ներկա ժամանակն աշխատում է Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի նախագահին կից ոչ կառավարական կազմակերպության խորհրդի անդամ:

2001թվականից նա Ռուսաստանի Դաշնության Խորհրդի միջազգային գործերի կոմիտեի խորհրդի անդամ է:

1988 թ. մարտին ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով նրան շնորհվել է Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպանի աստիճան:

Նրան շնորհել են նաև Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի մինիստրության «Պատվավոր աշխատողի» կոչում:

Պարգևատրվել է ՍՍՀՄ շքանշաններով. Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» մեդալներով: Նա ստացել է նաև Եգիպտոսի և Լիբիայի շքանշաններ:

ԱԼԵՔՍԵՅ ՀԱՅԿԻ ԴՈՒԼՅԱՆ

Ալեքսեյ Դուլյանը ծնվել է 1947թ.: Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Ռուանդայի Հանրապետությունում 2002թ. հոկտեմբերից:

Ա.Դուլյանն ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը (ՍՍՀՄ ԱԳՄ) 1970 թվականին: 1970թ.-ից սկսած աշխատել է ՍՍՀՄ-ի և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական ապարատում՝ տարբեր դիվանագիտական պաշտոններում և արտասահմանում: 1992-1993թթ. Ռուսաստանի Դաշնության ԱԳՄ Եվրոպայի դեպարտամենտի բաժնի վարիչ: 1998թ. Ա.Դուլյանը կատարել է Ֆրանսիայում ՌԴ դեսպանության խորհրդատու-դեսպանորդի պարտականությունը, իսկ 1998-2002թթ. Ռուսաստանի Դաշնության ԱԳ պատմափաստավավերագրական դեպարտամենտի դիրեկտորի տեղակալ:

Ռուսաստանի Դաշնության նախագահի N 995 հրամանը . «Ալեքսեյ Հայկի Դուլյանին նշանակել Ռուսաստանի Դաշնության Արտակարգ և Լիազոր դեսպան Ռուանդայի Հանրապետությունում:

ՌԴ նախագահ Վ.Վ.Պուտին, Մոսկվա, Կրեմլ, 17 սեպտեմբերի»:

Տիրապետում է անգլերեն և ֆրանսերեն լեզուների:

ՎԱԼԵՐԻ ՎԱՐԴԱՆԻ ՆԱԶԱՐՈՎ

Վալերի Նազարովը ծնվել է 1941թ. Մոսկվայում: 1966 թվականին ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը: Աշխատել է ՍՍՀՄ ԱԳՄ և ՌԴ ԱԳՄ կենտրոնական ապարատում տարբեր պաշտոններում և արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչություններում:

Արտաքին գործերի մինիստրության համակարգում Վ.Նազարովը աշխատում է 1965թ: 1992-1997թթ. Ռուսաստանի դեսպան Մյանմի Միության Հանրապետությունում: 1997-2001թթ. ՌԴ ԱԳՄ Ասիայի երրորդ դեպարտամենտի դիրեկտորի տեղակալ: Տիրապետում է անգլերեն և բիրմայական լեզուներին:

Թղթակցի հանդիպումը Նեպալի Թագավորությունում՝ Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Վ.Նազարովի հետ: «Մեկ ու կես ժամվա ընթացքում մենք քննարկեցինք Սիբիրյան նախագծի զարգացման հնարավորությունները: Վ.Նազարովը տրամադրված էր դրականապես և առաջարկում էր ռուս-նեպալական համագործակցության հետ կոնկրետ քայլեր կատարել: Տոմսկի 400-րդ տարելիցը, դա երրորդ կարևոր նախագիծն է, որն արծաթյա թելով կապում է Ռուսաստանը և Հիմալայան Թագավորությունը: Դեսպանությունն արդեն աջակցում է երկու նույնանման հոբելյանական տարեթվերին՝ Կազանի 1000-ամյակին և Սանկտ Պետերբուրգի 300-ամյակին, իսկ Նեպալում ռուսական գիտության և կուլտուրայի կենտրոնը իրականացնում է այդ առթիվ միջպետական սերիա միջոցառումներ: Եթե մեր նախագիծը պաշտպանվի Ռուսաստանի ԱԳ կողմից, ապա շատ կազմակերպչական հարցեր կլուծվեն Նեպալի հիմնական մինիստրությունների՝ կրթության և սպորտի, կուլտուրայի, տուրիզմի և քաղաքացիական ավիացիայի մինիստրության հետ»:

Նեպալում Ռուսաստանի դեսպան Վ.Նազարովի կարծիքն է. «Սիբիրը դա Ասիան է, և նա պետք է շրջվի դեպի Խաղաղ օվկիանոսի տարածքը»:

Հատված քաղվածքից.

Շնորհել Վալերի Վարդանի Նազարովին Արտակարգ և Լիազոր դեսպանի աստիճան (ռանգ):

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ. Պուտին

Մոսկվա, Կրեմլ, 25 մայիս 2004թ. N 671:

ԳԵՈՐԳԻ ԼՎՈՎԻ ՄՈՒՐԱԴՈՎ

Գեորգի Մուրադովը ծնվել է 1954թ. Կոմի Ավտոնոմ Հանրապետությունում: Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտն ավարտելուց հետո, 16 տարիների ընթացքում աշխատել է արտասահմանում, հիմնականում՝ Հունաստանում, Բուլղարիայում, Կիպրոսում: 1996թ. Ռուսաստանի Դաշնության դեսպան, 1997-1999թթ. ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Կիպրոսի Հանրապետությունում:

Յու. Լուժկովի հրավերով զբաղեցնում է Մոսկվայի կառավարության միջազգային կապերի ղեկավարի պաշտոնը:

2007թ. հուլիսից Գ. Մուրադովը նշանակվում է Մոսկվայի կառավարության արտաքին տնտեսական գործունեության և միջազգային կապերի դեպարտամենտի ղեկավար: Գ. Մուրադովը տիրապետում է մի քանի արտասահմանյան լեզուների:

ՅԱԿՈՎ ԱՐԿԱԴԻԻ ԼԱԶՐԵՎ

Յակով Արկադիի Լազրևը ծնվել է 1912 թվականին Թիֆլիսում (Վրաստան), հայ սովետական դիվանագետ, ունի ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության արտակարգ և լիազոր դեսպանի կոչում, որը ստացել է 1970թ. դեկտեմբերի 11-ին:

Նրա նախնիները եղել են Լազարյաններ: (Ղազարյաններ, Աղազարյաններ, Եղիազարյաններ, Լազարևներ, հայ ազնվական տոհմ Ռուսաստանում):

Ծագումով Նախիջևանի Գավառի Դաշտ գյուղից է: Ռուսաստանում Լազարյանի նախահայրը և տոհմի հիմնադիր Ա. Լազարյանը 1747թ. իր եղբայրներ ու գործընկերներ Հարությունի և Մանուկի հետ հաստատվել է Աստրախանում, իսկ 1749-ին՝ տեղափոխվել Մոսկվա: Ռուսաստանում Լազարյանները գնել են կալվածքներ, գործարաններ, աղահանքեր, կառուցել Կիզելի, Պոլուզնինոյի գործարանները և այլն, դարձել Ռուսաստանի մեծահարուստ կալվածատեր-արդյունաբերողներից: 1774 թվականին, Եկատերինա 2-րդի հրամանագրով Լազարյաններին շնորհվել է Ռուսաստանի ժառանգական ազնվականի տիտղոս: Մոտ կանգնած լինելով ռուսական արքունիքին՝ Լազարյանները, սատարել են հայ-ռուսական բարեկամական կապի ամրապնդմանը, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու գործին: Առանձնակի ուշադրության են արժանի Հ. Ա. Լազարյանի և Խ. Հ. Լազարյանի ծրագրերը: Լազարյանները կարևոր դեր են խաղացել նաև պարսկահայերի գաղթի կազմակերպման և իրագործման խնդրում, որով նպաստել են Արևելյան Հայաստանը հայ ազգահավաքման կենտրոն դարձնելուն: Մեծ է եղել Լազարյանների դերը նաև հայ մշակույթի և լուսավորության զարգացման գործում: 1815 թվականին հիմնադրել են Լազարյան ճեմարանը, այնուհետև ճեմարանին առընթեր դպրարան, 1829 թվականին հայկական և ռուսական դպրոցներ:

Յակով Լազրևը ավարտել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի բարձրագույն դիվանագիտական դպրոցը: 1947-1972 թվականներին աշխատել է Թուրքիայի սովետական դեսպանությունում: 1952-1967 թվականներին՝ ընդմիջումներով, աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և Աֆրիկայի բաժիններում: 1955-1957 թվականներին նա աշխատել է Վիետնամի Դեմոկրատական Հանրապետությունում՝ սովետական դեսպանության առաջին քարտուղար: 1959-1962 թթ.՝ խորհրդական Լիբանանում, իսկ 1967-1974-ին ՍՍՀՄ արտակարգ լիազոր դեսպան Վերին Վոլտա Հանրապետությունում: ՎՎՀ պետություն Արևմտյան Աֆրիկայում: Սահմանակից է Մալիին, Նիգերին, Բենինին, Տոգոյին, Գանային և Փղոսկրի ափին: Տարածությունը 274,2հզ. կմ² է, բնակչությունը՝ 7մլն: Մայրաքաղաքը՝ Ուագադուգու:

Վերին Վոլտայի և ՍՍՀՄ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1967-ին: Կնքվել են գիտության և մշակույթի համագործակցության, առևտրական, 1968թ.-ից տնտեսական և տեխնիկական համագործակցության համաձայնագրեր:

1974 թվականից Յ. Լազրևն աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կենտրոնական ապարատում:

Մասնակցել է ՄԱԿ-ի 1958թ.-ի Գլխավոր ասամբլեայի արտահերթ նստաշրջանին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1964թ. 4-րդ ռեգիոնալ (արաբական երկրների) կոնֆերանսին:

Յ. Լազարևը 1974-1978թթ. պատասխանատու աշխատանք է կատարել ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կենտրոնական ապարատում: 1978 թվականից անցել է թոշակի:

Պարգևատրվել է Աշխատանքի կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով:

ԿԻՐԻԼ ԳՈՐԱՑԵՎԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կիրիլ Գևորգյանը 2003թ. Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Նիդեռլանդի (Հոլանդիայի) Թագավորությունում: ՌԴ դեսպանությունը Հաագայում է, զենքի արգելման կազմակերպության կից մշտական ներկայացուցիչ:

Կիրիլ Գևորգյանին 2007թ. օգոստոսի 29-ի Ռուսաստանի Դաշնության նախագահ՝ Վ. Պուտինի N 1126 հրամանով, շնորհվել է դիվանագիտական արտակարգ լիազոր դեսպանի կոչում:

ԹԱԴԵՎՈՍ ԳԵՂԱՄԻ ՄԱՐՇԵՆԿՈ-ՄԱՆԴԱԼՅԱՆ

Թադևոս Մանդալյանը ծնվել է 1901թ. Լենինականում (Հայաստան) առևտրականի ընտանիքում, կրթությունը՝ միջնակարգ, ՀԿԿ անդամ:

Նա 1939թ. աշխատել է Իսպանիայում արտակարգ և լիազոր դեսպան:

1941թ. մեղադրվել է հակատեռորիստական կազմակերպության որպես մասնակից: Գնդակահարվել է 1941թ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԵՏՐՈՍԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կոստանդին Կամսարականը ծնվել է 1840թ. Նուխիում (Ադրբեջան), ռուս դիվանագետ, ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ: Ավարտել է Մոսկվայի ռազմական ուսումնարանը: Մասնակցել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին՝ Կովկասյան ռազմաճակատում: Կամսարականը պատերազմից հետո նշանակվել է Էրզրումի զինվորական նահանգապետի օգնական, 1877թ. վերջին Ռուսաստանի փոխհյուպատոս Էրզրումում, իսկ 1878թ.՝ Վանում: Ակտիվ մասնակցություն է ունեցել Արևմտյան Հայաստանում 1878թ. Բեռլինի կոնգրեսի որոշումները իրագործելու համար: Սերտ կապ է պաշտպանել Կումինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության հետ: Աշխատել է ստեղծել հայ-ասորաքրդական դաշինք ընդդեմ թուրքական տիրապետության: Կ.Կամսարականի հայանպաստ գործունեությունից դժգոհել են եվրոպական հյուպատոսները և Ռուսաստանի կառավարությունը 1884թ. նրան փոխադրել է Սիբիր:

Կ.Կամսարականը 1900-1914թթ. աշխատել է Պետերբուրգի ռազմական գլխավոր շտաբում: Հետագա տարիներին աշխատել է Կիևում, Ֆրանսիայում, Եգիպտոսում:

Նա մահացել է 1922թ. Վիեննայում:

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՔԵԼԵԿՅԱՆ

Տիգրան Քելեկյանը ծնվել է 1868թ. Կեսարիայում (Թուրքիա), ազգային հասարակական գործիչ, դիվանագետ: 1893թ. Չիկագոյում (ԱՄՆ) եղել է համաշխարհային ցուցահանդեսի պարսկական մասնաճյուղի ղեկավար, իսկ 1901թ. մինչև 1922թ. աշխատել է Իրանի հյուպատոս Նյու Յորքում (ԱՄՆ): Պարսից շահից ստացել է խանի տիտղոս:

1909թ. Ադանայի կոտորածներից հետո Տ. Քելեկյանը 1912թ. հիմնեց Ադանայի վիլայեթում «Քելեկյան» որբանոց, հետագայում այն տեղափոխվեց Բեյրութ և այնտեղ գործեց մինչև 1932թ.: Նա 1910թ. ՀԲԸՄ բարերար, իսկ 1929-ից՝ փոխնախագահ:

Տ.Քելեկյանի հավաքածուն՝ միջագետքյան, ղպտական, պարսկական հախճապակի, բյուզանդական, մահմեդական մետաքսեղեն, գորգեր, հայկական ձեռագրեր ներկայացվել է 1907թ. (Փարիզ), 1912-1931թթ. (Լոնդոն) և այլ ցուցահանդեսներում:

1910թ. նա աջակցել է նկարիչներ Ժ.Բ. Բրաքին, Ա.Մատիսին, Պ.Պիկասոյին, դպրոցասեր տիկնանց վարժարանին: Տ.Քելեկյանը պարգևատրվել է Ֆրանսիայի կառավարության կողմից «Պատվո լեգեոն» շքանշանով: Տ. Քելեկյանը ՀԱՊ-ին նվիրել է հայ նկարիչներ Զ. Զաքարյանի, Գ. Շլդյանի18 նկար, Մատենադարանին՝ Իգնատիոսի նկարազարդած Ավետարանը (18-րդ դարի ձեռագիր): 1936թ. նա Լենինգրադում մասնակցել է պարսկական արվեստի միջազգային կոնգրեսին:

1946թ. նա ակտիվ մասնակցություն է ունեցել Խորհրդային Հայաստան ներգաղթի կազմակերպման գործին:

Տիգրան Քելեկյանը վախճանվել է 1951թ. Նյու Յորքում (ԱՄՆ):

ԵՎԳԵՆԻ ԱՐՇԱԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Եվգենի Համբարձումյանը ծնվել է 1929թ. Մոսկվայում, ռուսական քաղաքական գործիչ, քաղաքագետ, դիվանագետ: ՌԴ Պետական դումայի առաջին գումարման դեպուտատ (1994թ.): Ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը 1951թ., 1954թ.՝ նույն ինստիտուտի ասպիրանտուրան: Դատական գիտությունների թեկնածու: 1954-1956թթ. «Նովայա վրեմյայի» խմբագիր: 1956-1959թթ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1959-1963թթ. «Проблемы и социализм» (Чехословакия, Прага) ամսագրի խմբագիր: 1963թ. նա աշխատել է ՍՍՀՄ ԳԱ համակարգի տարբեր ինստիտուտներում:

1992-1993թթ. Գերագույն սովետի միջազգային գործերի և արտաքին տնտեսական կապերի կոմիտեի նախագահ, Սահմանադրական հանձնաժողովի անդամ:

1993թ. փետրվարից նախագահության խորհրդի անդամ: 1992թ. «Родина» նոր պատգամավորական խմբի ստեղծողներից է:

1994-1999թթ. Ռուսաստանի դեսպան Մեքսիկայի Միացյալ Նահանգներում և համատեղության կարգով՝ Բելիզում: Եվ. Համբարձումյանը տիրապետում է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և իսպաներեն լեզուների:

Աշխատություններ

"Вверх, к вершине" м 1974

§Германская демократическая республика. 1983 (редактор)

"Анализ В.И Ленин причины кризиса 1921г. и путей выхода из него Вопросы и теории", N4, 1984.

"0 путях совершенствованя политической системы социализма" итого не дано м. 1988

"Социализм: прошлое и настоящее" 1990

ՀՈՐԱՍԻՈ ԱՆԴՐԱՆԻԿ ՉԱԼՅԱՆ

Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հ. Չալյանը ծնվել է Արգենտինայի Կորդոբա նահանգի Դեան Ֆունես քաղաքում 1942 թ. դեկտեմբերի 14-ին: Նրա ծնողները՝ Սամվել Չալյանը և Արուսյակ Մանուկյանը, եկել են Արգենտինա 1920 թ.-ին:

Արգենտինա. 1960-1965թթ. քաղաքական-սոցիալական և դիվանագիտական գիտությունների բակալավրի աստիճան Կորդոբայի կաթոլիկ համալսարան:

Արգենտինա. 1960-1963թթ. իրավունքի դասընթացներ Կորդոբայի պետական համալսարանում:

1966-1967թթ. մագիստրոսի աստիճան միջազգային հարաբերությունների գծով, Ջոն Հոպկինսի համալսարանի միջազգային հարաբերությունների բաժին, ԱՄՆ:

1966թ. Արգենտինայի արտաքին գործերի և պաշտպանության նախարարության մրցույթով անցած դեսպանատան կցորդի աստիճան:

1968-1969 թթ. աշխատել է Արգենտինայի արտաքին գործերի և պաշտպանության նախարարության Հարավային Ամերիկայի վարչության Չիլիի բաժնում:

1969-1973թթ. աշխատել է Լա Պասում՝ Արգենտինայի դեսպանատանը որպես քարտուղար:

1973-1974թթ. աշխատել է Արգենտինայի արտաքին գործերի և պաշտպանության նախարարության քարտուղարությունում:

1974-1979թթ. աշխատել է Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունում Արգենտինայի դեսպանության խորհրդական:

1979-1981թթ. աշխատել է Արգենտինայի արտաքին գործերի և պաշտպանության նախարարության մամուլի բաժնում:

1981-1987թթ. Չիլիի Պունտա Արենաս քաղաքում աշխատել է հյուպատոս:

1986-1988թթ. Արգենտինայի արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունում Հարավային Ամերիկայի վարչության բաժնի վարիչի տեղակալ, նախարարի դիվանագիտական կոչումով:

1989թ. Լատինաամերիկյան հարցերով քարտուղարության ենթակայության տակ գտնվող աշխատակազմի ղեկավար:

1989-1993թթ. Էլ Սալվադորի Հանրապետության դեսպան:

1993-1996թթ. Հարավային Ամերիկայի վարչության պետ, արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական կոչումով:

1993-1996թթ. արգենտինյան պատվիրակության ղեկավար, Ռիո դե լա Պլատայի ծովային ճակատի բազմազան տեխնոլոգիաների հանձնաժողովի նախագահ (արգենտինա-ուրուգվայական):

1996-2002թթ. Հունգարիայում դեսպան:

2002թ. մինչ օրս Արգենտինայի Հանրապետության միջազգային սահմանների ազգային հանձնաժողովի նախագահ:

Ներգրավել և ղեկավարել է արգենտինյան պատվիրակություններ միջազգային կազմակերպություններում (Ամերիկյան երկրների կազմակերպություն, ՄԱԿ, Ռիոյի խումբ, ՄԵՐԿՈՄՈՒՐ) և լատինաամերիկյան երկրների հետ երկկողմանի և բազմակողմանի հանդիպումներում:

Ստացել է պարգևներ Բոլիվիայից, Բրազիլիայից, Էլ. Սալվադորից, Պարագվայից, Պերուից, Հունգարիայից և Ռումինիայից:

ԱՇՈՏ ԱՐՍԵՆԻ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Աշոտ Մելիք-Շահնազարյանը ծնվել է 1931թ. Թբիլիսիում (Վրաստան): Հայ դիվանագետ և քաղաքական գործիչ:

1950-1956թթ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը միջազգային իրավունք մասնագիտությամբ: 1969-1971թթ. սովորել է Մոսկվայի բարձրագույն դիվանագիտական դպրոցում: 1981-1982թթ.՝ դիվանագիտական ակադեմիայում (Մոսկվա): 1987-1989թթ. Սովետական Միության արտաքին գործերի մինիստրության անալիզի և պլանավորման բաժնի առաջին հյուպատոս: 1989-1992թթ. Սովետական Միության դեսպանության լիազոր ներկայացուցիչ՝ Մալիում: 1992-1994թթ. Հայաստանի արտաքին գործերի մինիստրի խորհրդական: 1995-1998թթ. միջազգային կազմակերպությունների դեպարտամենտի դիրեկտոր: 1998-2000թթ. հատուկ հանձնարարության դեսպան:

2001-2004թթ. Հայաստանի դեսպան Մեքսիկայում և Կուբայում: 1989թ. Աշոտ Մելիք-Շահնազարյանին շնորհվել է ՍՍՀՄ բարձր դիվանագիտական կոչում՝ արտակարգ և լիազոր դեսպանորդ: 1997թ. նա դարձավ համաշխարհային պանհայկական խաղերի առաջին նախագահ, որը հաջողությամբ անցավ Երևանում 1999, 2001, 2003 թվականներին:

Նա մասնակցեց Մոսկվայում Օլիմպիական խաղերի նախապատրաստմանը և անցկացմանը:

Նա հանդիսանում է քաղաքական, սպորտային և օլիմպիական թեմաներով գրված մի շարք գրքերի հեղինակ:

ԲԵՆՈՆ ՍԵՎԱՆ

Բենոն Սևանը (Գույումջյան) ծնվել է 1937թ. Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում:

Բ. Սևանն ավարտել է Կիպրոսի Մելքոնյան ինստիտուտը: Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում ստացել է բակալավրի աստիճան՝ փիլիսոփայության պատմություն մասնագիտությունը: Այնուհետև Սևանը ստացել է մագիստրոսի աստիճան Կոլումբիայի համալսարանի միջազգային հարաբերությունների դպրոցում: 1965թ. փետրվարին Բ. Սևանը ընդունվել է ՄԱԿ-ի քարտուղարություն և աշխատել հասարակական տեղեկատվության դեպարտամենտում մինչև 1966թ. հուլիս ամիսը, որոշ ժամանակ անց անցել է աշխատանքի դեվոլոնիզացիայի գծով հատուկ կոմիտեում: Բ. Սևանը 1968թ. նոյեմբերից մինչև 1969թ. օգոստոս ամիսը եղել է ՄԱԿ-ի Արևմտյան Իրանում ազատ ընտրությունների Ակտի Հատուկ ներկայացուցչությունում գլխավոր քարտուղարի դիտորդը: 1970թ. հուլիսից մինչև 1972թ. եղել է ՄԱԿ-ի Արևմտյան Իրանի զարգացման ներկայացուցչի օգնական: 1973 թ. հունիսից աշխատել է տնտեսական և սոցիալական խորհրդի քարտուղարությունում որպես խորհրդի քարտուղար: 1982թ. մինչև 1988թ. մարտ ամիսը աշխատել է Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի, միաժամանակ ՄԱԿ-ի հատուկ կոնֆերանսներում, բազմաթիվ միջկառավարական և էքսպերտ կազմակերպությունների քարտուղար: Կատարել է բազմաթիվ քաղաքական հանձնարարականներ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անունից, եղել է քարտուղարության ավագ աշխատակից՝ նշանակված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից 1985թ. փետրվարին Իրանի և Իրաքի միջև ծագած կոնֆլիկտի՝ զինվորական պատանդների իրավիճակի

հետազոտությունների ուսումնասիրության հարցերով: 1989թ. մայիսին նշանակվել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անձնական ներկայացուցիչը Աֆղանստանում և Պակիստանում: 1990թ. հունվարին նա միաժամանակ աշխատել է որպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչը Աֆղանստանում Ժենևյան համաձայնագրի կատարման հարցերով: Այդ պարտականություններին զուգընթաց 1991թ. հունվարին Բ. Սևանը կատարել է պարտականություն ՄԱԿ-ի ծրագրի գրասենյակի կոորդինացման ղեկավարությունը Աֆղանստանին հումանիտար և տնտեսական համագործակցություն ցույց տալու նպատակով:

1992թ. օգոստոսից մինչև 1994թ. մարտ ամիսը Բ. Սևանը ծառայել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական և քաղաքական հարաբերությունների դեպարտամենտի ղեկավարի տեղակալ, հատկապես Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի հարցերով: 1994թ. մարտին Բ. Սևանը նշանակվել է վարչարարության և ղեկավարության դեպարտամենտում որպես գլխավոր քարտուղարի օգնական՝ Գլխավոր ասամբլեայի խնդրանքով՝ ՄԱԿ-ի բարեփոխության հարցերով գլխավոր քարտուղարի զեկույցները նախապատրաստելու և համակարգելու նպատակով:

1998թ. ապրիլին Բ. Սևանը նշանակվել է գլխավոր քարտուղարի ներկայացուցչության տնօրեն և ավագ քաղաքական խորհրդական Աֆղանստանում դրությունը կարգավորելու, միաժամանակ զբաղվել Աֆղանստան և Պակիստան վերահսկելու Աֆղանստանից սովետական զորքերի դուրս բերման վրա:

1997թ. հոկտեմբերի 15-ին Բ. Սևանը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի կողմից նշանակվել է Իրաքի ծրագրի կատարողական տնօրեն:

Մինչև Իրաքի ծրագրի կատարողական տնօրենի նշանա-

կումը Բ. Սևանը աշխատել է որպես կոնֆերանսի և Օգնության ծառայության քարտուղարի օգնական, ինչպես նաև ՄԱԿ-ի անվտանգության գծով համակարգող, միաժամանակ շարունակելով իրականացնել վերջին ֆունկցիան մինչև 2002թ. հուլիս ամիսը: Բ. Սևանը սկսած 1992թ. ծառայել է նաև որպես Մերձավոր Արևելքում անհայտ կորած անձերի գծով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ դեսպանորդ:

ԱԴԵՄԱՐ ԳԱԲՐԻԵԼ ԲԱՀԱԴՅԱՆ

Ադեմար Բահադյանը ծնվել է Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա), 1940 թ. հոկտեմբերի 22-ին, Ազիզ Բահադյանի և Գրասինդա Գաբրիել Բահադյանի ընտանիքում:

Բրազիլիայի գլխավոր հյուպատոս Բուենոս Այրեսում:

1965-66թթ. հյուպատոսական և դիվանագիտական գործնական դասընթացներ է անցել Ռիո Բրանկոյի ինստիտուտում (CPCD): 1975թ. հոգեբանության դասընթաց Ֆիլյո Գամայի համալսարանում: 1983թ. բարձրագույն դասընթացներ Ռիո Բրանկոյի ինստիտուտում VI CAE (Curso de Altos Estudios):

1967թ. մարտի 3-ին երրորդ քարտուղար
1970թ. մարտի 31-ին երկրորդ քարտուղար
1976թ. մարտի 19-ին առաջին քարտուղար
1979թ. դեկտեմբերի 12-ին խորհրդական
1986թ. դեկտեմբերի 17-ին երկրորդ դասի նախարար
1994թ. դեկտեմբերի 17-ին առաջին դասի նախարար

Բրազիլիայում

1967թ. Կազմակերպության բաժնի վարիչի օգնական:

1968-70թթ. Առևտրային քաղաքականության բաժնի վարիչի օգնական:

1970-76թթ. ERERIO-ի (Escritorio de Representacion de Los Asuntos Exteriores en Rio de Janeiro (ԱԳՆ-ի ներկայացուցչություն Ռիո դե Ժանեյրոյում) տնօրենի օգնական:

1975թ. Ռիո Բրանկոյի ինստիտուտի քարտուղարության տնօրենի պաշտոնակատար:

1975-76թթ. Ռիո Բրանկոյի ինստիտուտի կրթության կազմակերպիչի պաշտոնակատար:

1987թ. Միջազգային առևտրի բաժնի վարիչ:

1994-96 թթ. ԱԳ-ի գլխավոր քարտուղարի աշխատակազմի ղեկավար:

1997-2000թթ. գլխավոր քարտուղարի օգնական

Արտերկրում

1976-79թթ. Ժնև Մշտական պատվիրակությունում առաջին քարտուղար:

1980-81թթ. Ժնև Մշտական պատվիրակությունում խորհրդական:

1980թ. Ժնև, աշխատել է հյուպատոսությունում:

1981-86թթ. Նյու Յորք, ՄԱԿ-ում խորհրդական:

1984-85թթ. Նյու Յորք դեկտեմբեր և 1986 թ. ապրիլ ՄԱԿ-ում առաքելության ղեկավար:

1986թթ. Նյու Յորք, ՄԱԿ-ում նախարար:

1990-94թթ. Նյու Յորք, ՄԱԿ-ում նախարար-խորհրդական:

2000-02թթ. Ժնև, Մշտական պատվիրակությունում մշտական ներկայացուցչի փոխարինող:

ԷԴՎԱՐԴ ԱԼԵՔՍԱՆԴՐ (ԱԼԵՔՍԱՆՅԱՆ)

Էդվարդ Ալեքսանյանը ծնվել է 1920թ. մայիսի 14-ին Նյու Յորքում, ծնողներն ԱՄՆ են արտագաղթել Արևմտյան Հայաստանից: 1941թ.-ին ավարտել է Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանը, 1942թ.-ին նույն համալսարանի ժուռնալիստիկայի մագիստրատուրան: 1941-45թթ. Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զորակոչվել է ԱՄՆ բանակ, կցվել է ագիտացիոն քարոզչական ստորաբաժանմանը, իսկ 1944թ. Ֆրանսիայում՝ ամերիկյան գեներալ Օմար Բրեդլիի շտաբին: Զորացրվել է 1945թ.-ին, աշխատել է որպես Լորենս Օլիվիայի մասնակցությամբ երկու կինոնկարների՝ «Հենրի V» և «Համլետ», կինոնկարահանման խմբերի հասարակական կապերի գծով տնօրեն:

1950թ.-ին աշխատանքի է անցել է «Ամերիկայի ձայն» ռադիոկայանում, նշանակվել է հայկական խմբագրության տնօրեն: 1959թ.-ին ընդունվել է ԱՄՆ դիվանագիտական ծառայության, գործուղվել է Արևմտյան Բեռլինում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչություն, 1965թ.-ին՝ Հունգարիայում ԱՄՆ դեսպանություն: 1969թ.-ին նշանակվել է ԱՄՆ տեղեկատվական ծառայության ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի վարչության պետի տեղակալ, 1976թ.-ին Աթենքում ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գծով խորհրդական, այնուհետև գործուղվել է ԳԴՀ-ում ԱՄՆ դեսպանություն: 1979թ.-ին աշխատանքի է անցել «Ռադիո Ազատության» հոգաբարձուների խորհրդի աշխատակազմում, համակարգել է հայկական խմբագրության աշխատանքը: 1980թ.-ին նշանակում է ստացել պետքարտուղարության տե-

ղեկավարության ազատության բաժնում, իսկ 1985թ.-ին նշանակվում է մարդու իրավունքների գծով ԱՄՆ պատվիրակության անդամ և խոսնակ:

Էդվարդ Ալեքսանդրը հասարակական գործունեությամբ է զբաղվում Վաշինգտոնի ամերիկահայ համայնքում, 1997թ.-ին հասարակական հիմունքներով հանդիսացել է ՀՀ արտգործնախարարի խորհրդական:

Բազմաթիվ գրքերի, հրապարակումների հեղինակ է, նրա գրչին է պատկանում «Վրեժխնդրության հանցանքը» գիրքը, որում նկարագրվում է հայ վրիժառու Սողոմոն Թեյլերյանի կողմից Թալեաթ փաշայի սպանությունը Բեռլինում և Թեյլերյանի դատավարությունը:

Գրել է «Օձը և մեղուն» գիրքը խորհրդային ՊԱԿ-ի մասին:



ՎԱՉԵ ՆՈՒՐԲԱԹԼՅԱՆ

Դոկտոր Վաչե Նուրբաթլյանը ծնվել է 1951 թ. Բեյրութում (Լիբանան):

Միջնակարգ կրթություն է ստացել Լիբանանի Մխիթարյան հայրերի միջնակարգ դպրոցում, լիբանանական և ֆրանսիական բակալավրիատ (1967թ.), իսկ բարձրագույն կրթությունը՝ Լիբանանի պետական համալսարանում, ընդհանուր փիլիսոփայության և ֆրանսիական գրականության ու քաղաքակրթության մագիստրոս (1972թ.):

Կասլիկի Սուրբ հոգու համալսարան՝ Քաղաքական փիլիսոփայության և սոցիոլոգիայի (1984թ.):

Սորբոնի համալսարան՝ Փարիզ 4-րդ . Քաղաքական փիլիսոփայության և սոցիոլոգիայի երրորդ շրջանի դոկտորական ուսումնասիրություններ(1984):

Կասլիկի Սուրբ հոգու համալսարան՝ Քաղաքական փիլիսոփայության և սոցիոլոգիայի դոկտոր (1989թ.):

Վ.Նուրբաթլյանը աշխատանքային գործունեությունը սկսել է.

Լիբանանի կրթության նախարարություն. Ընդհանուր փիլիսոփայության դասախոս (1972-1985 թթ.):

Կասլիկի Սուրբ հոգու համալսարան. Քաղաքական փիլիսոփայության և սոցիոլոգիայի դասախոս (1985-1994 թթ.):

Լիբանանի պետական համալսարան .Քաղաքական փիլիսոփայության և սոցիոլոգիայի դասախոս (1989-1994թթ.):

Լիբանանի արտաքին գործերի նախարարություն. Լիբա-

նանի արտակարգ և լիազոր դեսպան Թաիլանդի Թագավորությունում և Վիետնամում (1994-1999 թթ.)

Անդամակցությունը.

Հայկական կաթոլիկ նահապետական կենտրոնական խորհուրդ:

Մասնակցությունը վեհաժողովների և այլ զուտահեռ գործունեության.

Հայկական և լիբանանական համայնքներում քաղաքական և մշակութային գործունեություն, հայկական և օտարերկրյա թերթերում մի քանի հոդվածներ հետևյալ թեմաներով՝ գաղափարախոսության և պետական քաղաքականություն, մեծ տերությունների քաղաքականությունը և հայերի ցեղասպանությունը, ժողովուրդների համերաշխությունը և նեոլիբերալ կապիտալիստական պետությունների մրցակցությունը գլոբալիզացիայի դարաշրջանում, էթիկա և քաղաքականություն՝ քաղաքականության քրեականացում և հանցանքի քաղաքականացում, իրավական պետություն, մարդու իրավունքներ և ժողովրդավարություն:

Մասնակցություն մի քանի ազգային (այդ թվում՝ Հայաստան-Սփյուռք) և միջազգային (այդ թվում՝ 1998 թվականի Բոնգկոկում անցկացված ՄԱԿ-ի Միջազգային աշխատավորական կազմակերպության ամենամյա վեհաժողովին որպես Լիբանանի պատվիրակության ղեկավար) վեհաժողովների:

Շնորհված կոչումը՝ Թաիլանդի Թագավորության մեծն օրդեր (1999թ.)

ՌԻՉԱՐԴ ՈՒԵՅՆ ԲՈԳՈՍՅԱՆ (ՊՈՂՈՍՅԱՆ)

Ռիչարդ Պողոսյանը ծնվել է 1937թ. հուլիսի 18-ին Բոստոնում, 1959թ.-ին ավարտել է Թաֆթսի քոլեջը պատմության բակալավրի, իսկ 1962թ.-ին՝ Չիկագոյի համալսարանը իրավագիտության դոկտորի աստիճանով:

1962թ.-ին ընդունվել է ԱՄՆ դիվանագիտական ծառայության, տարբեր պաշտոններ է վարել պետքարտուղարության դիվանագիտական ակադեմիայում (1962-1963), Միջին Արևելքի և Հարավային Ասիայի վարչությունում (1963, 1966-1968), գործուղվել է օտարերկրյա պետություններում ամերիկյան դեսպանություններ, Բաղդադ (1963-1965), Փարիզ (1966-1968), Քուվեյթ (1972-1976): 1976թ.-ին նշանակվել է Սուդանում ԱՄՆ դեսպանության՝ դեսպանի տեղակալի պաշտոնում, 1979թ.-ին պետքարտուղարության՝ ավիացիայի ոլորտում միջազգային համագործակցության գծով գլխավոր բանակցող, 1982թ.-ին՝ Արևելյան Աֆրիկայի բաժնի վարիչ, 1985թ.-ին նշանակվել է Նիգերում, իսկ 1990թ.-ին՝ Չադում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան: Պողոսյանն առաջին հայազգի դիվանագետն է, որն արտակարգ և լիազոր դեսպանի նշանակում է ստացել է ԱՄՆ-ում: 1993թ.-ին եղել է Ռուանդայում և Բուրունդիում ԱՄՆ միջազգային զարգացման գծով գլխավոր համակարգող: 1998թ.-ին նշանակվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համակարգող Արևելյան Աֆրիկայի պետությունների գծով: Ներկայումս թոշակառու է:

Սոմալիում պատերազմական պայմաններում պաշտոնավարության ընթացքում ստացել է պետքարտուղարի «Արիության համար» պարգևը:

ԵՎԳԵՆԻ ՎԻԿՏՈՐԻ ՆԵՐՍԵՍՈՎ

Եվգենի Վիկտորի Ներսեսով. սովետական դիվանագետ, ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան (1978թ.), ՍՄԿԿ անդամ 1944թ., ծնվել է 1921թ. սեպտեմբերին Մոսկվա քաղաքում: 1939թ. Մոսկվայում ավարտել է միջնակարգ դպրոցը և նույն տարում զորակոչվել է կարմիր բանակ: Զինվորական ծառայությունն անց է կացրել Անդրբայկալյան ռազմական օկրուգի զորամասերում և հետո տանկային զորամասում, որը տեղավորված է եղել Մոնղոլական Ժողովրդական Հանրապետությունում: Մասնակցել է Ճապոնիայի դեմ պատերազմին:

Եվ. Ներսեսովը 1946թ. հունիսին զորացրվելուց հետո ընդունվել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ, որն ավարտել է 1951 թվականին և ուղարկվել է աշխատանքի ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կենտրոնական ապարատ:

1954թ. փետրվարից մինչև 1965թ. աշխատել է Ֆրանսիայում՝սկզբում երրորդ քարտուղար, ապա երկրորդ և առաջին քարտուղար սովետական դեսպանատանը:

Ֆրանսիայից Մոսկվա վերադառնալուց հետո մինչև 1965թ. հոկտեմբերը Եվ. Ներսեսովն աշխատել է որպես ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա.Ա. Գրոմիկոյի օգնական:

1965թ. հոկտեմբերին Եվ. Ներսեսովը նշանակվում է Սիրիայի Արաբական Հանրապետությունում՝ սովետական դեսպանատանը խորհրդատուի պաշտոնում, իսկ 1969թ. հուլիսին Չադի Հանրապետությունում՝դեսպան: (Չադի Հանրապետություն՝ պետություն կենտրոնական Աֆրիկայում, սահմանակից է Լիբիային, Սուդանին, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությանը, Կամերունին, Նիգերիային և Նիգերին: Տարածությունը՝1284 հզ.կմ² է, բնակչությունը՝4.6մլն (1981թ): Մայրաքաղաքը՝ Նչամենա:

Չադում բնակվում են 140 տարբեր ժողովուրդներ և էթնիկական խմբեր: Բնակչության մոտ 50% կազմում են Կենտրոնական և Արևելյան Սուդանի լեզուներով խոսող ժողովուրդները: Կան նաև արաբներ և եվրոպացիներ: Պաշտոնական լեզուները ֆրանսերենն ու արաբերենն է):

Եվ. Ներսեսովը 1974 թվականի սեպտեմբերից մինչև 1978թ. նոյեմբերը աշխատել է Սովետական Միության արտաքին գործերի մինիստրությունում որպես կադրերի վարչության պետի տեղակալ:

Եվ. Ներսեսովը 1978թ. հոկտեմբերից մինչև 1983թ. դեկտեմբերը աշխատել է ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան Մարոկկոյի Թագավորությունում:

(Մարոկկոն պետություն է Հյուսիսարևմտյան Աֆրիկայում: Ողողված է Ատլանտյան օվկիանոսի և Միջերկրական ծովի ջրերով: Եվրոպայից բաժանվում է Ջիբրալթարի նեղուցով: Սահմանակից է Ալժիրին և Արևմտյան Սահարային: Տարածությունը 446.5 հզ.կմ² է, բնակչությունը՝ 18.9 մլն. (1978թ.): Մայրաքաղաքը՝ Ռաբաթ):

Եվ. Ներսեսովը 1983 թվականի մայիսից մինչև 1988 թվականի մայիսը աշխատել է Մալիի Հանրապետությունում՝ ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան:

(Մալիի Հանրապետությունը պետություն է Արևմտյան Աֆրիկայում: Տարածությունը 1204 հզ. կմ² է, բնակչությու-

նը՝6.3 մլն(1976 թ): Մայրաքաղաքը՝ Բամակո):

1988 թ. Եվ. Ներսեսովն անցել է թոշակի և որոշ ժամանակ ստացել է միութենական կարգի անհատական նշանակություն ունեցող թոշակ:

Պարգևատրվել է կառավարական շքանշաններով և մեդալներով:

ԷԴՈՒԱՐԴ ՌՈՒԲԵՆԻ ՄԱԼԱՅԱՆ



Էդուարդ Մալայանը ծնվել է 1947թ. Թբիլիսիում (Վրաստան): 1970թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը: Տիրապետում է անգլերեն և ֆրանսերեն լեզուների:

Է. Մալայանը դիվանագիտական կարիերան սկսել է 1970թ.-ից: 1970-1973թթ. աշխատել է Կոնգոյում, իսկ այնուհետև 1972-1973թթ.՝ Զաիրում: 1973-1978թթ. աշխատել է ՍՍՀՄ ԱԳ՝ ԱՄՆ-ի բաժնում: 1979-1985թթ. և 1991-1996թթ. աշխատել է ՍՍՀՄ(Ռուսաստան) դեսպանատանը ԱՄՆ-ում: 2000-2005թթ. Է. Մալայանն աշխատել է որպես Ռուսաստանի Դաշնության դեսպան Ջամայկայում, նաև համատեղության կարգով Դոմինիկայում, Անտիգուայում և Բարբուդեում: 2005թ. աշխատում էր Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում:

ՋՈԶԵՖ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Զոզեֆ Ղուկասյանը ծնվել է 1944թ. մարտի 5-ին Կահիրեում, բարձրագույն կրթությունը ստացել է Հռոմի Գրեգորյան համալսարանում (1964թ. բակալավրիատ, 1965թ. մագիստրատուրա, մասնագիտությունը՝ փիլիսոփայություն) և Լուվենի համալսարանում (Բելգիա), ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1977թ.-ին ավարտել է ԱՄՆ Սան Դիեգոյի համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրան, ապա 1980թ.-ին՝ իրավաբանական դպրոցը, ստացել է իրավագիտության դոկտորի գիտական աստիճան:

1966թ.-ին տեղափոխվել է ԱՄՆ, դասավանդել է Սան Դիեգոյի համալսարանում:

1980-1981թթ. մասնավոր փաստաբանական գործունեություն է վարել, Հանրապետական կուսակցության ակտիվիստ էր, նախագահ Ռոնալդ Ռեյգանի պաշտոնավարության օրոք, 1981թ.-ին աշխատանքի է անցել ԱՄՆ նախագահի աշխատակազմի քաղաքական բաժնում, այնուհետև՝ ԱՄՆ առողջապահության նախարարության փախստականների վերաբնակեցման բաժնում, 1982թ.-ին՝ ներգաղթի և հպատակագրման ծառայությունում: 1982թ.-ին նշանակվել է Եմենի Արաբական Հանրապետությունում ԱՄՆ «Խաղաղության կորպուսի» գրասենյակի տնօրեն, 1985թ.-ին՝ Կատարում, ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան: Դեսպանի պաշտոնը թողնելուց հետո 1989թ.-ին, հիմնել է մասնավոր խորհրդատվական ընկերություն: 2003-2004թթ.-ին Իրաքի կոալիցիոն ժամանակավոր իշխանության կողմից նշանակվել է Իրաքի բարձրագույն կրթության և գիտության նախարարության ամերիկյան գլխավոր խորհրդականի տեղակալ (փոխնախարարի պաշտոնակատար):

Տիրապետում է անգլերեն, արաբերեն, հայերեն, ֆրանսերեն, իտալերեն և իսպաներեն լեզուների:

ԷԴՄՈՆԴ ԱՎԱԳԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Էդմոնդ Ավագի Շահնազարյանը ծնվել է 1928թ. Կիրովական քաղաքում (այժմ Վանաձոր): 1945 թվականին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով: 1945թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և ավարտել է 1950 թվականին: Համալսարանը ավարտելուց հետո նա աշխատանքի է ընդունվել Հայաստանի կոմերիտմիության կենտկոմում որպես հրահանգիչ (1950-1951 թթ.), 1951-1955 թթ.՝ բաժնի վարիչի տեղակալ: 1955 թվականին Է. Շահնազարյանն ընտրվել է Հայաստանի կոմերիտմիության կենտրոնական կոմիտեի քարտուղար պրոպագանդայի գծով:

Հայկոմկուսի կենտրոնական կոմիտեն նրան գործուղել է Մոսկվա, բարձրագույն դիվանագիտական դպրոց (այժմ դիվանագիտական ակադեմիա) սովորելու և որն էլ ավարտել է գերազանցությամբ 1961 թվականին: 1961-1997 թվականներին դիվանագիտական տարբեր պաշտոններ է զբաղեցրել Սովետական Միության և Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի մինիստրություններում և նաև Եգիպտոսի (երկու անգամ), Եմենի Արաբական Հանրապետության և Հարավային Եմենի ՍՍՀՄ դեսպանություններում: ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի երկրների բաժնի Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի կարգավորման սեկտորի վարիչ, ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստրության պլանավորման և գնահատման վարչության գլխավոր խորհրդատու, Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի մինիստրության անալիզի և կանխորոշման վարչության գլխավոր խորհրդատու:

1977-1984 թվականներին Է. Շահնազարյանն աշխատել է Եգիպտոսում՝ ՍՍՀՄ դեսպանատանը որպես խորհրդական դեսպանորդ, իսկ հետագա երեք տարիներին (1981-1984թթ.) հարաբերությունների լարված ժամանակաշրջանում և դեսպանի բացակայության ժամանակ, Է. Շահնազարյանը գլխավորում է դեսպանատունը որպես Սովետական Միության գործերի հավատարմատար դեսպանորդ: Նա հանդիսանում էր ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության առաջավոր մասնագետներից մեկը մերձավոր արևելյան հարցերի կարգավորման գործում: Է. Շահնազարյանն աշխատելով Մերձավոր Արևելքի բաժնում, պլանավորման և գնահատման վարչությունում, ակտիվ մասնակցություն է ունեցել պետության դիրքորոշման շահերին ամենանպաստավոր առաջարկությունների նախապատրաստմանը, այդ թվում դիրքորոշման ճշտում վերակառուցման տարիներին:

1974 թվականին. Սովետական Միության պատվիրակության կազմում որպես խորհրդատու. նա մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 19-րդ սեսիային, որտեղ քննության առնվեց Պաղեստինի հարցը և որոշում ընդունվեց Պաղեստինի ժողովրդին տալ ինքնորոշման իրավունք առանց արտաքին միջամտության, ՄԱԿ-ին ներկայացվեց Պաղեստինի ազատագրական կազմակերպությունը և տրվեց դիտորդի կարգավիճակ մասնակցելու ՄԱԿ-ի օրգանների նիստին:

Է. Շահնազարյանը գլխավորելով Եգիպտոսի դեսպանատունը սովետա-եգիպտական ամենից ծանր ժամանակաշրջանում, շատ ջանքեր գործադրեց այդ հարաբերությունները նորմալացնելու համար:

1974-1975թթ.-ին Եգիպտոսի ղեկավարությունը փորք փվեց կոնֆլիկտը փոլ լառ փոլ կարգավորելուն Ֆ. Քիսինջերի կոնցեպցիային, որը հանգեցրեց սովետա-եգիպտական հարաբերությունների վատացմանն ու Եգիպտոսի մեկուսացմանն արաբական աշխարհում: 1976թ. մարտին Եգիպտական Արաբական Հանրապետության ժողովրդական ժողովը, Ա. Սադաթի առաջարկությամբ, միակողմանիորեն դադարեցրեց 1971-ին սովետա-եգիպտական բարեկամության և համագործակցության համաձայնագրի գործունեությունը:

Կահիրեում, նրա բանակցությունների շնորհիվ Եգիպտոսի արտաքին գործերի մինիստրության ղեկավարության հետ, ձեռք բերվեց հիմնական պայմանավորվածություններ այդ ուղղությամբ, սովետական մասնագետների վերադարձը Եգիպտոս, ստեղծվեց սովետական դեսպանատան համագործակցության համար գործնական մթնոլորտ Եգիպտոսի պետական օրգանների հետ, կուլտուրական կապերը վերականգնվեցին, ուղարկվեցին դեսպաններ Մոսկվա և Կահիրե:

ՍՍՀՄ-ի փլուզումից հետո նա աշխատել է անալիզի և կանխորոշման վարչությունում, ԱՊՀ երկրների առաջին դեպարտամենտում: Նա Կահիրեում լայն համագործակցություն (կոնտակտներ) է պահպանել Եգիպտոսի հայկական համայնքի հետ, ակտիվ աջակցել և ամրապնդել Եգիպտոսի հայերի կապը Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ:

Կազմակերպել է Հայկական ՍՍՀ գրողների միության նախագահ էդուարդ Թոփչյանի, ՍՍՀՄ ժողովրդական դերասանուհի Գոհար Գասպարյանի, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի այցերը Եգիպտոս և հանդիպումներ հայ հասարակության հետ:

Հրաժարական տալուց հետո նա աշխատում է պայմանագրային կարգով Կոլեկտիվ անվտանգության խորհրդի քարտուղարության բաժնի պետ, որին մասնակից են հանդիսանում Հայաստանը, Բելոռուսիան, Ղազախստանը, Կիրգիզիան, Տաջիկստանը:

Բազմամյա և բարեխիղճ դիվանագիտական աշխատանքի համար Է. Շահնազարյանը պարգևատրվել է «Աշխատանքային արիություն», «Աշխատանքային գերազանցություն» մեդալներով և Ռուսաստանի Գերագույն խորհրդի պարգևներով:

ԱՐՏՅՈՄ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐ-ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Արտյոմ Ավետիսի Տեր-Մելիքսեթյանը ծնվել է 1928 թվականին Թբիլիսիում (Վրաստան), բանվորի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թբիլիսիում, 1945 թվականին ավարտել է միջնակարգ ռուսական դպրոցը: Ծնողները 1915թ. Թուրքիայում հայերի ցեղասպանության զոհերից են: Հայրը՝ Մուշի փախստականներից է, իսկ մայրը՝ Կարսից, նրանք հիմնավորվել են Թբիլիսիում: Ա. Տեր-Մելիքսեթյանն ուսումը շարունակելու նպատակով (բարձրագույն կրթություն ստանալու համար) տեղափոխվել է Երևան և 1945թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1950թ. ավարտել է համալսարանը, ստացել է պատմաբան-միջազգայնագետի մասնագիտություն: Բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո, կարճ ժամանակ նա աշխատում է Հայկական ՍՍՀ սննդի արդյունաբերության մինիստրի օգնական, և հետո աշխատել է Երևանի պետական համալսարանի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնում:

1951-1958 թվականներին աշխատել է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գիտության և ուսումնական հաստատությունների ու կուլտուրայի բաժնում՝ հրահանգիչ:

1958 թվականին Հայկոմկուսի կենտկոմը նրան գործուղում է Մոսկվա՝ բարձրագույն դիվանագիտական դպրոց (այժմ դիվանագիտական ակադեմիա) սովորելու, որն էլ և ավարտում է: 1961թ. նրան ուղարկում են ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրություն դիվանագիտական աշխատանքի: Ա. Տեր-Մելիքսեթյանը մոտ 30 տարի աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի երկրների բաժնի արաբական երկրների ռեգիոնում:

Արտգործմինիստրության բաժնում աշխատելու ժամանակ հաճախակի մեկնել է արտասահմանյան գործուղման արաբական երկրներ:

(Ասուան (հնում՝Սիենա), քաղաք ԵԱՄ(1958թ., Սիրիան և Եգիպտոսը միավորվեցին մեկ պետության՝ Արաբական Միացյալ Հանրապետության (ԱՄՀ) մեջ:

Մայրաքաղաքը դարձավ Կահիրեն: ԱՄՀ-ի պրեզիդենտ ընտրվեց Նուսերը: 1961թ. Սիրիան դուրս եկավ ԱՄՀ-ի կազմից, բայց շարունակեց կոչվել ԱՄՀ: Նեղոս գետի աջ ափին, Ասուանի նահանգապետության կենտրոն, գետային նավահանգիստ և երկաթուղային հանգույց, բնակչությունը՝ 157, 6 հզ.: Ասուանի մոտ Սովետական Միության օգնությամբ կառուցվել է Ասուանի բարձրադիր ամբարտակ ջրաէներգետիկական կոմպլեքս):

1965-1967թթ.աշխատել է Եգիպտոսում, Ասուանում, ՍՍՀՄ հյուպատոսությունում որպես փոխհյուպատոս: 1967-1969թթ. նշանակվել է Եմենի Խոդեյդե քաղաքում ՍՍՀՄ հյուպատոս: 1970թ. ավարտել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության ղեկավար կադրերի մեկ տարվա կուրսերը և աշխատանքի անցել որպես խորհրդատու արտաքին գործերի մինիստրությունում: 1985թ.Ա. Տեր-Մելիքսեթյանը նշանակվում է ՍՍՀՄ-ի գլխավոր հյուպատոս Բասրայում (Իրաք), որտեղ աշխատել է մինչև 1989 թվականը, որից հետո անցել միութենական կարգի անհատական թոշակի:

Ա. Տեր-Մելիքսեթյանն աշխատելով արաբական երկրներում՝ Իրաքում, Եգիպտոսում, Եմենում, սովետական հյուպատոսություններում, իր ծառայողական պարտականությունների հետ միասին ցույց է տվել ամեն տեսակի կոնսուլական և իրավական աջակցություն և օգնություն սովետական քաղաքացիներին, մասնագետներին, որոնք աշխատում էին այդ երկրների բազմաթիվ տնտեսական օբյեկտներում: Նրանցից խոշորագույնն է Եգիպտոսում Ասուանի բարձրադիր ամբարտակ ջրաէներգետիկական կոմպլեքսը, Եմենում՝ ծովային նավահանգիստ՝ Խոդեյդում, Իրաքում՝ Բասրայի շրջանում, հյուսիսային Ռումալլյում խոշոր նավթամշակման կենտրոնը: «Արաբական տեղական իշխանությունների և ազգաբնակչության հարաբերությունները բարեկամական են եղել»- այսպես է նկարագրում Ա. Տեր-Մելքսեթյանը իր աշխատած տարիները Իրաքում:

ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում աշխատելիս Ա. Տեր-Մելիքսեթյանը նույնպես գործնական մասնակցություն է ունեցել միջկառավարական մակարդակի բանակցություններին և խորհրդակցություններին արաբական երկրների ղեկավարության հետ: ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում աշխատած տարիներին Ա. Տեր-Մելիքսեթյանն ակտիվ, գործնական մասնակցություն է ունեցել արաբական երկրների, Սովետական Միության ղեկավարների հետ բանակցությունների, խորհրդակցությունների ժամանակ:

1972 թ. ապրիլին Սովետական Միության և Իրաքի Հանրապետության միջև ստորագրվեց իր նշանակությամբ շատ կարևոր «Բարեկամություն և համագործակցություն» պայմանագիր: Ա.Տեր-Մելիքսեթյանն այդ տարիներին աշխատելով արտաքին գործերի մինիստրության արաբական երկրների բաժնում, պայմանագրի տեքստի նախապատրաստմանը ակտիվ և անմիջական մասնակցություն է ունեցել: ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության ղեկավարության կողմից, ակտիվ դիվանագիտական և հասարակական աշխատանքի համար Ա. Տեր-Մելիքսեթյանը բազմաթիվ անգամ ստացել է պատվոգրեր և շնորհակալագրեր:

Ռուսաստանի Ֆեդերացիայի Գերագույն խորհրդի նախագահի կողմից Ա. Տեր-Մելիքսեթյանն երկարամյա բեղմնավոր աշխատանքի համար ստացել է պատվոգրեր, պարգևատրվել է նաև ՍՍՀՄ մի շարք մեդալներով:

1985թ. ՍՍՀՄ Գերարգույն սովետի նախագահությունը Ա. Տեր-Մելիքսեթյանին շնորհել է արտակարգ և լիազոր դեսպանորդի կոչում:

ՍԵՐԳԵՅ ԲԱԽՇԻԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սերգեյ Բախշիի Առաքելյանը ծնվել է 1928 թվականին Հայկական ՍՍՀ Գորիսի շրջանի Տեղ գյուղում: Տեղում ստացել է միջնակարգ կրթություն: Հայրենական մեծ պատերազմի տարիներին սովորելու հետ միասին աշխատել է գյուղի կոլտնտեսությունում: 1948-1950թթ. սովորել է Ստեփանակերտի (Արցախ) ուսուցչական ինստիտուտում: 1950 թվականին զորակոչվել է սովետական բանակ: Ջինվորական ծառայությունից հետո ընդունվել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ, որն ավարտել է 1959 թվականին: Որից հետո Ս. Առաքելյանը 30 տարուց ավելի աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության սիստեմում, Մերձավոր Արևելքի բաժնում և մի շարք կապիտալիստական երկրների ՍՍՀՄ-ի դեսպանատներում. ռեֆերենտից սկսած մինչև գլխավոր հյուպատոս:

Սերգեյ Առաքելյանը 1959-1960թթ. աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի երկրների բաժնում ռեֆերենտ, 1960-1962թթ. Արաբական Միացյալ Հանրապետությունում ՍՍՀՄ դեսպանատան ատաշե (կցորդ), 1962-1964թթ. Ասուանում (Եգիպտոս) ՍՍՀՄ հյուպատոսությունում փոխհյուպատոս, 1964-1965թթ. ՍՍՀՄ արտգործների մինիստրության Մերձավոր Արևելքի երկրների բաժնի երրորդ քարտուղար, 1965-1966թթ. նույն բաժնում

երկրորդ քարտուղար, 1966-1967թթ. երկրորդ քարտուղար սովետական դեսպանատանը ԱՄՀ-ում, 1970-1978թթ. Եմենում՝ Սովետական Միության դեսպանատան խորհրդատու:

1973-1974 թթ. ՍՍՀՄ արտգործների մինիստրությունում՝ ղեկավար դիվանագիտական աշխատողների կուրսերի ունկնդիր:

1974թ. ՍՍՀՄ արտգործմինիստրության Մերձավոր Արևելքի երկրների բաժնի խորհրդատու:

1978-1980 թթ. ՍՍՀՄ դեսպանության խորհրդատու՝ Ալժիրում:

1980-1985թթ. ՍՍՀՄ դեսպանատան խորհրդատու Լիբիայում:

1985-1986թթ. ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մերձավոր Արևելքի երկրների բաժնի խորհրդատու:

1986-1990թթ. ՍՍՀՄ գլխավոր հյուպատոս Մուկալլեում:

Ս. Առաքելյանը որպես հմայիչ, մարդամոտ, լեզուների, արաբների կենցաղի և սովորությունների փայլուն գիտակ, մեծ հարգանք էր վայելում ինչպես իր պաշտոնակիցների, այնպես էլ արաբական պետությունների պետական գործիչների մոտ:

Ս. Առաքելյանը, ՍՍՀՄ արտգործների մինիստրության լավագույն արաբագետներից մեկը, հաճախ հանդես էր գալիս Սովետական Միության ղեկավարության և արաբական պետությունների լիդերների միջև պատասխանատու բանակցությունների ժամանակ որպես թարգմանիչ: Նրան լավ գիտեր և բարձր էր գնահատում Եգիպտոսի առաջին պրեզիդենտ Աբդել Նասերը: Ս. Առաքելյանը Եգիպտոսում աշխատած ժամանակ սերտ կապեր է ստեղծել տեղի հայկական համայնքի հետ, հաճախ հանդես է եկել Եգիպտոսի հայերի առաջ, ամեն կերպ նպաստել է ընդլայնել և ամրապնդել նրանց կապը Հա-

յաստանի հետ: Դիվանագիտական ասպարեզում կատարած ծառայությունների համար Ս. Առաքելյանը պարգևատրել է «Պատվո նշան», շքանշանով, եգիպտական «Ծառայության համար» շքանշանով, «Ասուանի բարձրադիր ամբարտակի» մեդալով, որպես ՍՍՀՄ և Եգիպտոսի բարեկամության սիմվոլ և «Հայրենական մեծ պատերազմում աշխատանքի արիության» մեդալով:

ՆԱՐԻՄԱՆ ԽԱՆ

Նարիման Խան, պետական գործիչ, գրող: Սողոմոն Ենիկոլոպյանի (Ենիկոլոպ-Մամիկոնյան) որդին: 1878-1904 թթ. եղել է Իրանի դեսպանը Վիեննայում՝ նաև Հռոմում: Գրել է պարսկերեն բանաստեղծություններ, կատարել գեղանկարներ պարսկական կյանքից:

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՈՎ

Տիգրան Կարախանովը ծնվել է 1944թ. Մոսկվայում: 1994-1998թթ. Ռուսաստանի Դաշնության արտակարգ լիազոր դեսպան՝ Մավրիտանիայում, իսկ 1998թ Ռ.Դ. դեսպան Սլովենիայում:

2002թ. զբաղեցնում է Մոսկվայի մարզի կառավարության արտաքին տնտեսական կապերի մինիստրի պաշտոնը:

ԱՆՋԵՅ ԿՇԵՉՈՒՆՈՎԻՉ

Անջեյ Կշեչունովիչը ծնվել է 1930 թ. Լվովում՝ հայազգի ազնվականի ընտանիքում: Ապուպապը՝ Կորնել Կշեչունովիչը և պապը՝ Ալեքսանդր Կշեչունովիչը եղել են Գալիցիայի սեյմի պատգամավորներ, հայրը՝ Կորնել Կշեչունովիչը եղել է Լեհաստանի սեյմի պատգամավոր:

Միջնակարգ դպրոցն ավարտել է Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում:

1951թ. Շոտլանդիայի Ս. Էնդրյուի համալսարանի պատմության մագիստրոս, այնուհետև՝ Ֆրանսիայի Սորբոնի համալսարանի քաղաքական գիտությունների հետդիպլոմային դասընթացներ:

1954-88 թթ. «Ազատ Եվրոպա» ռադիոյի աշխատակից, այնուհետև՝ խմբագիր, նորությունների բաժնի տնօրեն, ռադիոյի տնօրենի տեղակալ (Մյունխեն):

1989-92 թթ. Լեհական գրադարանի և Ադամ Միցկևիչի անվան թանգարանի տնօրեն (Փարիզ):

1992-97 թթ. ՆԱՏՕ-ում Լեհաստանի առաջին դեսպան, Բելգիայի Թագավորությունում և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում: ՆԱՏՕ-ին Լեհաստանի անդամակցության ԼՀ կառավարության բանակցային խմբի անդամ:

1998-1999 թթ. Օքսֆորդի համալսարանի ս. Էնթրնի քոլեջի «ավագ ասոցիացված անդամ» (Senior Associate Member):

2002 թ.-ից, Չենստոխովա քաղաքի (Լեհաստան) Պոլոնիական ակադեմիայի դիվանագիտական դպրոցի «այցելող» (visiting) պրոֆեսոր:

Մենագրություններ՝ «Քայլ առ քայլ լեհական ճանապարհ դեպի ՆԱՏՕ» (Կրակով, 1999) «Krok po kroku polskadroga do NATO», Krakov 1999), «Դիվանագիտական պրակտիկայի ներածություն» (Չենստոխովա, 2004), «Wprowadzenie do praktyki dyplomatycznei». Czestochown 2004), Շոտլանդիայի ս. Էնդրյուի համալսարանի գլխավոր խորհրդի անդամ, Փարիզի Լեհական պատմագրական ընկերության անդամ, Մալթայի ասպետ:

Պարգևներ՝ Լեհաստանի Վերածննդի շքանշանի կոմանդոր, Բելգիայի Լեոպոլդի շքանշան, Լյուքսեմբուրգի Արժանիքի սպայական խաչ, Մալթյան խաչ:

ՍԱՀԱԿ ՍԱՐԳՍԻ ԴԱՇՈՅԱՆ

Սահակ Դաշոյանը ծնվել է 1903թ. Զանգլիկ գյուղում (Ադրբեջանի Դաշքեսանի շրջան), սովետական դիվանագետ, երկրորդ կարգի արտակարգ և լիազոր դեսպանորդ (1962թ.), ՍՄԿԿ անդամ 1931 թվականից:

1936թ. ավարտել է Մոսկվայի լեռնային և 1938թ. Մոսկվայի արևելագիտության ինստիտուտները: 1939թ. անցել է դիվանագիտական աշխատանքի: Եղել է Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության ՍՍՀՄ դեսպանության առաջին խորհրդական, դեսպանորդ խորհրդական (1943-1946, 1955-1957, 1962-1965):

1943-1946, 1965-1974թթ.-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կենտրոնական ապարատում պատասխանատու աշխատող:

1946-1947թթ. մասնակցել է հայերի հայրենադարձության կազմակերպման գործին: Զինվորական կոչում՝ գեներալ-լեյտենանտ:

ՍԵՐԽԻՈ ԹՈՒԹԻԿՅԱՆ



Ծնվել է 21.06.1939 թ. Պորտո Ալեգրեում, (Հարավային Ռիո Գրանդե, Բրազիլիա) Պարգև և Օլգա Թութիկյանների ընտանիքում: Դեսպան (առաջին դասի), նախարար:

13.08.1961թ. Երկրորդ լեյտենանտ Ռ/2-Բրազիլիական բանակ:

15.01.1962թ. Պորտո Ալեգրեի դատարանում աշխատել է որպես դատապաշտպան:

15.12.1963թ. Սոցիալական և Իրավաբանական գիտությունների դիպլոմավորված մասնագետ: Հարավային Ռիո Գրանդեի Դաշնային համալսարան:

19.06.1964թ. Հանրապետության նախագահի աշխատակազմի ծառայող:

10.03.1965թ. Ստացել է գիտական աստիճան դատական գործում, Ռիո դե Ժանեյրոյի իրավունքի ազգային ֆակուլտետում:

10.03.1966թ. Ուսանել է Ռիո Բրանկոյի ինստիտուտում:

10.03.1968թ. Դիվանագիտական և հյուպատոսական գործնական դասընթացներ է անցել:

10.02.1970թ. Արևելյան լեզուների դասընթացներ է անցել (պարսկերեն, արաբերեն Թեհրանի) Մելի համալսարանում:

10.05.1982թ. Բարձրագույն դասընթացներ է անցել Ռիո Բրանկոյի ինստիտուտում, թեզ է գրել Իրանի և Իրաքի վերաբերյալ:

Դիվանագիտական ծառայությունները.

24.11.1967թ. Երրորդ քարտուղար:
11.08.1971թ. Երկրորդ քարտուղար:
25.12.1977թ. Առաջին քարտուղար:
27.01.1980թ. Խորհրդական:
17.12.1987թ. Երկրորդ դասի նախարար:
18.12.1996թ. Առաջին դասի նախարար:
Առաքելություն Բրազիլիայում.
24.11.1967-1970 թթ. Աշխատակազմի ղեկավարի օգնական:

ԷԴՎԱՐԴ ՓԻԹԵՐ ՋԵՐԵՃՅԱՆ (ՋԵՐԵՋՅԱՆ)

Էդվարդ Ջերեճյան ծնվել է 1939թ.-ին Նյու Յորքում: 1961թ.-ին ավարտել է Ջորջթաունի համալսարանի դիվանագիտական դպրոցի բակալավրիատը: 1961-1962թթ.-ին ծառայել է ԱՄՆ բանակի՝ Հարավային Կորեայում տեղակայված ստորաբաժանումներում: 1962թ.-ին ընդունվել է ԱՄՆ դիվանագիտական ծառայության, 1962-1975թթ.-ին տարբեր պաշտոններ է վարել Մոսկվայում, Ամմանում և Բեյրութում՝ ԱՄՆ դեսպանություններում, Կասաբլանկայում՝ գլխավոր հյուպատոսությունում: 1975-1977թթ.-ին նշանակվել է Բորդոյում ԱՄՆ գլխավոր հյուպատոս, 1979-1981թթ.-ին Մոսկվայում՝ ամերիկյան դեսպանության քաղաքական բաժնի վարիչ, 1981-1984թթ.-ին Հորդանանում՝ ԱՄՆ դեսպանի տեղակալ, 1985թ.-ին նշանակվել է ԱՄՆ նախագահի հատուկ օգնական, արտաքին քաղաքականության հարցերով մամուլի քարտուղարի տեղակալ, 1986թ.-ին՝ պետքարտուղարի փոխօգնական, Միջին Արևելքի և Հարավային Ասիայի վարչության պետի տեղակալ, 1988թ.-ին՝ Սիրիայում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան: 1991թ.-ին նշանակվել է պետքարտուղարի օգնական՝ Միջին Վարչության հետ, 1993թ.-ին՝ Իսրայելում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան:

1994թ. օգոստոսից աշխատանքի է անցել Ռայսի համալսարանում (Տեքսաս), Ջեյմս Բեյքերի անվան քաղաքագիտության հաստատության (Բեյքերի հաստատություն) տնօրենի պաշտոնում: Համարվում է միջինարևելյան տարածաշրջանի, իսրայելա-արաբական հակամարտության գծով ամերիկյան առաջատար մասնագետ: 1999թ. ԱՄՆ իշխանությունների

խնդրանքով միջնորդական առաքելությամբ մասնակցել է ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացին:

Ջերեճյանը տիրապետում է անգլերեն, արաբերեն, ռուսերեն, ֆրանսերեն և հայերեն լեզուների: Ստացել է պետական պարգևներ ԱՄՆ նախագահից, պետքարտուղարությունից: 1992թ.-ին ստացել է Ջորջթաունի համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան:

ԹԱՎՐՈՇՅԱՆ

Թավրոշյան՝ դիվանագետ: Ծնվել է լեհահայ ընտանիքում: 1938 թ. Լիտվայի կառավարության կողմից նշանակվել է Վարշավայի դեսպան: Կարևոր դեր է կատարել լեհ-լիտվական հակամարտության կարգավորման գործում:

ՊԱՇԻՉ ՆԻԿՈԼԱ

Պաշիչ Նիկոլա (1845-1926): Պետական գործիչ: Նախնիները եղել են Փաշայաններ: 1868-1873 թթ. ուսանել է Ցյուրիխի պոլիտեխնիկ ինստիտուտում: Եղել է պահպանողական կուսակցության կազմակերպիչ և ղեկավար: 1880-ական թվականներին վտարանդվել է Հարավսլավիայից: 1889-ին վերադարձել է Սերբիա և գլխավորել պահպանողական կուսակցությունը: Եղել է Սերբիայի վարչապետը և արտաքին գործերի նախարարը (1891-92, 1904-18), դեսպանորդ Ռուսաստանում (1893-94), Սերբերի, Հորվաթների և Սլովենների Միացյալ Թագավորության վարչապետ (1921-26): Նրա հայկական ծագումը վկայել է Հարավսլավիայում բնակված տնտեսագետ Վահան Թոթոմյանցն իր «Հայերի դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ» գրքույկում:

ԱՍԱՏՈՒՐ ԱՀԱՐՈՆ ՆԻԿՈԼԱՅԻ

Ասատուր Ահարոնը ծնվել է 1944թ: Ավարտել է Մ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանին կից արևելյան լեզուների ինստիտուտը 1967թ:

1968թ.-ից աշխատել է ԱԳՄ (ՍՍՀՄ) և ԱԳՄ (ՌԴ) կենտրոնական ապարատում և արտասահմանում տարբեր դիվանագիտական պաշտոններում:

1994-1999թթ. Ա.Ասատուրն աշխատել է Մավրիկյան Հանրապետությունում՝ ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան, 2000թ. նա զբաղեցրել է Դաշնության սուբյեկտների կապի դեպարտամենտի դիրեկտորի տեղակալի պաշտոնը, պառլամենտի և ՌԴ ԱԳՄ հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ:

2002-2006թթ. աշխատել է Մակեդոնիայի Հանրապետությունում՝ ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան:

Տիրապետում է անգլերեն և ֆրանսերեն և լեզուների:

Ռուսաստանի Դաշնության նախագահի հրամանը.

Ասատուր Ահարոն Նիկոլային շնորհել արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան (ռանգ):

ՌԴ նախագահ Վ. Վ.Պուտին.

Մոսկվա, Կրեմլ, 8 հունիսի, 2004թ. 854:

ԻՎԱՆ ԼԵՈՊՈԼԴԻ ԼՈՐԵՆՑ

Իվան Լորենցը ծնվել է 1890թ. Լոձում, դիվանագետ: 1919թ. ՌՍԴ(բ) անդամ: Հայրը եղել է հաշվապահ: 1913թ. կրթություն է ստացել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և 1915թ. Միխայլովյան հրանոթային ուսումնարանում: Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից՝ պորուչիկ: 1917թ. հոկտեմբերին ընտրվում է հրանոթային դիվիզիոնի հրամանատար: Գերմանացիների հետ Բրեստ-Լիտովսկում բանակցությունների ժամանակ Ի. Լորենցը գործուղվում է սովետական պատվիրավության կազմում, որպես թարգմանիչ: 1918թ. ՌՍՖՍՀ-ի լիազոր-ներկայացուցչության քարտուղար Բեռլինում, որտեղից արտաքսել են բոլոր մնացած կարմիր դիվանագետներին՝ կոմունիստական ապստամբության նախապատրաստելու և մասնակցելու համար: Ի. Լորենցը 1919-1920թթ. ծառայել է կարմիր բանակում, որպես 15-րդ բանակի հրանոթային կոմիսար:

1920թ. տեղափոխվել է ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմատի գերատեսչություն: Նա մասնակցել է 1920թ. Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի հետ բանակցություններին, որպես ավագ քարտուղար սովետական պատվիրավության կազմում: 1920թ. Լատվիայում՝ լիազոր, ներկայացուցիչում՝ քարտուղար, 1921-1923թթ. Վարշավայում՝ լիազոր, ներկայացուցչությունում՝ քարտուղար և հետո խորհրդատու: Լեհական կառավարության հետ ստորագրել է մի շարք պայմա-

նագրեր: Վարշավայում առողջապահության կոնֆերանսում սովետական դելեգացիայի նախագահ: Ի. Լորենցը 1923թ. Լիտվայում լիազոր-ներկայացուցիչ, 1925թ.-ից՝ Ֆինլանդիայում, 1927-1929թթ.՝ Լատվիայում:

1931թ. ՍՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատում, իսկ 1935թ.-ից լիազոր-ներկայացուցիչ Ավստրիայում, մինչև նրա բռնի միացումը Գերմանիային: 1941թ. գնդակահարվել է: Հետմահու արդարացվել է:

ԼԵՈՆԻԴ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿԵՐԵՍՏԵՋԻՅԱՆՑ

Լեոնիդ Կերեստեջիյանցը ծնվել է 1931թ.: Դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան: 1955թ. ավարտել է Լենինգրադի նավաշինարարական ինստիտուտը: 1970-1975թթ. Հարավսլավիայում եղել է ՍՍՀՄ դեսպանության քարտուղար և հետո խորհրդատու: 1975-1978-ից ՍՍՀՄ ԱԳՄ արտասահմանյան երկրների կուլտուրական կապերի բաժնի սեկտորի վարիչ: 1978-86թթ. աշխատել է Բուլղարիայում Սովետական Միության դեսպանատանը կուլտուրայի գծով կցորդ (ատաշե), խորհրդատու-դեսպանորդ:

1986-1987թթ. Սովետական Միության ԱԳՄ կադրերի և ուսումնական հաստատությունների գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ: 1987-1989թթ. ՍՍՀՄ արտասահմանյան տուրիզմի պետական կոմիտեի նախագահի տեղակալ: 1992-1996թթ. Խորվաթիայում՝ ՌԴ դեսպան: 1997-1999թթ. Բուլղարիայի Հանրապետությունում՝ ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան:

Լեոնիդ Կերեստեջիյանցին շնորհվել է Սվիշտովի (Բուլղարիա) պատվավոր քաղաքացու կոչում:

ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Լ.Ռոբերտ Մարգարյանը ծնվել է 1949թ. Բաքվում (Ադրբեջան): 1978թ. ավարտել է Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի կից Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտը, պատմական գիտությունների թեկնածու: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1966թ. «Բաքգազ» տրեստում որպես փականագործ (Բաքու): 1970-1972թթ. անցել է զինվորական ժամկետային ծառայության: 1978-1980թթ. աշխատել է սովետական Խաղաղության պաշտպանության կոմիտեում՝ ռեֆերենտ: 1980-1985թթ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում՝ գիտական աշխատակից: 1985-1989թթ. համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1989-1990թթ. ՍՍՀՄ Միության Գերագույն խորհրդի նախագահի օգնական: 1990-1991թթ. ՍՍՀՄ Նախագահական խորհրդի Եվ. Պրիմակովի օգնական և 1991թ. Սովետական Միության անվտանգության խորհրդի օգնական: 1991-1992թ. ՍՍՀՄ ՊԱԿ առաջին գլխավոր վարչության պետի օգնական: 1991-1995թթ. Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության ղեկավարի օգնական (ղեկավար Եվ. Պրիմակով): 1996-1998թթ. Ռուսաստանի Դաշնության ԱԳՄ մինիստրի քարտուղարության դեպարտամենտի դիրեկտոր: 1998-1999թթ. ՌԴ (Եվ.Պրիմակով) կառավարության նախագահի քարտուղարության ղեկավար:

1999-2006թթ. ՌԴ ԱԳՄ դեսպան հատուկ հանձնարարությամբ: 1999-2006թթ. Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սիրիայում: Ռ.Մարգարյանը գեներալ-մայորի զինվորական կոչում ունի, արտակարգ և լիազոր դեսպանի աստիճան, պարգևատրված է «Բարեկամության» շքանշանով, տիրապետում է արաբերեն և անգլերեն լեզուների: Ռ.Մարգարյանը մի շարք գիտահետազոտական աշխատությունների հեղինակ է՝ «Հայոց լեզվի սկզբնաբառի բառարան», «Կուլտուրայի և ժամանակակից գիտություններ» և այլ գրքերի:

ԺԱՆ ԿՈԿԻՅԱՆ

Կոկիյան Ժանը ծնվել է 1921թ. Բեյրութում, պետական գործիչ: Ուսանել է առևտրի դպրոցում, իրավունքի լիցեյում և Բեյրութի Սեն Ջոզեֆ և Սեն Պիեռ համալսարանների քաղաքական գիտությունների բաժանմունքում: Եղել է Լիբանանի դեսպանը Կամերունում, Պերուում, Էկվադորում և Բոլիվիայում: Արժանացել է մի շարք պարգևների:



ՄԱՐԿԼԵՆ ԻՎԱՆՈՎԻՉ (ՀՈՎՀԱՆԵՍԻ) ԼԱԶՐԵՎ

Մարկլեն Իվանովիչ Լազրևը ծնվել է 1920թ. Երևանում (Հայաստան), հայ սովետական իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (1961թ.), պրոֆեսոր (1963թ.), ՍՄԿԿ անդամ 1944 թվականից:

1941-1947 թվականներին Մ. Լազրևը պատասխանատու աշխատանքներ է կատարել ՍՍՀՄ դատախազությունում, արտաքին առևտրի մինիստրության մարմիններում, մասնավորապես մասնակցել լենդ-լիզի պայմանագրի կնքմանը: (Լենդ-լիզ (անգլերեն) «Lend-lease» տալ փոխարինաբար և Lease-տալ վարձակալության):

Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945) տարիներին ԱՄՆ-ին դաշնակից՝ հակահիտլերյան կոալիցիայի երկրներին վարձակալությամբ կամ փոխարինաբար սպառազինություն, զինամթերք, ստրատեգիական հումք, մթերքներ և այլ ապրանքներ տալու համակարգ: Լենդ-լիզի օրենքն ԱՄՆ-ի Կոնգրեսը ընդունել է 1941 թվականի մարտի 11-ին, իսկ մատակարարումների դադարեցման մասին ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարել է 1945թ. օգոստոսի 21-ին: Լենդ-լիզով ԱՄՆ-ի ծախսերը 1941-1945թթ. կազմեցին 46 մլդ դոլար, պատերազմի տարիներին ԱՄՆ-ի ռազմական ողջ ծախսերի 13%-ը և արտասահմանյան՝ 50%-ը: Լենդ-լիզով Բրիտանական կայսրության երկրներին, հիմնականում Մեծ

Բրիտանիային, մատակարարումները կազմեցին 30269մլն դոլար, ՍՍՀՄ-ին՝ 9800, Ֆրանսիային՝ 1406, Չինաստանին՝ 631 մլն դոլար:

Իր հերթին ԱՄՆ-ը հետադարձ լենդ-լիզի կարգով պատերազմի տարիներին դաշնակից պետություններից ստացավ 4.35 մլրդ դոլլարի տարբեր ապրանքներ և ծառայություններ: Լենդ-լիզով մատակարարումները զգալիորեն նպաստեցին պատերազմի տարիներին ԱՄՆ-ի արտադրության ընդլայնմանը և կառավարական պատվերների հաշվին մոնոպոլիաների հարստացմանը:

Մ. Լազրևը 1950-1970թթ.-ին դասավանդել է ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության բարձրագույն դիվանագիտական դպրոցում, 1970-ից աշխատել է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտի միջազգային ծովային, օդային և տիեզերական իրավունքի սեկտորում որպես սեկտորի վարիչ:

Մ. Լազրևը 1945-1968 թվականներին սովետական պատվիրակության կազմում մասնակցել է ՄԱԿ-ի, միջազգային այլ կոնֆերանսների, կոնգրեսների և կոմիտեների աշխատանքներին:

Հեղինակ է Ժամանակակից միջազգային ծովային իրավունք», "Империалистические военные базы на чужых территориях и международное право", համահեղինակ է "Империали", "Международное право" աշխատությունների:

ԲԵՐՐԻ (ՊԱՐՈՒՅՐ) ՋՈՐԹՅԱՆ

Բերրի Ջորթյանը ծնվել է 1920թ.-ին Թուրքիայում, Կուտահյա քաղաքում, 1923թ.-ին ընտանիքը տեղափոխվել է ԱՄՆ, Կոնեկտիկուտի նահանգ, Նյու Հեյվըն քաղաք: 1941թ.-ին ավարտել է Յեյլի համալսարանը, ստացել է միջազգային հարաբերությունների բակալավրի աստիճան: 1953թ.-ին ավարտել է Նյու Յորքի համալսարանի իրավագիտության մագիստրատուրան: 1941-1942թթ. լրագրական գործունեություն է վարել Վերմոնտի «Քալեդոնիեն Ռեքըրդ» թերթում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զորակոչվել է որպես ԱՄՆ ծովային հետևակ, մասնակցել է Խաղաղ օվկիանոսի ռազմաճակատի պատերազմական գործողություններին, մասնակցել է Օկինավա կղզու ազատագրման գործողությանը: 1945թ.-ին զորացրվել է կապիտանի կոչումով, հաշվառվել է ծովային հետևակի պահեստազորում մինչև 1973թ., հասնելով գնդապետի կոչման: 1946թ.-ին վերադարձել է լրագրության ոլորտ, աշխատել է «Նյու Հեյվըն Ռեջիսթըր» թերթում «Սի-Բի-Էս» հեռուստաընկերությունում, իսկ 1948թ.-ին աշխատանքի է անցել «Ամերիկայի ձայն» ռադիոկայանում: Որպես «Ամերիկայի ձայնի» թղթակից, գործուղվել է Կորեական պատերազմի ռազմաճակատ, 1955թ.-ին Բանդուգի համաժողով, իսկ 1956թ.-ին եղել «Ամերիկայի ձայնի» ԽՍՀՄ այցելած առաջին պատվիրակության կազմում:

1961թ. ընդունվել է ԱՄՆ դիվանագիտական ծառայության, աշխատանքի է գործուղվել Հնդկաստանում ԱՄՆ դեսպանություն, որտեղ վարել է տեղեկատվական բաժնի վարիչի տեղակալի պաշտոնը: 1964թ.-ին գործուղվել է Հարավային Վիետնամ որպես ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության մամուլի քարտուղար, այնուհետև հասարակայնության հետ կապերի միավորված բաժնի վարիչ: 1968թ. աշխատանքի է անցել «Թայմ» լրատվական կորպորացիայում, վարել է կառավարության հետ կապերի գծով փոխնախագահի, այնուհետև կորպորացիայի կաբելային հեռուստատեսության բաժանմունքի նախագահի պաշտոնները: 1980թ.-ին ընտրվել է Վաշինգտոնի և Բալթիմորի գործարարների տարածաշրջանային միության նախագահ, 1982թ.-ից զբաղվել է մասնավոր խորհրդատվական փաստաբանական գործունեությամբ:

Պարույր Ջորթյանը զբաղվել է ակտիվ հասարակական գործունեությամբ, եղել է ԱՄՆ հասարակական դիվանագիտության հիմնադրամի նախագահ, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի կողմից նշանակվել է «Ռադիո Ազատություն» «Ռադիո ազատ Եվրոպա» ռադիոկայանի հոգաբարձուների խորհրդի անդամ: 1969թ.-ից անդամակցել է Ամերիկյան ռազմական ակադեմիայի (Ուեսթ-Փոյնթ)՝ քաղաքացիական հասարակայնության հետ կապերի կոմիտեում:

25 տարվա ընթացքում եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական խորհրդի անդամ: 1984-1986թթ. եղել է Ամերիկայի հայկական համագումարի նախագահ: Ներկայումս հասարակական հիմունքներով աջակցում է ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության գործունեությանը:

Պ. Ջորթյանը արժանացել է բազմաթիվ ԱՄՆ և արտասահմանյան պարգևների և մեդալների, այդ թվում ռազմական մեդալների:

ԳԵՈՐԳԻ ԱՐՏԱՇԵՍԻ ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆՑ

Գեորգի Արտաշեսի Տեր-Ղազարյանցը ծնվել է 1923թ. բանվորի ընտանիքում, Բաքու քաղաքում (Ադրբեջան): 1941թ. ավարտել է Բաքվի միջնակարգ դպրոցը: Հայրենական մեծ պատերազմը սկսում է հետևակային զինվորից, ավարտում է գվարդիայի կապիտանի կոչումով: 1942թ. օգոստոսից մինչև 1943թ. Գ. Տեր-Ղազարյանցն ակտիվ մասնակցություն է ունենում գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ մղված մարտերում, որի ընթացքում երկու անգամ վիրավորվում է: Առաջին մարտական մեդալը՝ «За Отвагу», ստացել է 1942 թվականի աշնանը: 1942թ. դեկտեմբերին Գ.Տեր-Ղազարյանցը ռազմաճակատում ընդունվում է ՍՄԿԿ շարքերը: Սովետական բանակի շարքերում Գ.Տեր-Ղազարյանցը ծառայել է տասը տարի: Սովետական բանակում ծառայելիս նա զբաղեցրել է մի շարք ղեկավար կոմերիտական պաշտոններ: Սկզբում նա եղել է գումարտակի կոմերիտմիության կազմակերպության քարտուղար, հետո գնդի, բանակի քաղբաժնի ավագ հրահանգիչ կոմերիտմիության աշխատանքների գծով: Պատերազմից հետո նրան ուղարկում են սովորելու Վ. Ի. Լենինի անվան ռազմա-քաղաքական ակադեմիա: Ավարտելուց հետո Գ. Տեր-Ղազարյանցին նշանակում են Երևանում հայկական Թամանյանի անվան դիվիզիայի քաղբաժնի պետի օգնական, կոմերտմիության գծով: 1950 թվականին Գ. Տեր-Ղազարյանցն ընտրվում է ՀԼԿԵՄ կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար, այդ պաշտոնում աշխատում է մինչև 1955 թվականի դեկտեմբերը:

1955թ. վերջերին նրան տեղափոխում են Մոսկվա, նշանակում են Սովետական երիտասարդության հակաֆաշիստական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, իսկ հետո 1957թ. նշանակում են, Համ ԼԿԵՄ միջազգային բաժնի վարիչ:

1958 թվականին Գ.Տեր-Ղազարյանցին նշանակում են ՍՄԿԿ Կենտկոմի սոցիալիստական երկրների կապի բաժնում որպես ավագ ռեֆերենտ, որն այն ժամանակ ղեկավարում էր ապագա ՍՄԿԿ գլխավոր քարտուղար Յու.Անդրոպովը:

1961թ. փետրվարին Գ. Տեր-Ղազարյանցին Հայաստանի կոմկուսի պլենումը ընտրում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար, 1966 թվականի մարտին Հայաստանի կոմկուսի ԿԿ երկրորդ քարտուղար: Այդ տարիներին՝ Հայաստանում աշխուժացում նկատվեց հասարակական-քաղաքական կյանքում: Ընդարձակվեց հայկական սփյուռքի կապը, պատմական հայրենիքի՝ Հայաստանի հետ: Լայնորեն նշվեց Օսմանյան կայսրությունում 1915թ. ցեղասպանության զոհերի 50-ամյա տարեդարձը: Երևանում կառուցվեց ցեղասպանության հուշարձան Ծիծեռնակաբերդում: Հանրապետությունում ստեղծվեց ռեաբիլիտացիայի հանձնաժողով Գ.Տեր-Ղազարյանցի գլխավորությամբ, որը վերականգնեց անարդարցի դեպրեսիայի ենթարկված շատ ազնիվ, բարի անուններ:

1973 թվականին Գ.Տեր Ղազարյանիցին նշանակում են Սովետական Միության արտակարգ լիազոր դեսպան Սենեգալի Հանրապետությունում և համատեղության կարգով արտակարգ լիազոր դեսպան Գամբիայի Հանրապետությունում: (Գամբիան պետություն է Արևմտյան Աֆրիկայում, Գամբիա գետի ստորին հոսանքի շրջանում: Մտնում է Ազգերի բրիտանական համագործակցության մեջ: Սահմանակից է Սենեգալին, արևմտյան ափերը ողողում է Ատլանտյան օվկիանոսը: Տարածությունը 11, 3 հզ.կմ², բնակչությունը՝ 49 հազար (1973) պաշտոնական լեզուն անգլերենն է: Մայրաքաղաք Բանջալն է:

Սենեգալի Հանրապետություն. պետություն Արևմտյան Աֆրիկայում, սահմանակից է Մավրիտանիային, Մալիին, Գվինեային և Գվինա-Բիսաուին: Տարածությունը 196,2 հազ.կմ² է, բնակչությունը՝ 5,8 մլն: Մայրաքաղաքն է Դակարը):

1981թվականին Գ.Տեր-Ղազարյանցին բաժին ընկավ նոր ստեղծված Զիմբաբեի Հանրապետությունում բացել ՍՍՀՄ դեսպանատուն. ՍՍՀՄ-ը լրջորեն մտադրված է այդ երկրի ղեկավարության և հասարակության հետ հաստատել բարի հարաբերություններ: 1987 թվականի մարտին, 14 տարի ապրելով Աֆրիկայում, Գ.Տեր-Ղազարյանցը վերադարձավ հայրենիք և նշանակվեց Համառուսաստանյան հեղինակային իրավունքի գործակալության պետի առաջին տեղակալ, հետագայում համապատասխան վերակառուցումից հետո, նա դարձավ Ռուսաստանի հեղինակային ընկերության վարչության փոխնախագահ և հետո՝ նախագահ:

ՍՄԿԿ 23-րդ համագումարում Գ.Տեր-Ղազարյանցն ընտրվում է ՍՄԿԿ-ի կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամ: Հանդիսացել է ՍՍՀՄ Գերագույն խորհրդի 7-րդ գումարման դեպուտատ: Բազմիցս նա ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ: Գ.Տեր-Ղազարյանցը պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի, երկու «Աշխատանքային դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով, մեդալներով, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ու Լեհաստանի շքանշաններով, Հայկական ՍՍՀ պատվոգրով և ՀամԼԿԵՄ պատվոգրով:

2004 թվականի հոկտեմբերին «Ռուսաստանի հայերի միության» վարչության նիստում, ՌՀՄ -ի պրեզիդենտի առաջարկությամբ Գ.Տեր-Ղազարյանցին ընտրեցին վարչության անդամ և առաջին փոխպրեզիդենտ:

ՄԻՐԶԱ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ (ՆԱԶԵՄ ՕԼ-ԴՈՎԼԵ)

Հայազգի իրանական ականավոր գործիչ, դիվանագետ, լուսավորիչ, հրապարակախոս, գրող Հովսեփ Հակոբի Մելքումյանը (Մելքում խան) ծնվել է Նոր Ջուղայում 1833 թվականին: Նախնական կրթությունը ստացել է Թեհրանի վարժարանում, ապա ուսումը շարունակել է Փարիզի Մուրադյանի վարժարանում և հետո պոլիտեխնիկ ուսումնարանում: Հ. Մելքումյանը Փարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո վերադառնում է Թեհրան:

Միրզա Մելքում խանի քաղաքական գործունեությունը զուգորդվել է Իրանում տեղի ունեցած կարևոր իրադարձություններով, որը հանգուցալուծվում է Իրանի սահմանադրական հեղափոխության հաղթանակով: Նա Ֆրանսիայից վերադառնալուց հետո ձեռնամուխ է լինում հիմնել «Արվեստների տուն» քոլեջը: Նույն թվականին որպես թարգմանիչ աշխատանքի է անցնում Իրանի արտաքին գործերի մինիստրությունում: Թեհրանի համալսարանի հիմնադրումից հետո զբաղվում է նաև դասախոսական աշխատանքով: 1856-1857 թվականներին Հ. Մելքումյանը պարսկական պատվիրակության կազմում Փարիզում մասնակցել է Մեծ Բրիտանիայի հետ հաշտության պայմանագրի կնքմանը՝ թարգմանիչի անվան տակ՝ որպես քաղաքական հարցերի խորհրդատու: Վե-

ռադառնալով Իրան նա արժանանում է շահի ուշադրությանը և շահական հրովարտակով ստանում գեներալի կոչում:

1858 թվականից երկրի բարեփոխումներին նվիրված Մելքումյանի գործունեության սկիզբը դրվում է հենց այդ թվականից: Իշխանության կառույցների բարեփոխումների առաջին նախագիծը, որը կոչվում էր «Բարեփոխումների մատյան» հանձնվում է շահին, որին հաջորդում են նաև այլ նախաձեռնություններ: Այդ ընկերությունը որտեղ ընդգրկվել էին Իրանի առաջադեմ մտածողներ պրոպագանդում էր Իրանը եվրոպական ձևով բարեփոխելու, ինչպես նաև բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախապատրաստելու Հ. Մելքումյանի ծրագրերը: Իրանի շահը նրան շնորհել է «Նազիմ էդ Դոուլե» (փերության բարեկարգիչ) տիտղոսը: Նույն թվականին նրա կողմից հիմնադրվում է Իրանի ֆրանկոմասոնական առաջին քաղաքական վեհաժողովը:

1852 թ. նա ընտրվում է Ֆրանսիայի արևելյան ընկերության պատվավոր անդամ: Աստիճանաբար ընդլայնվում է Միրզա Մելքում խանի ազդեցության ոլորտը, որի պատճառով էլ ծայր է առնում վերջինիս նկատմամբ թշնամանքը: Ի վերջո, շահի կարգադրությամբ փակվում է Միրզա Մելքում խանի հիմնադրած ֆրանկոմասոնների գրասենյակը, նրան ձերբակալում են և աքսորում երկրից դուրս: 1871թ. մինչև 1872թ. աշխատել է Իրանի պրեմիեր մինիստրի խորհրդական, ծավալել է հրապարակախոսական լայն գործունեություն: 1873թ. նշանակվել է Պարսկաստանի դեսպան Մեծ Բրիտանիայում: 1878-ին նա մասնակցել է Բեռլինի կոնգրեսին, որտեղ պաշտպանել է Իրանի շահերը ընդդեմ Թուրքիայի: Այդ ծառայության համար շահը Հովսեփ Մելքումյանին շնորհել է «Մեծ դեսպան» ու «Իշխան» տիտղոսները և նշանակել նաև Պարսկաստանի դեսպան Գերմանիայում (բացի Անգլիայից):

1878թ. նա ստանում է արտակարգ և լիազոր դեսպանի կոչում:

1890-1893 թվականներին Լոնդոնում Մելքում խանը տպագրել է «Կանուն» (Օրենք) պարսկական պարբերականը, որը կարևոր դեր է խաղացել պարսկական նոր գրականության ստեղծման գործում: 1889 թվականին Հ. Մելքումյանը հեռացվեց պետական ծառայությունից, բայց 1888 թվականին Մելքում խանը ստանձնում է Իտալիայում Իրանի դեսպանի պարտականությունները:

Պարսկաստանի հասարակական, ստեղծագործական մտավորականությունը բարձր գնահատեց Մելքում խանին՝ նրան համեմատելով ֆրանսիական լուսավորիչներ Վոլտերի, Ժանժակ Ռուսոյի հետ: Հովսեփ Հակոբի Մելքումյանն իր մահկանացուն կնքեց 1906 թվականին Շվեյցարիայում:

ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՈՐԳԻ ԴԵԿԱՆՈԶՈՎ

Գեներալ-մայոր Վ. Գ. Դեկանոզովը ծնվել է 1898թվականին Բաքվում, նավթային վարչության վերահսկիչի ընտանիքում: Վ. Դեկանոզովն ավարտել է Բաքվի առաջին գիմնազիայի հինգ դասարանը, Թիֆլիսի առաջին գիմնազիան, Սարատովի և Բաքվի համալսարանների բժշկական ֆակուլտետը: Վ. Դեկանոզովն իր աշխատանքային գործունեությունը սկսել է կարմիր բանակի Բաքվի 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի որպես հատուկ ջոկատի պետ: Հետագայում աշխատել է Վրացական ԽՍՀ և Անդրկովկասի այլ վայրերում արտաքին հետախուզության և հակահետախուզության օրգաններում:

Վ. Դեկանոզովը 1931թվականից աշխատել է Վրաստանի Կ(բ)Կ կենտրոնական կոմիտեի առևտրի բաժնի վարիչ, սննդի արդյունաբերության ժողկոմ, Վրաստանի ԽՍՀ պետպլանի նախագահ, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար՝ տրանսպորտի և մատակարարման գծով:

Վ. Դեկանոզովը 1938թ. աշխատանքի է անցնում ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի պետական անվտանգության գլխավոր վարչության, խորհրդային արտաքին հետախուզության ղեկավար և որոշ ժամանակ անց, միաժամանակ, նշանակվում է հակահետախուզության ղեկավար:

1939թ. Վ. Դեկանոզովին նշանակում են ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, իսկ 1940թ. նոյեմբերին միաժամանակ նաև Գերմանիայում Խորհրդային Միության արտակարգ լիազոր դեսպան:

1947թ. սեպտեմբերին նշանակում են ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանում խորհրդային ունեցվածքի գլխավոր վարչության պետի տեղակալ, իսկ 1952թ. աշխատել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր ռադիոհաղորդումների կոմիտեի անդամ: 1953թ. ապրիլին Վրաստանի Խորհրդային Հանրապետության ներքին գործերի մինիստր: Վ.Դեկանոզովը ընտրվել է ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում Կենտկոմի անդամ, երկու անգամ ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ: Վ. Դեկանոզովը պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի, Աշխատանքային կարմիր դրոշի, Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով, երեք մեդալով, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի «Պատվավոր աշխատողի» կրծքանշանով:

Վ.Գ.Դեկանոզովը 1953 թ. ձերբակալվել է և դատապարտվել է մահապատժի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ՊԻՐԱԴՈՎ

Ալեքսանդր Սերգեյի Պիրադյան, սովետական դիվանագետ,ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան, ծնվել է 1922 թվականին Թիֆլիսում (Վրաստան): Հայրը՝ Սերգեյ Պիրադյանը ծագումով հայ է, մայրը՝ Թամարա Ջափարաձեն՝ վրացուհի: Ամուսնացած է եղել Սերգո Օրջոնոկիձեի աղջկա՝ Էթերի հետ, հետո ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Գրոմիկոյի աղջկա՝ Էմիլիի հետ: Դիվանագիտական աշխատանքի է անցել 1945 թվականից: 1945-48 թվականներին աշխատել է ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատում (1946 թվականից արտաքին գործերի մինիստրություն): Ս. Պիրադովը 1948-1949 թվականներին ունկնդրել է Համամիութենական (բ) կոմունիստական կուսակցության (բոլշևիկյան) կենտրոնական կոմիտեին կից հասարակական գիտությունների ակադեմիայում: 1950-1969 թվականներին նա անցել է գիտական դասախոսական աշխատանքի ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում, պետական անվտանգության կոմիտեի բարձրագույն դպրոցում, ներքին գործերի մինիստրության բարձրագույն դպրոցում: 1965-1972թթ. նա աշխատել է որպես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի մոլորակային տարածության իրավական պրոբլեմների հանձնաժողովի նախագահ: 1972-1982 թթ. պաշտոնավարել է Ֆրանսիայում (Փարիզ), ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից խորհրդային մշտական հանձնաժողովում:

1972 թվականին Ա. Պիրադովը հանդիսացել է ՍՍՀՄ ներկայացուցիչ մոլորակային (տիեզերական) տարածությունը

խաղաղ նպատակով օգտագործելու կոմիտեում և նրա իրավական ենթակոմիտեում: 1982 -1983 թթ. պատասխանատու աշխատանք է վարել ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կենտրոնական ապարատում: 1983 թ. ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության հատուկ հանձնարարության դեսպան:

Բազմիցս ղեկավարել է սովետական պատվիրակությունը՝ ՄԱԿ-ի տարբեր օրգանների տիեզերքի հարցերով սեսիաներին մասնակցելու ժամանակ: Դասախոսություններով հանդես է եկել արտասահմանյան երկրներում:

Ալեքսանդր Պիրադովը իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է, ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության դիվանագիտական ակադեմիայի միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Ֆեդերացիայի գիտության վաստակավոր գործիչ, միջազգային աստղագիտության ակադեմիայի իսկական անդամ: Նա հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների՝ «Միջազգային իրավունքի հարցեր», այդ թվում՝ «Կոսմոս և միջազգային իրավունք» (Մոսկվա, 1970 թվական):

ԵՂԻԱՅԱՆ Վ.

Վ. Եղիայանը ԱՄՆ-ում դիվանագետ և հասարակական գործիչ է, միջազգային «Վարբակ» ընկերության պրեզիդենտը: Գործել է ԱՄՆ-ի պրեզիդենտների՝ Նիքսոնի և Քարտերի օրոք: Դիվանագիտական հարցերով եղել է աշխարհի 115 երկրներում:

ԼԱԶՅԱՆ ՀՈՎՍԵՓ ԳԵՐԱՍԻՄ

Հովսեփ Գերասիմի Լազյանը ծնվել է 1888 թվականին Վրաստանի Ախալցխա քաղաքում: 1908-1912թթ. ծառայել է ցարական բանակում: Ծառայությունից հետո աշխատել է Ռիգայում, Բեռլինում: 1917 թվականին վերադարձել է Ռուսաստան, գործուղվել՝ Բաքու: Մասնակցել է Բաքվի կոմունային: 11-րդ կարմիր բանակի և Արևմտյան ռազմաճակատի բանակային քաղբաժնում եղել է բաժնի պետ: Դիվանագիտական պատասխանատու աշխատանք է կատարել Լոնդոնի ԽՍՀՄ դեսպանատանը:

ՏԵՐ- ՀԱԿՈԲՅԱՆ ՊԻԵՐ

Պիեր Տեր-Հակոբյանը ծնվել է 1927թ. Լաթաքիայում (Լիբանան): Ավարտել է Բեյրութի ֆրանսիական համալսարանը և Փարիզի ճարտարապետության բարձրագույն դպրոցը: Ճարտարապետական աշխատանք է կատարել Քուվեյթում, Սիրիայում, Բեյրութում: 1958թ. Պ. Տեր- Հակոբյանը հաստատվել է շվեդ կնոջ հայրենիքում: Պ. Տեր- Հակոբյանը համատեղել է դիվանագիտական գործունեության հետ ճարտարապետական աշխատանքներ: Նա Գաբոնի միակ ներկայացուցիչն է Շվեդիայում: Պ. Տեր-Հակոբյանը 30 տարի Մուլթայի Ասպետական միության պատվավոր անդամ է:

ԴԻԱՆԱ ԱՂԱԲԵԿԻ ԱԲԳԱՐ

(Առաջին հայ կին դեսպանը)

Հրապարակախոս, գրող, դիվանագիտության առաջին ներկայացուցիչ Դիանա Աղաբեկի Աբգարը, (իսկական անունը Անահիտ է, օրիորդական ազգանունը՝ Աղաբեկյան), ծնվել է Արևելյան Հնդկաստանի բրիտանական գաղութ՝ Բիրմայի մայրաքաղաք Ռանգունում: Նրա նախնիները եղել են նորջուղացիներ: Մայրը՝ Զմրուխտը, եղել է հանրահայտ հնդկահայ վաճառական, գրող, թարգմանիչ: Հոր մասին ճշգրիտ տեղեկություններ չկան: Որոշ ժամանակ անց նրա ընտանիքը տեղափոխվել է Հնդկաստանի Կալկաթա քաղաքը, որտեղ Դ.Աբգարը ստացել է անգլիական կրթություն:

1890թ.-ին Դիանան ամուսնանում է նորջուղացի Միքայել Աբգարյանի (Մայքլ Աբգար) հետ: Նրանց ամուսնությունը տեղի է ունենում Չինաստանի Հոնկոնգ քաղաքում, որից հետո նրանք Ճապոնիայի Կոբե քաղաքում մշտական բնակություն են հաստատում:

Կոբ քաղաքում Մ. Աբգարը զբաղվում է մետաքսի վաճառքով, տարբեր ապրանքների ներմուծման և արտահանման գործով:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թթ.) նախօրեին և հետագա տարիներին Դ. Աբգարը հանդես է եկել հայ ժողովրդին նվիրված դասախոսություններով, հոդվածներով ճապոնական անգլալեզու թերթում: Նա անգլերեն լեզվով հրատարակել է նաև հետևյալ գրքերը՝ «Ճշմարտություն հա-

յերի ջարդերի մասին», «Հայկական հարցը», «Դավաճանված Հայաստան», «Եվրոպայի խաղաղությունը», և մի շարք գրքեր: Նա թղթակցել է նաև հանրահայտ «Թայմս» և «Ֆիգարո» թերթերին:

Նրա աշխատություններն ու գրքերը ծանոթացրել են ճապոնական հասարակությանը Հայոց ցեղասպանության ու հայ ժողովրդի պատմությանը: Նա նամակագրական կապեր է ունեցել աշխարհի քաղաքական, հոգևոր և այլ բնագավառի ճանաչված գործիչների հետ:

Նա ամբողջ կյանքի ընթացքում ցույց տվեց իր մեծ սերն ու հարգանքը հայ ժողովրդի նկատմամբ, չնայած երբեք չի եղել Հայաստանում:

Դ.Աբգարը օգնեց բազմաթիվ հայ գաղթականների ովքեր Սիբիրի և Ճապոնիայի վրայով անցնում էին ԱՄՆ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե բարձր գնահատելով Դ.Աբգարի գործունեությունը, 1926թ. արժանացրել է նրան հատուկ կոնդակի և անվանել է նրան Հեռավոր Արևելքի տիրուհի:

Դ.Աբգարը 1919թ. մասնակցեց Խարբինում (Չինաստան) կայացած Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայերի համաժողովին, որտեղ նրան ընտրեցին պատվավոր նախագահ: Դ.Աբգարը տիրապետում էր հայերեն, հնդկերեն, ճապոներեն, չինարեն և եվրոպական հինգ լեզուների:

Դ.Աբգարին 1920թ. հուլիսին նշանակում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ և գլխավոր հյուպատոս Հեռավոր Արևելքում, Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ճապոնիայում:

Դիանա Աղաբեկի Աբգարը վախճանվեց 1937թ. հուլիսին Յոկոհամայում: Նրա աճյունը թաղեցին օտարերկրացիների գերեզմանատանը՝ ամուսնու շիրիմի կողքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԻՎԱՆ ՖՅՈԴՈՐԻ ԹԵՎՈՍՅԱՆ 12
ՍԵՐԳԵՅ ՎԻԿՏՈՐԻ ԼԱՎՐՈՎ (Քալանթարով) 20
ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ 29
ԱՆՏՈՆ ԵՐՎԱՆԴԻ ՔՈՉԻՆՅԱՆ 36
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԵԿԶԱԴՅԱՆ 42
ԼԵՎՈՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ 57
ՀԱՄԱԶԱՍՊ ՀՈՎԱԿԻՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 80
ՎԻԿՏՈՐ ԼԵՎՈՆԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 91
ՍԵՐԳԵՅ ԴԱՆԻԵԼԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ 104
ԱՍՔԱՆԱԶ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄՌԱՎՅԱՆ 114
ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 127
ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 135
ԱՆԱՏՈԼԻ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ 142
ԲԱԼԱԲԵԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 147
ԿԱՄՈ ԲԱԲԻՒ ՈՒԴՈՒՄՅԱՆ 151
ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 153
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԵՐՈՒՆԻ ՄԱՍԵՀՅԱՆ 156
ՀԱԿՈԲ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԴԱՎԹՅԱՆ 166
ՎԼԱԴԻՄԻՐ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ
ԹԱՒՐՈՎ (ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ) 171
ՍԻՄՈՆ ՂԱԶԱՐՈՍԻ ՎՐԱՅՅԱՆ 173
ՀԱՄԱԶԱՍՊ (ՀԱՄՈ)ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
(ՕՀԱՆՋԱՆՅԱՆ (ՄՀԵՐՅԱՆ) 177
ՀԱՄԱԶԱՍՊ (ՀԱՄՈ)ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՏԻՍՅԱՆ 186
ՍԻՐԱԿԱՆ ՖԱԴԵԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ 192
ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆ 198
ՆՈՒԲԱՐ ՄԿՐՏՉԻ ՆՈՒԲԱՐՅԱՆ (ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ) 201
ՊՈՂՈՍ ՍԵՄՅՈՆԻ ՀԱԿՈԲՈՎ 202

ԱԼԵՔՍԵՅ ՀԱՅԿԻ ԴՈՒԼՅԱՆ 205
ՎԱԼԵՐԻ ՎԱՐԴԱՆԻ ՆԱՋԱՐՈՎ 206
ԳԵՈՐԳԻ ԼՎՈՎԻ ՄՈՒՐԱԴՈՎ 207
ՅԱԿՈՎ ԱՐԿԱԴԻԻ ԼԱՋՐԵՎ 208
ԿԻՐԻԼ ԳՈՐԱՑԵՎԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ 211
ԹԱԴԵՎՈՍ ԳԵՂԱՄԻ ՄԱՐՉԵՆԿՈ-ՄԱՆԴԱԼՅԱՆ 211
ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԵՏՐՈՍԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ 212
ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՔԵԼԵԿՅԱՆ 213
ԵՎԳԵՆԻ ԱՐՇԱԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 214
ՀՈՐԱՍԻՈ ԱՆԴՐԱՆԻԿ ՉԱԼՅԱՆ 215
ԱՇՈՏ ԱՐՍԵՆԻ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ 217
ԲԵՆՈՆ ՍԵՎԱՆ 218
ԱԴԵՄԱՐ ԳԱԲՐԻԵԼ ԲԱՀԱԴՅԱՆ 221
ԷԴՎԱՐԴ ԱԼԵՔՍԱՆԴՐ (ԱԼԵՔՍԱՆՅԱՆ) 223
ՎԱՉԵ ՆՈՒՐԲԱԹԼՅԱՆ 225
ՌԻՉԱՐԴ ՈՒԵՅՆ ԲՈԳՈՍՅԱՆ (ՊՈՂՈՍՅԱՆ) 227
ԵՎԳԵՆԻ ՎԻԿՏՈՐԻ ՆԵՐՍԵՍՈՎ 228
ԷԴՈՒԱՐԴ ՌՈՒԲԵՆԻ ՄԱԼԱՅԱՆ 231
ՋՈՋԵՖ ՂՈՒԿԱՍՅԱՆ 232
ԷԴՄՈՆԴ ԱՎԱԳԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ 234
ԱՐՏՅՈՄ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐ-ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ 238
ՍԵՐԳԵՅ ԲԱԽՇԻԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ 242
ՆԱՐԻՄԱՆ ԽԱՆ 245
ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՈՎ 245
ԱՆՋԵՅ ԿՇԵՋՈՒՆՈՎԻՉ 246
ՍԱՀԱԿ ՍԱՐԳՍԻ ԴԱՇՈՅԱՆ 248
ՍԵՐԽԻՈ ԹՈՒԹԻԿՅԱՆ 249
ԷԴՎԱՐԴ ՓԻԹԵՐ ՋԵՐԵՃՅԱՆ (ՋԵՐԵՋՅԱՆ) 251
ԹԱՎՐՈՇՅԱՆ 253
ՊԱՇԻՉ ՆԻԿՈԼԱ 253
ԱՍԱՏՈՒՐ ԱՀԱՐՈՆ ՆԻԿՈԼԱՅԻ 254
ԻՎԱՆ ԼԵՈՊՈԼԴԻ ԼՈՐԵՆՑ 255

ԼԵՈՆԻԴ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿԵՐԵՍՏԵՋԻՅԱՆՑ 257
ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ 258
ԺԱՆ ԿՈԿԻՅԱՆ 259
ՄԱՐԿԼԵՆ ԻՎԱՆՈՎԻՉ (ՀՈՎՀԱՆԵՍԻ) ԼԱՋՐԵՎ 260
ԲԵՐՐԻ (ՊԱՐՈՒՅՐ) ՋՈՐԹՅԱՆ 262
ԳԵՈՐԳԻ ԱՐՏԱՇԵՍԻ ՏԵՐ-ՂԱՋԱՐՅԱՆՑ 264
ՄԻՐՋԱ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ (ՆԱՋԵՄ ՕԼ-ԴՈՎԼԵ) 267
ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՈՐԳԻ ԴԵԿԱՆՈՋՈՎ 270
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ՊԻՐԱԴՈՎ 272
ԵՂԻԱՅԱՆ Վ. 274
ԼԱՋՅԱՆ ՀՈՎՍԵՓ ԳԵՐԱՍԻՄԻ 274
ՏԵՐ- ՀԱԿՈԲՅԱՆ ՊԻԵՐ 274
ԴԻԱՆԱ ԱՂԱԲԵԿԻ ԱԲԳԱՐ 275

ԱԶԱՏՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ

ՀԱՅԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ

АРМЯНЕ НА ПЕРЕКРЕСТКАХ МЕЖДВУНАРОДНОЙ ДИПЛОМАТИИ

ARMENIANS AT THE CROSSROARD OF INTERNATIONAL DIPLOMACY

Սրբագրիչ՝
Ճանճապանյան Մարինե

Համակարգչային էջադրումը
և ձևավորումը՝
Արա Լանջունու

ՆՈՒՇԻԿՅԱՆ ՊՐԻՆԹ
NUSHKYAN PRINT

Տպագրված է «Նուշիկյան Պրինտ»
տպագրատանը